# ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄՈՒՐԿԱՆԵՐԸ

[illegible]

[illegible]

[illegible] 13/X 82 թ.

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР
ГОСУДАРСТВЕННЫЙ МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

# КАТАЛОГ
# МУЗЕЙНЫХ КОЛЛЕКЦИЙ

ВЫПУСК II

Подготовила к печати
ЕВГЕНИЯ МУШЕГЯН

## ПРЕДМЕТЫ ВЫЯВЛЕННЫЕ РАСКОПКАМИ В АНИ

ИЗДАТЕЛЬСТВО «АЙАСТАН»
ЕРЕВАН 1982

902.6(479.25)

Ա-II 9257

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

# ՀԱՏԿԱՆՇԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ

ՊՐԱԿ II

ԵՎԳԵՆՅԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ
աշխատակցությամբ

## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982

902 . 6 (043) ինդեքս ԳՄԴ 63 . 4 (2Հ)
Հ 384

Պատասխանատու խմբագիր՝ ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

*Տպագրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Աշխատությունը գրախոսել են Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ, ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԸ և Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ս. ՀԱՍՐԱԹՅԱՆԸ։

Մուշեղյան Խ. Ա.

№ 384 *Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները,— Եր.: Հայաստան, 1982, 164 էջ։*

*Աշխատությունը իր մեջ ամփոփում է ակադեմիկոս Նիկողայոս Մառի ղեկավարած հնագիտական արշավախմբի կողմից Անի քաղաքում 1893—1915 թթ. կատարած պեղումներից հայտնաբերված նյութերի գիտական նկարագրությունը, որոնք հանգրվան են գտել Հայաստանի պատմության պետական թանգարանում։*

*Գիրքը նախատեսված է հնագետների և ընթերցող լայն մասսաների համար։*

Մ $\frac{0507000000}{701\ (01) - 82}$ 82

ԳՄԴ 63.4 (2Հ)
902.6 (043)

© *Հայաստանի պատմության պետական թանգարան, 1982 թ.։*

# ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվում է ակադեմիկոս Ն. Յա. Մառի 1893—1915 թթ. Անիում կատարած պեղումներից հայտնաբերված նյութերի երեք հավաքածու՝ 123, 377 և 378 համարների տակ: Նյութերի քանակով ամենամեծը № 123 հավաքածուն է, որի 1621 համարի տակ գրանցված 1549 առարկաները (ամբողջական և բեկորներով) տեղ են գտել մեր «Հատկանշական ցուցակում»: Գրանցված իրերի և համարների անհամապատասխանությունը բացատրվում է նրանով, որ շատ իրեր, մինչև թանգարանի մատյանում գրանցվելը, կոտրված են եղել և դրանց յուրաքանչյուր բեկորը գրանցվել է առանձին համարի տակ: Հետագայում դրանք միացվել են, և «Հատկանշական ցուցակում» նկարագրվել որպես մի ամբողջական իր: Այդ իսկ պատճառով «Հատկանշական ցուցակի» և թանգարանի հնագիտական բաժնի մատյանում գրանցված իրերի քանակը միմյանց չեն համապատասխանում: Միաժամանակ թանգարանի մատյանում գրանցվել են այնպիսի իրեր, որոնք Անիից չեն հայտնաբերվել, այլ նույն թվականներին և նույն արշավախմբի անդամների կողմից գտնվել են այլ վայրերից: Բնականաբար այդ նյութերը չեն մտել Անիի «Հատկանշական ցուցակի» մեջ:

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի պեղումներից հայտնաբերված իրերի այս «Հատկանշական ցուցակը» առաջինը չէ: Անիից հայտնաբերված իրերը հրատարակվել են դեռևս 1910 թ. «Анийская серия» մատենաշարի № 3 գրքում, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու կողմից՝ «Каталог Анийского музея древностей» վերտառությամբ[1], որի մեջ ընդգրկվել են մինչև 1909 թ. հայտնաբերված նյութերը: Այս արժեքավոր աշխատանքը իր մեջ ամփոփում է ակադեմիկոս Ն. Յա. Մառի արշավախմբի կողմից Անիում հիմնադրված թանգարանի հնագիտական նյութերի նկարագրությունը:

Մեր «Հատկանշական ցուցակը» իր մեջ ներառելով ակադեմիկոս Հ. Օրբելու աշխատության մեջ նշված նյութերը, միաժամանակ շարունակվելով ընդգրկում է մինչև 1914—15 թթ. պեղումներից հայտնաբերված նյութերը:

Իհարկե, Անիից հայտնաբերված առարկաներն այս ցուցակով չեն սպառվում: Մենք ընդգրկել ենք իրերի այն մասը, որը 1916 թ. պրոֆեսոր Աշխարհբեկ Քալանթարի և ուսուցիչ Հովսեփ Գալստյանի միջոցով փրկվել և տեղափոխվել է Սանահինի վանքը, որտեղից էլ հետագայում հանձնվել է Հայաստանի պատմության պետական թանգարանին:

Սույն «Հատկանշական ցուցակը» կազմելիս կիրառել ենք հետևյալ սկզբունքը: Նկարագրվող նյութերը, ինչպես այս ցուցակում այնպես էլ թանգարանի հնագիտական բաժնի մատյանում դասավորված են ըստ տեսակների: «Ցուցակում» տրվում են յուրաքանչյուր իրի անվանումը, հակիրճ նկարագիրը՝ նշելով նյութը, ձևը, պատրաստման եղանակը, զարդը, չափերը, հավաքածուի համարը (երբ կա Անիի թանգարանի համարը, որը տրվում է փակագծում), գտնելու ժամանակը և վայրը: Վերջում նշվում է, թե ում կողմից է հրատարակվել տվյալ իրը: Իրերի նկարագրության այս սկզբունքը կիրառելիս միաժամանակ օգտվել ենք ակադեմիկոս Հ. Օրբելու «*Каталог*»-ում նշված համարակալումից: Յուրաքանչյուր իրի համար «*Каталог*»-ում դրված թիվը և տառերը ցույց են տալիս, թե որտեղ և երբ է գտնվել այն

[1] *Վերահրատարակվել է 1963 թ., տե՛ս* И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 23—102.

07 1907 թ., Միջնաբերդ
07 А, В, С, Д, Е 1907 թ., ներանոսական դամբարաններ
07 К=1907 թ., Կարսի դարպասը
08 = 1908 թ., Միջնաբերդ
08 = 1908 թ., մույթերով շենքը
08 С 1908 թ., հյուրանոց (սֆինքսներով շենքը)
09 А 1909 թ., ս. Առաքելոց եկեղեցի
09 УМ 1909 թ., «Մառի փողոցը»

Պատահաբար գտնված կամ գնված իրերի վրա նշված է «Մ» տառը[1]:

Այս նշումները մենք կիրառել ենք մեր «Հատկանշական ցուցակում», երբ նշում ենք իրի համար՝ թանգարանի մատյանում ~~նշելիս~~:

Ակադեմիկոս Հ. Օրբելուց բացի, Անիի նյութերի մեծ մասը հրատարակել են ակադեմիկոս Ն. Յա. Մառը և բազմաթիվ այլ ուսումնասիրողներ:

Ելնելով առարկաների առանձին խմբերից, սույն «Հատկանշական ցուցակը» բաժանել ենք մի քանի գլուխների: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է հակիրճ առաջաբանով, որտեղ ընդհանուր բնութագրումից բացի կատարված է առարկաների թվագրումը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս կարգը երբեմն խախտվել է, տվյալ խմբի մեջ այլ տիպի առարկաներ մտցնելու կապակցությամբ: Այդպես վարվել ենք, ձգտելով պահպանել թանգարանի հնագիտական բաժնի մատյանում նշված կարգը:

Հայաստանի պատմության պետական թանգարանում են պահվում նաև Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված մեծ թվով պղնձե և արծաթե դրամներ, որոնք սույն «Հատկանշական ցուցակի» մեջ չեն մտնում:

Առաջաբանի վերջում տեղադրել ենք ակադեմիկոս Ն. Մառի նամակը Հայաստանի լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանին՝ Անիի իրերի գիտական հրատարակության անհրաժեշտության մասին[2]:

Աշխատության մեջ զետեղված գրչանկարները կատարել է նկարիչ Ազատ Լեյլոյանը, իսկ լուսանկարները՝ Ռաֆիկ Հակոբյանը:

---

[1] Каталог Анийского музея древностей, стр, 26-27, Հետագայում՝ КАМД.
[2] Այդ նամակը մեզ է տրամադրել բանասեր Պ. Մուրադյանը:

Академия Наук СССР Кавказский
Историко-Археологический Институт
15 апреля 1926 г.
№ 1а

Копия

НАРКОМУ ПРОСВЕЩЕНИЯ ССР АРМЕНИИ

Хотя территория Анийского городища в настоящее время находится вне возможного района археологических работ, но совершенное прекращение Анийского археологического предприятия крайне нежелательно. В виду этого, дабы обновить дело, мною поручено Кавказскому Историко-Археологическому Институту, в соответствии как с письменным соглашением, имевшим место при наркоме просвещения Армянской ССР Ашоте Иоаннисяне, так равно и с вербальными заверениями, лично мне неоднократно сделанными, подготовить опись эвакуированных из Анийского музея древностей предметов для научного учета спасенного музейного инвентаря. Означенная работа предположена к напечатанию в одном из органов Кавказского Историко-Археологического Института, возможно в очередном выпуске «Анийской серии». Со своей стороны прошу оказать работникам института по указанному предприятию возможное содействие предоставлением материалов для описания и, если понадобится, фиксации (фотографирования, зарисовки, обмера и пр.)

**Академик-руководитель Н. МАРР**

## Գլուխ առաջին

# ԴՐՈՇՄԱԶԱՐԴ ԿԱՐԱՍՆԵՐ

Անիի պեղումներից գտնված բազմաթիվ նյութերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում դրոշմազարդ կարասների բեկորները: Կարասների այդ խումբը ընդհանրապես ցածրանիստ է, ուռուցիկ իրանով, հաստ պատերով, երբեմն ունեն հաստ կանթեր և թրծելուց հետո փայլեցված են կարմիր գույնով: Կարասներն ունեն նոխ հարդարանք, որն արված է տարբեր եղանակներով՝ գծազարդ, ուռուցիկ վերադիր պատկերներ և դրոշմազարդ: Հատուկ տեղ է գրավում դրոշմազարդը, որը հիմնականում կատարվել է փոքր-ինչ ռելիեֆ կամ հարթ գլանաձև և բոլորակ կնիքների (դրոշմների) միջոցով: Երբեմն հանդիպում են հախճապակու բեկորներով ընդելուզված զարդեր: Զարդագոտիները հիմնականում տեղադրված են կարասների իրանի կենտրոնում՝ շուրջանակի, անընդհատ կրկնվող մոտիվներով և կանթերի վրա: Հանդիպում են նաև ուղղահայաց իջնող զարդեր, որոնք հատվում են հորիզոնական գոտու հետ: Դրոշմը, որն այնքան լայն տարածում է ունեցել Անիում, հանդիպում է նաև կիրառական նշանակություն ունեցող այլ առարկաների վրա:

Բազմազան են կարասների գոտիների վրա դրոշմված մոտիվները և պատկերները: Այստեղ հանդիպում ենք կենդանիների, մարդկանց, կենաց ծառերի, թռչունների պատկերների, որոնք ոճավորված են, կան նաև գեղարվեստական բարձր ճաշակով արված գործեր (123/43—50): Դրոշմված բեկորի առանձին խմբերի վրա նկատվում է միևնույն արհեստավորի կամ արհեստանոցի կնիք:

Բոլորակ կնիքներով արված են առավելապես երկրաչափական զարդեր, վարդյակներ, աստղեր և այլն: Հանդիպում են նաև արձանագրությամբ բեկորներ, որոնք, հավանաբար, կրում են պատվիրատուի անունը:

Ինչպես իրավացիորեն նկատել է ակադ. Բ. Առաքելյանը, «մեծ թվով կենաց ծառերի, պտղաբերող նյութերի, ծնող զույգերի (ծնող զույգ թռչուններ, կենդանիներ, նաև մարդիկ) առկայությունը իրենց պտուղների՝ ձագերի, երեխաների հետ միասին թույլ են տալիս ենթադրելու, որ կարասների վրա հանդիպող մոտիվների զգալի մասը կապված է պտղաբերության, բերրիության և առատության վերաբերյալ ժողովրդական ըմբռնումների և պատկերացումների հետ»[1]:

Դրոշմազարդ կարասները լայն տարածում ունեին Անդրկովկասում, հանդիպում են նաև Դվինում[2], Գառնիում[3], Արմավիրում (նյութերը պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում), Օրեն-Կալայում[4], Գյանջայում[5], Թբիլիսիում[6] և այլուր:

Բոլոր ուսումնասիրողների մոտ դրոշմազարդ կարասների կիրառության և դրանց թվագրության հարցը առանձին ուշադրության է ար ժանացել: Ուսումնասիրողների մի խումբը (Կ. Ղաֆադարյան, Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան, Գ. Ախմեդով) գտնում է, որ այդ շքեղ կարասները հանդիսավոր խնջույքների ժամանակ ծառայել են որպես գինու անոթներ, մեկ այլ խումբը (Վ. Լևիատով) դրանք համարում է մթերքներ, ջուր պահելու անոթներ: Անիի դրոշմազարդ կարասների մեծ մասը ստույգ կերպով թվագրվում է Դվինի և Գառնիի նույնանման նյութերով: Գլանաձև և բոլորակ կնիքներով դրոշմված կարասները թվագրվում են 10—13-րդ դդ.: Ուռուցիկ և վերադիր զարդեր ունեցող կարասները Անիում հավանաբար սկսել են պատրաստել 9-րդ դարում և դրանք գոյատևել են մինչև 13-րդ դարը:

---

[1] Բ. Առաքելյան, *«Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ.», Երևան, 1958 թ.*, հ. Ա, էջ 226։

[2] Կ. Ղաֆադարյան, *«Դվին քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952 թ.*, Г. Караханян, Неполивная орнаментированная керамика из раскопок Двина и Ани (автореферат), Ереван, 1954 г.

[3] Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, *«Գառնի» 3-րդ, Երևան, 1962*։

[4] Г. М. Ахмедов Неполивная керамика Орен-калы IX—XIII вв. МИА 67, М-Л, 1959, стр. 192—205.

[5] В. Н. Левиатов, Украшения на карсах из Старой Ганджи, ИАН Аз. ССР, 1945, №8.

[6] В. Джапаридзе, Керамика XI—XIII вв, из Тбилиси ВМГ,т. XVI—В, 1950.

## 1. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է, կենդանու (հովա՞զ) ուռուցիկ պատկերով, Թերի է։

7×9,5 սմ։ Տախտակ I, 1։

123/1 (11 cg)։ Գտնվել է 1911 թ. Միջնաբերդի պալատի պատերի տակ։

Հրատարակված է՝ Г. Чубинов, Декоративное убранство анийских карасов, ХВ, т. V, табл. XI, II гр. 1917, հետագայում՝ Чубинов.

## 2. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված են զույգ կենդանիներ. առաջին կենդանին նման է ձիու, երկրորդը ունի սուր ականջներ, թռչունի ոճավորված ոտքեր և ճյուղավորված պոչ։ Դրոշմը թերի է։

6×10 սմ, 123/2 (06 № 225 b)։ Տախտակ I, 2

Հրատարակված է՝ Чубинов, էջ 32։

## 3. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի գոտու բեկոր է։ Վրան պատկերված է ձեռքերը վեր բարձրացրած մարդկային կերպարանք՝ կողքին թռչուն (արաղա՞ղ)։ Պատկերը թերի է։

5×7,5 սմ, 123/3 (15 A 29),1915 թ.։

## 4. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված պատկերները ոճավորված են և միմյանցից սահմանազատված երկու ուղղահայաց զուգահեռների միջև զիգզագաձև անկյուններով արված զարդագծերով։ Առաջին հատվածում պատկերված է գեղեցիկ ոճավորված թռչուն, երկրորդում՝ այծ, որին հետապնդում է շունը, երրորդում՝ երեք մարդկանց պատկերներ (ծիսական պար)։

10×11 սմ, 123/4 (06 № 188), 1906 թ.։ Տախտակ I, 3

Հրատարակված է՝ Чубинов, табл. XIX, 4

## 5. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, գոտու վրա պատկերված է հորիզոնական դիրքով ~-աձև ուռուցիկ զարդ, որի ոլորվածքի մեջ կան մեկական կետեր։

7×7,5 սմ, 125/5 (11 M), 1911 թ.։

## 6. ԿԱՐԱՍԻ ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլով դրոշմազարդ կարասի կանթի բեկոր է։ Հաստ կանթը կտրվածքում տափակ է, կենտրոնում դրոշմված է կլոր մեդալիոն երկրաչափական զարդով։

8×8,5 սմ, 123/6 (13), 1913 թ.։

## 7. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա հավանաբար պատկերված է ծիսական պարի տեսարան։ Դրոշմը թերի է։ Տե՛ս № 4-ի 3-րդ հատվածը։

4,5×5 սմ, 123/7 (09 УМ), 1909 թ., «Մառի փողոց»։

## 8. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված է սուր ականջներով մի կենդանի (պահպանվել է միայն գլուխը) և մի այծ, ետ ծալված երկար եղջյուրներով։ Պատկերը սահմանազատված է կենաց ծառով։ Թերի է։

2,5×4 սմ, 123/2 (A. 10 У II), 1910 թ.։

## 9. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Դրոշմված է շուն՝ ետ ծալված պոչով, սուր ականջներով, խրոխտ կեցվածքով։ Շան մարմնի վերին, ստորին մասերում և առջևում արված են կետեր. պատկերը թերի է։

4,5×5 սմ, 123/9 (15 П 15), 1915 թ., պատահական։

Հրատարակված է՝ Ֆ. Ս. Բաբայան, «Հայկական դրոշմանիշ գոտիով կարասների զարդաձևերը», «Լրաբեր», 1969, № 7, էջ 63 (հետագայում՝ Բաբայան, Կարասներ)։

## 10. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված է մարդկային երեք կերպարանք, միջտեղինը համեմատաբար փոքր, և մի այծ։ Մարդկային կերպարանքներն ու այծը միմյանցից սահմանազատված են սանդուղքաձև զարդանախշով։

5×8 սմ, 123/10 (15 n), 1915 թ., պատահական։

## 11. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա երկու հորիզոնական լայն գոտիների արանքում կենդանիների պատկերներ են, որոնք անջատված են ուղղահայաց իջնող զույգ զուգահեռ և զիգզագ գծերով կազմված նախշազարդերով։ Առաջին հատվածում պատկերված է մի այծ իր ուլիկով և մի թռչուն, երկրորդ հատվածում՝ մի կենդանի և թռչուն։ Պատկերը թերի է։

7×10,5 սմ, 123/11։

## 12. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Հորիզոնական ուռուցիկ գոտիների մեջ դրոշմված են միմյանց ետևից վազող կենդանիներ՝ եղջերու, եղնիկ և մի եղևնաձև կենաց ծառ։ Պատկերը թերի է։

8,5×9 սմ, 123/12։

## 13. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված է մի ոճավորված թռչուն և այծ՝ իր ուլիկով։ Թռչունն ու այծը միմյանցից անջատված են կենաց ծառով։ Պատկերը թերի է։

7,5×8,5 սմ, 123/13 (15 Λ 1) 1915 թ.։ Տախտակ II, 2

Հրատարակված է՝ Բաբայան, Կարասներ, էջ 67։

## 14. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի փայլեցրած բեկոր է։ Համեմատաբար նեղ գոտու վրա խորաքանդակ զարդանախշեր, իսկ կենտրոնում ուռուցիկ կետերով եռանկյունիներ են։

7×9 սմ, 123/14։

## 15. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է կենդանու ուռուցիկ պատկերով։ Պահպանվել են կենդանու հետևի զույգ ոտքերը, ստորին մասում ներճկված ցորենաձև զարդանախշ է։ Զարդը թերի է։

5×5 սմ, 123/15 (10 Ŋ IV № 93), 1910 թ.։

Հրատարակված է՝ Чубинов, 21։

## 16. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է ուռուցիկ զարդերով. վրան պատկերված են կենդանիներ՝ առաջին կենդանու գլուխը (այծ՞), երկրորդի ոտքը և ոլորված պոչը։ Պատկերը թերի է։

6×7,5 սմ, 123/16։

## 17. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է մեդալիոններով, որոնց մեջ պատկերված են բարդ երկրաչափական զարդեր։

4,5×5 սմ, 123/17 (08 № 6), 1908 թ.։

Հրատարակված է՝ Чубинов, 27։

## 18. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլով դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են կենաց ծառեր և մի կենդանի։

123/18, (15 ɲ), 1915 թ. պատահական։

## 19. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դաջազարդ կարասի բեկոր է։ Դրոշմը թերի է։ Տե՛ս № 13-ը։

5,5×6 սմ, 123/19 (09.11.23), 1909 թ.։

## 20. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր դրոշմազարդ միևնույն կարասի չորս բեկորներ են, համեմատաբար նեղ գոտու վրա թույլ դաջվածքով պատկերված են վազող կենդանիներ։

123/20, 26—27, 29 (09 M. 44), 1909 թ.։

## 21. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր կարասի երկու բեկորներ են, համեմատաբար նեղ գոտու վրա պատկերված են վազող կենդանիներ (դայլ, այծ)՝ ուռուցիկ վերադիր զարդով. հավանաբար հետապնդման տեսարան է։

5,5×7,5 սմ, 123/21, 25 (09 M.43), 1909 թ.։ Տախտակ IV,2։

## 22. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի երկու բեկորներ են։ Գոտու վրա պատկերված են վազող ոճավորված կենդանիներ։ Տե՛ս № 20։

123/23, 24 (09.M.44), 1909 թ.։

## 23. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Հո-

րիզոնական լայն գոտիների վրա դրոշմված է վազող կենդանի։ Տե՛ս № 22։

6×6,5 սմ, 123/28 (10.Ј.II 62), 1910 թ.։

## 24. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր, փայլեցրած կարասի դրոշմազարդ գոտու փոքրիկ բեկոր է։

123/29 (09. M. 44), 1909 թ.։

## 25. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր, փայլուն, դրոշմազարդ կարասի բեկոր է։ Երկու նեղ, զուգահեռ հորիզոնական գծերի միջև պատկերված են միմյանց ետևից վազող երկու կենդանի։ Պատկերը թերի է։

5,5×6սմ, 123/30 (12 Λ), 1912 թ.։ Տախտակ I,6։

## 26. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի փայլեցրած բեկոր է։ Երկու զուգահեռ, լայն հորիզոնական գոտիների մեջ վերադիր տառերով գրված է՝ ...Դ ԳՐԻԳՈՐ

8×13 սմ, 123/31 (08 п 51), 1908 թ.։ Տախտակ I,5։

Արփաչայի կիրճի թեք լանջում, պատահական։

Հրատարակված է՝ 1. И. А. Орбели, КАМД, էջ 59, հետագայում՝ КАМД.
2. Եվ. Մուշեղյան, Հատկանշական ցուցակ, էջ 156։

## 27. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կավե կարասի փայլեցրած բեկոր է։ Երկու զուգահեռ հորիզոնական լայն գոտիների միջև վերադիր տառերով գրված է.

...ԱՆԴ, ԳՐԻ... տառաձևերը թույլ են տալիս ենթադրել, որ № 26-ի կտորն է։

6×12 123/33 (07 п 21), պատահական, 1907 թ.։ Տախտակ II,1։

Հրատարակված է՝ 1. Н. Марр, Реестр предметов древности из VI (1907) археологической кампании в Ани. СПБ, 1908 (Анийская серия № 2). Հետագայում Реестр, 1907.
2. КАМД, 59.
3. Մուշեղյան, էջ 156։

## 28. ԿԱՐԱՍԻ ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի կանթի բեկոր։ Կանթը հաստ է, կտրվածքում տափակ։ Կանթի ստորին հիմքի մոտ շրջանաձև կնիքով դրոշմված են երեք մեդալիոններ։ Առաջինի մեջ պատկերված է արևը՝ ոճավորված մարդու դեմքով. երկրորդը վարդյակ է՝ բաղկացած պտուտակազարդ, 7 թերթիկից, երրորդը՝ 8 թերթանի վարդյակ է։

9,5×12 սմ, 123/32 (05 п 2), 1905 թ., պատահական։ Տախտակ I,6։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 90
2. Чубинов, տախտակ XXII, 6
3. Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Ա հատոր, Երևան, 1958, տախ. XLII, հետագայում՝ Առաքելյան I։

## 29. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Կավե հասարակ քրեղանի հատակի բեկոր է։ Տակի մասում նախքան թրծելը հում կավի վրա փորագրված է մարդու կերպարանք։ Պահպանվել է նկարի վերին մասը։

6,5×9 սմ, 123/34 (07 № 155), 1907 թ.։ Տախտակ II,4։

Հրատարակված է՝ 1. Реестр, 1907г., стр. 16։
2. КАМД, стр. 59

## 29ա. ԴՐՈՇՄԱԶԱՐԴ ԻՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

123/37, 38, տես՝ № 86։

## 30. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, վրան փորագրված է նշան։ (Հայերեն Պ տառի շրջած ձևը)։

6×7,5 սմ, 123/39 (14 № 24); 1914 թ.։

## 31. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, ոճավորված թռչունների սխեմատիկ պատկերով։

5,5×8 սմ, 123/40 (19.05)։

## 32. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի մեծ բեկոր է, հովազի ուռուցիկ պատկերով։ Կենդանին դինամիկ վիճակում է։

Գլուխը չկա։ Մարմնի վրա արված են բազմաթիվ թեք գծիկներ։

11,5×18,5 սմ, 123/41 (09 Ա 22), 1909 թ.։ Տախտակ II,5։

Հրատարակված է՝ 1. Марр Н. Я., «Ани», Л. 1934, LIV 225а, Հետագայում՝ Ани։
2. КАМД, стр. 59:
3. Чубинов, стр. 25, տախտակ XII, 1։
4. Բ. Առաքելյան, տախ. XLI։

## 33. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի մեծ բեկոր է, կենդանու ուռուցիկ պատկերով։ Թերի է։

9×9,5 սմ, 123/42 (04. 5ա), 1904 թ.։ Տախտակ II,6։

Հրատարակված է՝ Чубинов, стр. 25.

## 34. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Ժապավենազարդ եզրերով դրոշմազարդ գոտու վրա պատկերված է նուրբ զարդամոտիվ՝ կենդանիների և թռչունների պատկերներով։ Կենդանու ետևից վազող շուն է, որի գլխավերևում պատկերված է  ձևի նշան։ Ապա գալիս են միմյանց դեմ կանգնած զույգ գեղեցիկ թռչուններ («սիրամարգեր») և զույգ շներ խաչաձևված պոչերով։ Ողջ մոտիվը երկու կողմից վերցված է կլոր շրջանակի մեջ։ Պահպանվել է գոտու մեկ ամբողջական հատված և մյուս հատվածի զույգ շների տեսարանը։ Տե՛ս 377/13 և 14-ը։

123/43 (12 Ա 55), 1912 թ. Առաքելոց եկեղեցու մոտ։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 31, տախտակ XIV, 2։
2. Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում 4—18-րդ դարերում, էջ 215, հետագայում՝ Աբրահամյան։

## 35. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր դաջազարդ կարասի երեք բեկորներ են։ Դրոշմված գոտեզարդի վրա պատկերված են նույն մոտիվները (պատկերները թերի են). Թռչունները պատրաստվում են ճաշակելու կենտրոնում բարձր պատվանդանի վրա դրված ըմպանակ(?)։ Դրանից հետո գալիս են միմյանց դիմաց կանգնած զույգ կենդանիներ (հավանաբար շներ)։ Բեկորների գոտիների վրայի դրոշմված պատկերները կատարված են բարձր ճաշակով, նկատվում է պատրաստող վարպետի ձեռքի հմտությունը, զարդապատկերների շարժուն վիճակը։ Դրանք իրենց արվեստով և կատարելությամբ տարբերվում են Անիում գտնված բազմաթիվ մյուս կավե կարասներից։ Հիշյալ մոտիվները ամենայն հավանականությամբ կապվում են ծիսական արարողությունների վերաբերյալ ժողովրդի պատկերացումների հետ։

7×7 սմ, 7×6 սմ, 4,5×6,5 սմ

123/44 (10 Ս. II. 7), 1910 թ. 123/45 (09 ո № 54), 1909 թ., 123/46 (14 № 28), 1914 թ.։ Տախտակ III,1։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 31, տախտակ XV,4։

## 36. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի երեք բեկորներ են, որոնց վրա, հորիզոնական գոտիների մեջ, պատկերված են բուսական զարդերով շրջապատված տարբեր կենդանիներ (հավանաբար հետապնդման տեսարան է)։ Դրոշմները կատարված են մեծ ճաշակով և վարպետությամբ։ Նույն արհեստանոցի արտադրանք է ինչ-որ նախորդը։ Պատկերը թերի է։

4,5×9 սմ, 4×4,5 սմ, 7,5×8 սմ։ Տախտակ II, 7, 8, 9։

123/47 (14 № 28), 1914 թ., 123/49 (07 ո № 26), 1907 թ., 123/50 (14 № 28), 1914 թ.։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 31, տախտակ XVI,1։
2. Բարայան, Կարասներ, էջ 67։

## 37. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված է մի մարդ, որը բռնել է երկու կողմից իր վրա հարձակվող գազանների երախներից. ձախ կողմի գազանի վրա հարձակվում են երկու շուն։ Այնուհետև երկու կետերի միջև պատկերված է թռչուն (հավանաբար աղավնի)։ Կարասի վրա դրոշմված մոտիվը ունի որո-

շակի պաշտամունքային բովանդակություն։

10×20,5 սմ, 123/48 (10 Ս. I. 38), 1910 թ.։

## 38. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դաջազարդ կարասի մեծ բեկոր է։ Ուղղահայաց ու հորիզոնական գոտիների վրա դրոշմված են պարող զույգեր, կենտրոնում՝ երեխա, ձախ կողմում՝ այծ։ Ողջ հատվածը մյուսից սահմանազատված է կենաց ծառով։ Պատկերը թերի է։

12×18,5 սմ, 123/51։ Տախտակ III,2։

Հրատարակված է՝ Марр, Ани, табл. XLV, 192a

## 39. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի մեծ բեկոր է։ Գոտու վրա, նախորդի նման, դրոշմված է պարի տեսարան, ձախ կողմում՝ երկու այծ։ Հատվածները միմյանցից բաժանված են կենաց ծառով։

12×21, 123/52։ Տախտակ IV,1։

## 40. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Հորիզոնական երկու լայն, ուռուցիկ գծերի միջև դրոշմված են միմյանց հետևից վազող կենդանիներ՝ այծ, գայլ։

123/53։ Տախտակ III,3։

## 41. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են միմյանց դիմաց կանգնած այծերի պատկերներ։ Ձախ կողմում մի այծ կա, որը սահմանազատված ուռուցիկ շրջանագծերի մեջ է։ Պատկերը թերի է։

7,5×9,5, 123/54 (15 Ա 5), 1915 թ.։

## 42. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դաջազարդ կարասի բեկոր է։ Հորիզոնական երկու գոտիների մեջ պատկերված է մի կենդանի (առջևի մասը չկա), եղևնու նման կենաց ծառ և կլոր անիվաձև 9 ճաղանի զարդանախշ։

8×9 սմ, 123/55 (14 Ш 1), 1914 թ.։ Շիրակավան։

## 43. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են ոճավորված երեք ոչխարի սխեմատիկ պատկեր։ Թերի է։

7×10 սմ, 123/56։ Տախտակ III,5։

## 44. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, գոտու վրա պատկերված են աններդաշնակ՝ երկարավուն իրաններով կենդանիներ. առջևում այծ է, ետևում մի այլ կենդանի (հավանաբար գայլ) և մի մարդ. (հավանաբար որսի տեսարան է)։ Թերի է։

6,5×11 սմ, 123/7 (06 № 225b), 1906 թ.։ Տախտակ IV, 3։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 32։
2. Բարայան, Կարասներ, էջ 63։

## 45. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են միմյանց ետևից վազող կենդանիներ և կենաց ծառ։ Թերի է։

5×9,5 սմ, 123/58։ Տախտակ III, 4։

## 46. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված են ուղղահայաց գծերի մեջ պարփակված եղևնաձև նախշազարդ և դեպի հակադիր կողմերը թեքված գլուխներով երկու կենդանի, վերցված բազմաթիվ կետերի մեջ։ Թերի է։

9,5×10 սմ, 123/59 (14 Ш, 1a), 1914 թ., Շիրակավան։

## 47. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի մեծ բեկոր է, կանթի մասով։ Կանթի հիմքում դրոշմված են երկու մեդալիոններ։ Գոտու վրա դրոշմված է մի եղջերու, որին հետապնդում են զույգ շներ (գայլեր)։ Տեսարանը երկու կողմից սահմանազատված է կենաց ծառերով։

19×28,5 սմ, 123/60։

Հրատարակված է՝ Բարայան, Կարասներ, էջ 65։

## 48. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված է հետապնդման տեսարան՝ եղնիկը փախչում է, որին հետապնդում է գազանը

(գայլ՞), դրանց ետևից վազում է մի այծ։ Տեսարանը սահմանազատված է կենաց ծառով։

17×28,5 սմ, 123/61 (15 А), 1915 թ.։

Հրատարակված է՝ Բարայան, Կարասներ, էջ 61։

## 49. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Վերին մասում նեղ հորիզոնական գոտի է, սեպաձև զարդերով։ Բեկորի կենտրոնում գծազարդով պատկերված է եղնու նման կենաց ծառ, վերադիր կլոր ոճավորված պտուղներով։ Կենաց ծառի երկու կողմերում վերադիր կերպով պատկերված են այծեր (պահպանվել են միայն գլուխները)՝ ետ ծալված եղջյուրներով։

10×16,5 սմ, 123/62 (11 с № 7), 1911 թ.։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 26, տախտակ XI, 2։
2. Բարայան, Կարասներ էջ 61։

## 50. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, գծային և ուռուցիկ կոճականման զարդերով։

10×14,5 սմ, 123/63 (10 У III № 52), 1910 թ.։ Տախտակ V,1։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 26։

## 51. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված են իրար ետևից վազող այծեր, մի ոճավորված կենաց ծառ, որի կենտրոնական ցողունի վրա կան չորս վերադիր կոճակներ (մեկը ընդելուզված է երկնագույն հախճապակով) և երկուական զույգ լայն տերևներ, որոնց մակերեսները ծածկված են թեք գծիկներով, արված թրծելուց առաջ՝ սուր գործիքով։ Տերևների ծայրերը նույնպես ավարտվում են վերադիր կոճակներով։

12×13 սմ, 123/64։

## 52. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր փայլեցրած կարասի երկու մեծ բեկորներ են, վերադիր ուռուցիկ զարդապատկերներով։ Բեկորներից մեկի վրա պատկերված է ետ ծալված եղջյուրներով մի այծ (գլուխը իրանի մի մասով)։ Կենդանու աչքը ընդելուզված է երկնագույն հախճապակով։ Պատկերից ձախ երկրաչափական զարդ է, որի վրա և շուրջը արված են վերադիր կոճակներ (մի մասը ընդելուզված հախճապակով)։

14×16 սմ, 123/65 (12 А 380), 1912 թ.։ Տախտակ IV, 4։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 26։

## 53. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլով կարասի բեկոր է, հորիզոնական և ուղղահայաց ուռուցիկ զարդագծերով։

4,5×6,5 սմ, 123/66։

## 54. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, վերադիր կենդանական զարդով։ Պահպանվել է կենդանու (հավանաբար առյուծ) իրանի ետևի մասը՝ ետ ոլորված երկար պոչով, թաթերն ունեն լավ արտահայտված մագիլներ, իսկ մորթին պատկերված է աղեղնաձև ու ալիքաձև գծերով։

9×10,5 սմ, 123/67 (10 У.IV.134), 1910 թ.։ Տախտակ III, 6։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 25։

## 55. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, ստորին մասով անցնում է նեղ գոտի, խորաքանդակ պատկերներով և ռոմբաձև նախշերով։ Գոտուց վեր վեցանկյուն շրջանակի մեջ դրոշմված է մի կենդանի (հավանաբար շուն)։

10,5×19 սմ, 123/68 (14 Ш 24), 1914 թ., Շիրակավան։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 27։
2. Բարայան, Կարասներ, էջ 63։

## 56. ՕՋԱԽԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր փայլեցրած կավե դրոշմազարդ հաստ հարթակ է, տակը ուղիղ կտրված։ Հավանաբար օջախ է։ Ներսում նկատվում են կրակի հետքեր։ Արտաքին մասում երկու նեղ ակոսների մեջ կա հորիզոնական դրոշմազարդ գոտի, որից վերև, հավասար հեռավորության վրա ուռուցիկ սյունաձև զարդեր են, ստորին մասում վերադիր

մեծ կոճակներ։ Գոտու վրա անընդհատ կրկնվող պատկերների մոտիվները իրարից բաժանված են կենաց ծառերով։ Պատկերված են ոճավորված թռչուն, ղոհասեղան, ապա մարդ, որը մի ձեռքին ունի գավազան, մյուսով բռնել է դիմացը կանգնած ձիու երասանակը։ Մարդու և ձիու միջև տեղադրված է շրջանաձև առարկա։ Ձիու վրա նըստած է մի մարդ՝ ձեռքին աղեղ։

25×16,5 սմ, 8×9 սմ, 123/69, 109։ Տախտակ VI, 1։

Հրատարակված է՝ 1. Чубинов, տախտակ XVIII, 2։
2. Բարայան, Կարասներ, էջ 64։

## 57. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր կարասի հինգ բեկորներ են։ Զարդանկարները խորաքանդակ լայն տերևներ են՝ ծածկված կետերով, որոնք արվել են թրծելուց առաջ։ Տերևների ճյուղավորման անկյուններում՝ վերադիր կոճականձև զարդեր են։

123/70 ա, բ, գ, դ, ե, 1901 թ.։ Տախտակ V, 2, VI, 2։

## 58. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Հասարակ, անփայլ կավե կարասի բեկոր է, սխեմատիկ զարդերով, կատարված շատ հասարակ ձևով։ Վրան պատկերված է մարդ՝ լայն բացած թևերով, և մի անասուն (հավանաբար եզ) կեռ եղջյուրներով, վեր տնկած պոչով (կենդանու ոտքերը չեն պահպանվել)։ Եզան իրանը ծածկված է կետերով։ Մարդկային պատկերի մոտ փորագրված է՝ Վ։

123/71 (12 A), գտնվել է 1912 թ.։ Տախտակ IV, 5։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 26։

## 59. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Երկու զուգահեռ հորիզոնական գոտիների մեջ արված են մեծ զիգզագներ, իսկ դրանց մեջ՝ տերևաձև զարդեր։

11,5×17սմ, 123/72 (15 A),1915 թ.։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 32։

## 60. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, վրան դրոշմված երկրաչափական զարդով կլոր մեդալիոն։

5,5×7 սմ, 123/73 (10 У.IV), 1910 թ.։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 37։

## 61. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր կարասի երկու բեկորներ են, վրան պատկերված երկրաչափական զարդերով կլոր մեդալիոններ։

6×13,5 սմ, 7,5×9 սմ, 123/74, 75 (09 A), 1909 թ.։

## 62. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են վարդյակներով և երկրաչափական զարդերով մեդալիոններ։ Ուղղահայաց իջնում է Տ-աձև նշաններով և կետերով նեղ գոտի։ Պատկերներն արված են 3 տարբեր դրոշմներով։

123/76 (09 M № 48), 1909 թ.։ Տախտակ V, 3։

Հրատարակված է՝ 1. Чубинов, էջ 32, տախտակ XXIII, 5։
2. Առաքելյան I, տախտակ X II։

## 63. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է, պարուրաձև հորիզոնական զարդանախշով։

123/77 (15 A 18), 1915 թ.։

Հրատարակված է՝ Чубинов, էջ 36։

## 64. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է։ Գոտու վրա կան երկրաչափական զարդերով մեդալիոնների դրոշմներ։

7×9,5 սմ, 123/78։ Տախտակ V, 3։

## 65. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի գոտու վրա, կլոր մեդալիոնի կողքին, քառակուսի շրջանակի մեջ արված են եռանկյունաձև, ռոմբաձև, խաչաձև և տերևաձև զարդանախշեր։

7×11 սմ, 123/79։

## 66. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Եր-

կու զուգահեռ լայն գոտիների մեջ նեղ քառանկյունի միջնորմ է, որից հետո մի մեդալիոն, մեջը վեցթևանի աստղ և մի կենդանի (գլուխը թերի)։
8×8,5 սմ, 123/80 (09 n № 65), 1909 թ., պատահական։

### 67. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր գոտեզարդ կարասի բեկոր է, հյուսածո զարդերով։
5,5×10 սմ, 123/81 (09 A № 12), 1909 թ., Առաքելոց եկեղեցի։
Հրատարակված է՝ 1. КАМД, էջ 90։
2. Чубинов, էջ 36։

### 68. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

Մանրահատիկ կավից պատրաստված հասարակ սափորի բեկոր է։ Ողջ մակերեսը պատած է սանրով արված ալիքաձև հորիզոնական զարդերով։
123/82 (10 У IV), 1910 թ.։

### 69. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է։ Երկու զուգահեռ հորիզոնական գծերի միջև դրոշմված են երկրաչափական զարդերով երկու շրջանաձև մեդալիոններ։
6,4×9,5 սմ, 123/83 (09 A), 1909 թ.։
Հրատարակված է՝ Чубинов, տախտակ XXIII, 2։

### 70. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, № 69-ի զարդով։ Թերի է։
5×7,5 սմ, 123/84, 1913 թ.։

### 71. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է. վերևից մինչև գոտին իջնում են 3 ուղղահայաց գծեր, որոնք տեղ-տեղ հատվում են թեք ակոսներով։ Հատման տեղում արված են վերադիր կոճակաձև զարդեր, իսկ 3 գծերի միջև ընկած ամբողջ տարածությունը ծածկված է խորադիր կետագծերով։ Գոտու վրա կա 2 վարդյակ։
14×14 սմ, 123/85 (10 У, IV 133), 1910 թ.։

### 72. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, հորիզոնական և ուղղահայաց գոտիներով։ Ալիքաձև զարդանախշերի մեջ պատկերված են շ-աձև նախշեր, որոնք իրարից անջատված են կետերով։
12,5×18 սմ, 123/86 (12 A № 23), 1912 թ.։ Տախտակ VI, 3։

### 73. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, դրոշմված մեդալիոններով։ Թերի է։
8×8,5 սմ, 123/87 (13 c), 1913 թ.։ Տախտակ IV, 6։

### 74. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է, վրան դրոշմված հնգաթև աստղով մեդալիոն և զիգզագաձև քառանկյունի միջնորմ։ Թերի է։
7,5×7,5 սմ, 123/88 (10 у. IV, 43a), 1910 թ.։

### 75. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է. զույգ հորիզոնական գոտիների մեջ դրոշմված են երկու շարք կետեր և թեք ալիքաձև նշաններ։
9×11,5 սմ, 123/89 (14 № 28), 1914 թ.։ Տախտակ VI, 4։

### 76. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է։ Հորիզոնական երկու լայն գոտիների միջև արված են փորագիր մ-աձև զարդեր։
11×12,5 սմ, 123/90 (13), 1913 թ.։ Տախտակ VII, 1։

### 77. ԿԱՐԱՍԻ ԿԱՆԹ

Կարմիր կարասի լայն կանթի բեկոր է։ Հիմքում դրոշմված է կլոր վարդյակ (7 թերթանի ծաղիկ)։
123/91, 1913 թ.։ Տախտակ VIII,1։

### 78. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված է մի զույգ ոճավորված թռչուն, որոնց միջև կենաց ծառ է, իսկ դրանց աջ կողմում կենաց ծառեր են տեղավորված և մի այծ իր ուլիկով, դարձյալ մի կենաց ծառ և մարդու կերպարանք։ Զարդամոտիվները հավանաբար կապ-

վում են պտղաբերության պաշտամունքի հետ։

5,5×7,5 սմ, 123/92։

Հրատարակված է՝ Բարայան, Կարասներ, էջ 67։

## 79. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի փոքր բեկոր է։ Վրան պատկերված է այծ, շուն և սյունաձև միջնորմ և մարդու կերպարանք, որը լրիվ չի պահպանվել։

4,5×6,5 սմ, 123/93 (07 № 222), 1907 թ.։

Հրատարակված է՝ 1. Реестр, 1907 г. էջ 24։

## 80. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Համեմատաբար լայն գոտու վրա դրոշմված են տարբեր կենդանիներ իրենց ձագերով և մի թռչուն, դրանք միմյանցից անջատված են երկու ուղղահայաց գծերի մեջ արված զիգզագաձև միջնորմներով։

123/94։

Հրատարակված է՝ 1. Чубинов, տախտակ XXI, 1։
2. Բարայան, Կարասներ, էջ 63։

## 81. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի գոտու բեկոր է։ Վրան դրոշմված զարդամոտիվը գրեթե կրկնում է № 80-ին։

123/95 (06 № 258), 1906 թ.։

Հրատարակված է՝ 1. Чубинов, տախտակ XXI, 2։
2. Բ. Առաքելյան, տախտակ XLII։

## 82. ԿԱՐԱՍԻ ԿԱՆԹ

Կարմիր դրոշմազարդ կարասի կանթի բեկոր է։ Ուղղահայաց գոտու վրա դրոշմված է թևերը վեր բարձրացրած աղոթող մարդու կերպարանք և եկեղեցի. հաջորդ բաժանմունքում պատկերված է մի զույգ ոճավորված թռչուն, որոնց միջև դրված է զոհասեղան։

123/96։ Տախտակ VIII, 2։

Հրատարակված է՝ 1. Ани, տախտակ XII, 35։
2. Чубинов, տախտակ XX, 3։

## 83. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու ձախ կողմում դրոշմված է երկրաչափական զարդով մեդալիոն, աջ կողմում պատկերված է ծիսական պարի տեսարան։ Զարդամոտիվների մեջ կա նաև երկար իրանով և ետ ոլորված պոչով մի կենդանի։

123/97 (10 У IV 43), 1910 թ.։

Հրատարակված է՝ Բարայան, Կարասներ, էջ 62։

## 84. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի երկու բեկորներ են։ Գոտու վրայի պատկերները թեմատիկայով կրկնում են № 83 բեկորին, այն տարբերությամբ, որ այստեղ բացակայում են միջնորմները, իսկ պարող մարդկանց կենտրոնական պատկերը արտահայտված է ռոմբի ձևով։

123/98, 105 (04 № 5), 1904 թ.։ Տախտակ VII, 2։

## 85. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա գլանաձև կնիքով դրոշմված են տարբեր պատկերներ՝ ծիսական պարի տեսարան, այծ և հետապնդող շուն, ոճավորված թռչուն, կենաց ծառ (տե՛ս № 79-ը)։ Պատկերները միմյանցից անջատված են եղևնաձև միջնորմներով։

123/99 (09 п 55), 1909, պատահական։ Տախտակ VII, 3։

## 86. ԿԱՎԵ ԻՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ աղյուսի (?) երեք բեկորներ են։ Բեկորներից մեծի վրա դրոշմված է ուռուցիկ, կլոր, մեծ մեդալիոն, որի մեջ պատկերված է թևերը բարձրացրած մի արծիվ (գլուխը չի պահպանվել)։ Մեդալիոնի շուրջը պատկերված են շրջանաձև վարդյակներ, որոնց մեջ փոքր շրջանակներով կան խաչանման զարդեր։ Սրանց տակ հանդիպում են թաց կավի վրա փորագրված երկար խաչեր։ Բեկորի ստորին մասում կա կամարաձև լայն շրջանակ (պահպանվել է միայն կեսը), որի վրա երեք տեղ եղել է երկնագույն հախճապակու բեկորներից ընդելուզվածք։ Բեկորի երկու կողմից իջնում են ուղղահայաց զույգ գոտիներ։ Մյուս երկու բեկորներն ավելի փոքր են։ Մեկի վրա

պատկերված է սյուն իր խարիսխով, կլոր վարդյակի մի մասը և մեծ կտորի վրայի կամարի շարունակությունը։

*123/37, 38, 100 (13 холм. № 27) 1913 թ.։ Տախտակ VIII, 3։*

*Հրատարակված է՝ 1.* Ани, *տախտակ* LIV, *225*в։
*2. Առաքելյան, էջ 225։*

## 87. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Գորշավուն կարասի շրթի բեկոր է, որի պսակի վրա վերևից խորաքանդակ գծերով գրված է՝ ՕՐՈՒ։ Տախտակ X, 1։

*123/102 (08 Е № 2), 1908 թ.։ Երևույթի բագինեկ։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 59։*

## 88. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարասի բեկոր է, որի վրա հորիզոնական զույգ ուռուցիկ գոտիների միջև ցործնաձև զարդանախշի մի ամբողջ շարք է։ Զարդի ստորին մասում Ս-աձև ուռուցիկ զարդանախշ է։

*123/103 (05 № 50), 1905 թ.։*

## 89. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Հասարակ գեղնավուն քրեղանի բեկոր է, ստորին մասը դեղին փայլեցրած։ Օղակաձև նստուկի արտաքին մասում փորագրված է վարպետի նշան՝ π ։

*123/104 (06 № 100), 1906 թ.։ Տախտակ XI, 2։*
*Հրատարակված է՝* КАМД, *էջ 59։*

## 90. ԿՃՈՒՃԻ ԲԵԿՈՐ

Հասարակ կճուճի բեկոր է, վերադիր կեղծ կանթով։ Բեկորը զարդարված է շուրջանակի ակոսներով։

*123/107 (06* п *№ 45), 1906 թ., պատահական։*

## 91. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Դրոշմազարդ գոտու զարդամոտիվը կրկնում է № 56 իրը։ Գոտուց դուրս վերին մասում դրոշմված է ձիու գլուխ։

*123/106 (04. 5с), 1904 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* Ани, *էջ 201։*
*2. Առաքելյան I, էջ 225։*

## 92. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի երկու բեկորներ են։ Դրոշմազարդ գոտու վրա պատկերված են ծիսական պարի տեսարան, ոճավորված թռչուն, որը ճաշակում է իր առջև դրված «զոհասեղանից», զիգզագաձև միջնորմներ, այծ։ Պատկերը թերի է, պատկերների դասավորմամբ կրկնում է № 85-ին։ Հավանաբար պատրաստված է միևնույն վարպետի ձեռքով։

*123/109, 110 (08* п *№ 35, 36), 1908, պատահական։*

*Հրատարակված է՝ Բարայան, Կարասներ, էջ 62։*

## 93. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, վրան պատկերված են այծ իր ուլիկով, մի այլ կենդանի, ոճավորված թռչուն, ցածր, երկփեղկանի պահարանի նման առարկա, որ հավանորեն որպես միջնորմ է դրված, ծիսական պար և պտղավորված կենաց ծառ։

*123/111 (09* М *№ 23), 1909 թ.։ Տախտակ VII, 4։*

## 94. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու մեջ դրոշմված է վեցթևանի աստղի նման կլոր մեդալիոն և մի կենդանի։ Պատկերը թերի է, տե՛ս № 66-ը։

*9×9,5 սմ, 123/112 (09* М *23), 1909 թ.։*

## 95. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է՝ միմյանց ետևից վազող կենդանիների (շուն, այծ(?)) պատկերներով։ Թերի է։

*7,5×6 սմ, 123/113 (09* А *№ 42), 1909 թ., Առաքելոց եկեղեցի։*

## 96. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր գոտեզարդ կարասի բեկոր է։ Հորիզոնական ակոսների մեջ դրոշմված են երկու պարող մարդ, դրանց մեջտեղում կան սեղանի նման մի առարկա և այծի թերի պատկեր։ Պատկերներն արված են խոշոր պլանով և ոճավորված են։

*123/115։*

## 97. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկորի վրա պատկերված են ոճավորված թռչուններ, կենաց ծառ, այծ իր ուլիկով, պարզ մարդկանց պատկերներ, որոնք միմյանցից անջատված են ուղղահայաց զիգզագաձև միջնորմներով։*

*123/116։*

## 98. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկորի վրա երկու զուգահեռ հորիզոնական ուռուցիկ գծերի մեջ պատկերված են պարզ մարդիկ, այծ և եղնաձև միջնորմ։*

*6,5×8,5 սմ, 123/116* А *(09* п *№ 64), 1909 թ., պատահական։*

## 99. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Հորիզոնական երկու ուռուցիկ գոտիների մեջ արված է հյուսածո զարդ։ Հյուսվածքի մեջ կան գծիկներ։*

*5,5×7 սմ, 123/117։*

## 100. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*№ 67 կարասի մյուս բեկորն է, նույն զարդերով։*

*6×7,5 սմ, 123/117* в *(09* А *№ 12), 1909 թ., Առաքելոց եկեղեցի։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 90։*

## 101. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի երեք բեկորներ են։ Գոտիների վրա դրոշմված զարդամոտիվը կրկնում է № 80-ը։ Տախտակ VIII, 4։*

*123/118 (10* Кп *№ 1), 120 (10* У.I*), 126 1910 թ.։*

*Հրատարակված է՝ Բաբայան, Կարասներ, էջ 65։*

## 102. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի մեծ բեկոր է։ Նեղ գոտու վրա միմյանցից հեռու դրոշմված են շրջանակներ, խաչաձև զարդով։ Տե՛ս № 73։*

*123/119 (10* п *№ 16), 1910 թ., պատահական։*

## 103. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված են ընդհատվող հյուսածո զարդեր և կետեր։*

*7×10 սմ, 123/121 (10* У *№ 5), 1910 թ.։*

## 104. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված է հետապնդման տեսարան։ Պատկերը բավական մաշված է։*

*9×10,5 սմ, 123/122 (10* Уп *33), 1910 թ., պատահական։*

## 105. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է։ Վրան դրոշմված են վարդյակներ և խաչաձև զարդեր կրող շրջանակներ։*

*8×8,5 սմ, 123/123 (10* У *1), 1910 թ.։ Տախտակ IX, 2։*

## 106. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է։ Դրոշմազարդ գոտու վրա պատկերված է մի մոտիվ, որը շատ է հանդիպում Անիի նույնատիպ կարասների վրա, դրանք ծիսական պար, ոճավորված թռչուններ և կենդանիներ են։*

*9×11 սմ, 123/124 (10* У *I № 18), 1910 թ.։ Տախտակ X, 2։*

## 107. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են վեցթևանի վարդյակներ։*

*6,5×13 սմ, 123/127 (10* D *№ 20), 1910 թ.։ Տախտակ X, 3։*

## 108. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմրավուն կարասի բեկոր է, վրան ծեփածո կանթ և հասարակ արտաքանդակ՝ հյուսված զարդանկար։*

*123/128։*

## 109. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլով կարասի բեկոր է լայն վերադիր հորիզոնական գոտիով։ Գոտու վրա վերադիր կլոր կամարներ են, իսկ կենտրոնում մեծ կոճակաձև զարդ է։*

*8,5×9 սմ, 123/129 (10* п *№ 71), 1910 թ., պատահական։*

### 110. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի գոտու բեկոր է, վրան այծի պատկեր։ Թերի է։*

*3,5×5,5* սմ, *123/130 (10 У. II), 1910 թ.։*

### 111. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի երկու բեկորների գոտու վրա պատկերված են ոճավորված թռչուններ, այծ, որին հետապնդում է շունը, պարող մարդիկ։ Մոտիվը որոշակիորեն կապվում է ծիսական արարողությունների հետ։ Տե՛ս №№ 85, 92, 106-ը։*

*6,5×9,5* սմ, *123/132 (10.У IV. № 128), 1910 թ.։*

*12,5×17,5* սմ, *123/142 (11 М), 1911 թ.։*

### 112. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, պահպանվել է գոտու մի հատվածը՝ վազող կենդանիների տեսարանով։*

*4×8* սմ, *123/131 (10* п *№ 81),1910 թ., պատահական։*

### 113. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Դրոշմազարդ գոտին թերի է, պատկերները խիստ մաշված են։*

*4,5×5,5* սմ, *123/133 (10* п *№ 12), 1910 թ., պատահական։*

### 114. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի երկու բեկորներ են։ Գոտու վրա դրոշմված է ծիսական պարի տեսարան և ոճավորված թռչունների ու կենդանիների պատկերներ։ Առջևից կլոր մեդալիոն՝ վեցթևանի աստղի զարդերով։ Ողջ տեսարանը սահմանազատված է զիգզագաձև միջնորմով։ Տե՛ս № 66, 94։*

*13×17,5* սմ, *123/134 (10* D *19), 1910 թ.։*

*12×5,5* սմ, *123/168։*

### 115. ԿԱՐԱՍԻ ԿԱՆԹ

*Կարմիր փայլեցրած կարասի մեծ կանթ է։ Կանթի վերին մասը ավարտվում է պարուրաձև զարդով։ Կանթի վրա դրոշմված են մեդալիոններ (զարդը՝ վարդյակ)։*

*5,5×18* սմ, *123/135 (10 У.IV 133), 1910 թ.։ Տախտակ XI, 1։*

*Հրատարակված է՝ Առաքելյան I, տախտակ XLII։*

### 116. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր գոտեզարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են միմյանց ետևից վազող կենդանիներ՝ այծ (պահպանվել է իրանի առջևի մասը և գլուխը՝ ետ ծալած զույգ եղջյուրներով) և մի այլ կենդանի՝ հավանաբար շուն (պահպանվել է մարմնի ետևի մասը՝ զույգ ոտքերը և երկար ոլորված պոչը)։ Պատկերները խոշոր են և կատարված են անփույթ։*

*9×14* սմ, *123/136 (10 У. III 45), 1910 թ.։*

### 117. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի բեկորի վրա ուռուցիկ պատկերված է մի կենդանի (պատկերը թերի է)։*

*12,5×15* սմ, *123/137 (10. У. IV № 20), 1910 թ.։*

*Հրատարակված է՝* Чубинов, *էջ 26-ի ծանոթությունը։*

### 118. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի գոտու բեկոր է, վրան դրոշմված են կենաց ծառ և այծ։ Պատկերը թերի է։*

*6,5×7* սմ, *123/138 (10* D *№ 25), 1910 թ., Տախտակ IX, 3։*

### 119. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի մեծ բեկորներ են։ Գոտու վրա դրոշմված պատկերները որոշակի առնչվում են պտղաբերության պաշտամունքի հետ։ Տե՛ս №№ 11, 80, 81, 101։*

*15,5×18* սմ, *123/139 (10 У II № 22), 1910 թ.։*

*8×9* սմ, *123/148 (12* А*), 1912 թ.։*

### 120. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի մեծ բեկոր է։ Հավանաբար պատկանում է № 111 կարասին։ Տե՛ս նաև՝ 85, 92, 106։*

*19×22,5* սմ, *123/140 (10 У I № 25), 1910 թ.։*

## 121. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրայի պատկերները անորոշ են։*

*10×11 սմ, 123/141 (11), 1911 թ.։*

## 122. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված են իրար ետևից դեպի ձախ գնացող երկու այծեր, կենտրոնում՝ ոճավորված կենաց ծառ։ Պատկերը թերի է։*

*9,5×12 սմ, 123/143 (12 A, 35), 1912 թ.։ Տախտակ X, 4։*

## 123. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի փոքր բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են մարդու և թռչունի պատկերներ։ Պատկերները խիստ պարզ են և թերի։*

*5,5×6,5 սմ, 123/144 (12 A), 1912 թ.։*

## 124. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի փոքր բեկոր է։ Գոտու դրոշմվածքները մաշված լինելու պատճառով հնարավոր չի որոշել։*

*6×7,5 սմ, 123/145 (12), 1912 թ.։*

## 125. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում գոտու վրա դրոշմված տեսարանը։ Ձախից պատկերված է հավանաբար դարբինը, որը պատրաստվում է պայտելու գլխիվայր կախված և երկու ոտքերը կապված անասունին։ Այս մոտիվը Անիի դրոշմազարդ կարասների հավաքածուում եզակի է։*

*9,5×11 սմ, 123/146 (12 A), 1912 թ.։ Տախտակ IX,4։*

*Հրատարակված է՝ Բաբայան, Կարասներ, էջ 64։*

## 126. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի երկու բեկորներ են։ Հորիզոնական և ուղղահայաց գոտիների վրա դրոշմված են ոճավորված թռչուններ, նետ ու աղեղով զինված մի հեծյալ։ Ձիու եռասանակը բռնել է մի այլ մարդ, գուրզը ձեռքին։ Ողջ մոտիվը հարստացված է կենաց ծառի, կլոր սկավառակի և ոճավորված պտուղների զարդերով։ Տե՛ս № 56, 91։*

*12×17 սմ, 123/147, (12 A № 5), 1912 թ.։ 123/171։*

## 127. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր դրոշմազարդ միևնույն կարասի երկու բեկորներ են։ Գոտու վրա դրոշմված պատկերները հանդիպում են նույն հավաքածուի № 99 և 124 բեկորների վրա։*

*4,5×6,5 սմ, 3,5×8,5 սմ, 123/149 (12 A), 1912 թ.։*

*123/164 (15 n), 1915 թ., պատահական։*

## 128. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր, անփայլ դրոշմազարդ կարասի բեկոր է, գոտու վրա պատկերված է մի թռչուն և սանդուղքաձև միջնորմ։ Պատկերը թերի է։*

*3,5×6 սմ 123/150 (12 A), 1912 թ.։*

## 129. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի գոտու բեկոր է։ Ուռուցիկ լայն գոտու վրա կան հյուսածո զարդեր։ Տե՛ս № 67, 99։*

*123/151, 1913 թ.։*

## 130. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի երեք բեկորներ են։ Վրան դրոշմված են մեդալիոններ բուսական և երկրաչափական տարբեր զարդերով։*

*8×11 սմ, 10×12,5 սմ, 10,5×12 սմ, 123/152, 153, 154 (13), 1913 թ.։*

## 131. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, պատկերները խիստ մաշված են և անորոշ։*

*6,5×12 սմ, 123/155 (13), 1913 թ.։*

## 132. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է. երկու զուգահեռ հորիզոնական ուռուցիկ գոտիների մեջ արված են ալիքաձև ընդհատվող զարդեր ու կոճակներ։*

*8×20 սմ, 123/156 (13. ХОЛМ № 27), 1913 թ.։*

### 133. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով կավե կարասի մեծ բեկոր է։ Արտաքուստ խիստ քայքայված է, փայլը տեղ-տեղ թափված։ Նկատվում են վերադիր երեք նախշերի հետքեր։*

*123/156 (13* холм *№ 27), 1913 թ.։*

### 134. ԿԱՎԵ ԱՌԱՐԿԱՅԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կավից պատրաստված անորոշ առարկայի բեկոր է, հաստ, անկյունավոր, վրան երկու թույլ գծեր են գնում։*

*123/156a (13* холм *№ 27), 1913 թ.։*

### 135. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով և կարմիր փայլով կարասի բեկոր է։ Վրան ուռուցիկ, կլոր դրոշմ։*

*123/157 (13* холм *№ 27), 1913 թ.։*

### 136. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի երկու բեկորներ են։ Պատկերները, որոնք դրոշմված են լայն գոտու վրա, կրկնում են №№ 66, 94։*

*8,5×28 սմ, 6,5×12,5 սմ, 123/158 (13), 1913 թ.։*

*Հրատարակված է՝ Բարսյան, Կարասներ, էջ 64։*

### 137. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դաջազարդ կարասի բեկոր է։ Զարդը կրկնում է № 132-ը։*

*9,5×12,5 սմ, 123/159 (13), 1913 թ.։*

### 138. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են ոճավորված թռչուններ և կենդանիներ։ Պատկերների վրա կան ինչ-որ որոշակի նշանակության նշաններ։*

*123/161 (14 Д" 7), 1914 թ.։*

### 139. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլով կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված է հնտապնդման տեսարան՝ շունը վազում է եղջերուի ետևից։ Վերևում կլոր վարդյակ է պատկերված։*

*123/160 (14 № 26), 1914 թ.։ Տախտակ VIII, 5։*

### 140. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են ոճավորված մարդկանց (ծիսական պար) և կենդանիների պատկերներ (այծ°). պատկերը թերի է։*

*10×14,5 սմ, 123/162 (15* п*), 1915 թ., պատահական։*

### 141. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է։ Դրոշմված են ոճավորված մարդկանց պատկերներ (ծիսական պար, այծ)։ Պատկերը թերի է. տես № 96։*

*5,5×7,5 սմ, 123/162 (15*п*), 1915 թ., պատահական։*

### 142. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է, վրան հետապնդման տեսարան։ Տե՛ս № 12 և 39-ը։*

*7×10,5 սմ, 123/162։*

### 143. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Երկու զուգահեռ հորիզոնական ուռուցիկ գոտիների միջև արված են կրկնակի ալիքաձև ընդհատվող գարդեր. ոլորման տեղում մեկական կետեր են արված։*

*10×16,5 սմ, 123/163 (15* Λ*), 1915 թ.։*

### 144. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի շրթնամաս է։ Անմիջապես պսակի տակ կան երեք շարք հորիզոնական գծիկներ։ Կանթի կենտրոնում, կամարի տակ անցք կա։*

*6×7 սմ, 123/165 (13), 1913 թ.։*

### 145. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ ԵՎ ԿԱՆԹ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է և կանթի մի մասը։ Բեկորի դրոշմազարդ գոտու վրա մեծ պլանով պատկերված են կենաց ծառ և այծեր։ Աջից պարի տեսարան է։ Դրոշմը թերի է։ Նույնատիպ տեսարան է դրոշմված եղել նաև կանթի վրա։*

*11×13,5 սմ, 123/167, 4,2×8 սմ, 123/170։ Տախտակ X, 5։*

### 146. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են խիստ ոճավորված կենդանիների պատկերներ, որոնք դինամիկ վիճակում են։ Պատկերը թերի է։

7×7,5 սմ, 123/169։ Տախտակ V, 5։

### 147. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլով դրոշմազարդ կարասի ուղղահայաց իջնող լայն կանթի բեկոր է։ Տե՛ս № 145։

123/170։

### 148. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլով դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված պատկերը կրկնվում է №№ 11, 80, 81, 101, 119 և այլն։ Թերի է։

6×7,5 սմ, 123/173։

### 149. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Վրան դրոշմված է կլոր մեդալիոն՝ ոճավորված վարդյակի զարդով։

4×8 սմ, 123/174։

### 150. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Վրան դրոշմված է մեդալիոն, երկու հավասար եռանկյունիներով արված վեցթևանի աստղ, որի կենտրոնում, փոքր շրջանակի մեջ, պատկերված է խաչ։

9×10,5 սմ, 123/175։

### 151. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, բավական մաշված զարդանախշերով, վրան դրոշմված են թռչուններ։

5,5×7,5 սմ, 123/178։

### 152. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի փոքր բեկոր է։ Գոտու վրա դրոշմված մոտիվը չի հանդիպում Անիում հայտնաբերված մյուս դրոշմազարդ կարասների վրա։ Տեսարանը զուտ պաշտամունքային է. կենտրոնում խաչ է (զուցե ոճավորված կենաց ծառ), որի երկու կողմերում պատկերված են մարդկային փոքրիկ պատկերներ։ Խաչի վերևում մեկական թռչուն, իսկ մարդկանցից աջ ու ձախ՝ մեկական այծ։

6,5×8 սմ, 123/177։

### 153. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է, անփայլ։ Գոտու վրա դրոշմված են սյունաձև միջնորմ և ծիսական պարի տեսարան։ Թերի է։

3,5×6,5 սմ, 123/178։

### 154. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի փոքրիկ բեկոր է, փայլը քայքայվել է։ Վրան դրոշմված է ծիսական պարի տեսարան։

123/178։

### 155. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր մեծ կարասի բեկոր է, հաստ պատերով, բավական քայքայված։ Ներսի մասում նկատվում են հարդի հետքեր, արտաքին մասը ունեցել է թեթև փայլ։

123/179։

### 156. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած կարասի մեծ բեկոր է՝ լայն կանթով։ Դրոշմված գոտու վրա պատկերված են ձախից աջ իրար ետևից վազող կենդանիներ (այծ, եղջերու)։ Տեսարաններն իրարից անջատված են կլոր զույգ մեդալիոններով, որոնց ներսում ութթերթանի վարդյակներ են։

18×27 սմ, 123/180։ Տախտակ XI, 3։

### 157. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա իրարից համաչափ հեռավորությամբ դրոշմված են երկրաչափական զարդանախշով 4 վարդյակ։

14,5×20 սմ, 123/181։

### 158. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված է երկրաչափական զարդով 5 վարդյակ։

14×21 սմ, 123/182։

## 159. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի բեկոր է, վրան դրոշմված զարդերը կրկնում են № 65-ը։*

*10×15 սմ, 123/183։*

## 160. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Դրոշմազարդ կարասի բեկոր է։ Ուղղահայաց գոտու վրա դրոշմված են ալիքաձև զարդեր։ Տե՛ս № 72-ը։*

*7,5×9 սմ, 123/184։*

## 161. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր կարասի փոքրիկ բեկոր է։ Դրոշմված է ոճավորված կենդանու գլուխ, որն ունի երկար ականջներ և կլոր աչքեր։ Զարդը թերի է։*

*6×8 սմ, 123/185։*

## 162. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլով դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա դրոշմված են ծիսական պար, ոճավորված թռչուն, այծ, սրա հետևից վազող շուն, երկուսի վերևում ճախրում են երկու փոքրիկ թռչուն։*

*7,5×10,5 սմ, 123/186։*

*Հրատարակված է՝ Բարայան, Կարասներ, էջ 67։*

## Գլուխ երկրորդ

# ԿԱՎԱՄԱՆՆԵՐ

Անիի պեղումներից հայտնաբերված նյութերի մի զգալի մասը կազմում են կավամանները: Խեցեղենի այս խումբը բաժանվում է երկու հիմնական մասի՝ հասարակ, անջնարակ խեցեղեն և ջնարակած անոթներ (գերազանցապես ֆրեղաններ և թասեր): Հասարակ խեցեղենի ժողովածուն «Հատկանշական ցուցակում» ներկայացված է որպես սափորների վզեր, ծորակներ, կանթեր, անոթների հատակներ, խփեր՝ մարդակերպ բռնակներով, ամբողջական անոթներ (փարչեր, ֆրեղաններ, սափորներ, պուլիկներ, ճրագներ, գավաթներ, պնակներ և այլն):

Ջնարակապատ ամանները իրենց ձևերով, զարդերով և կատարման տեխնիկայով բազմազան են: Այստեղ կան տեխնիկական տարբեր հնարքներով պատրաստված անոթներ, զարդերի, նկարների և գույների հիանալի կատարում և ընտրություն, որը խոսում է Անիի խեցեգործ վարպետների նուրբ ճաշակի մասին: Բազմազան են ֆրեղանների վրա հանդիպող զարդամոտիվները՝ մարդկային դեմքեր, կենդանիներ, թռչուններ, երկրաչափական և բուսական զարդեր:

Խեցեղենի այս ամբողջ խումբը թվագրվում է 10—13-րդ դդ. և բավական հարուստ է ներկայացված: Պետք է նշել, որ ջնարակած անոթների մեջ խիստ սակավ են վաղ շրջանի տիպերը, ինչպես, օրինակ, անգոբով նկարազարդված խեցեղենը:

### 163. ԽՓԻ ԲՌՆԱԿ

*Կարմիր փայլեցրած ամանի խփի բռնակ է, մարդու գլխի նման: Հոնքերը և ականջները վերադիր են, աչքերը ներճկված: Հստակ պատկերված է բերանը և քիթը:*

*Բարձրությունը՝ 6 սմ, 123/187 (06 № 70), 1906 թ.: Տախտակ XII, 1:*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 58:*

### 164. ԿԱՎԱՆՈԹԻ ԿԱՆԹ

*Մեծ անոթի հաստ կանթ է: Վրան ելուստաձև զարդ է, ոճավորված կենդանու գլխի տեսքով: XI—XII դդ.:*

*123/188 (11 с 3), 1911 թ.:*

### 165. ԿԱՎԱՆՈԹԻ ԾՈՐԱԿ

*Ձիու գլխի տեսքով կավանոթի ծորակ է: Լավ արտահայտված են սուր ականջները և բաշը: Աչքերի տեղում ագուցված են հախճապակու փոքրիկ կտորներ: XI—XII դդ.:*

*123/189 (10 У. IV. №61), 1910 թ.: Տախտակ XIII, 1:*

### 166. ԿԱՓԱՐԻՉԻ ԿԱՆԹ

*Կավե փոքրիկ կափարիչի կանթ է: Վերին ուռուցիկ մասի մի հատվածում փորագրված է մարդու դեմք: XI—XII դդ.:*

*123/192* A *(10* К *№ 93), 1910 թ.:*

### 167. ԿԱՓԱՐԻՉԻ ԿԱՆԹ

*Կափարիչի կանթ է, սուր գագաթով, մի կողմում պատկերված է դեմք: XI—XII դդ.:*

*123/192 (10* К *№ 93), 1910 թ.: Տախտակ XIII, 3:*

### 168. ՍԱՓՈՐԻ ՎԻԶ

*Կարմիր փայլեցրած սափորի վզի բեկոր է, շուրթերը թերի են, վզի երկու կողմից իջնում են կարճ ելուստներ: XI—XII դդ.:*

*123/195 (12* A*), 1912 թ.:*

### 169. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Բաց կանաչավուն հախճապակյա անոթի փոք-*

րիկ բեկոր է, առյուծի գլխի նման: XII—XIII դդ.:
123/198:

### 170. ԿԱՓԱՐԻՉԻ ԿԱՆԹ

Կավե փոքրիկ կափարիչի կանթ է: Վերին ուռուցիկ մասի մի հատվածում պատկերված է մարդու դեմք: Աչքի տեղում ագուցված է ապակի:
123/193 (10 К № 33), 1910 թ.:

### 171. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

Կարմրավուն կավից պատրաստված հաստ պատերով սափորի ստորին մասն է, գլանաձև նըստակով: Վրան փոքր կլոր կնիքով դրոշմված են զարդեր (վարդյակաձև): XI—XII դդ.:
3×4 սմ, 123/202 (07 № 44), 1907 թ.: Միջնաբերդ:
Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 105:

### 172. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

Մանրահատիկ նուրբ կավից պատրաստված դրոշմազարդ սափորի բեկոր է: Վրան կաղապարի մեջ սեղմելու եղանակով արված են հյուսածո, տերևաձև և աստղաձև զարդանախշեր:
3,5×5,5 սմ, 123/204 (07 № 151), 1907 թ.: Միջնաբերդ:
Հրատարակված է՝ 1. Реестр, 1907 г., стр. 16:
2. КАМД, стр. 59:

### 173. ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Կավանոթի տափակ ու լայն կանթի բեկոր է: Արտաքին մակերեսի վերին մասում փորագրված է ձկան կամ օձի գլուխ: XI—XII դդ.:
123/205:

### 174. ԿԱՆԹԻ ՄԱՍ

Կավե մեծ խփի կանթի մաս է՝ սրածայր: Հիմքում ունի երկու հորիզոնական ռելիեֆ գոտի: Մի կողմում պատկերված է մարդկային դեմք՝ քիթն ու հոնքերը վերադիր, աչքերի տեղը կլոր շրջանակներ են, ականջների մասը ուռուցիկ է, դեմքի հակառակ կողմից իջնում է ուղղահայաց գոտի: XI—XII դդ.:
123/206:

### 175. ՍԱՓՈՐԻ ՇՐԹՆԱՄԱՍ

Սպիտակ, մանրահատիկ կավից նուրբ պատրաստված սափորի շրթնամաս է: Վրան հորիզոնական ուղիղ և ալիքաձև զարդեր են: XII—XIII դդ.:
123/207 (10 У. III №98), 1910 թ.:

### 176. ԿԱՎԱՄԱՆԻ ԿԱՆԹ

Կավե մրապատ տապակի երկար կանթ է: Ծայրի կողմը սնամեջ է, հիմքում մի վերադիր կոճակ կա: XI—XII դդ.:
123/208 (07 № 121), 1907 թ.: Միջնաբերդ:
Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 12:

### 177. ՍԱՓՈՐԻ ՀԱՏԱԿ

Մանրահատիկ սպիտակ կավից պատրաստված բարակ պատերով փոքրիկ սափորի հատակ է՝ օղակաձև նստակով: XI—XII դդ.:
123/209 (07 № 167), 1907 թ.: Միջնաբերդ:
Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 17:

### 178. ԿԱՓԱՐԻՉԻ ԲԵԿՈՐ

Հասարակ կավից պատրաստված գորշավուն փոքրիկ կափարիչի բեկոր է, ուղղահայաց կանթով: Կափարիչի եզրին և դեպի կենտրոն արված են կետազարդեր, իսկ կանթի վրա՝ թեք գծիկներով զարդեր: XII—XIII դդ.:
123/210 (10. III 88), 1910 թ.:

### 179. ԿԱՓԱՐԻՉԻ ՄԱՍ

Փոքր կավամանի կափարիչի կեսն է, կոպիտ պատրաստված, կենտրոնում բարձր եռւստավոր բռնակով: Կափարիչը բաժանված է չորս հավասար մասի, ազատ տարածությունները լցված են կետազարդերով: XII—XIII դդ.:
123/211:

### 180. ՍԱՓՈՐԻ ՎԻԶ

Սպիտակ, նուրբ կավից, բարակ պատերով սափորի վիզ է: Բերանը կենդանակերպ է: XI—XII դդ.:
123/212 (07 № 49), 1907 թ.: Միջնաբերդ:
Հրատարակված է՝ 1. Реестр, 1907 г., стр. 6:
2. КАМД, стр. 59:

## 181. ՍԱՓՈՐ

Սպիտակ, մանրահատիկ կավից պատրաստված նուրբ սափոր է։ Իրանը քիչ ուռուցիկ է և զարդարված մատնեքներով։ Շուրթը ալիքավոր է, հատակը հարթ։ Վզի վրա՝ հորիզոնական ուղիղ և ալիքավոր զարդագոտի։ Կանթը վերականգնված է։ XI—XII դդ.։

Բարձրությունը՝ 10 սմ, 123/213 (06. 195), 1906 թ.։ Տախտակ XIV, 1։

Հրատարակված է՝ КАМД, էջ 51։

## 182. ՍԱՓՈՐԻԿ

Կարմիր փայլեցրած, մանրահատիկ կավից պատրաստված նուրբ պատերով փոքրիկ սափորիկ է, ցածր ոտքով, ուռուցիկ իրանով։ Վիզն ու կանթը վերականգնված են։ XI—XIII դդ.։

123/214 (06. 137), 1906 թ.։ Տախտակ XV, 1։

## 183. ՍԱՓՈՐԻԿ

Սպիտակ կավից ձեռքով պատրաստված սափորիկ է։ Իրանը երկարավուն է, ծածկված մատնեքներով, հատակը քիչ բարձր։ Նեղացող վզի վրա կան երկու հորիզոնական գոտիներ, բերանի բացվածքը քառատերև ծաղկի ձև ունի։ Ունի փոքրիկ կանթ։

Բարձրությունը՝ 17 սմ, 123/215 (12 A 63), 1912 թ.։ Տախտակ XIV, 2։

## 184. ՋԱՀ

Կարմիր կավից պատրաստված շրջանաձև, վերևը նեղ, ներքևը լայն ջահ է (պահպանվել է մոտավորապես կեսը)։ Ջահի վրա կան երկու հորիզոնական վերադիր գոտիներ, որոնց վրա դրված են եղել փոքրիկ գավաթներ կամ թասիկներ, որտեղ լցվում էր վառվող հեղուկը։ Վերին գոտու վրա պահպանվել են երեք, իսկ ներքևում չորս գավաթ։ Գոտիների արանքում եղած ազատ տարածության վրա կա ձվաձև բացվածք, կենտրոնում սյունանման միջնորմ։ XII—XIII դդ.։ Տախտակ XXXIX, 1։

123/216 (08 ռ 56), 1908 թ., պատահական։

Հրատարակված է՝ 1. КАМД, էջ 67։
2. Առաքելյան I, էջ 220։

## 185. ՍԱՓՈՐ

Կարմիր փայլեցրած գնդաձև իրանով և կանթով փոքրիկ սափոր է։ Ունի համեմատաբար կարճ վիզ, բերանի շուրթը ներսից կլոր է, իսկ դրսից եռատերև, ստորին մասում փայլ չունի։ XI—XIII դդ.։

Բարձրությունը՝ 8,5 սմ, 123/217 (12 A 86), 1912 թ.։ Տախտակ XV, 1։

## 186. ՔՐԵՂԱՆ

Կավից պատրաստված, կարմիր փայլով խորը քրեղան է՝ հարթ հատակով։ Շուրթը ուղիղ կտրված է և դեպի դուրս ծալված։ XI—XII դդ.։

Տրամագիծը՝ 17,5 սմ, 123/218 (10 D 14), 1910 թ.։

## 187. ՔՐԵՂԱՆ

Կարմիր փայլով խորը քրեղան է։ Տե՛ս № 186-ը։

123/219 (07. 88), 1907 թ.։ Միջնաբերդ։

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 16։

## 188. ՍԱՓՈՐ

Կարմիր փայլեցրած, մանրահատիկ կավից պատրաստված նուրբ պատերով սափոր է, ուռուցիկ իրանով, կարճ, նեղ վզով։ Կանթից ցած, իրանի շուրջը հորիզոնական նեղ զարդագոտի է արված, շուրթը և իրանի մի մասը վերականգնված են։ XI—XIII դդ.։

123/220 (09 A 33), 1909 թ.։ Տախտակ XV, 2։

## 189. ՍԱՓՈՐ

Կարմիր փայլեցրած միկանթանի սափոր է, գնդաձև իրանով, նեղ վզով։ Իրանի կենտրոնով անցնում է քիչ ներճկված հորիզոնական ակոսաձև գոտի։ Վզի հիմքում երեք շարք հորիզոնական գոտիներ են, կանթը ոլորուն է, շուրթն՝ ալիքաձև։ XI—XIII դդ.։

123/221 (06 № 210), 1906 թ.։ Տախտակ XV, 3։

Հրատարակված է՝ КАМД, էջ 50։

## 190. ԿՃՈՒՃ

Կարմիր փայլեցրած անկանթ փոքրիկ կճուճ է, նեղ, կարճ վզով, դեպի ցած լայնացող իրանով, հարթ հատակով։ Իրանի վրա հորիզոնական գոտի կա։ XI—XIII դդ.։

123/222 (07. 224), 1907 թ.։ Տախտակ XVII, 4։

Հրատարակված է՝ 1. Реестр, 1907 г., стр. 24։
2. КАМД, стр. 55։

## 191. ՍԱՓՈՐ

*Կարմիր փայլեցրած միկանթանի փոքրիկ սափոր է, ուռուցիկ իրանով, նեղ վզով։ Իրանի վրա կան թեք մատնեքներ, վզից ցած՝ հորիզոնական գոտի է անցնում։ Բերանի բացվածքը մի տեղ սեղմված է։ X—XI դդ.։*

*Բարձրությունը՝ 14,5* սմ, *123/225 (08* n *14), 1908 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 50։*

## 192. ՍԱՓՈՐ

*Կարմիր փայլեցրած միկանթանի փոքրիկ սափոր է, ուռուցիկ իրանով, նեղ վզով։ Ստորին մասում գույնը ավելի բաց է, վզիկը վերականգնված է։ XI—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 10,5* սմ, *123/223 (08 № 48), 1908 թ.։*

## 193. ԿՃՈՒՃ

*Կարմիր փայլեցրած երկկանթանի փոքրիկ կճուճ է, ուռուցիկ իրանով, լայն բերանով և կարճ վզով։ Կանթերի հիմքում, իրանի շուրջը հորիզոնական գոտի է անցնում։ Վզի հիմքից երկու տեղով ուղղահայաց նեղ վերադիր գոտիներ են իջնում. հատակը մրապատ է, շուրթը՝ թերի։ XI—XIII դդ.։*

*Բերանի տրամագիծը՝ 7* սմ, *123/224 (15* Ա *28), 1915 թ.։ Տախտակ XVI, 2։*

## 194. ՍԱՓՈՐ

*Սպիտակ, մանրահատիկ կավից պատրաստված նուրբ պատերով սափոր է։ Երկարավուն է, վերևի մասում քիչ նեղացող իրանով և մի կանթով։ Իրանի վրա կան մատնեքներ, իսկ վզի շուրջը՝ հորիզոնական 5 գոտի. երեքը ուղիղ, երկուսը ալիքաձև։ Բերանի բացվածքը քառատերև ծաղկի ձև ունի։ XI—XII դդ.։*

*Բարձրությունը՝ 12* սմ, *123/226* Ա*։ Տախտակ XIV, 3։*

## 195. ԿՃՈՒՃ

*Կարմիր փայլեցրած, հարթ հատակով միկանթանի փոքրիկ կճուճաձև անոթ է։ Բերանի բացվածքը կանթի միացման տեղում քիչ ներճկված է։ XI—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 5,5* սմ, *123/227* Ա*։ Տախտակ XVII, 2։*

## 196. ԿԺԻ ԾՈՐԱԿ

*Կարմիր փայլեցրած կժի ծորակ է, կենդանակերպ։ Ետևի մասում բերանի մեծ բացվածքն է, որտեղից լցվել է հեղուկը, իսկ առջևի մասում կենդանու լայն, կլոր բերանն է և աչքերի բացվածքը, որտեղից թափվել է հեղուկը։ Ցայտուն են պատկերված կենդանու կարճ ականջները։ Գլխից ցած, սափորի վզի երկու կողմում, կան բռնակի ձևով կարճ ելուստներ։ XI—XIII դդ.։*

*123/228 (06. 196), 1906 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 58։*

## 197. ՍԱՓՈՐԻ ՎԻԶ

*Կարմրավուն սափորի երկար վիզ է։ Բերանի բացվածքը և կանթը լրիվ չեն պահպանվել, բերանի բացվածքի մոտ կա վերադիր կոճակ։ XI—XIII դդ.։*

*123/229 (11* M*), 1911 թ.։*

## 198. ՍԱՓՈՐԻ ԲԵՐԱՆ

*Կարմիր կավից պատրաստված սափորի վիզ է, կրկնակի ծորակով, որոնցից մեկը լայն է, մյուսը նեղ։ Ծորակը հիմքում ունի մեկ վերադիր գոտի։ XI—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 10* սմ, *123/230 (06. 126), 1906 թ.։*

## 199. ԿՃՈՒՃԻ ԲԵԿՈՐ

*Կոտրված շրթով հասարակ, գորշավուն կճուճի բեկոր է։ Շրթի տակ դեմ-դիմաց ամրացված են երկու կիսալուսնաձև վերադիր եղջյուրներ։ XI—XIII դդ.։*

*123/231 (14* Ш*. 10), 1914 թ.։ Շիրակավան։*

## 200. ԿՃՈՒՃԻ ԲԵՐԱՆԻ ՄԱՍ

*Կավե հասարակ կճուճի բերանի մաս է, վերադիր նախշով, որ թողնում է կիսակամար կանթի տպավորություն։ XI—XII դդ.։*

*123/231 (14* Ш*. 10), 1914 թ., Շիրակավան։*

## 201. ՋՐԱՄԱՆ

*Կարմիր, մանրահատիկ կավից պատրաստված անխվաձև ջրաման է, սնամեջ իրանով, ունի կարճ*

*վզիկ և երկու փոքր կանթ։ XI—XIII դդ.։*

*123/232 (05 № 54), 1905 թ.։ Տախտակ XVII, 3։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 58։*

## 202. ՃՐԱԳ

*Գորշ, հասարակ կավից պատրաստած ճրագ է. գլանաձև, ցածր մասում քիչ լայնացող բարձր ոտքի վրա։ Ծրագամանը տափակ է, ցածր եզրերով, նեղ քթով։ XII—XIII դդ.։*

*123/233 (06 № 93), 1906 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 65։*

## 203. ՃՐԱԳ

*Կարմրավուն, հասարակ կավից պատրաստած, նեղ քթով ճրագ է։ Տակից շարունակվում է, թողնելով կափարիչի բռնակի տպավորություն։ Հավանաբար սա էլ № 202 ճրագի նման ունեցել է երկար ոտք։ XII—XIII դդ.։*

*123/234 (09* А *№ 24), 1909 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 65։*

## 204. ՃՐԱԳ

*Գորշ, հասարակ կավից պատրաստած ճրագ է, վերևը փակ է և իր ձևով նմանվում է բյուզանդական նավակաձև ճրագներին։ Վզիկը քիչ բարձր է և ավարտվում է շրջանաձև բերանով, իսկ քթի վրայի բացվածքը նշաձև է։ XI—XII դդ.։*

*123/235 (08* п *№ 37), 1908 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 65—66։*

## 205. ՃՐԱԳ

*Կարմիր, հասարակ կավից պատրաստած ճրագ է, ունի նեղ քիթ և պոչուկ։*

*123/236 (05. 48), 1905 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 68։*

## 206. ԱՆՈԹԻ ԿԱՆԹ

*Կարմրավուն անոթի կանթ է, կամարաձև, անամեջ։*

*123/237 (10 У II 20), 1910 թ.։*

## 207. ԿԱՎԱՆՈԹԻ ԿԱՆԹ

*Կարմրավուն, մեծ տապակի նլուստաձև կանթ է՝ մի կողմից սնամեջ, վրան երկու ուղիղ և մեկ ալիքավոր հորիզոնական գոտիներ։ Ակադեմիկոս Ն. Մառի կարծիքով մոմակալ է, սակայն այն վերապահությամբ, որ մոմակալի համար այն բավական խորն է։*

*Բարձրությունը՝ 15 սմ, 123/238 (07 № 213), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 23։
2. КАМД, *էջ 60։*

## 208. ՍԱՓՈՐԻԿ

*Կարմիր փայլեցրած կավից պատրաստած փոքրիկ սափորիկ է, ուռուցիկ իրանով, նեղ բերանով և ակոսաձև կլոր կանթով։ XI—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 9 սմ, 123/239 (15* А. *6), 1915 թ.։ Տախտակ XVI, 1։*

## 209. ՃՐԱԳ

*Հասարակ կավե գավաթաձև ճրագ է, քիչ սուր քթով, մրապատ։ XI—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 5 սմ, տրամագիծը՝ 6,5 սմ։*

*123/241 (12* А. *33), 1912 թ.։*

## 210. ՊՆԱԿԻ ԲԵԿՈՐ

*Մանրահատիկ կավից փոքրիկ, կարմիր փայլեցրած պնակի բեկոր է։*

*123/240։*

## 211. ՔՐԵՂԱՆ

*Գորշ, խոշորահատիկ կավից պատրաստած խորը քրեղան է, առանց զարդանախշի։*

*Բերանի տրամագիծը՝ 16 սմ։*

*123/242։*

## 212. ԿՃՈՒՃ

*Կարմիր փայլեցրած, կավից պատրաստած կճուճ է, քիչ երկարավուն, ուռուցիկ իրանով, կարճ վզով, դեպի դուրս փռված թեք շրթով։ XI—XIII դդ.։*

*Բերանի տրամագիծը՝ 9,5 սմ, շրթի լայնությունը՝ 1,2 սմ։*

*123/243 (08* C *№ 18), 1908 թ.։ Տախտակ XVI, 3։*

## 213. ԱՂԱՄԱՆ

*Փոքրիկ, կլոր աղաման է, ներսից պատած է կանաչ ջնարակով։ XI—XII դդ.։*

*Տրամագիծը՝ 8 սմ, բարձրությունը՝ 3,5 սմ։*

*123/245 (15* А *№ 4), 1915 թ.։*

### 214. ՃՐԱԳ

Գորշավուն կավից պատրաստած եռանկյունաձև ճրագ է, քթի մասը մրապատ։
123/246 (14 № 12), 1914 թ.։ Տախտակ XII, 2։

### 215. ԳԱՎԱԹ

Գորշավուն հասարակ կավից պատրաստած փոքրիկ գավաթ է, շրջանաձև, խորը, հաստ պատերով, կարճ նստուկի վրա։ Հավանաբար հալոց է։
Տրամագիծը՝ 7,5 սմ։
123/247։

### 216. ՃՐԱԳ

Հասարակ կավից կոպիտ պատրաստած, ոչ խորը շրջանաձև ճրագ է։
Տրամագիծը՝ 6,5 սմ։
123/248 (06 № 176), 1906 թ.։
Հրատարակված է՝ КАМД, էջ 57։

### 217. ԱՂԱՄԱՆ

Կանաչ ջնարակապատ փոքրիկ աղաման է, հարթ հատակով և ակոսաձև շրթով։ XI—XIII դդ.։
Տրամագիծը՝ 7 սմ։
123/249 (06. 26), 1906 թ.։
Հրատարակված է՝ КАМД, էջ 57։

### 218. ԱՂԱՄԱՆ

Կանաչ ջնարակապատ փոքրիկ աղաման է, կարճ նստուկի վրա։
Տրամագիծը՝ 5,5 սմ։ XI—XIII դդ.։
123/250 (10 № 4а), 1910 թ.։

### 219. ԱՂԱՄԱՆ

Հասարակ կավից պատրաստված կոպիտ, հաստ, ուղիղ պատերով և տափակ նստուկով աղաման է։
Տրամագիծը՝ 6,5 սմ։
123/251 (06 № 13), 1906 թ.։

### 220. ԱՂԱՄԱՆ

Կարմրավուն կավից պատրաստված երկնագույն ջնարակով պատած փոքրիկ աղաման է, ունի կարճ, կլոր նստուկ։ Շուրթը տափակ է, քիչ դուրս թեքված։ XI—XIII դդ.։
Տրամագիծը՝ 7,5 սմ։
123/252 (11 М 32), 1911 թ.։

### 221. ԱՂԱՄԱՆ

Փոքրիկ աղաման է, ներսից կանաչ ջնարակապատված։ Դեպի դուրս շրջված եզրի վրա կան սև զարդագծեր՝ հայերեն Թ տառի տեսքով։ Ունի բարձր ոտք։ XI—XIII դդ.։
Տրամագիծը՝ 7,5 սմ։
123/253 (15 АН), 1915 թ.։ Տախտակ XII, 3։

### 222. ԱՂԱՄԱՆ

Կարմիր, փոքրիկ աղաման է։ Տե՛ս № 220-ը։
Տրամագիծը՝ 7,5 սմ։
123/254 (06 № 96), 1906 թ.։
Հրատարակված է՝ КАМД, стр. 57։

### 223. ԿՃՈՒՃ-ԹԱՆԱՔԱՄԱՆ

Հախճապակյա, երկնագույն ջնարակով ծածկված փոքրիկ, գնդաձև կճուճ է, կարճ վզով և փոքրիկ ոտքով։ Մեջը ինչ-որ նյութի մնացորդ կա։ Ակադեմիկոս Օրբելու կարծիքով թանաքաման է։
123/255 (08. 30), 1908 թ.։
Հրատարակված է՝ КАМД, стр. 84։

### 224. ԿՃՈՒՃ

Կավե փոքրիկ կճուճ է, ներսից ու դրսից պատած է կանաչ ջնարակով։ Ունի գնդաձև իրան, կարճ, նեղ վզիկ և հարթ, կարճ նստուկ։
Բարձրությունը՝ 5,5 սմ։
123/257։

### 225. ՃՐԱԳ

Կանաչ ջնարակապատ ճրագ է, վրան կան մրի հետքեր։ Կանթը և քթի ծայրը վերականգնված են։ XI—XIII դդ.։
123/258 (08 № 8), 1908 թ.։ Տախտակ XII, 4։
Հրատարակված է՝ КАМД, стр. 84։

### 226. ՃՐԱԳԻ ՄԱՍ

Կավե ճրագի կես մասն է, գավաթաձև, ծածկված կանաչ ջնարակով, դուրս ծալված շրթով, կարճ քթով։ XI—XIII դդ.։
123/259 (07 № 102), 1907 թ.։
Հրատարակված է՝ 1. Реестр, 1907 г., стр. 11։
2. КАМД, стр. 65։

## 227. ԹԱՍ

*Կավե փոքրիկ թաս է, կարճ, օղակաձև ոտքի վրա, ծածկված կանաչ ջնարակով։ XII—XIII դդ.։*

*Տրամագիծը՝ 9,8 սմ։*

*123/260։*

## 228. ԿԱՂԱՊԱՐԻ ԲԵԿՈՐ

*Քարե երկկողմանի կաղապարի բեկոր է՝ մետաղե զարդեր (խաչեր, ուլունքներ և այլն) պատրաստելու համար։*

*123/261 (08* п *№ 49), 1908 թ., պատահական, թանգարանի հիմքը փորելու ժամանակ։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 81։

## 229. ԽԱՉՔԱՐ

*Սև տուֆից փոքրիկ խաչքար է, պատվանդանի վրա։ Խաչի պատկերը արտահայտված է հորիզոնական և ուղղահայաց լայն ակոսներով։ Բացի այդ, խաչի հորիզոնական գծից վերև կա մեկական սեպաձև նախշ։ XI—XII դդ.։*

*123/262 (09 A № 23), 1909 թ., Առաքելոց եկեղեցի։ Տախտակ XIII, 2։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 71։

## 230. ԽԱՉՔԱՐ

*Սպիտակ ավազաքարից փոքրիկ խաչքար է պատվանդանի վրա։ XI—XII դդ.։*

*123/263 (05 № 59), 1905 թ., Գագկաշեն։ Տախտակ XIII, 4։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 71։

## 231. ԽԱՉՔԱՐ

*Կարմրավուն տուֆից փոքրիկ խաչքար է, տակի մասը՝ նեղ և սուր։ Վրան պատկերված խաչի բոլոր թևերն ունեն եռաճյուղ վերջավորություն* (  )*։ Խաչի շուրջն անկանոն դասավորությամբ կետազարդեր են արված։*

*123/264 (12 A), 1912 թ.։*

## 232. ԴՐՈՇՄ

*Քառանկյունաձև տափակ կավե դրոշմ է՝ բռնակով։ Դրոշմի վրա պատկերված են խաչաձև, նշաձև, եռանկյունաձև և զիգզագ զարդագծեր, որոնք մարդու ոճավորված պատկերի տպավորություն են թողնում։ XII—XIII դդ.։*

*5,5×8 սմ, 123/265, (12 A), 1912 թ.։*

## 233. ԽԱՂԱՔԱՐ

*Նստած առյուծի նման չեչաքարից պատրաստված խաղաքար է։ Առյուծի դիմագծերը արտահայտված են խորագիր գծերով, ակնախոռոչները ընդելուզված են երկնագույն հախճապակու բեկորներով։ Մեջքին միմյանց հետ հատվող խաչաձև զարդագծեր են արված, կողերին՝ լայն փորվածքներ։ Նման խաղաքարեր գտնվել են Դվինի պեղումների ժամանակ միջնադարյան շինություններից մեկում։ Ակադեմիկոս Հ. Օրբելին Անիից գտնված այս օրինակը համարում է «տնաքերիչ»։ XI դար։*

*123/266 (07. 143), 1907 թ., պալատական բաղնիք։ Տախտակ XII, 5։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 15։
2. КАМД, стр. 79։

## 234. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բազմագույն ջնարակապատ քրեղանի բեկոր է, բուսական և կենդանական փորագիր զարդերով (տերևներ, ձիու մարմնի մի մասը՝ առջևի ոտքերը և ետևի մի ոտքը)։ XII դ.։*

*123/267։*

*Հրատարակված է՝ Բարայան, ՊԲՀ, էջ 150։*

## 235. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Մուգ կանաչ ջնարակած սափորի վզի և ուսի բեկոր է։ Վրան վերադիր կոնաձև զարդանախշեր կան։ XI—XII դդ.։*

*123/268 (15 A), 1915 թ.։*

## 236. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Դեղնավուն կավից քրեղանի բեկոր է, ոչ բարձր կողերով, ունի ուղիղ եզր, կարճ, կլոր նստուկ։ Քրեղանի մեջ անգոբով կենդանական և բուսական զարդեր են արված (հավանաբար եղնիկ), որոնք արտածածկված են բաց դեղնավուն ջնարակով։ Արտաքինից պատած է կանաչ ջնարակով։ XI դ.։*

*123/269 (08. 29), 1908 թ.։ Տախտակ XXXIX, 2։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 52։*

## 237. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կավե քրեղանի բեկոր է։ Սպիտակ անգոբի վրա արված են խաչաձև, շրջանաձև, թեք, մուգ դարչնագույն, գորշագույն և կանաչ զարդագծեր։ X—XI դդ.։*

*123/270։*

### 238. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կավե քրեղանի փոքր բեկոր է։ Սպիտակ անգոբի վրա մուգ դարչնագույն, կանաչ և բաց դարչնագույն գծերով պատկերված են զարդածաղիկներ և անգղաղյուծի գլուխ։ XI—XII դդ.։ Տախտակ XXXIX, 3։*

*123/271 (10 У IV. № 40), 1910 թ.։*

### 239. ԱՐԿՂԻԿԻ ՄԱՍ

*Դեղնավուն կավից ուղղանկյուն արկղիկի բեկոր է, ծածկված դեղնականաչ ջնարակով։ Վրան արված են խորագիր զարդանախշեր՝ փիգզագաձև գծերից կազմված գոտիներ և սրածայր (երկկենտրոն) կամարներ։ X—XI դդ.։*

*123/272 (08 № 24), 1908 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 51։*

### 240. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կավե քրեղանի բեկոր է, ծածկված անգույն ջնարակով։ Սպիտակավուն ֆոնի վրա արված են մուգ դարչնագույն և գորշ գծազարդեր։ Պատկերված է մարդու 2 ոտք։ XI—XIII դդ.։*

*123/273։*

### 241. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կարմրավուն քրեղանի բեկոր է, լայն օղակով և նստուկով։ Սպիտակ անգոբով պատկերված են ճախրող գիշատիչ թռչուններ, որոնց ոտքերի մագիլները միացած են իրար։ Պահպանվել է մեկի մարմինը և մյուսի երկու ոտքերը։ Ողջ մակերեսը պատած է անգույն ջնարակով և տեղ-տեղ կանաչ կետերով։ X—XI դդ.։ Տախտակ XXXIX, 5։*

*123/274 (08 № 66), 1908 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, *էջ 52։*

*2. Ֆ. Բաբայան, Միջնադարյան ջնարակած խեցեղենի մի քանի նմուշների մասին, ՊԲՀ, 1967, 1, էջ 148, (հետագայում՝ Բաբայան, ՊԲՀ)։*

### 242. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կավե թասի բեկոր է, ծածկված կանաչ ջնարակով։ Ներսի մասում պսակի մոտ, կիսակլոր շրջանակի մեջ, պատկերված է թռչուն (պահպանվել է գլուխը և թևի ծայրը)։ XII—XIII դդ.։ Տախտակ XXXIX, 4։*

*123/275։*

*Հրատարակված է՝ Բաբայան, ՊԲՀ, էջ 148։*

### 243. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է։ Սպիտակ ֆոնի վրա արված են դարչնագույն զարդեր։ XII—XIII դդ.։*

*123/277 (10 У. IV. 133), 1910 թ.։*

### 244. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կավե քրեղանի բեկոր է, անգոբած, ծածկված անգույն ջնարակով։ Զարդերը կատարված են փորագիր և ֆոնը հեռացնելու տեխնիկայով։ XII—XIII դդ.։*

*123/278։*

### 245. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ջնարակապատ կավե անգոբած քրեղանի բեկոր է։ Զարդերը փորագիր են։ Պսակի վրա կանաչ և բաց դարչնագույն զարդագծեր։ XIII դար։*

*123/279։*

### 246. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կավե ջնարակապատ քրեղանի փոքրիկ բեկոր է, ներսից և դրսից անգոբած։ Դրսից ծածկված է կանաչ ջնարակով, զարդերը փորագիր են։*

*123/280։*

### 247. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ջնարակած քրեղանի բեկոր է։ Զարդերն արված են սպիտակ անգոբով։ Կան կանաչ և դարչնագույն ցայտքեր։ XI դար։*

*123/281։*

### 248. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ջնարակած քրեղանի բեկոր է։ Զարդն արված է անգոբով և ծածկված քիչ դեղնավուն ջնարակով։ XI դար։*

*123/282։*

### 249. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կանաչ ջնարակած քրեղանի փոքրիկ բեկոր է։*

*Բուսական զարդերն արված են անգոբը հեռացնելով: XII—XIII դդ.:*
*123/283:*

## 250. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Խոշորահատիկ կավից՝ ջնարակած քրեղանի բեկոր է: Զարդն արված է անգոբով, անմիջապես խեցու վրա և ծածկված է դեղնավուն ջնարակով: Վրայի անցքերը կոտրած ամանը կպցնելու համար են: XI դար:*
*123/284:*

## 251. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Դեղնականաչավուն ջնարակով և փորագիր զարդով կավե քրեղանի բեկոր է:*
*123/285:*

## 252. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ջնարակապատ կավե քրեղանի օղակաձև հատակի բեկոր է: Ներսից՝ փորագիր վարդյակ: XII—XIII դդ.:*
*123/286:*

## 253. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Օղակաձև նստուկով ջնարակած քրեղանի հատակ է: Տե՛ս № 252:*
*123/287:*

## 254. ՔՐԵՂԱՆԻ ՄԱՍ

*Օղակաձև նստուկով ջնարակած քրեղանի հատակ է: Ներսի մասում փորագիր վարդյակներ են արված, որոնք պատած են կանաչ ջնարակով: XII—XIII դդ.:*
*123/288:*

## 255. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ջնարակած քրեղանի բեկոր է: Փորագիր զարդերը ծածկված են դեղնավուն ջնարակով: Բեկորը անգոբած է: XII դար:*
*123/289:*

## 256. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բազմագույն ջնարակով պատած կավե քրեղանի փոքրիկ բեկոր է: Զարդը փորագիր է (կլոր օղակի մեջ ցանց): XII—XIII դդ.:*
*123/290:*

## 257. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մանրահատիկ կավից պատրաստած, բարակ պատերով ջնարակած քրեղանի բեկոր է: Զարդերը կատարված են փորագրությամբ և պատած բազմագույն ջնարակով: XII—XIII դդ.*
*123/291:*

## 258. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Շուրթը դեպի դուրս ծալված կավե քրեղանի բեկոր է: Փորագիր զարդերը պատած են բաց կանաչ ջնարակով: XII—XIII դդ.:*
*123/292:*

## 259. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Թույլ փորագիր զարդով և շրթնամասով ջնարակած քրեղանի փոքրիկ բեկոր է: XII դար:*
*123/293:*

## 260. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բազմագույն ջնարակով կավե քրեղանի բեկոր է, փորագիր զարդով: XII—XIII-րդ դդ.:*
*123/295:*

## 261. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Թեք պատերով և ուղիղ պսակով կավե քրեղանի մեծ բեկոր է: Ներսի մասում արված են թույլ փորագիր, երկրաչափական զարդեր: Ողջ մակերեսը պատած է բաց դեղնավուն ջնարակով: XII—XIII դդ.:*
*123/296:*

## 262. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Դեղնավուն ջնարակապատ կավե քրեղանի բեկոր է:*
*123/297:*

## 263. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կավե քրեղանի փոքրիկ ջնարակապատ բեկոր է, դեղնականաչ ֆոնի վրա արված են փորագիր ցանցկեն զարդեր: XII—XIII դդ.:*
*123/298:*

## 264. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բազմագույն ջնարակապատ քրեղանի փոքրիկ բեկոր է, զարդը նույնն է (ցանցկեն):*
*123/299:*

## 265. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Ջնարակապատ կավե քրեղանի բեկոր է, ներսից պատած բաց դեղնավուն ջնարակով։ Զարդը փորագիր է՝ ալիքներ, վերցրած կլոր շրջանակի մեջ։ XII—XIII դարեր։

123/300։

## 266. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Ջնարակած քրեղանի փոքրիկ բեկոր է, դեղին ֆոնի վրա մուգ դեղին զարդագծերով։ XII—XIII դդ.։

123/301։

## 267. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Դեղնավուն ջնարակապատ կավե մեծ քրեղանի նստուկի և կողի մաս է։ Բաց դեղնավուն ֆոնի վրա դարչնագույն զարդագծերով 6 անկյուններ են արված՝ կենտրոնում դարչնագույն կետեր։ 6 անկյունները բաժանված են դարչնագույն եռանկյունիների, որոնց կենտրոնում սպիտակ շրջանակներ են արված։ Նկարը փորագրված է անգոբի վրա։ Հատակին թրծման եռոտանու հետք կա՝ ∴ ձևով։

123/302 (06 216)։ Տախտակ XL, 1։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 56։
2. Б. Шелковников. «Поливная керамика из раскопок города Ани», Ереван, 1957, стр. 25—26.
(Հետագայում՝ Шелковников, Поливная...)

## 268. ՊՆԱԿ

Ջնարակած կավե թերի պնակ է (եզրերը պակասում են)։ Սպիտակ ֆոնի վրա դարչնագույն զարդագծեր են արված, անգոբի վրա փորագրելու եղանակով։ Համակենտրոն երկու շրջագծերի միջի տարածությունը բաժանված է եռանկյունների, որոնց մի մասը լցված է ծաղկազարդով։ Վերոհիշյալ շրջագծերից դուրս կա մի այլ շրջանակ, որը ծածկված է անընդհատ բոլորվող բուսական զարդագծերով։ XII—XIII դդ.։ Տախտակ XL, 2։

123/303 (06.86), 1906 թ., Աշոտաշեն պարիսպների մոտ։

Հրատարակված է՝ Առաքելյան, Քաղաքները, Ա, Տախտակ I։

## 269. ՔՐԵՂԱՆ

Կարմիր կավից պատրաստված ջնարակապատ քրեղան է, որը ցածր օղակաձև տակ ունի։ Դարչնագույն ֆոնի վրա արված են մուգ դարչնագույն զարդագծեր։ Երկու համաչափ շրջագծերի մեջ պատկերված է ութաթև վարդյակ։ XII—XIII դդ.։ Տախտակ XLIII, 1։

123/304 (06. № 197), 1906 թ., Գագկաշեն եկեղեցի։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 57։
2. Шелковников, Поливная... стр. 28—29։

## 270. ԹԱՍ

Դեղնավուն կավից պատրաստված ցածր, սկավառակաձև նստուկով ջնարակապատ թաս է, ծածկված անգոբով։ Զարդագծերը մուգ մանուշակագույն և շագանակագույն են։ Ներսից՝ թասի կենտրոնում, մանուշակագույն ներկով արված է X-աձև զարդ, ապա երկու համակենտրոն մանուշակագույն շրջագծերի մեջ պատկերված են չորս աղեղ և չորս մանր շրջագծեր։ Վերջինիս կենտրոնում կարմիր ներկով արված են մեկական ավելի փոքր շրջագծեր, իսկ յուրաքանչյուր շրջագծի երկու կողմում կա մեկական եռանկյունաձև զարդ (դարձյալ կարմիր), որը լցված է ծաղկազարդով. մնացած ազատ տարածությունը ծածկված է գծազարդով։ Թասի դրսի կողերին դարչնագույն զարդագծեր են արված պարսկերեն գրերի նմանությամբ։ Թասը թերի է, ճեղքված, վերականգնված։ Ներմուծված է։ X—XI դարեր։ Տախտակ XLIII, 2։

Բարձրությունը՝ 6 սմ, տրամագիծը՝ 18,5 սմ։

123/305 (07 № 103), 1907 թ., Միջնաբերդ, Բագրատունիների պալատ։

Հրատարակված է՝ 1. Реестр, 1907, стр. 11։
2. КАМД, стр. 52։
3. Шелковников, Поливная... стр. 15։

## 271. ՔՐԵՂԱՆ

Գորշավուն կավից պատրաստված օղակաձև, ցածր նստուկով ջնարակած քրեղան է։ Ներսը ամբողջությամբ ծածկված է անգոբով և պատած

ցեղնավուն ջնարակով։ Քրեղանի կենտրոնական մասում պատկերված է կանգնած կնոջ կերպարանք, որը ձախ ձեռքը հենել է կողքին, իսկ աջում հավանաբար հայլի է, շորը սպիտակ է, կանաչ, մանուշակագույն զարսերով։ Մեջքին գոտի է կապած, գլխին ունի գլխարկ։ Կնոջ պատկերը երկու կողմից վերցված է կանաչ աղեղների մեջ։ Աղեղներից դուրս պատկերված են թռչուններ՝ կացելու դիրքով։ Քրեղանի ֆոնը սպիտակ է, ազատ տարածությունները ծածկված են շագանակագույն կետազարդերով։ Դրսի կողմից ուղղահայաց կողերի վրա կան մի քանի զույգ ուղղահայաց լայն գծեր։ XII—XIII դդ.։ Տախտակ XL, 3։

Բարձրությունը՝ 8 սմ, տրամագիծը՝ 17 սմ։

123/306 (05 n № 1), 1905 թ., պատահական։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 54։
2. Шелковников, Поливная... стр. 16։
3. Վ. Աբրահամյան, Արհեստները..., էջ 219։
4. Բաբայան, ՊԲՀ, էջ 150։

## 272. ՔՐԵՂԱՆ

Կարմիր գույնի, խոշորահատիկ կավից պատրաստած, օղակավոր նստուկով ջնարակած քրեղան է, ծածկված անգոբով և պատած ջնարակով։ Սպիտակ ֆոնի վրա քրեղանի կենտրոնում փորագրված է 6 թևանի մեծ վարդյակ, յուրաքանչյուր թևում կա մի ռոմբաձև զարդ, իսկ դրանց մեջ՝ ծաղկազարդ։ Այդ վարդյակը պարփակված է երկու համակենտրոն շրջագծերից կազմված շրջանակի մեջ, որն իր հերթին մի գեղեցիկ ծաղկագոտի է ներկայացնում։ Դրանից վեր, մինչև քրեղանի եզրը, արված են պայտաձև զարդեր, որոնց կենտրոնում դարձյալ ծաղկազարդեր են։ XII—XIII դարեր։

123/307 (05 № 27), 1905 թ., Գագկաշեն եկեղեցի։ Տախտակ XL, 4։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 57։
2. Шелковников, Поливная... стр. 27։
3. Վ. Աբրահամյան, Արհեստները...., էջ 217
4. А. Л. Якобсон, Средневековый Херсонес. МИА 17, стр. 180։

## 273. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Կարմիր գույնի, խոշորահատիկ կավից պատրաստած, ոչ բարձր օղակաձև նստուկով քրեղանի բեկոր է, պատած անգույն (քիչ կանաչավուն) ջնարակով։ Ներսը ամբողջությամբ և դուրսը մասամբ ծածկված են անգոբով։ Անգոբի վրա փորագրված է երկար վզով թռչուն։ Թռչունի վիզն ու կուրծքը դեղին են, թևը, պոչն ու ոտքերը կանաչ։ XII—XIII դդ.։ Տախտակ XL, 5։

123/308 (60.180), 1906, Գագկաշեն եկեղեցի։

Հրատարակվել է՝ 1. КАМД, стр. 52։
2. Шелковников, Поливная... стр. 19։
3. Առաքելյան, I էջ 238։

## 274. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Մուգ կարմիր գույնի, խոշորահատիկ կավից պատրաստած ուղղահայաց պատերով, օղակաձև նստուկով ջնարակած քրեղանի բեկոր է։ Անգոբի վրա փորագրված է կանաչ և դարչնագույն զարդագծերով մի թռչուն (պակասում են պոչը և մի ոտքի մատները), ապա արված են բուսական զարդանախշեր։ Մնացած տարածությունը ծածկված է կետազարդերով։ Տախտակ XL, 6։

123/309 (08 C № 19), 1908 թ., Հյուրանոց։

Հրատարակված են՝ 1. КАМД, էջ 52։
2. Шелковников, Поливная... стр. 18։
2. Առաքելյան I, տախ XLIX։

## 275. ԹԱՍ

Կարմրավուն, խոշորահատիկ կավից պատրաստած, բարձր պատերով, ներս ծալված պսակով, ցածր, օղակաձև նստուկով թաս է։ Ջնարակը բաց կանաչավուն է։ Ողջ մակերեսը ներսից և դրսից անգոբած է։ Թասի հատակը զարդարված է շախմատաձև դասավորված շեղանկյուններով։ Միկրոնդմեջ հեռացված է անգոբի ֆոնը և ծաղկազարդված (մուգ դարչնագույն)։ XII—XIII դդ.։ Տախտակ XLI, 1։

123/310 (10 У. IV 134), 1910 թ., Աշոտաշեն պարիսպներ։

Հրատարակված է՝ Шелковников, Поливная..., стр. 25։

## 276. ԹԱՍ

*Կարմրավուն, խոշորահատիկ կավից պատրաստված թաս է, օղակավոր ոտքի վրա. ամբողջությամբ պատած է անգոբով։ Ներսից պատած է բաց դեղին գույնի ջնարակով և դարչնագույն զարդագծերով, պսակը և ներսի կես մասը կանաչ։ Կենտրոնում մի զույգ շրջագծերի մեջ վանդակավոր զարդ է. վանդակները մեկընդմեջ ծածկված են բուսական մանր զարդանախշով։ XII—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 9 սմ, տրամագիծը՝ 19,5 սմ։*
*123/310, 1910 թ., Աշոտաշեն պարիսպներ։*

*Հրատարակված է՝* 1. Шелковников. Поливная... стр. 25։

## 277. ՔՐԵՂԱՆ

*Դեղնակարմիր կավից պատրաստած, կանաչ ջնարակապատ օղակաձև բարձր նստուկով, ուղիղ շրթով քրեղան է։ Ներսից անգոբի վրա փորագրված են բուսական զարդեր։ XII—XIII դդ.։*

*Բարձրությունը՝ 6 սմ, տրամագիծը՝ 16,5 սմ։*
*123/311 (07. 58), 1907 թ., Միջնաբերդ։*

## 278. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Մուգ դարչնագույն, խոշորահատիկ կավից պատրաստած՝ ցածր օղակաձև նստուկով խորը թասի բեկոր է։ Ներսից ամբողջությամբ, իսկ դրսից միայն եզրերը ծածկված են անգոբով։ Ջնարակը բաց դեղնավուն է։ Հատակին, ճառագայթների մեջ, պատկերված է առյուծ, դեպի աջ քայլելիս։ Չեն պահպանվել կենդանու գլուխն ու առջևի ձախ ոտքը։ Առյուծը դարչնագույն է, ճառագայթները՝ կանաչ և մուգ մանուշակագույն։ Եզրի շուրջը մի սանդուղքաձև երիզ է արված։ Պատկերը փորագրված է անգոբի վրա և ծածկված ջնարակով։ XII—XIII դդ.։ Տախտակ* XLI, *2։*

*123/312 (11* с. b.*), 1911 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Шелковников. Поливная... стр. 18։
2. *Առաքելյան, I հ., տախ.* XLIX։
3. *Բարայան, ՊԲՀ, էջ 150։*

## 279. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Մուգ կարմիր, խոշորահատիկ կավից պատրաստած, ցածր օղակաձև նստուկով ափսեի բեկոր է։ Ջնարակը անգույն է։ Ափսեի մեջ սպիտակ անգոբով նկարված է չորսթերթանի վարդյակ, բուսական զարդամոտիվներով հարստացրած։ XII—XIII դդ.։ Տախտակ* XLI, *3։*

*123/313 (15.*А *22), 1915 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Шелковников. Поливная... стр. 28։

## 280. ԿՃՈՒՃ

*Խոշորահատիկ կավից պատրաստված, կարճ վզով երկարավուն կճուճ է, նեղ ուսերով, ուղղահայաց կողերով, ոչ բարձր ոտքի վրա։ Դրսից ծածկված է կապույտ ջնարակով։ Վիզը վերականգնված է։ XI—XII դդ.։*

*Բարձրությունը՝ 13 սմ, 123/314 (11.*А *35), 1911 թ.։*

## 281. ԲԱԺԱԿԻ ԲԵԿՈՐ

*Կարմրավուն կավից պատրաստված փոքր բաժակի կես մասն է, մատնեքաձև կողերով։ Երկու կողմից ծածկված է երկնագույն ջնարակով։ XI—XIII դդ.։*

*123/315 (05 № 4), 1905 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 52։

## 282. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր, խոշորահատիկ կավե քրեղանի բեկոր է, ցածր օղակավոր ոտքի վրա, ներսից ծածկված է անգոբով։ Զարդանկարը թույլ փորագրված է անգոբի վրա, ջնարակն անգույն է և բաց կանաչ, զարդագծերը բաց դարչնագույն են, տեղ-տեղ մուգ դարչնագույն շիթեր կամ ճառագայթներ են արված։ Վրան պատկերված է երկար հյուսերով կին, որը պարում է, դեմքը դիմացից, իրանը՝ կողքից, ձեռքերը դեպի աջ վեր բարձրացրած։ Ձախ կողմում մի շղթայանման զարդ կա։ Դեմքի վրա մի քանի տեղ դարչնագույն շեղ գծեր են արված։ XII—XIII դդ.։ Տախտակ* XLI, *4։*

*123/316 (15* А*), 1915 թ.։*

*Հրատարակված է՝* Шелковников. Поливная... стр. 24։

## 283. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Օղակաձև բարձր նստուկի վրա հաստ պատերով, կարմիր, խոշորահատիկ կավից պատրաստած քրեղանի բեկոր է։ Ներսից և մասամբ էլ*

դրսից ծածկված է անգոբով։ Սպիտակ ֆոնի վրա պատկերված են եռանկյունաձև զարդեր՝ մեկընդ-մեջ դեղին ու մուգ կանաչ և բառաթև վարդյակներ, դարձյալ մեկընդմեջ կանաչ ու դեղին թերթիկնե-րով։ XII—XIII դդ.։

123/317 (10 Ѵ. IV. 134), 1910 թ., Աշոտաշեն պարիսպների մոտ։

Հրատարակված է՝ Шелковинов, Поливная... стр. 20։

### 284. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Կարմիր, խոշորահատիկ կավից պատրաստած, հաստ պատերով, խորը քրեղանի մի մեծ բեկոր է, ցածր օղակաձև ոտքի վրա։ Ներսից պատած է անգոբով։ Կենտրոնում փորագիր պատկերված է կանաչ գույնի մի կենդանի, հավանաբար ցուլ (գլուխն ու առջևի 2 ոտքերը չեն պահպանվել)։

Կենդանու վերևը և ոտքերի տակը ծածկված են կանաչ բուսական զարդերով, իսկ մնացած մասը՝ դարչնագույն կետերով։ Նկարը թափանցիկ ջնա-րակապատված է։ XII—XIII դդ.։

123/318 (15 A), 1915 թ., պատահական։

Հրատարակված է՝ Шелковников, Поливная..., ная... стр. 19։

2. Առաքելյան, 1 հ., էջ 238։

3. Բաբայան, ՊԲՀ, էջ 149։

### 285. ՔՐԵՂԱՆ

Կարմրավուն, խոշորահատիկ կավից պատ-րաստված քրեղան է, ցածր օղակաձև ոտքի վրա։ Անգոբած է, վրայից կանաչ ջնարակապատած։ Կենտրոնում, շրջագծի մեջ, դարչնագույն զույգ զարդագծերով պատկերված են երկու եռանկյունի-ներ, որոնք հատվելով միմյանց հետ կազմում են վեցաթև աստղ։ Դարչնագույն զարդագծերով կազմ-ված ժապավենները ներսում կանաչ են։ Անոթի վրա կան դարչնագույն ցայտքեր։ XI—XIII դդ.։ Տախտակ XLI,5։

123/319 (15 A), 1915 թ.։

Հրատարակված է՝ Шелковников. Поливная... стр. 20։

### 286. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

Կարմրադարչնագույն, խոշորահատիկ կավից պատրաստած քրեղան է, պատած անգոբով, ոչ խորը, նստած ցածր օղակավոր ոտքի վրա։ Ջնա-րակը բաց կանաչ է. մուգ դարչնագույնով պատ-կերված է ոլորվող ծայրերով վեցթևանի զարդ։ XI—XII դդ.։ Տախտակ XLI, 8։

123/320։

Հրատարակված է՝ Шелковинов, Полив-ная... стр. 17։

2. Առաքելյան, 1 հ., տ. [illegible] XLVIII։

### 287. ՔՐԵՂԱՆ

Կարմրավուն, խոշորահատիկ կավից պատ-րաստած քրեղան է, ցածր օղակավոր ոտքի վրա։ Ներսից ծածկված է անգոբով, երկու կողմից պա-տած է անգույն և բաց կանաչ գույնի ջնարակով։

Կենտրոնում, անգոբի վրա, փորագրված են երկու համակենտրոն շրջագծեր, դրանց շուրջը, համաչափ հեռավորության վրա, զույգ գծերից տերևաձև օղակներ են, որոնց միջտեղում զիգզա-գաձև զարդագծեր են արված։ Ամբողջ զարդը վարդյակի տպավորություն է թողնում. հավանա-բար ներմուծված է Դվինից։ XII—XIII դդ.։ Տախ-տակ XLI, 6։

123/321։

Հրատարակված է՝ Шелковинов, Полив-ная... стр. 23—24։

2. Բաբայան, ՊԲՀ, էջ 150։

## Գլուխ երրորդ

# ՃՔԱՂՅՈՒՍՆԵՐ

Անիի հնագիտական իրերի ժողովածուում մի փոքրիկ խումբ են կազմում ճքաղյուսները: Աստղաձև և բազմանիստ ճքաղյուսների մի մասը (պահպանվել է միայն բեկորներով) ոսկեգույն է և գերազանցապես սպիտակ ու կապույտ ֆոնով: Նման ճքաղյուսներն իրենց վրա կրում են պարսկերեն արձանագրություններ: Առանձին խումբ են կազմում տեղական ծագում ունեցող, կանաչ և կապտավուն ջնարակով պատած մեծ աղյուսները:

Ճքաղյուսները 12—13-րդ դդ. լայնորեն կիրառվել են Հայաստանում: Դրանց լավագույն օրինակները, Անիից բացի, հայտնի են նաև Գառնիի և Դվինի պեղումներից: Ճքաղյուսներով հարդարվել են աշխարհիկ և պաշտամունքային շինությունների արտաքին մասերը, տեղ-տեղ օգտագործվել են նաև շենքերի ներսի հարդարանքներում:

Ճքաղյուսների օգտագործման հետաքրքիր փաստ դիտվում է Եղվարդի ս. Աստվածածին եկեղեցու վրա:

Անիի ճքաղյուսներն իրենց պատրաստման եղանակով և զուգահեռ նյութերով թվագրվում են 12—13-րդ դդ.:

### 288. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Աստղաձև (8 թևանի), շողյուն ճքաղյուսի երկու բեկորներ են: Եզրագոտին կապույտ է (կոբալտ)՝ ոսկեգույն փայլով, վրան կա պարսկերեն արձանագրություն: XIII դար:*

*123/322 (10 У, I № 4), 1910 թ., 123/323 (04 13 a, b), 1904 թ.:*

### 289. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն ճքաղյուսի քառակուսի բեկոր է, որը պատրաստված է խոշորահատիկ կավից: Ոսկեգույն ֆոնի վրա արված են սպիտակ գույնի ուռուցիկ բուսական զարդեր: XIII դար:*

*123/324 (10 У. II. № 31), 1910 թ.:*

### 290. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն ճքաղյուսի բեկոր է, եզրագոտիով գնում է պարսկերեն արձանագրություն, կենտրոնում արված է բուսական զարդ: Գույները՝ սպիտակ, կապույտ և ոսկեգույն (խունացել են):*

*123/325 (10 Y. IV. № 27), 1910 թ.:*

### 291. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն ճքաղյուսի բեկոր է: Սպիտակ ֆոնի վրա արված են կապույտ գծեր և ոսկեգույն զարդածաղիկներ: XIII դար:*

*123/326 (06 M № 46), 1906 թ.:*

### 292. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն ճքաղյուսի փոքրիկ բեկոր է: Սպիտակ ֆոնի վրա նկարված են ոսկեգույն բուսական զարդ և կետեր: XIII դար:*

*123/328 (04. 13 c), 1904 թ.:*

### 293. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն, աստղաձև ճքաղյուսի բեկոր է, № 288-ի տիպի:*

*123/329 (09 A № 5), 1909 թ., Առաքելոց եկեղեցի:*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 36:

### 294. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Աստղաձև ճքաղյուսի բեկոր է: Տե՛ս № 288, 293:*

*123/330 (04 № 80), 1904 թ.:*

### 295. ՃՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն ճքաղյուսի աստղաձև բեկոր է (տե՛ս*

№ 288, 293, 284)՝ արաբերեն արձանագրությամբ, որը վերծանել է Հ. Օրբելին։

123/331 (06 № 72), 1906 թ., Գագկաշեն եկեղեցի։

Հրատարակված է՝ КАМД, стр. 36։

## 296. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Աստղաձև, շողյուն շքաղյուսի բեկոր է, կապույտ ու սպիտակ զարդանկարներով։ Նկատելի է հատկապես ձկան պատկերը։

123/332 (07 № 139), 1907 թ., Միջնաբերդ։

Հրատարակված է՝ 1. Реестр, 1907 г., стр. 15։
2. КАМД, стр. 36։

## 297. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն շքաղյուսի փոքրիկ բեկոր է, սպիտակ ֆոնի վրա երկնագույն և ոսկեգույն զարդագծերով։

123/333 (09 п № 58), 1909 թ., պատահական, Ծաղկոցաձորից։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37։

## 298. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն շքաղյուսի աստղաձև բեկոր է, սպիտակ ֆոնի վրա, կապույտ, ոսկեգույն և կանաչավուն երանգներով։ Պահպանվել են մի քանի արաբերեն գրեր։

123/334 (09 п № 57), 1909 թ., պատահական, Ծաղկոցաձորից։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37։

## 299. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն շքաղյուսի բեկոր է, ոսկեգույն ֆոնի վրա արված են սպիտակ քառաթև ծաղիկներ և մանր կետազարդեր։

123/335 (08 с № 46), 1908 թ., Հյուրանոց։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37։

## 300. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն շքաղյուսի բեկոր է, սպիտակ ֆոնի վրա կապույտ և ոսկեգույն, բուսական և երկրաչափական զարդերով։ Բեկորի մի անկյունում պահպանվել է պարսկերեն արձանագրություն։

123/336 (08 с 21), 1908 թ., Հյուրանոց։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37։

## 301. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն շքաղյուսի փոքրիկ բեկոր է, ծածկված բուսական զարդով։

123/337 (08 п 52), 1908 թ., պատահական։

## 302. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շքաղյուսի բեկոր է։ Սպիտակ, ոչ հարթ մակերեսի վրա կան կապույտ գծանկարներ։

123/338 (08 п 50), 1908 թ., պատահական։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37։

## 303. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն շքաղյուսի փոքրիկ բեկոր է, ծածկված բուսական զարդանկարով։

123/339 (09 п 56), 1909 թ., պատահական։

## 304. ՀԱԽՃԱՍԱԼԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Հասարակ հախճասալի չորս բեկորներ են, անզարդ, պատած կանաչ ջնարակով։ Հակառակ երեսին ակոսներ են արված։

123/340 (16 п № 3), 1916 թ., պատահական։
123/344 (08 с 17), 1908 թ., Հյուրանոց։
123/347 (08 с 35), 1908 թ., Հյուրանոց։
123/349 (09 УМ 24), 1909 թ., «Մառի փողոց»։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37։

## 305. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Խոշորահատիկ, դեղնավուն կավից պատրաստված հաստ աղյուսի բեկոր է, ծածկված կանաչ ջնարակով։ Վրան կան զուգահեռ գծազարդեր։

123/341 (08), 1908 թ.։

## 306. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Քառակուսի, մեծ շքաղյուսի բեկոր է, ուռուցիկ զարդերով, ծածկված երկնագույն ջնարակով։

123/342։

## 307. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր, մանրահատիկ կավե սալիկի բեկոր է, որը պատած է կանաչ ջնարակով։

123/343 (10У. III. 46), 1910 թ.։

## 308. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն ջնարակով պատած բազմանկյուն, բարակ շքաղյուսի բեկոր է։

123/345։

## 309. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր, մանրահատիկ կավից պատրաստված շքաղյուսի բեկոր է, վրան ուռուցիկ արաբատառ արձանագրություն։ Ողջ մակերեսը պատած է կապտականաչավուն ջնարակով։

123/346։

Հրատարակված է՝ Н. Я. Марр. XI-я анийская археологическая кампания, СПБ, 1913, стр. 58.

## 310. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Կանաչ ջնարակապատ կարմիր աղյուսի փոքրիկ բեկոր է։ Վրան դաջված է փոքրիկ շրջագծերով զարդ։

123/348 (15 п), 1915 թ., պատահական։

## 311. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն ջնարակով պատած կարմիր աղյուս է։ Վրան հավանաբար եղել են ծաղկազարդեր։ Ջնարակը տեղ-տեղ թափված է։

123/350 (07 № 199), 1907 թ.։

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 22։

## 312. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն ջնարակով պատած քառանկյուն շքաղյուսի մեծ բեկոր է։ Վրան վերադիր արաբերեն արձանագրություն կա։

123/351։

Հրատարակված է՝ Н. Марр, Ани, տախտակ XLVII, 203։

## 313. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն ջնարակով պատած բազմանկյուն սալիկ է, որը պատրաստված է դեղնավուն կավից։

123/353։

## 314. ՇՔԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

Կարմրավուն կավից պատրաստված շքաղյուսի փոքրիկ, հաստ բեկոր է, ծածկված երկնագույն ջնարակով և անկանոն վանդակավոր գծերով։

123/354։

## 315. ՔՐԵՂԱՆ

Ցածր օղակավոր ոտքի վրա նստած կարմիր քրեղան է։ Անգոբած է և ծածկված բաց դեղնավուն ջնարակով։ Շրթի վրա դրսից կան տերևաձև, զիգզագանման զարդեր։ Ունի չորս նեղ և բարձր բռնակներ և մի փոքրիկ կարճ ծորակ։ Բռնակներից մեկը և ծորակը, ինչպես նաև շրթի մի փոքր մասը վերականգնված են։ XII—XIII դդ.։

Բարձրությունը՝ 15 սմ, տրամագիծը՝ 20 սմ։ Տախտակ XLI, 7։

123/356 (06. 151), 1906 թ.։

Հրատարակված է՝ КАМД, էջ 51։

## Գլուխ չորրորդ

# ՀԱԽՃԱՊԱԿԻ

Հայաստանը ջնարակած խեցեղենի և մասնավորապես հախճապակու արտադրության բնագավառում Մերձավոր արևելքում գրավել է առաջնակարգ տեղերից մեկը: Այդ են ապացուցում Հայաստանի պեղվող հնավայրերից հայտնաբերված բազմաքանակ նյութերը: Այդ տեսակետից մեծ արժեք է ներկայացնում Անիում հայտնաբերված հախճապակու հարուստ ժողովածուն: Անիի հախճապակին բաժանվում է երկու մեծ խմբի՝ տեղական և ներմուծված: Կատարման տեսակետից բազմաքանակ են տեղական օրինակները: Դրանց մեջ աչքի են ընկնում միագույն՝ կաքնագույն, երկնագույն, փիրուզագույն, երբեմն մանուշակագույն թասերը, որոնց վրայի զարդերը կատարված են մեծ վարպետությամբ: 10—11-րդ դարերով են թվագրվում ցանցկեն զարդերով անոթները, որոնք հայտնաբերվել են 1064 թ. սելջուկների կողմից ավերված Բագրատունիների պալատից: Այս տիպի հախճապակե անոթները պատկանում են Անիի արտադրության վաղ ժամանակաշրջանին և աչքի են ընկնում իրենց մեղմ գույներով և զարդի պարզությամբ: Տեղական հախճապակու զարգացման երկրորդ փուլը 12—13-րդ դարերն են, երբ երևան են գալիս բազմաթիվ նոր ձևեր և զարդամոտիվներ: Այս շրջանի Անիի հախճապակուն խիստ բնորոշ է վերադիր զարդը՝ դիմակների, խոշոր կռնակների և հյուսածո պարանների ձևով: Լայն տարածում է ստանում նաև բուսական և կենդանական զարդը: Երբեմն հանդիպում են մարդկանց պատկերներ: 12—13-րդ դդ. Անիում արտադրվում է բազմագույն հախճապակի, ինչպես նաև ոսկեփայլ զարդերով շողյուն հախճապակի, որը, սակայն, մեզ քիչ է հասել: Նման խեցեղեն մեզ հասել է Բագրատունիների թագավորության վերջին շրջանից և հատկապես 12—13-րդ դարերից: Շողյուն հախճապակե անոթները ունեն նոխ հարդարանք և գույների բազմազանություն:

Ժողովածուում, բավական ստվար խումբ են կազմում հախճապակու ներմուծված օրինակները՝ շողյուն, բարձրարվեստ կատարմամբ թասեր և այլ անոթներ, որոնք պատրաստվել են գլխավորապես պարսկական խեցեգործական կենտրոններում (Ռեյ, Սուլթանաբադ և այլն) և թվագրվում են 12—13-րդ դդ.: Դրանք մեծ մասամբ կաքնագույն կամ բաց կապույտ ֆոն ունեցող անոթներ են, որոնց վրա տարբեր տիպի բուսական և կենդանական ոսկեգույն զարդեր են արված: Հետաքրքիր են նաև այսպես կոչված չինական սելադոնի գյուտերը Անիի պեղումներից, որոնք ցույց են մերձավորարևելյան բնորոշ օրինակություններ են: Պետք է նշել, որ ի պատիվ Անիի ներմուծված իրերի այս հարուստ ժողովածուն վկայում է նշված դարաշրջանում Միջնադարյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկի առևտրական լայն կապերի մասին:

### 316. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի հատակի մաս է: Սպիտակ ֆոնի վրա պատկերված է դարչնագույն զարդագծերով կանացի դեմք, որն ունի երկար, հաստ ծամեր: XII—XIII դդ., Ռեյ:*

*123/357 (08 № 79 ա), 1908 թ.:*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 56:*

### 317. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է: Դրսի կողմից պատված է մուգ կապույտ ջնարակով, ներսից՝ սպիտակ ֆոնի վրա, պատկերված է մուգ դարչնագույն զարդագծերով կանացի դեմք՝ կարճ մա-*

ղերով, սապատավոր քթով: XII—XIII դդ.:

123/358 (08 № 79 Ь), 1908 թ.:

Հրատարակած է՝ КАМД, էջ 57—58:

## 318. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կոր պատերով, բարձր, օղակաձև նստուկով հախճապակե թասի բեկորներ են, պատած բարձրորակ երկնագույն ջնարակով: Վատ պահպանված լինելու հետևանքով հնարավոր չէ ամբողջացնել նկարը: Սև և ;րագոտու վրա սպիտակ գույնով արված է արաբական արձանագրություն՝ «Աստված»: Կարմիր թերթիկներով (արևածաղկի նման) շրջանակների մեջ պատկերված են թռչուններ, մի բեկորի վրա կանացի դեմքի կեսն է, զանազան ծաղիկներ և այլն: Նկարն անելու ժամանակ օգտագործվել է ոսկեզօծման տեխնիկան: XII—XIII դդ., Իրան:

123/359 (07 № 47), 1907 թ., Բագրատունիների պալատ:

Հրատարակված է՝ 1. Реестр 1907 г., стр. 5—6.
2. КАМД, стр. 55:
3. Шелковников, Поливная керамика... стр. 55—56:
4. Шелковников, Средневековая худож. керамика Ближнего и Дальнего Востока. Известия, 1942, № 6 стр. 16.

## 319. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Հախճապակե թասի բեկորներ են, սպիտակ ֆոնի վրա արված են կարմրավուն ու գորշ զարդագծեր, արտաքին մասում ունեցել է արձանագրություն:

123/360:

## 320. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է՝ կապույտ ֆոնի վրա սպիտակ, երկնագույն, ոսկեգույն և կարմիր ցայտագծերով, ներսից պատկերված է լայնեզր գլխարկով կնոջ դեմք: Արտաքին մասում՝ արված են տերևներ: XII—XIII դդ.: Տես՝ № 318-ը:

123/360 (10 Қ 9), 1910 թ., Կարսի դարպաս:

Հրատարակված է՝ Шелковников, Поливная... стр. 56—57.

## 321. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի բեկոր է: Ներսի կողմու[...] սպիտակ ֆոնի վրա, սև, բաց կապույտ և կա[...] միր ներկերով պատկերված է, երկար, սև մազ[...] րով կին, հագին կապույտ զգեստ, որի վրա սպ[...] տակ շրջանակներ են արված, աջ թև[...]ն ունի ոս[...] տիրապ: XII—XIII դդ., Իրան: Տես՝ № 320-ը:

123/369 (08, 39), 1908 թ.:

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 56:
2. Шелковников, Поли[...] ная..., стр. 56:

## 322. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է: Ներսի[...] կապույտ ֆոնի վրա, կարմիր ու երկնագույն ծա[...] կազարդեր են արված: Ծաղկազարդերից մեկ[...] կենտրոնում՝ փոքրիկ ոսկեգույն քառակուսի: Դր[...] սից՝ կապույտ ֆոնի վրա, սպիտակ և կարմիր ու[...] ղահայաց գծեր են արված: XII—XIII դդ.:

123/361 (07 . 48), 1907 թ.:

Հրատարակված է՝ 1. Реестр 1907 г., стр. 7[...]
2. КАМД, стр. 55.

## 323. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե հաստ անոթի փո[...] րիկ բեկոր է, ուռուցիկ, բարձրաքանդակ ոսկեգ[...] ծաղկազարդով: XIII դ., Իրան:

123/362 (08 № 37), 1908 թ.:

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 55:
2. Шелковников, Поли[...] ная..., стр. 58—59:

## 324. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Նուրբ հախճապակե թասի փոքրիկ բեկոր [...] Ներսից՝ երկու շուգահեռ կապտավուն գծերի մի[...] սպիտակ ֆոնի վրա, արաբերեն սև գրեր են: Պա[...] կը և երիզը ոսկեզօծ են: Դրսի կողմում, սպիտ[...] ֆոնի վրա, կապույտ վանդակազարդ է, երկն[...] գույն կետերով: XII—XIII դդ.:

123/363 (08 . 80), 1908 թ.:

Հրատարակված է՝ КАМД, стр. 55:

## 325 ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Մուգ կապույտ ֆոնի վրա, ոսկեգույն զարդ[...] գծերով շողյուն հախճապակե, նուրբ պատե[...] թասի բեկոր է: Դրսի կողմում արաբերեն ոճավո[...]

*ված արձանագրության մնացորդներ կան։ XII—XIII դդ.։*

*123/364 (07 . 32), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 4։

## 326. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակյա թասի փոքրիկ բեկոր է։ Ներսից և դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն ծաղկազարդեր են արված։ XII—XIII դդ., Անի։*

*123/365 (07 . 206)։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907г., стр. 22—23։

## 327. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Նուրբ պատերով հախճապակյա թասի բեկոր է։ Երկու կողմից, բաց երկնագույն ֆոնի վրա, մուգ դարչնագույն զարդանկարներ են արված։ XII—XIII դդ.։*

*123/366 (07 . 67), 1907 թ.։*

## 328. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Նուրբ հախճապակյա թասի փոքրիկ բեկոր է։ Երկու կողմից, երկնագույն ֆոնի վրա, մուգ մանուշակագույն զարդանկարներ են արված։*

*123/366 (07 . 67), 1907 թ.։*

## 329. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակյա թասի փոքրիկ բեկոր է։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն ծաղկազարդեր են, դրսից՝ սպիտակ ֆոնի վրա, արաբերեն ոսկեգույն գրեր են։ XII—XIII դդ., Անի։*

*123/367 (07 . 210), 1907 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* Реестр, 1907г., стр.23։
2. КАМД, стр. 55.

## 330. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակյա անոթի բեկոր է։ Դրսից սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն ծաղկազարդեր են արված։ XII—XIII դդ.։ Անի։*

*123/367 (07 . 210), 1907 թ.։*

## 331. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է։ Ներսի երեսին կապույտ և դարչնագույն զարդագծեր կան, դրսից՝ նույն գույներով եղնաձև զարդագծեր և աբարատառ արձանագրություններ։ XII—XIII դդ., Անի։*

*123/368 (12 Ա. 13), 1912 թ.։*

## 332. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակյա անոթի փոքրիկ բեկոր է, ներսի երեսին, բաց կապույտ, դրսից՝ մուգ կապույտ ֆոնի վրա ոսկեգույն ծաղկազարդերով։*

*123/369։*

## 333. ԿՃՈՒՃԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակյա կճուճի երկու բեկորներ են, պատերին ներճկված զարդերով։ Ներսի երեսը սպիտակ է, դրսինը՝ կապույտ ֆոնի վրա ոսկեգույն զարդածաղիկներով։ XII—XIII դդ.։*

*123/370 (07 . 224), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г. *էջ* 24։
2. КАМД, *էջ* 55։

## 334. ՍԿԱՀԱԿԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակյա ուռուցիկ սկահակի բեկոր է, ծածկված բարձրորակ կապույտ ջնարակով։ Դրսի երեսին, մուգ կապույտ ֆոնի վրա, ոսկեգույն և սպիտակ զարդագծեր են։ Բեկորի կենտրոնում վերից վար ոսկեգույն ճյուղ է իջնում, աջ կողմում սկավառակաձև ոսկեգույն զարդ (պահպանվել է մի փոքր մասը), որի վրա տամբեր են արված։ Ազատ տարածությունը ծածկված է սպիտակ զարդաճյուղերով։ XII—XIII դդ., Անի, Քաշան։*

*123/371 (12 Ա 23), 1912 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Н. Марр. XI-я Анийская археологическая кампания, СПБ, 1913, стр. 58.
2. Шелковников. Поливная..., стр. 57—58.
3. Шелковников, Средневековая худож. керамика Ближнего и Дальнего Востока. Изв. Армфана, 1942, № 6, стр. 18. *Հետագայում՝* Шелковников, Средневековая...

## 335. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե բարակ թասի բեկոր է, սպիտակ, խուլ զարդագծերով։*

*123/372 (07 № 19), 1907 թ.։*

## 336. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Սպիտակ հախճապակե թասի բեկոր է, շրջանաձև զարդերով, ցանցկեն։*

*123/372 (07 № 19), 1907 թ.։*

## 337. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, սպիտակ, երիզը դարչնագույն է, ներսից արված են հազիվ նշմարելի ծաղկազարդեր։*

*123/372 (07 № 19), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., *էջ 2։*

## 338. ՀԱԽՃԱՊԱԿՅԱ ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե սպիտակ թասի 3 բեկորներ են, պատրաստված նուրբ խեցուց. ներսից արված են ծաղկազարդեր, որոնց թերթիկների արանքում ծակոտիներ են։*

*123/372*c *(07 № 19), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., *էջ 2։*

## 339. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Մուգ մանուշակագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է։*

*123/375։*

## 340—342. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բաց կանաչ գույնի սելադոնե ափսեի բեկորներ են, վրան տարբեր տեսակի զարդեր։*

*123/373, 374։*

## 343. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե թասի երկու բեկորներ են, սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդերով։ Ներսի երեսի ոսկեգույն երիզին նուռ է պատկերված։ Պահպանված շրջանակներից մեկի մեջ պատկերված է կանացի դեմք, իսկ մնացած տարածությունը լցված է ոսկեգույն զարդաճյուղերով։ Դրսի երեսին ոսկեգույն երիզ և խաչաձևվող զարդագծեր են արված։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/376 (07 38), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 4:

## 344. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսի երեսին սպիտակ ֆոնի վրա, պատկերված են կապույտ, երկնագույն և դեղին զարդագծեր ու թռչունի պոչ և թև, իսկ դրսից՝ արաբատառ արձանագրություն։ XII—XIII դդ.։*

*123/377 (07 № 17), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., *էջ 2*

## 345. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի նստուկի բեկոր։ Ներսի երեսին սպիտակ ֆոնի վրա, կապույտ շրջանակի մեջ, ոսկեգույնով պատկերված է կնոջ դեմք։*

*123/378։*

## 346. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե թասի երկու բեկոր է։ Սպիտակ ֆոնի վրա մուգ դարչնագույն զարդագծերով արաբատառ գրեր են։*

*123/379 (07 № 154), 1909 թ.։*

## 347. ՊՆԱԿԻ ԲԵԿՈՐ

*Լայն, փռված շրթով, մուգ մանուշակագույն հախճապակե պնակի բեկոր է։*

*123/380։*

## 348. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի նստուկ է, բարձր օղակավոր ոտքի վրա։ Սպիտակ ֆոնի վրա շողյունով արված է վեցթերթանի ծաղիկ, զարդարված մանր կետերով։ Բեկորը թրծված է ուժեղ կրակի մեջ, որի պատճառով գույները փոխված են։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123 (07 № 207), 1907 թ.։*

## 349. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե ափսեի բեկոր է, Ռեյի տիպի, ներսից, սպիտակ ֆոնի վրա, արված են բաց դարչնագույն զարդեր, արաբատառ արձանագրությամբ։ Արտաքին երեսին՝ ոճավորված մարդու դեմք։*

*123/382 (07 . 41), 1907 թ.։*

### 350. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Նուրբ հախճապակե թասի երկու բեկորներ են։ Ներսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, մորեգույն զարդանկարներ են արված։ Առաջին բեկորի վրա արված են ծաղկազարդեր՝ և մարդկային դեմք պրոֆիլից, երկրորդ բեկորի վրա դարձյալ ծաղկազարդեր են արված և թռչունի ոտք ու պոչի մի մասը։ XI—XII դդ.։*

*123/383 ա, բ (07 № 190), 1907 թ., Բագրատունիների պալատ։*

*Հրատարակված է՝ 1.* Реестр, *1907* г., стр. *20։*
2. КАМД, стр. 88:
3. Шелковников, Поливная... стр. 59:

### 351. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Ուռուցիկ կողերով հախճապակե թասի բեկոր է։ Ներսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, սև գույնի ոլորաձև զարդանախշեր և բարակ երիզ։ Դրսից՝ արաբատառ արձանագրություն։*

*123/384 (07 . 124), 1907 թ.։*

### 352. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է։ Դրսից, երկնագույն ֆոնի վրա, սևով պատկերված է թռչուն՝ ծաղկազարդերի մեջ։*

*123/385 (07 . 60), 1907 թ.։*

### 353. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է։ Ներսի երեսին, երկնագույն ֆոնի վրա, մի քանի հորիզոնական սև գոտիներ են, որոնց միջև մի շարքով, միմյանց ետևից քայլող, թռչունների նմանությամբ զարդանախշ է արված։*

*123/386 (07 . 161), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 17:

### 354. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապտավուն հախճապակե թասի հատակը՝ բարձր-օղակավոր ոտքի վրա, և կողի մասը։ Հատակին՝ վեցանիստ բազմանկյունու մեջ, զարդեր։ Պատկերը արված է սև գույնով։*

*123/387 ա, բ։*

### 355. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե մեծ ափսեի բեկոր է։ Պսակի վրա, ներսից, մուգ դարչնագույն զարդանկար է արված։*

*123/388 (07 . 205), 1907 թ.։*

### 356. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե թասի երկու բեկորներ են։ Ներսի երեսին զարդանկար չկա, ողջ մակերեսը մանրաքավոր է, դրսից, երկնագույն ֆոնի վրա, թույլ դարչնագույն ծաղկազարդեր են արված։*

*123/389 (07 . 20), 1907 թ.։*

### 357. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի հատակի մաս է, նեղ օղակավոր ոտքի վրա։ Ներսից ծածկված է սպիտակ ջնարակով, որի վրա, դարչնագույն լայն շրջանակի մեջ, պատկերված է թռչուն (պահպանված է գլուխը)։*

*123/390 (07 . 86), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., *էջ 10։*

### 358. ՍԱՓՈՐԻ ՎԻԶ

*Սպիտակ հախճապակե սափորի վիզ է, կենտրոնում՝ շուրջանակի ուռուցիկ գոտի։*

*123/391 (07 . 86), 1907 թ.։*

### 359. ՍԱՓՈՐԻ ՎԻԶ

*Սպիտակ, մանրահատիկ կավից պատրաստված նուրբ սափորի բարակ վիզ է։*

*123/392։*

### 360. ՍԱՓՈՐԻ ԿԱՆԹ

*Շողյուն հախճապակե նուրբ սափորի կանթի տափակ բեկոր է, վրան դարչնագույն զարդեր (հավանաբար տառերի նմանակում։*

*123/393։*

### 361. ՍԱՓՈՐԻ ԿԱՆԹ

*Կապույտ հախճապակե սափորի մեծ կանթի բեկոր է։ Կանթի վրա ու անոթի պատերին արված են կարմիր և սպիտակ գույնի զարդեր։*

*123/394։*

### 362. ԱՆՈԹԻ ԿԱՆԹ

Կապույտ հախճապակե անոթի լայն կանթի բեկոր է, վրան շղթայաձև ռելիեֆ զարդանախշեր՝ ոսկեգույն ցայտերով։
123/395։

### 363. ԾՈՐԱԿ

Կապույտ հախճապակե անոթի ծորակի բեկոր է, դարչնագույն կետաձև նախշերով։
123/396։

### 364. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե թասի տափակ շրթի բեկոր է։
123/397։

### 365. ԿԱՆԹԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կապույտ հախճապակե տարբեր անոթների կանթերի երկու բեկորներ են, մեկը լայն ու տափակ, ծածկված ռելիեֆ գծերից կազմված շղթայաձև նախշով (տե՛ս № 362), երկրորդը փոքրիկ բեկոր է, ուռուցիկ զարդով։
123/399 ա, բ։

### 366. ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Բաց կապույտ գույնի հախճապակե սափորի գլանաձև կանթի բեկոր է, վրան արված թեք ակոսներ։
123/400։

### 367. ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե սափորի կանթի բեկոր է, լայն ու տափակ։ Կապույտ եզրերի մեջ ոսկեգույն եղևնաձև զարդեր։
123/401։

### 368. ՇՐԹԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե սափորի շրթի բեկոր է, ներսից ծածկված է սպիտակ ջնարակով։ Շրթի վրա կապույտ գոտի է արված, որի ստորին մասում երկու դեղնավուն գոտիների միջև կա սպիտակ ժապավեն։
123/402։

### 369. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի տափակ շրթի բեկոր է, սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդագծերով։
123/403։

### 370. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կապույտ հախճապակե թասի տափակ շրթնամաս է և մի բեկոր։ № 354-ի բեկորներից է։
123/404։

### 371. ԳԱՎԱԹԻ ԲԵԿՈՐ

Ուղիղ պատերով, շողյուն հախճապակե գավաթի բեկոր է, կանթի մնացորդով։ Դրսից՝ սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդանկարներ։ XII—XIII դդ.։
123/405։

### 372. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե թասի տափակ շրթի բեկոր է։ Մուգ երիզի վրա կան բուսական զարդեր։
123/406։

### 373. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի սպիտակ շրթի բեկոր է։ Երկու դարչնագույն գոտիների մեջ շրջագծեր են արված, դրանց մեջտեղում՝ կետեր։
123/407։

### 374. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

№ 364 տիպի թասի բեկոր է։
123/408։

### 375. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի տափակ շրթի բեկոր է։ Դրսի երեսին, կանաչ ֆոնի վրա, սպիտակ գծեր են, ներսից՝ սպիտակ ֆոնի վրա, կապույտ զուգահեռ զարդագծեր։ XII—XIII դդ.։
123/409։

### 376. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի հատակ է, օղակաձև, բարձր ոտքի վրա։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդեր են արված։
123/410։

*Հրատարակված է՝ Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում, էջ 219։*

### 377. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե փոքր թասի հատակի բեկոր է, օղակավոր ցածր ոտքի վրա։ Դրսից ծածկված է սպիտակ ջնարակով, ներսից՝ մուգ կանաչ ֆոնի վրա, սպիտակ զարդագծեր։ XII—XIII դդ.։*
*123/411։*

### 378. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի տափակ շրթի բեկոր է, կապույտ և դարչնագույն շերտերի միջև՝ պղնձագույն և սպիտակ զարդագծերով։*
*123/412։*

### 379. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի տափակ ու լայն շրթի բեկոր է, կապույտ և դարչնագույն լայն շերտերի միջև, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդագծեր։*
*123/413։*

### 380. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի հատակի բեկոր է, օղակավոր լայն ոտքի վրա։ Ներսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդագծեր են արված։*
*123/418։*

### 381. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի հատակի բեկոր է, օղակավոր բարձր ոտքի վրա։ Կապույտ և բաց կապույտ ֆոնի վրա ոսկեգույն զարդագծերով։*
*123/415։*

### 382. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի հատակի բեկոր է, կարճ, օղակավոր ոտքի վրա։ Երկնագույն ֆոնի վրա սև զարդագծերով գիգզագաձև նախշեր և թռչունի գլուխ է պատկերված։ XII—XIII դդ.։*
*123/416։*

### 383. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի հատակի բեկոր է, բարձր օղակավոր ոտքի վրա։ Սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդանկարներ են։ XII—XIII դդ.։*
*123/417։*

### 384. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի հատակի բեկոր է, օղակավոր ոտքի վրա։ Ներսի երեսը մուգ կապույտ, սպիտակ և կանաչ զարդանկարներով։ XII—XIII դդ.։*
*123/418։*

### 385. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, վրան պատկերված է գեղեցիկ սանրվածքով մարդու դեմքի բարձրաքանդակ (մասկարոն)։ XI—XII դդ.։*
*123/419 (07 п, № 22), 1907 թ., պատահական։*
*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., *էջ 49։*

### 386. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Նույնը՝ առյուծի դիմակներով (ըստ ակադ. Մառի՝ առյուծակերպ մարդկանց դեմքեր են)։*
*123/420 ա, բ (07 № 6 և 34), 1907 թ.։*
*Հրատարակված է* Реестр, *1907*г., *էջ 1 և 4։*

### 387. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Մանուշակագույն հախճապակե ուղիղ և բարակ պատերով ափսեի փոքրիկ բեկոր է, փորագիր զարդերով։*
*123/422։*

### 388. ՄԱՍԿԱՐՈՆ

*Երկնագույն հախճապակե անոթի բեկոր է, վերագիր մարդկային դեմքով։*
*123/421։*

### 389. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի բեկոր է, վերագիր վարդյակազարդով։*
*123/423։*

### 390. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի բեկոր է, փորագիր զարդագծերով։*
*123/424։*

### 391. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե անոթի բեկոր է, շեղ, ուռուցիկ զարդերով։*
*123/425։*

### 392. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Մուգ կապույտ հախճապակե անոթի բեկոր է, կոճակաձև բարձրագիր զարդերով։ XII—XIII դդ.։*
*123/426։*

### 393. ԱՂԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Հարթ հատակով, երկնագույն հախճապակե աղամանի փոքրիկ բեկոր է։ Դրսի երեսին ունի վերագիր կոճակաձև և ատամնավոր զարդեր։*
*123/427։*

### 394. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակուց պատրաստած թասի փոքրիկ բեկոր է, խորագիր զարդագծերով։*
*123/424։*

### 395. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե տարբեր թասերի երկու բարակ բեկորներ են, ներսի երեսին խորագիր գծազարդեր։*
*123/429 ա, բ։*

### 396. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է, ներսից և դրսից սպիտակ ֆոնի վրա կապույտ գծազարդերով։*
*123/429։*

### 397. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է, դրսի երեսին խորագիր զարդով։*
*123/430։*

### 398. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի բեկոր է, ներսի երեսին փորագիր ծաղկազարդերով։ XII—XIII դդ.։*
*123/431։*

### 399. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե անոթի հաստ բեկոր է, ներսի երեսին՝ բուսական խորաքանդակ զարդերով։ XII—XIII դդ.։*
*123/432։*

### 400. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե, ուղիղ պատերով անոթի բեկոր է, դրսի երեսին խորագիր զարդագծեր են արված։*
*123/433։*

### 401. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսի երեսին՝ խորագիր զարդագծերով։*
*123/434։*

### 402. ՊՆԱԿԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե պնակի փոքրիկ բեկոր է, լայն փռված շրթով։ Ներսից, շրթի վրա, կան սեպաձև նախշեր։ XII—XIII դդ.։*
*123/435։*

### 403. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե տարբեր թասերի բեկորներ են, բարակ պատերով, քիչ դուրս փռված շրթով։ Ներսի երեսին կան բուսական և երկրաչափական փորագիր զարդեր։ XII—XIII դարեր։*
*123/436։*

### 404. ԱՂԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե աղամանի բեկոր է, դրսի երեսին կան ելուստներ։*
*123/437։*

### 405. ԱՓՍԵ

*Բազմագույն հախճապակե մեծ ափսե է (բեկորներով), հատակը լայն, բարձր օղակաձև ոտքի վրա։ Հատակին, ծաղկազարդերի մեջ գլուխը վեր բարձրացրած, մի նստած եղնիկ է պատկերված։ Ֆոնը կապույտ է, զարդածաղիկները՝ երկնագույն, զարդագծերը՝ դեղնականաչ։ Եղնիկի մարմինը ծածկված է բաց կանաչ կետերով։*

*Մնացած բեկորների դեղնականաչ ֆոնի վրա սպիտակ ծաղկազարդեր են արված։ Դրսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, արված են կապույտ լայն շի-*

*թեր և դեղնականաչ կետեր։ Սարքին մասում կան կանաչ լայն գծեր։ XII—XIII դդ.։*

*123/438 (12 Ա 4), 555, 1912 թ.։*

*Հրատարակված է՝* Г. Шелковников, Поливная, стр. 62—63.
2. Шелковников, Средневековая... стр. 29:

## 406. ԹԱՍ

*Բարակ պատերով հախճապակե թաս է, բեկորներով։ Ներսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, դեղնականաչ գոտիներ կան։ Գոտիներից մեկը, որը բավական լայն է, զարդարված է սպիտակ ծաղկազարդերով։ Դրսի կողմից, սպիտակ ֆոնի վրա, արված են դեղնականաչ, աղեղնաձև հատվող գծեր։*

*123/439 (10. Ս. IV), 1910 թ.։*

## 407. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Նույբ հախճապակե թասի շրթնամասի 2 բեկորներ են, ներսից, սպիտակ ֆոնի վրա, կապտավուն պուտերով դարչնագույն զարդագծեր են արված, դրսից՝ արաբատառ արձանագրություն։*

*123/440 (12 Ա 13 c), 1912 թ.։*

## 408. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե անոթի երկու փոքրիկ բեկորներ են։ Ներսի երեսին երկրաչափական ուղղիկ զարդեր են արված։*

*123/441 և 453 (09 n 71), 1909 թ., պատահական։*

## 409. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե թասերի 3 փոքրիկ բեկորներ են, սև զարդագծերով։*

*123/441 (09 n 71), 1909 թ., պատահական։*

## 410. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե թասի 2 փոքրիկ բեկորներ են՝ սև զարդագծերով։*

*123/442 (10. Ս. 38), 1910 թ.։*

## 411. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե թասի շրթնամասերի երկու փոքրիկ բեկորներ են, ներսի երեսին դարչնագույն գծեր կան, հավանաբար գրերի նմանակում է։*

*123/442 (10 Ս. III. 104), 1910 թ.։*

## 412. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե տարբեր թասերի երկու փոքրիկ բեկորներ են։ Ներսի երեսին կան սև զարդագծեր։*

*123/444ա (10. IV. 130), 1910 թ., 123/444բ, (05 № 143), 1905 թ.։*

## 413. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի լայն և տափակ շրթի փոքրիկ բեկոր է, ներսի երեսին՝ սև զարդագծերով։*

*123/445 (10 Ս. IV 133), 1910 թ.։*

## 414. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի շրթի բեկոր է, տափակ ու լայն եզրով, ներսը երկնագույն է, դուրսը և տափակ եզրը, երկնագույն ֆոնի վրա, կանաչավուն զարդագծերով։*

*123/446 (10 Ս. IV), 1910 թ., պատահական։*

## 415. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով, երկնագույն հախճապակե թասի հատակի մաս է։ Ներսի երեսին, սև ֆոնի վրա, սպիտակ զարդագծեր են արված (գրերի նմանակում), XII—XIII դարեր։*

*123/447 (14 № 10), 1914 թ.։*

## 416. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե թասի երկու բեկորներ են։ Ներսի և դրսի երեսներին, դարչնագույն ֆոնի վրա, մուգ դարչնագույն զարդագծեր են արված։*

*123/448։*

## 417. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե տարբեր թասերի երեք փոքրիկ բեկորներ են։ Ներսը՝ մուգ կապույտ ֆոնի վրա, ոսկեգույն ծաղկազարդերով։*

*123/449։*

## 418. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր*

*է, ներսի և դրսի երեսները պատված են սպիտակ և բաց փարդագույն զարդագծերով։*
*123/450։*

## 419. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Տափակ ու լայն շրթով երկնագույն հախճապակե ափսեի բեկոր է, ներսից ոսկեգույն լայն զարդերով։*
*123/451։*

## 420. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, դրսից՝ մուգ կապույտ, ներսից, երկնագույն ֆոնի վրա, ոսկեգույն շերտերով, կետազարդերով ու սպիտակ զարդագծերով։*
*123/452։*

## 421. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով, կապույտ հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է, դրսից՝ երկնագույն ֆոնի վրա, սև զարդագծերով։*
*123/453։*

## 422. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից՝ սպիտակ և ոսկեգույն զարդագծերով։*
*123/454։*

## 423. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե տարբեր թասերի 4 բեկորներ են (շրթնամասեր)՝ դարչնագույն և մուգ (սև) երկրաչափական և բուսական զարդանախշերով։*
*123/455 ա, բ, գ, դ։*

## 424. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե տարբեր անոթների բեկորներ են, դրսի երեսին սև բուսական և երկրաչափական զարդանախշեր, ներսից՝ երկնագույն։ XII—XIII դդ.։*
*123/456։*

## 425. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Սև գծազարդերով կապույտ հախճապակե թասի բեկոր է։*
*123/457։*

## 426. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսի երեսը պատած է երկնագույն ջնարակով, դրսինը՝ ուռուցիկ գոտիով և ոսկեգույն զարդագծերով։*
*123/458։*

## 427. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից՝ ոսկեգույն գծազարդերով։*
*123/458։*

## 428. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե բարակ պատերով թասի փոքրիկ բեկոր է, ներսի երեսին՝ մանուշակագույն զարդանկարով։*
*123/462։*

## 429. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե հաստ պատերով անոթի փոքրիկ բեկոր է։ Ներսի երեսին, բաց կապույտ ֆոնի վրա, պատկերված են ոսկեգույն գծանկարով ծաղկազարդեր, դրսից՝ բաց կապույտ ֆոնի վրա, մանուշակագույն գծերով ցանցազարդ։*
*123/460։*

## 430. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե թասի 3 փոքրիկ բեկորներ են։*
*ա) Երկնագույն ֆոնի վրա սև, սպիտակ և կապույտ զարդանկարներ։*
*բ) Չինական հախճապակե բարակ պատերով թասի փոքրիկ բեկոր է, ներսից և դրսից երկնագույն ֆոնի վրա սև գծազարդերով, ինչպես նաև սպիտակ, կարմիր ու գորշ գծանկարներով։*
*գ) Չինական հախճապակե բարակ պատերով, երկնագույն ամանի բեկոր է, դրսից ու ներսից պատած սև գծազարդերով ու կարմիր, սպիտակ և բաց կապույտ նկարազարդումներով։*
*123/461։*

## 431. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, դրսից և ներսից, սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն գծանկարով։ XII—XIII դդ.։ Ռեյ։*
*123/462։*

### 432. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, սպիտակ ֆոնի վրա կապույտ և ոսկեգույն գծանկարով։ XII—XIII դդ.։*

*123/463։*

### 433. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե տարբեր թասերի երեք բեկորներ են (շրթնամասեր)՝ սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն և կապույտ գծազարդով։ XII—XIII դդ.։*

*123/464 ա, բ, գ։*

### 434. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե թասի 3 փոքրիկ բեկորներ են, ներսից և դրսից, սպիտակ ֆոնի վրա, կապույտ և ոսկեգույն զարդանկարներով։ XII—XIII դդ.։ Ռեյ։*

*123/465։*

### 435. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, սպիտակ ֆոնի վրա մուգ դարչնագույն գծազարդերով։*

*123/466։*

### 436. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդանկարներով։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/467։*

### 437. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով, երկնագույն հախճապակե անոթի բեկոր է, դրսից սպիտակ ֆոնի վրա բաց երկնագույն, կարմիր և կապույտ գույներով բուսական զարդանկար է արված։*

*123/468։*

### 438. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից ծածկված սպիտակ ջնարակով. ներսից սպիտակ ֆոնի վրա՝ կարմիր, կապույտ և դարչնագույն զարդանկարներ։*

*123/469 (07 . 156a), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *16։*

### 439. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե սափորի մի բեկոր է։ Դրսից, սպիտակ ֆոնի վրա, երկրաչափական և բուսական ոսկեգույն գծազարդեր։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/470։*

### 440. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Սպիտակ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է։ Դրսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, պատկերված է կարմիր, կապույտ և ոսկեգույն զարդագծերով ծաղիկ։*

*123/471։*

### 441. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Սպիտակ հախճապակե սափորի վզի բեկոր է։ Վրան կարմիր ու գորշ գծազարդերով ծաղկանըկարներ կան, նկատվում են նաև ոսկեգույնի հետքեր։*

*123/472։*

### 442. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Չինական հախճապակե, նուրբ պատերով, երկնագույն թասի փոքրիկ բեկոր է։ Ներսից երկու զուգահեռ նարնջագույն գծերի միջև ռոմբաձև զարդերով սպիտակ ալիքներ են գնում, մեջը լցված սև ներկով, իսկ դրանց կենտրոնում դարձյալ, ավելի մանր, ռոմբաձև զարդեր են, մեջը՝ ոսկեգույն։ Դրսից, երկնագույն ֆոնի վրա, դարչնագույն զարդանախշի հետքեր են նկատվում։ XII—XIII դդ.։*

*123/473։*

### 443. ՊՆԱԿԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե պնակների երկու փոքրիկ բեկորներ են։ Երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդերով։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/474, 474ա։*

### 444. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե տարբեր անոթների 6 բեկորներ են, սպիտակ ֆոնի վրա դրսի և ներսի երեսին բուսական և երկրաչափական ոսկեգույն զարդանախշերով։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/475։*

### 445. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե նրբախեցի ափսեի բեկոր է. լայն, տափակ շրթով։ Շրթի վրա կարմիր, նուրբ գծանկարներ են արված, կապույտ զարդագծերով։

123/476։

### 446. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

Տափակ ու լայն եզրերով, երկնագույն հախճապակե խորը ափսեի եզրի փոքրիկ բեկոր է։ Ներսի երեսի զարդագծերը և երիզի ատամիկները սև են, իսկ զարդանկարը՝ մուգ կապույտ։

123/477։

### 447. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, դրսից և ներսից ոսկեգույն գծազարդերով։ XII—XIII դդ., Ռեյ։

123/478։

### 448. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսի երեսին, սպիտակ ֆոնի վրա, պատկերված է դարչնագույն զարդագծերով կնոջ դեմք, դուրսը մուգ կապույտ է՝ դարչնագույն երիզով։

123/479։

### 449. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կապույտ հախճապակե թասի բեկորներ են։ Ներսի երեսը պատած է ոսկեգույն զարդանկարով, դրսի երեսի մի բեկորի վրա կան արաբերեն սև գրեր։ XII—XIII դդ., Պարսկաստան։

123/480, 480a։

### 450. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է։ Ներսից, սպիտակի վրա, դեղնավուն գծերով զարդանկար է։

123/481։

### 451. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է։ Ներսի երեսի սպիտակ ֆոնի վրա կարմիր, կապույտ և բաց դարչնագույն հաստ զարդագծեր կան, դրսից սպիտակի վրա բաց դարչնագույն արձանագրություն։

123/482։

### 452. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Հախճապակե տարբեր թասերի և ափսեի բեկորներ են (տե՛ս № 405), սպիտակ ֆոնի վրա կապույտ և դեղնականաչ գծանկարներով։ Մեկ այլ բեկորի վրա ներսից, սպիտակ ֆոնի վրա, դեղնականաչ գծազարդով սֆինքս է պատկերված, ոտքերը երկնագույն, թևը կապույտ։

123/483։

### 453. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, պատած ոսկեգույն զարդանկարով և կապույտ գծազարդով։

123/484։

### 454. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն և կապույտ գծանկարով։

123/484։

### 455. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

Հաստ պատերով հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա կարմիր և կապույտ գծանկարներով։

123/485։

### 456. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն գծանկարով։

123/486։

### 457. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա, մուգ դարչնագույն ինչ-որ կենդանական զարդ կա։

123/487։

### 458. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե տարբեր թասերի երկու փոքրիկ բեկորներ են, որոնցից մեկի պատերը հաստ են։ Զարդերը արված են սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն գծանկարով։

123/488։

## 459. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է։ Ներսից և դրսից, սպիտակ ֆոնի վրա, կապույտ և ոսկեգույն զարդագծերով։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/490։*

## 460. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսը, մուգ կապույտ ֆոնի վրա, սպիտակ զարդագծերով, դուրսը, սպիտակ ֆոնի վրա, կանաչավուն գծանկարով։*

*123/491։*

## 461. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսը, սպիտակ ֆոնի վրա, կարմիր գծաշարքով։*

*123/492։*

## 462. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե թասի երկու բեկորներ են, դրսի ու ներսի սպիտակ ֆոնի վրա արված են սև գծաշարքեր՝ կապույտ և երկնագույն գծանկարով, մի բեկորի դրսի երեսին կան արաբատառ արձանագրության հետքեր։*

*123/493։*

## 463. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է, դրսի և ներսի երեսներին, սպիտակ ֆոնի վրա, արված է կապույտ և կանաչ գույնի գծանկար։*

*123/494։*

## 464. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, կապույտ և դարչնագույն զարդագծերով, դրսի երեսին արաբերեն արձանագրությամբ։*

*123/495։*

## 465. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, ներսի երեսը մանուշակագույն զարդանկարով։*

*123/496։*

## 466. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, ներսի երեսին ոսկեգույն զարդանկարով, դրսի կապույտ ֆոնի վրա կան դարչնագույն արաբատառ արձանագրության հետքեր։*

*123/407։*

## 467. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե թասի երկու փոքրիկ բեկորներ են։ Երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդագծերով։*

*123/498։*

## 468. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե թասի երկու բեկորներ են, դրսի և ներսի սպիտակ ֆոնի վրա դարչնագույն (ոսկեգույն) զարդանկարներով։ XII—XIII դդ., Ռեյ։*

*123/499։*

## 469. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է, դրսից սպիտակի վրա կան դարչնագույն զարդանկարներ։*

*123/500։*

## 470. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, դրսից՝ դարչնագույն, կապույտ և սպիտակավուն զարդանախշերով։*

*123/501։*

## 471. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի բեկոր է, վրան սև զարդագծերով։ XII—XIII դդ.։*

*123/502։*

## 472. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Նուրբ պատերով հախճապակե թասի բեկոր է, ներսի սպիտակ ֆոնի վրա դարչնագույն զարդագծերով և կապույտ կետերով։*

*123/503։*

## 473. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե երկու տարբեր թասերի*

չորս փոքրիկ բեկորներ են. երկուսը, սպիտակ ֆոնի վրա, բաց դեղնավուն զարդանկարներով (ներսից ու դրսից), մյուս երկուսը՝ սպիտակ ֆոնի վրա, մուգ մանուշակագույն զարդանկարներով։
123/504։

### 474. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Տափակ շրթով, կապույտ հախճապակե թասի 4 բեկորներ են, ներսից՝ փորագիր կապույտ գծազարդերով։
123/505, 506, 507, 508 (13 холм 27. 21 Λ), 1913 թ.։

### 475. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Բարակ ու նուրբ պատերով, կապույտ հախճապակե թասի անզարդ փոքրիկ բեկոր է։
123/509։

### 476. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե նրբախեցի, բարակ պատերով ցանցկեն թասի բեկոր է։ Ներսի երեսին արված են փորագիր զարդագծերով թռչնակերպ պատկերներ։ XI—XII դդ.։
123/510։

### 477. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հաստ պատերով, կապույտ հախճապակե թասի բեկոր է, նեղ, տափակ շրթով։ Դրսի երեսին, շրթի տակ, արված է խորագիր եղնաշարք։ XII—XIII դդ.։
123/511, 513 (10 D), 1910 թ.։

### 478. ԲԵԿՈՐՆԵՐ

Ուռուցիկ զարդանախշերով կապույտ հախճապակե ամանի 11 բեկորներ են։
123/512, 514։

### 479. ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե ամանի գլանաձև կանթի փոքրիկ բեկոր է։
123/515։

### 480. ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե ամանի կանթի բեկոր է, տափակ, վերադիր կոճակաձև զարդով։
123/516։

### 481. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Բարակ պատերով, կապույտ հախճապակե թասի երեք փոքրիկ բեկորներ են։ Ներսի երեսին՝ հազիվ նշմարվող զարդագծեր։
!23/517 (10), 1910 թ.։

### 482. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Նեղ շրթով, կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է։ Դրսի երեսին, շրթի տակ, մանրեքներ։
123/518 10 У. IV. 133), 1910 թ.։

### 483. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կապույտ հախճապակե անոթների բեկորներ են, որոնցից երեքը ուռուցիկ առյուծագլուխ մասկարոններ են, մյուսները ափսեի բեկորներ են փորագիր զարդերով։ XII—XIII դդ.։
123/519 (10 У. IV.№ 36), (10 У. III № 1), 1910 թ., (13. холм № 27), 1913 թ.։

### 484. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Բարակ պատերով, կապույտ հախճապակե թասերի բեկորներ են, փորագիր զարդերով։
123/520։

### 485. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, մուգ մանուշակագույն զարդանկարով։
123/521 (15 Λ), 1915 թ.։

### 486. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե մեծ սափորի վզի բեկոր է, դրսից սև զարդագծերով պատկերված են հորիզոնական զույգ գոտիներ, ռոմբաձև զարդեր, ինչպես նաև կլոր շրջանակի մեջ գիգզագաձև զարդագծեր։ XII—XIII դդ.։
123/522 (12 Λ), 1912 թ.։

### 487. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Երկնագույն հախճապակե թասի 2 փոքրիկ բեկորներ են, ներսից սև զարդանկարով։ Մեկը միջին հաստության պատերով թասի բեկոր է, զարդանկարը նմանվում է մարդկային գլխի (դեմքի մի մասը՝ աչքով)։ XII—XIII դդ.։
123/523 (09 п 70), 1909 թ., պատահական։

### 488. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Նուրբ պատերով, երկնագույն հախճապակե թասի 3 փոքրիկ բեկորներ են, ներսից ու դրսից սև զարդագծերով։

123/525 ա, բ, գ (12 A և 15 A), 1912 թ., 1915 թ.։

### 489. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից և դրսից սև զարդանկարով։

123/526։

### 490. ՊՆԱԿՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Երկնագույն հախճապակե տարբեր պնակների 7 բեկորներ են։ Տե՛ս № 488-ը և 489-ը։

123/527 (12 A), 1912 թ.։

### 491. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից և դրսից սև զարդանկարով։

123/528 (10 п 70), պատահական։

### 492. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, սև ծաղկազարդերով։

123/530 (10 У. IV. 6), 1910 թ.։

### 493. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Բարակ պատերով, երկնագույն հախճապակե թասի մի փոքրիկ բեկոր է, սև զարդագծերով։

123/530 (10 У. IV. 6), 1910 թ.։

### 494. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Բարակ պատերով, երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից սև զարդագծերով։

123/531 (12 A), 1912 թ.։

### 495. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

Լայն և տափակ եզրով, երկնագույն հախճապակե ափսեի շրթի բեկոր է, ներսի կողմից սև զարդագծերով։

123/532 (10. У. IV. 133), 1910 թ.։

### 496. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի հատակի բեկոր է, օղակավոր բարձր ոտքի վրա։ Ներսից, մուգ կանաչ ֆոնի վրա, սև զարդանկար է արված։

123/533 (15 A), 1915 թ.։

### 497. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի շրթի բեկոր է, մուգ կապույտ զարդանկարով։

123/535 (09 п 79), 1909 թ., պատահական։

### 498. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե թասի բեկոր է, ներսից, մուգ կապույտ ֆոնի վրա, ոսկեգույն բուսական զարդանախշով. դրսից պսակի տակ ոլորուն ուռուցիկ զարդով։

123/536 (13 c), 1913 թ.։

### 499. ԿՃՈՒՃԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե կճուճի մի փոքրիկ բեկոր է, դրսից, մուգ կապույտ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։

123/537, 1910 թ.։

### 500. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Ուղիղ պատերով հախճապակե թասի փոքրիկ բեկոր է։ Ներսից ֆոնը սպիտակ է, ունի նեղ, կանաչ երիզ և կանաչ զարդագծեր։ Դրսից ֆոնը կապույտ է, երիզը դարձյալ կանաչ, իսկ կապույտ ֆոնի վրա քիչ ուռուցիկ, սպիտակ արաբերեն գրեր են։

123/538 (10 У. IV. № 69), 1910 թ.։

### 501. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե բարակ պատերով թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից մուգ կապույտ ֆոնի վրա սև զարդանկարով։

123/539 (13 c), 1913 թ.։

### 502. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից, մուգ կապույտ ֆոնի վրա, բարակ, մանուշակագույն գծերով զարդանկար է պատկերված։

123/540 (13 c), 1913 թ.։

## 503. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Բարակ պատերով, երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, բաց կապույտ ֆոնի վրա, պղնձադարչնագույն զարդանկարով։*

*123/541 (10 У. II.), 1910 թ.։*

## 504. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Բարակ պատերով, կապույտ հախճապակե թասի բեկոր է, դրսից թույլ գծազարդով։*

*123/542 (13 холм № 27), 1913 թ.։*

## 505. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի բեկոր է։ Դրսից, կապույտ ֆոնի վրա, ուղղահայաց սպիտակ գծեր են արված։*

*123/543։*

## 506. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից, մուգ կապույտ ֆոնի վրա, մանուշակագույն զարդագծերով։*

*123/544 (12 A), 1912 թ.։*

## 507. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բարակ պատերով, կապույտ հախճապակե անոթի 3 բեկորներ են, դրսից և ներսից, մուգ կապույտ ֆոնի վրա, մանուշակագույն զարդագծերով։*

*123/544 b, 548 և 565 (12 A), 1912 թ.։*

## 508. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե անոթի երկու բեկորներ են, մանուշակագույն զարդագծերով։*

*123/545 (12 A), 1912 թ.։*

## 509. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե թասի երկու բեկորներ են, ոսկեգույն զարդանկարով։*

*123/546 (12 A), 1912 թ.։*

## 510. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե քրեղանի կամ թասի տափակ ու լայն շրթի բեկոր է, վրայից 2 զուգահեռ մանուշակագույն լայն գոտիներ են գնում։*

*123/547 (12 A), 1912 թ.։*

## 511. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ և երկնագույն հախճապակե տարբեր թասերի 9 բեկորներ են, ոսկեգույն զարդանկարներով։*

*123/548։*

## 512. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե սափորի վզի բեկոր է, դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով, ներսից՝ կապույտ ջնարակով։ XII—XIII դդ.։*

*123/549 (12 A), 1912 թ.։*

## 513. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է, դրսից ու ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։*

*123/550 (12 A), 1912 թ.։*

## 514. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է, երկու կողմից սպիտակ ֆոնի վրա, կապույտ և ոսկեգույն զարդանկարներով։*

*123/551 (12 A), 1912 թ.։*

## 515. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե հաստ պատերով թասի մի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։*

*123/552 (12 A), 1912 թ.։*

## 516. ԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է, դրսից, մուգ կապույտի վրա, սպիտակ գծերով։*

*123/553 (12 A), 1912 թ.։*

## 517. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակի վրա, կապույտ և դարչնագույն զարդանկարներով։*

*123/554։*

## 518. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե տարբեր անոթների եր-*

*կու բեկորներ են։ Առաջին բեկորը հաստ պատնեշով է, ներսի և դրսի երեսներին, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարներով, երկրորդ բեկորը ավելի բարակ է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարներով։*

*123/556 (12 A), 1912 թ.։*

## 519. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե հաստ պատերով թասի 3 բեկորներ են, մոխրագույն ֆոնի վրա, ներսից մուգ կանաչ զարդանկարներ են արված։*

*123/557։*

## 520. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Բարձր վզով շողյուն հախճապակե սափորի ուսի բեկոր է։ Դրսից՝ սպիտակ ֆոնի վրա, բաց դարչնագույն, կարմրավուն երանգով զարդանկար է արված, ներսից բաց կապույտ է։*

*123/558 (12 A), 1912 թ.։*

## 521. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե անոթի բեկոր է, դրսից, երկնագույն ֆոնի վրա, սև բուսական զարդանկար է արված, ներսից ունի մանրեքներ։*

*123/559 (12 A), 1912 թ.։*

## 522. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկոր է, երկու կողմից՝ սպիտակի վրա, ոսկեգույն զարդանկարներ են արված։*

*123/560։*

## 523. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե ափսեի բեկոր է, տափակ, լայն շրթով։ Ներսից՝ երկնագույն ֆոնի վրա, սև զարդագծերով պատկերված են զուգահեռ հորիզոնական զույգ գոտիներ և երկրաչափական զարդեր։*

*123/561։*

## 524. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից և դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն և կապույտ զարդանկարներով։*

*123/562 (12 A), 1912 թ.։*

## 525. ՍԱՓՈՐՆԵՐԻ ԿԱՆԹԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե տարբեր սափորների երկու կանթեր են, կտրվածքում՝ տափակ։ Երկուսն էլ սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդանկարներով և արաբերեն արձանագրությամբ։*

*123/563 (12 A), 1912 թ.։*

## 526. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, առանց զարդագծերի։*

*123/564 (12 A), 1912 թ.։*

## 527. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Տափակ ու լայն շրթով կապույտ հախճապակե թասի բեկոր է, ոսկեգույն զարդանկարով։*

*123/566 (12 A), 1912 թ.։*

## 528. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի հատակի կեսն է, օղակավոր ցածր ոտքի վրա։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն ու կապույտ գծանկարով։*

*123/567 (12 A), 1912 թ.։*

## 529. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, կապույտ զարդանկարներով։*

*123/568 (12 A), 1912 թ.։*

## 530. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կապույտ հախճապակե տարբեր անոթների երկու բեկորներ են։ Առաջինը սափորի բեկոր է, դրսից, երկնագույնի վրա, սև ալիքաձև զարդանկարով, ներսից բաց երկնագույն է։ Երկրորդը հախճապակե թասի բեկոր է, երկու կողմից, երկնագույն ֆոնի վրա, սև զարդանկարներով (ներսի երեսին ծաղկազարդեր են արված, իսկ դրսի՝ 4 զույգ ուղղահայաց գծեր)։ XII—XIII դդ.։*

*122/569 (12 A), 1912 թ.։*

## 531. ՍԱՓՈՐԻ ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե սափորի կանթի բեկոր է, ուռուցիկ երկրաչափական զարդամոտիվով։*

*123/570։*

## 532. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե թասի բեկորներ են, հաստ պատերով, օղակաձև բարձր ոտքի վրա: Սպիտակ ֆոնի վրա արված են կապույտ և ոսկեգույն զարդեր: XII—XIII դդ., Պարսկաստան:*

*123/571 (12 A. 13), 1912 թ.:*

## 533. ԿՃՈՒՃԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե կճուճի բեկորներ են, ներսից՝ սպիտակ, դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով: Բեկորներից մեկի վրա երկու կողմից զարդեր են արված: XII—XIII դդ., Պարսկաստան:*

*123/572 (12 A. 13), 1912 թ.:*

## 534. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով:*

*123/573 (12 A 13), 1912 թ.:*

## 535. ԿՃՈՒՃԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե, հաստ պատերով տարբեր կճուճների բեկորներ են, դրսից՝ սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարներով: XII—XIII դդ.:*

*123/574:*

## 536. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե հաստ պատերով թասի երկու բեկորներ են, տափակ շրթով. զարդանկարը արված է երկու կողմից (սպիտակի վրա՝ ոսկեգույն):*

*123/575 (12 A 13), 1912 թ.:*

## 537. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բարձր և ուղիղ պատերով երկնագույն հախճապակե անոթի 3 բեկորներ են, դրսից ուղղահայաց, իրար զուգահեռ լայն ժապավեններով և կոճակաձև զարդերով:*

*123/576 (10. У. IV), 1910 թ.:*

## 538. ԿԱՆԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե սափորի կանթի բեկոր է, բրգաձև փոքրիկ ելուստով:*

*123/577:*

## 539. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է, դրսից վերադիր մարդկային դիմակ (մասկարոն): XII—XIII դդ.:*

*123/578 (09 M 51a), 1909 թ.:*

*Հրատարակված է՝* Шелковников, Поливная..., стр. 58:

## 540. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե բարակ պատերով անոթի բեկորներ են, փորագիր երկրաչափական և ուռուցիկ կոճակաձև զարդով: XII—XIII դդ.:*

*123/579 (10 У IV), 1910 թ.:*

*Հրատարակված է՝* Шелковников, Поливная..., стр. 51:

## 541. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե թասի երկու բեկորներ են, դրսից վերադիր զարդեր՝ մասկարոնների ձևով (առյուծակերպ): XII—XIII դդ.:*

*123/580 (08 № 51), 1908 թ.:*

*Հրատարակված է՝* Шелковников, Поливная..., стр. 52:

## 542. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե թասի երկու փոքրիկ ցանցկեն բեկորներ են, դրսից՝ փորագիր զարդանկարով, ներսից՝ հորիզոնական մատնեքներով: XII—XIII դդ.:*

*123/581:*

## 543. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե տարբեր անոթների 4 բեկորներ են, առաջին բեկորը հաստ պատերով է, դրսից երկնագույն, բուսական զարդով: Երկրորդ բեկորը դրսից մուգ կապույտ է, ուռուցիկ եղևնաձև զարդերով:*

*Երրորդ բեկորը սափորի վիզ է, կապույտ ֆոնի վրա սև զարդանկարով:*

*Չորրորդ բեկորը բարակ պատերով է, ռելիեֆ զարդանկարով:*

*123/582 (12 A), 1912 թ.:*

## 544. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե հաստ պատերով*

*անոթի փոքրիկ բեկոր է, վերադիր բրգաձև զարդերով։*
*123/583 (11 M), 1911 թ.։*

### 545. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, դրսից՝ միմյանց հետ հատվող վերադիր գոտիներով և վարդյակով։*
*123/584a։*

### 546. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Տափակ, լայն շրթով երկնագույն հախճապակե ափսեի բեկոր է։*
*123/584։*

### 547. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե ուղիղ պատերով անոթների բեկորներ են, տափակ շրթով։ Դրսի երեսին վերադիր կոճակաձև վարդյակ և բուսական զարդեր են արված։*
*123/585 ա, բ, գ, (16 ո 15), 1916 թ., պատահական։*

### 548. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է, դրսի երեսին ուռաձև զարդերով։*
*123/586։*

### 549. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե տարբեր թասերի երկու բեկորներ են, ներսից և դրսից սև զարդանկարով։*
*123/587 ա, բ։*

### 550. ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե երկու թասերի 4 բեկորներ են.*
*ա) հաստ պատերով թասի նստուկի մաս է, սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդանկարով (երեք բեկոր),*
*բ) բարակ պատերով սափորի վզի բեկոր է, դրսից և ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդանկարներով։*
*123/588 ա, բ, գ, դ։*

### 551. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե փոքր թասի նստուկի բեկոր է, կարճ, կլոր ոտքի վրա։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։*
*123/589։*

### 552. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, դրսից սպիտակ ֆոնի վրա դարչնագույն գծերով մարդու դեմք և ծաղիկներ են պատկերված, ներսից՝ մուգ կապույտ է։*
*123/590 (06 . 204), 1906 թ.։*

### 553. ԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բարակ պատերով, շողյուն հախճապակե բազմանիստ կողերով ամանի բեկոր է, ներսից կապտավուն, դրսից սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդանկարներով։*
*123/591։*

### 554. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից և դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարներով։*
*123/592։*

### 555. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե անոթի վզի բեկոր է, դրսից և ներսից ծածկված սպիտակ ջնարակով։*
*123/593։*

### 556. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե ուղիղ պատերով, խորը թասի երկու բեկորներ են, դրսից ունի դարչնագույն երիզ և բուսական զարդ։ Հավանաբար մնացել է ուժեղ կրակի մեջ։*
*123/594 և 123/596 (06 . 173), 1906 թ.։*

### 557. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե սափորի բեկոր է, ներսից կապույտ է, իսկ դրսից, սպիտակ ֆոնի վրա, մուգ դարչնագույն զարդագծերով։*
*123/595։*

### 558. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ներսից, սպիտակի վրա, ոսկեգույն զարդանկարներով։*

*123/597 (06 № 63), 1906 թ.։*

### 559. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Բարակ պատերով շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, բաց դարչնագույն զարդագծերով։*

*123/598։*

### 560. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի հատակի մաս է, օղակաձև ոտքի վրա։ Ներսից՝ սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդանկարով։*

*123/599։*

### 561. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի բեկոր է։ Արտադրական խոտան։*

*123/600։*

### 562. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շողյուն հախճապակե թասի հատակի մաս է, բարձր օղակաձև ոտքի վրա։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդանկարներ են և արձանագրություն։*

*123/601։*

### 563. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բարձր պատերով, կանաչ հախճապակե անոթի բեկորներ են, դրսից փորագիր և ուռուցիկ զարդագծերով։*

*123/602 (06 . 147), 1906 թ.։*

### 564. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով շողյուն հախճապակե թասի հատակի բեկոր է, սպիտակ ֆոնի վրա կապույտ և ոսկեգույն զարդագծերով։*

*123/603։*

### 565. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Նուրբ պատերով հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։*

*123/603։*

### 566. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի բեկոր է, ուռուցիկ, լայն զարդագծերով։ Արտադրական խոտան։*

*123/604։*

### 567. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի բեկոր է, դրսից վերադիր կոճակաձև և փորագիր զարդերով։*

*123/605։*

*Հրատարակված է՝* Шелковников, Поливная..., стр. 53:

### 568. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, վերադիր վարդյակաձև զարդանախշով։*

*123/605։*

### 569. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե անոթի փոքրիկ բեկոր է։ Արտադրական խոտան։*

*123/606 (10 У. II. № 83), 1910 թ.։*

### 570. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով կապույտ հախճապակե անոթի բեկոր է, դրսից ուռուցիկ գոտիներ և մասկարոններ են։*

*123/607 (10 У. IV. 133), 1910 թ.։*

### 571. ԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ուղղահայաց պատերով, երկնագույն հախճապակե ամանի բեկոր է, դուրս ծալված թեք շուրթով, դրսից՝ բուսական զարդագծերով։ XII—XIII դդ.։*

*123/608։*

### 572. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Հաստ պատերով, երկնագույն հախճապակե սափորի բեկոր է, դրսից՝ մուգ կանաչի վրա, սև*

զարդագծերով և ուռուցիկ նշաձև զարդերով։
123/609 (10 Ս. IV. № 57), 1910 թ.։

### 573. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե տարբեր թասերի 13 բեկորներ են։ Դրսից և ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույնով արված են բուսական և երկրաչափական զարդեր։ XII—XIII դդ., Անի։
123/610։

### 574. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե տարբեր ամանների 5 բեկորներ են, ներսից ու դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարներով։
123/611։

### 575. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Բարակ պատերով, շողյուն հախճապակե թասի բեկոր է։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, ուղղահայաց, բաց կանաչ գույնի գծազարդեր են, դրսից, սպիտակ ֆոնի վրա, ունի կապույտ եզր, վրան արաբերեն սպիտակ գրերի նմանակում։
123/612։

### 576. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, արված են մուգ կանաչ գծեր և կապույտ ճառագայթներ։
123/612։

### 577. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Անիի տիպի հախճապակե թասի բեկորներ են, դրսից ու ներսից, սպիտակ ֆոնի վրա, կապույտ և մուգ կանաչ զարդագծերով։
123/613, 614։

### 578. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն և կապույտ զարդագծերով։
123/615։

### 579. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի բեկոր է, ներսից բաց կապույտ, դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։
123/616։

### 580. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն, բարակ, նուրբ պատերով հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից սպիտակ, ներսից, ոսկեգույն զարդագծերով, կնոջ դեմք է պատկերված, հագուստը կետանախշով, դրսից ոսկեգույն գծազարդեր են։
123/617։

### 581. ՊՆԱԿԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե պնակի բեկոր է, ներսից ու դրսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։ XI—XII դդ., Պարսկաստան։
123/618։

### 582. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդագծերով ու կապույտ երիզով, դրսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդանկարով։
123/619։

### 583. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե անոթի երեք բեկորներ են.

ա) դրսից կապույտ է, ներսից սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով պատկերված է կնոջ կերպարանք (գլուխը չկա), հագուստի վրա կան կետանախշեր.

բ) դրսից ու ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն ծաղկազարդեր և գծանկարներ են.

գ) երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն գծազարդեր են արված։
123/620 ա, բ, գ։

### 584. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե երկու թասի 3 բեկորներ են, ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։
123/621 ա, բ, գ։

### 585. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Հախճապակե երկու թասի 3 բեկորներ են, երկուսը՝ հաստ պատերով։ Մուգ կարմիր ֆոնի վրա ոսկեգույն գծազարդեր են։
123/622 ա, բ, գ։

## 586. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակյա շատ նուրբ, բարակ պատերով կապույտ թասի երեք բեկորներ են։ Ներսից արված են փորագիր ծաղկազարդեր։*

*123/622։*

## 587. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե բարակ պատերով և տափակ, լայն շրթով թասի բեկոր է։ Սպիտակ ֆոնի վրա կան երկու լայն, միմյանց զուգահեռ կանաչ գոտիներ և շղթայաձև զարդ։*

*123/624։*

## 588. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շատ հաստ պատերով երկնագույն հախճապակե թասի հատակ է, ներսից սև զարդանկարով։*

*123/625։*

## 589. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շողյուն հախճապակե տարբեր անոթների երկու բեկորներ են, առաջինը շատ նուրբ, բարակ պատերով թասի փոքրիկ բեկոր է, դրսից ու ներսից, սպիտակ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով։ Երկրորդը հաստ պատերով բազմանիստ ամանի բեկոր է, դրսից, սպիտակի վրա, ոսկեգույն նկարազարդով։*

*123/626 ա, բ։*

## 590. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի բեկոր է, ներսից սպիտակ ֆոնի վրա, կանաչ ջնարակով գծազարդեր են, դրսից՝ բաց կապույտ ճառագայթներ։*

*123/628։*

## 591. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Ուղիղ պատերով, կապույտ հախճապակե թասի բեկորներ են, դրսից փորագիր բուսական զարդերով։ Բեկորների վրա կան կպչելու անցքեր։*

*123/629 և 672 (11 M), 1911 թ.։*

## 592. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի նստուկ է, ցածր կրունկաձև ոտքի վրա։ Ներսից, հատակի վրա, պատկերված են սև գծաշարդով թռչնակերպ զարդեր։ XI—XII դդ.։*

*123/630։*

## 593. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե փոքրիկ թասի նստուկ է, օղակավոր ոտքի վրա, ներսից, սպիտակ ֆոնի վրա, կապույտ ճառագայթաձև գծանկարով, կենտրոնում՝ ալաք։*

*123/631։*

## 594. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե փոքրիկ թասի նստուկ է, օղակավոր ոտքի վրա։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, կանաչ և կապույտ ջնարակով ծաղկազարդ։*

*123/632։*

## 595. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե հաստ պատերով թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, սպիտակ ֆոնի վրա, կապույտ ճառագայթաձև նախշերով։*

*123/633։*

## 596. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, երկու կողմից, երկնագույն ֆոնի վրա, սև զարդանկարով։ XII—XIII դդ.։*

*123/634։*

## 597. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե մեծ ափսեի բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա, կանաչ զարդանկար կա, դրսից արձանագրության նմանակում։*

*123/635։*

## 598. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե թասի փոքրիկ բեկոր է, ալիքաձև շրթով, ներսի երեսին, մուգ կապույտ ֆոնի վրա, միմյանց զուգահեռ երկու հորիզոնական լայն գոտիներ են արված։*

*123/636։*

## 599. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե նուրբ պատերով փոքրիկ թասի նստուկ է՝ օղակավոր ոտքի վրա։*

Հատակին, ներսի կողմից, սև ջնարակով բուսական զարդ է արված։
123/637։

### 600. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե սափորի բեկոր է։ Դրսի երեսին սևով բուսական զարդ է արված։
123/638։

### 601. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Սպիտակ հախճապակե փոքրիկ թասի բեկոր է, ներսի երեսին ունի ուղղահայաց, նուրբ մատներներ, որոնց մեջտեղը պատած է ոսկեգույն փայլով։
123/639։

### 602. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե խորը թասի շրթի բեկոր է, դրսից՝ անմիջապես պսակի տակ, արաբատառ արձանագրությամբ։
123/640։

### 603. ԿԱՓԱՐԻՉԻ ԲՌՆԱԿ

Հախճապակե ամանի կափարիչի նլուատաձև բռնակ է, ծածկված կանաչ ջնարակով։
123/641։

### 604. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե սափորի բեկոր է, դրսից, մուգ կապույտ ֆոնի վրա, ոսկեգույն զարդանկարով. ունի հորիզոնական մատներներ։
123/643։

### 605. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, դրսից ներճկված զարդերով։ Արտադրական խոտան։
123/642։

### 606. ՍԱՓՈՐԻ ԿԱՆԹ

Երկնագույն հախճապակե սափորի կանթ է։
123/644։

### 607. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Հախճապակե թասի նստուկի մաս է, օղակավոր բարձր ոտքի վրա։ Ներսից, սպիտակ ֆոնի վրա, դարչնագույն զարդանկար։
123/645։

### 608. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի նստուկի մաս է, օղակավոր բարձր ոտքի վրա։ Սպիտակ ֆոնի վրա արված է կապույտ ու դարչնագույն զարդանկար։
123/646։

### 609. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Շողյուն հախճապակե թասի նստուկ է, օղակավոր ցածր ոտքի վրա։ Հատակին, սպիտակ ֆոնի վրա, բաց դարչնագույն զարդանախշեր են արված։
123/647։

### 610. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Երկնագույն հախճապակե թասի նստուկ է, օղակավոր ցածր ոտքի վրա, հատակին բաց դարչնագույն զարդագծեր են արված։
123/648։

### 611. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե մեծ թասի նստուկի մաս է, օղակավոր ցածր ոտքի վրա. հատակին սև ներկով բուսական և երկրաչափական զարդեր են։ XII—XIII դդ.։
123/649։

### 612. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե տարբեր անոթների 4 բեկորներ են՝ սպիտակ ֆոնի վրա ոսկեգույն զարդանկարով։
123/650։

### 613. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

Կապույտ հախճապակե նուրբ պատերով թասի փոքրիկ բեկոր է։ Ներսից, բաց կապույտ ջնարակի վրա, ոսկեգույն զարդանկարով։
123/651։

### 614. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Շողյուն հախճապակե երկու տարբեր թասերի բեկորներ են։ Ներսից ու դրսից, սպիտակ ֆոնի

*վրա, զարչնագույն զարդանկարներ են արված։*
*123/652։*

## 615. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե փոքրիկ թասի նստուկի բեկոր է, օղակավոր ոտքի վրա։ Ծածկված է սպիտակ ջնարակով, վրան դեղնականաչ զարդագծեր են և կապույտ ծաղկազարդեր։*
*123/653։*

## 616. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե թասի տափակ շրթի բեկոր է։ Դրսից, դեղնականաչ ֆոնի վրա, սպիտակ զարդագծեր են արված, ներսից՝ սպիտակ ֆոնի վրա, բաց կապույտ ճառագայթաձև նախշազարդեր։*
*123/655։*

## 617. ԱՆՈԹՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե անոթների երեք բեկորներ են.*
*ա. բ) սափորի բեկորներ են, դրսից, երկնագույն ֆոնի վրա, սև զարդագծերով.*
*գ) երկնագույն թասի բեկոր է, սև նկարազարդով։*
*123/656 ա, բ, գ։*

## 618. ԹԱՍԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Երկնագույն հախճապակե տարբեր թասերի երկու բեկորներ են, ոճավորված արաբերեն գրերի ձևի և բուսական զարդագծերով։*
*123/657 ա, բ։*

## 619. ՍԱՓՈՐԻ ԲԵԿՈՐ

*Կապույտ հախճապակե սափորի փոքրիկ բեկոր է, դրսի երեսին կան ուռուցիկ նշաձև նախշեր և մուգ կապույտ ֆոնի վրա դարչնագույն գոտիներ։*
*123/658։*

## 620. ԱՄԱՆՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Հախճապակե տարբեր ամանների երկու բեկորներ են.*
*ա) կճուճի վզի բեկոր է, դրսից, մուգ կապույտ ֆոնի վրա, մուգ դարչնագույն զարդագծերով, ներսից՝ սպիտակ։*
*բ) թասի բեկոր է, ներսից, մուգ կապույտի վրա, շագանակագույն զարդագծեր, դրսից՝ երկնագույն, վրան սև զարդագծերով։*
*123/659 ա, բ։*

## 621. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Հախճապակե ափսեի տափակ շրթի բեկոր է, ներսից, սպիտակ ֆոնի վրա, դեղնականաչ զարդագծերով և կապույտ ցայտքերով։*
*123/660։*

## 622. ԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բազմանիստ կողերով հախճապակե ամանի բեկոր է, դրսից, սպիտակ ֆոնի վրա, սև զարդագծերով։*
*123/661։*

## 623. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե թասի բեկոր է, երկու կողմից դեղնականաչ զարդանկարներով։*
*123/662։*

## 624. ԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Երկնագույն հախճապակե ամանի բեկոր է, երկու կողմից սև զարդագծերով։ Ներսից շրթի երկարությամբ եռանկյունաձև սև ատամնաշար է գնում, ապա մեկ հատ լայն գոտի՝ ոճավորված արաբերեն գրերի ձևով։*
*123/663։*

## 625. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Անիում գտնված իրերի մեջ զգալի թիվ են կազմում ուլունքները, որոնք բազմազան են ինչպես ձևով, այնպես էլ նյութով: Ուլունքները գերազանցապես պատրաստված են տարբեր բյուրեղաքարերից, մածուկից (ապակու խմոր), ապակուց և այլն: Զգալի թիվ են կազմում կապտավուն ճախճապակե ուլունքները: Ուլունքների բազմերանգությունը և ձևերի առատությունը խոսում է դրանց սիմվոլիկ նշանակության մասին: Հնարավոր է, որ սերդոլիկե որոշ ուլունքներ հին դամբարաններից են և պատահականորեն առնվել են 11—13-րդ դդ. թվագրվող հիմնական խմբի հետ:

### 860. ՈՒԼՈՒՆՔ

*Սպիտակ մածուկից պատրաստած ուլունք է, ծածկված ջնարակով, անցքի երկու ծայրերին ունեցել է գոտիներ, իսկ մնացած մակերեսը ծածկված է բշտիկանման զարդերով:*

*123/902 (04), 1904 թ.:*

### 861. ՈՒԼՈՒՆՔ

*Մածուկից պատրաստած գնդաձև ուլունք է, ծածկված երկնագույն ջնարակով, որի հետքերն են նկատվում: Անցքի երկու կողմում նեղ գոտիներ են, իսկ ամբողջ մակերեսը ծածկված է բշտիկավոր զարդանախշերով:*

*123/903 (07), 1907 թ.:*

### 862. ՈՒԼՈՒՆՔ

*Կավե գնդաձև ուլունք է, երկայնական անցքով:*

*123/904 (07), 1907 թ.:*

### 863. ՈՒԼՈՒՆՔ

*Մածուկից պատրաստած գլանաձև երկար ուլունք է (պահպանվել է կեսը): Անցքի մոտ ունի մի առանձին գոտի, որի շուրջը իրար զուգահեռ խորագիր զարդագծեր են արված:*

*123/905 (06 № 4), 1906 թ.:*

### 864. ՈՒԼՈՒՆՔ

*Մածուկից պատրաստած ուլունք է, ծածկված երկնագույն ջնարակով, առանց զարդագծերի:*

*123/906 (06 № 4), 1906 թ.:*

### 865. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած ուլունք է, անցքի մոտ նեղ գոտիներ են, մակերեսը ծածկված է բշտիկաձև զարդերով:*

*123/907:*

### 866. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Մածուկից պատրաստած 5 հատ մանր ուլունքներ են, 2-ը սև, 3-ը երկնագույն:*

*123/908 (04), 1904 թ.:*

### 867. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած ուլունքներ են, միմյանց կպած երկու փոքրիկ խորանարդիկների ձևի:*

*123/910 (06 ո), 1906 թ., պատահական:*

### 868. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստած գնդաձև փոքրիկ ուլունք է:*

*123/911 (08), 1908 թ.:*

### 869. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստած գլանաձև, կարճ, փոքրիկ ուլունք է:*

*123/912 (04 № 99), 1904 թ.:*

### 870. ՈՒԼՈՒՆՔ-ԿԱԽԱԶԱՐԴ

*Երկնագույն մածուկից պատրաստած մարդու ձեռքի նման փոքրիկ կախազարդ է:*

*123/913:*

### 871. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստած փոքրիկ ուլունք է, կրկնակի, 2-ը իրար կպած։*

*123/914 (04 № 73), 1904 թ.։*

### 872. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած գլանաձև ուլունք է, բաժանված 3 հավասար հատվածների։*

*123/914 (04 № 60), 1904 թ.։*

### 873. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Չորս տարբեր մանր ուլունքներ են՝ կրկնակի, մուգ կապույտ և սև ապակուց ու երկնագույն մածուկից։*

*123/917 (08 с № 1), 1908 թ.։*

### 874. ՈՒԼՈՒՆՔԻ ԿԵՍ

*Սմալտայից պատրաստված մեծ, մոզայիկ, գնդաձև ուլունքի կես է, երկու կողմից տափակ։ Հիմնական գույնը սև է, ծածկված դեղին, կարմիր, սև ու սպիտակ շրջանակներով։*

*123/919 (08 с № 1),1908 թ.։*

### 875. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստված մեծ, մոզայիկ ուլունք է (մոտ 1/3-ը) լայն անցքով, սպիտակի վրա սև ու դեղին ալիքավոր գծազարդերով։*

*123/920 (08 ո 55), 1908 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 79։*

### 876. ՈՒԼՈՒՆՔ

*Կարմիր սմալտայից գնդաձև ուլունք է, երկու կողմից տափակ։ Վրան ունի սև ու սպիտակ ընդհլուզվածքներ։*

*123/921։*

### 877. ՈՒԼՈՒՆՔԻ ԿԵՍ

*Սմալտայից պատրաստած մեծ, մոզայիկ ուլունքի կես է, ծածկված դեղին, կապույտ, կարմիր, սպիտակ և ոսկեգույն զարդագծերով։*

*123/923 (12 A 38), 1912 թ.։*

### 878. ՈՒԼՈՒՆՔԻ ԲԵԿՈՐ

*Սմալտայից պատրաստված մեծ ուլունքի բեկոր է։ Մոխրագույն ֆոնի վրա կան մեծ «աչքեր» և սպիտակ, դեղին շրջանակներ։*

*123/922։*

### 879. ՈՒԼՈՒՆՔԻ ԲԵԿՈՐ

*Սմալտայից պատրաստված մեծ, մոզայիկ ուլունքի մի մաս է, սև ֆոնի վրա դեղին ու կանաչ ալիքավոր զարդագծերով։*

*123/924։*

### 880. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստած գլանաձև մեծ ուլունք է, ֆոնը սև է, ծածկված շատ խիտ վերադիր սպիտակ շրջանակներով, որոնց կենտրոնը կանաչ է, իսկ մնացած ազատ տարածությունը ծածկված է հաստ, դեղին զարդագծերով։*

*123/925 (04), 1904 թ.։*

### 881. ՈՒԼՈՒՆՔ

*Սպիտակ պաստայից պատրաստած բազմանիստ ուլունք է։*

*123/926 (10 Y IV № 28), 1910 թ.։*

### 882. ԿՆԻՔ (ԳԵՄՄԱ)

*Սերդոլիկից պատրաստած գնդաձև, ուղիղ կտրվածքով գեմմա է։ Վրան թեք, մանր գծիկներով շրջանակ է արված, որի կենտրոնում ռճավորված պատկեր է (հավանաբար մարդու)։ Տախտակ XVIII, 12։*

*123/927 (08), 1908 թ., Միջնաբերդից։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 79։*

### 883. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստած ուլունք է, լավ հղկված, թերի։*

*123/929 (08), 1908 թ.։*

### 884. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն հախճապակուց պատրաստած ուլունք է, ութանիստ (4 հիմնական նիստերը լայն են, իսկ դրանց արանքների 4 նիստերը նեղ)։*

*123/931։*

### 885. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն հախճապակուց պատրաստած երկարավուն ուլունք է, ծածկված միմյանց հատող*

*թեր գծիկներից կազմված խորագիծ զարդանախշով։*
*123/928 (08), 1908 թ.։*

### 886. ՈՒԼՈՒՆՔ

*Սպիտակ ագաթից պատրաստված մեծ ուլունք է, տձև, կիսամշակ։*
*123/930 (08), 1908 թ.։*

### 887. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած ուլունք է, անհամաչափ, մի կողմը վեցանիստ։*
*123/932 (10 К 48), 1910 թ.։*

### 888. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ

*Կավե իլիկի կիսագնդաձև գլուխ է։*
*123/933։*

### 889. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստած մեծ, գնդաձև ուլունք է, հարթ, լավ հղկված մակերեսով։*
*123/934 (08), 1908 թ.։*

### 890. ՈՒԼՈՒՆՔ-ԿԱԽԻԿ

*Երկնագույն հախճապակե ուլունք-կախիկ է, երկարավուն, վերևի մասը նեղ, փոքրիկ անցքով։*
*123/935 (09 М 31), 1909 թ.։*

### 891. ՈՒԼՈՒՆՔ

*Քառանիստ կողերով, երկնագույն հախճապակե ուլունք է։*
*123/936 (14 Ш 19), 1914 թ.։*

### 892. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստած վեցանիստ կողերով ուլունք է։*
*123/937 (04 27), 1904 թ.։*

### 893. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստած հնգանիստ կողերով ուլունք է։*
*123/938 (04 21), 1904 թ.։*

### 894. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն, տեղ-տեղ սպիտակ, փոքրիկ ուլունք է, վեցանիստ կողերով։*
*123/939 (08 с), 1908 թ.։*

### 895. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Երկնագույն սմալտայից պատրաստած 5 ուլունքներ են, երկուսը գնդաձև, լայն անցքերով, երրորդը կախազարդ է, ոճավորված՝ մարդու դեմքի ձևով, չորրորդը փոքրիկ կրկնուլունք է, ծածկված նուրբ մանրերով, հինգերորդը փոքրիկ կլոր ուլունք է, մանրազարդ։*
*123/940 (10 К № 40), 1910 թ.։*

### 896. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Մուգ կապույտ մածուկից պատրաստած, սպիտակ կետերով, ութանիստ կողերով միանման 5 փոքրիկ ուլունքներ են։*
*123/941 (08), 1908 թ.։*

### 897. ՈՒԼՈՒՆՔ

*Դեղնավուն սերդոլիկից պատրաստած գլանաձև ուլունք է, նեղացող ծայրերով, լայն անցքով։*
*123/942 (04), 1904 թ.։*

### 898. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած փոքրիկ ուլունք է, վեցանիստ կողերով։*
*123/943 (12), 1912 թ.։*

### 899. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Գորշ և կաթնագույն սմալտայից պատրաստած 2 գնդաձև ուլունքներ են։*
*123/944 ա, բ (11 М собр. 118), 1911 թ.։*

### 900. ՈՒԼՈՒՆՔ

*Ագաթից պատրաստած գլանաձև, եռանիստ կողերով ուլունք է։*
*123/945 (10 К № 6), 1910 թ.։*

### 901. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած փոքրիկ ուլունք է, վեցանիստ կողերով։*
*123/946 (12 А), 1912 թ.։*

### 902. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստված վեցանիստ կողերով ուլունք է։*
*123/948 (04), 1904 թ.։*

### 903. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստված հնգանիստ փոքրիկ ուլունք է։*
*123/949 (10 D 30), 1910 թ.։*

### 904. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստված գլանաձև մեծ ուլունք է (քիչ անկանոն), լայն անցքով, կողերին արված են նուրբ մատնեքներ։*
*123/950 (04 . 18), 1904 թ.։*

### 905. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստված գլանաձև մեծ ուլունք է, լայն անցքով։*
*123/951 (10 D 15), 1910 թ.։*

### 906. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Երկու կախիկ-ուլունքներ են, մեկը թափանցիկ ապակուց է, երկարավուն, կշռաքարի ձևի, վերևի գլխիկը կոտրված։ Մյուսը իլիկաձև է, կավից պատրաստված, կեսը ծածկված կապույտ ջնարակով, վերևի մասում կա կախելու անցք։*
*123/952 (14 . 34), 1914 թ.։*

### 907. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստված գլանաձև մեծ ուլունք է, լայն անցքով, դրսից տեղ-տեղ ներճկված։*
*123/953 (12 A), 1912 թ.։*

### 908. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստված գլանաձև մեծ ուլունք է, լայն անցքով, վրան ներճկված զարդեր։*
*123/954 (10 Y I 28), 1910 թ.։*

### 909. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Երկնագույն մածուկից պատրաստված 4 հատ երկարավուն ուլունքներ են, վերևը լայն, ստորին մասը նեղ, ունեն ձևավոր քառանիստ կողեր։*
*123/955։*

### 910. ՈՒԼՈՒՆՔ-ԿՆԻՔ

*Ագաթից կիսաձվաձև ուլունք-կնիք է, հիմքում շրջանաձև և հարթ, առանց որևէ զարդանախշի։ Անցքը ստորին մասում է։*
*123/959 (10 К № 9), 1910 թ.։*

### 911. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ

*Իլիկի կավե ձվաձև գլուխ է, կենտրոնում ունի անցք։*
*123/960 (12 A), 1912 թ.։*

### 912. ՈՒԼՈՒՆՔ-ԿԱԽԻԿ

*Մածուկից պատրաստված կախիկ-ուլունք է, երկարավուն, վերևի գլխիկը կոտրված։*
*123/962 (04 . 107), 1904 թ.։*

### 913. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստված գնդաձև փոքրիկ ուլունք է, լայն անցքով։*
*123/963 (04), 1904 թ.։*

### 914. ՈՒԼՈՒՆՔ

*Դեղնավուն ապակուց պատրաստված երկարավուն ուլունք է։ Անցքը երկայնական է, մեջը պահպանվել է մետաղե լարի մնացորդը։*
*123/964։*

### 915. ԿԱԽԻԿ-ՈՒԼՈՒՆՔ

*Մածուկից պատրաստված երկարավուն կախիկ-ուլունք է, ծայրերը սուր են, մեջտեղի մասում քիչ ներճկված, առանց անցքի։*
*123/961 (14 № 21), 1914 թ.։*

### 916. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստված գնդաձև, երկու կողմից տափակ ուլունք է։*
*123/970։*

### 917. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստված գնդաձև ուլունք է։*
*123/971։*

### 918. ԿՈՃԱԿՆԵՐ

*Երկնագույն մածուկից պատրաստած երկու կլոր կոճակներ են (ոչ կանոնավոր), մի կողմը տափակ, մյուսը ուռուցիկ, 2-ական անցքով։*
*123/972։*

### 919. ՈՒԼՈՒՆՔ

*Լայն անցքով ոսկրե ուլունք է, վրան շուրջանակի թեք մանր գծիկներով զարդանախշ։*
*123/973։*

### 920. ՈՒԼՈՒՆՔ

*Սև ապակուց կլոր ուլունք է, քիչ տափակ, անցքի շուրջը բազմաթիվ նուրբ գծերով։*
*123/974։*

### 921. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած կրկնակի ուլունք է, միմյանց կպած փոքրիկ գնդիկների ձևի։*
*123/977։*

### 922. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած գլանաձև, լայն, մեծ անցքով խոշոր ուլունք է, դրսից երկայնական մատներնով։*
*123/978։*

### 923. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստած փոքրիկ, տափակ, շրջանաձև ուլունք է, լայն անցքով, կապույտ, քիչ գունաթափված։*
*123/979։*

### 924. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած մեծ, գլանաձև ուլունք է, լայն անցքով։*
*123/980։*

### 925. ՈՒԼՈՒՆՔ-ՍԿԱՎԱՌԱԿ

*Ոսկրե փոքրիկ սկավառակ է, քիչ հաստ, մի եզրին ունի փոքրիկ փոսիկ։ Հավանաբար կիսամշակ ուլունք է։*
*123/981։*

### 926. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած, բ*
*գլանաձև, մեծ անցքով ուլունք է։*
*123/982 A։*

### 927. ՈՒԼՈՒՆՔ

*Գույնզգույն մածուկից պատրաստած (եր*
*նագույնի վրա սպիտակ կետերով) վեցանիստ կ*
*ղերով ուլունք է։*
*123/983։*

### 928. ՈՒԼՈՒՆՔ

*Մոզայիկ ապակուց պատրաստված մեծ ուլու*
*քի բեկոր է, սև, սպիտակ, մուգ կարմիր գույ*
*(հավանաբար խոտան)։*
*123/984։*

### 929. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած խլիկ*
*ձև քառակող ուլունք է։*
*123/985։*

### 930. ՈՒԼՈՒՆՔԻ ԲԵԿՈՐ

*Սմալտայից պատրաստած մեծ և երկարավո*
*սև գույնի ուլունքի կես է, վրան կարմիր, մ*
*շրջանակներ են արված, իսկ դրանց մեջ կա դ*
*ղին շրջանակ, կենտրոնում՝ սև։*
*123/986։*

### 931. ՈՒԼՈՒՆՔ

*Դեղին ապակուց պատրաստած խոշոր, երկ*
*րավուն, լայն անցքով ուլունք է։*
*123/987։*

### 932. ՈՒԼՈՒՆՔ

*Ծիրանագույն սերդոլիկից պատրաստած գլ*
*գաձև, լայն անցքով ուլունք է։*
*123/988։*

### 933. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Երկնագույն մածուկից պատրաստած 3 գլ*
*գաձև, լայն ու մեծ անցքերով ուլունքներ են։*
*123/989։*

### 934. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Մածուկից պատրաստած 2 ուլունքներ են, մեկը երկնագույն է, մյուսը՝ կապույտ։ Երկուսն էլ գնդաձև են, անցքի երկու ծայրերին նեղ վերադիր գոտիներով, իսկ իրանի վրա վերադիր բշտիկաձև զարդեր կան։*

*123/990։*

### 935. ՈՒԼՈՒՆՔ

*Դեղին սերդոլիկե, գնդաձև, երկու կողմից տափակ ուլունք է։*

*123/991։*

### 936. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Երկնագույն մածուկից պատրաստած տարբեր տիպի չորս ուլունքներ են, փոքրիկ, գնդաձև, նուրբ մասնիկներով, բազմագույն։*

*123/992։*

### 937. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Սերդոլիկե 2 ուլունքներ են՝ մեծ, երկու կողմից տափակ և յոթանիստ։*

*123/993։*

### 938. ԿՈՃԱԿ

*Ագաթից փոքրիկ կիսագնդաձև կոճակ է։*

*123/994։*

### 939. ՈՒԼՈՒՆՔ

*Գորշ գույնի քարից պատրաստած փոքրիկ անիվաձև ուլունք է։*

*123/995։*

### 940. ՈՒԼՈՒՆՔ

*Սմալտայից պատրաստած մեծ կրկնուլունք է, սև ֆոնի վրա կանաչ, զիգզագաձև հաստ գծերով։*

*123/996։*

### 941. ՈՒԼՈՒՆՔ

*Սերդոլիկից պատրաստած կարմրավուն, փոքրիկ, գնդաձև ուլունք է, անցքի մոտ երկու կողմից տափակեցրած։*

*123/997։*

### 942. ՈՒԼՈՒՆՔ

*Մոզայիկ ապակուց պատրաստված մեծ ուլունք է, սևի վրա սպիտակ մեծ աչքերով, որոնց միջտեղով սև գիծ է գնում։*

*123/999։*

### 943. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած փոքրիկ կլոր ուլունք է, անցքի մի կողմում արված է խորագիծ շրջանակ։*

*123/1003։*

### 944. ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած խորանարդաձև փոքրիկ ուլունք է։*

*123/1004։*

### 945. ԿԱԽԻԿ ՈՒԼՈՒՆՔ

*Երկնագույն մածուկից պատրաստած բարակ, ամբաձև կախիկ է, կտրված ծայրերով, երկայնական անցքով, կտրվածքը վեցանիստ է։ Ամբողջ մակերեսը ծածկված է թեք գծիկներից կազմված ցանցկեն զարդագծերով։*

*123/1006։*

## Գլուխ յոթերորդ

# ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԳԻՊՍԵ ԲԵԿՈՐՆԵՐ

Անիի միջնաբերդում և քաղաքային շինությունների պեղումների ժամանակ գտնվել են գիպսից պատրաստված զարդեր, սալեր, որոնք օգտագործվել են շենքերի ներքին հարդարանքում: Այդ զարդերը արված են փորագրությամբ և կաղապարի մեջ թափելու եղանակով: Դրանց մեծ մասը դռների, պատուհանների խորշերի, առաստաղի անկյունների, քիվերի մասեր են, բուսական, երկրաչափական և կենդանական զարդերով, պսակաքերբերով, վարդյակներով, որոնք կպցված են եղել տախտակի վրա և ամրացվել պատերին: Անիի նյութերի մեջ կան վեցթևանի աստղեր, պատուհանի լուսանցույցներ, վանդակներ և այլն: Շենքերի ներքին հարդարանքում գիպսե ձուլածո զարդերի օգտագործումը լայն տարածում է ունեցել նաև Դվինում և Գառնիում: Առանձնապես հարուստ են Դվինի նյութերը իրենց զարդամոտիվներով:

Հարդարանքի գիպսե զարդերը թվագրվում են 10—13-րդ դդ.:

### 946. ՎԱՐԴՅԱԿԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե ուռուցիկ վարդյակի բեկոր է: Ծառայել է շենքի ներքին գիպսե հարդարանքը պահող գամերը ծածկելու համար: Տակը անցք կա և ժանգի հետքեր: Երեսին ձուլածո ուռուցիկ զարդաճյուղեր են արված:*

*123/1007 (08* ո *№ 20*b*), 1908 թ., պատահական:*

### 947. ՎԱՐԴՅԱԿՆԵՐ

*Գիպսե խոշոր ութ թևանի զմբեթանման, ուռուցիկ վարդյակներ են, որոնցից 3-ը ամբողջական են, չորրորդը կիսով չափ է պահպանված: Բոլոր վարդյակները գորշ գույնի են, հավանաբար հրդեհի հետևանքով: Տախտակ* XLVII, *1:*

*123/1007 (08* ո *№ 20*b*):*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 38:*

### 948. ՎԱՐԴՅԱԿՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե զարդերի 18 բեկորներ են, ուռուցիկ, վեցթևանի վարդյակի ձևով: Բոլորն էլ թերի և կոտրված, մի քանիսի վրա նկատվում են հրդեհի հետքեր:*

*123/1008 (08 № 20*a*), 1908 թ.:*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 38:

### 949. ՎԱՐԴՅԱԿՆԵՐ

*Գիպսե զարդերի վեցաթև 28 վարդյակներ են, կենտրոնում ավելի ուռուցիկ գնդիկով: Բոլորն էլ ամբողջական են, միայն երկուսի վրա հրդեհի հետքեր են երևում:*

*123/1009:*

### 950. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի կիսագնդաձև բեկոր է: Պատրաստված է կաղապարի մեջ, կենտրոնում ունի անցք՝ գամով պատին ամրացնելու համար: Վրան պատկերված է* X*-աձև զարդանախշ:*

*123/1010:*

### 951. ԱՂՅՈՒՍՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե աղյուսների 3 բեկորներ են: Մեկի ներսի երեսին ամբողջ երկարությամբ 3 խողովակաձև անցքեր կան, իսկ մյուս երեսին ունի զարդանկարի հետքեր: Երկրորդ բեկորը քառակուսի է, երրորդի վրա նկատվում են բուսական զարդանախշերի հետքեր:*

*123/1011 (07 № 197*a*), 1907 թ., Միջնաբերդ։*
*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 21։
2. КАМД, стр. 40.

### 952. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե սալիկի բեկոր է, վերադիր բուսական զարդանախշի մնացորդով։ Վրան նկատվում են կարմիր ներկի թույլ հետքեր։*
*123/1012 (07 №133), 1907 թ., Միջնաբերդ։*
*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 14։
2. КАМД, стр. 40.

### 953. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե 3 բեկորներ են, մեկը հավանաբար նեղ քիվի բեկոր է, մյուս երկուսի վրա նկատվում են ծաղկանախշերի մնացորդներ։*
*123/1013 ա, բ, գ։*

### 954. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի բեկոր է, առանց զարդի։*
*123/1014։*

### 955. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի ձուլածո բեկոր է, վրան պատկերված բուսական զարդանախշ։*
*123/1015։*

### 956. ԳԻՊՍԵ ԲԵԿՈՐՆԵՐ

*Շենքի ներքին հարդարանքի գիպսե 2 ձուլածո բեկորներ են, սեպաձև, ուռուցիկ նախշազարդով։*
*123/1016, (07.50*a*), 1907 թ., Միջնաբերդի պալատ։*
*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., *էջ 6։*

### 957. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե սալիկի 2 բեկորներ (հավանաբար անկյունից) են, վրան պատկերված է գեղեցիկ սիրամարգ՝ նստած ծառի ճյուղի վրա։*
*123/1015 (07 . № 117*b*), 1033 (07 № 117*a*), 1907 թ.։ Միջնաբերդի պալատից։*
*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 12։
2. Ани, М. Л., 1834 г., т. *XXXIV, № 132։*
3. КАМД, стр. 38.

### 958. ԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե աղյուսի բեկոր է, առանց զարդանախշի։*
*123/1015։*

### 959. ԱՂՅՈՒՍՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե աղյուսների 4 բեկորներ են, ձուլածո, բուսական և երկրաչափական զարդանախշերով։*
*123/1016 ա, բ, գ, դ, (07 № 50*a*), 1907 թ.։*
*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 6.

### 960. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Շենքի ներքին հարդարանքի գիպսե աղյուսի 2 մեծ բեկորներ են (անկյունից), ծածկված ձուլածո բուսական զարդանախշով։*
*123/1017 ա, բ, (07 № 126), Միջնաբերդից։*
*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 13։
2. КАМД, стр. 25։

### 961. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե հարդարանքի 6 բեկորներ են, բուսական և երկրաչափական զարդանախշերով։ Բեկորներից մեկի վրա արձանագրության հատված կա, ուռուցիկ արաբերեն տառերով։ Միակ օրինակը Անիի պեղումներից։*
*123/1018 (08 № 20), 1908 թ., Միջնաբերդից, պատահական։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. 38—40։

### 962. ՔԻՎԻ (՞) ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե քիվերի 5 բեկորներ են, ծածկված ձուլածո բուսական և երկրաչափական զարդանախշերով։*
*123/1019 (09* A *№ 3), 1909 թ., Միջնաբերդ։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. 40։

### 963. ՍԱԼԻԿՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե սալիկների 4 բեկորներ են, ձուլածո բուսական զարդանախշով։ Մեկի վրա նկատվում են կապույտ ներկի հետքեր։*
*123/1020, Միջնաբերդ։*

### 964. ՇԱՂԱԽԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

*Շենքերի շաղախների մնացորդներ են։ Մի բեկորը գիպս է, երկուսը կրաշաղախ։*
*123/1021 (10* D *№ 1), 1910 թ., Միջնաբերդ։*

## 965. ՍԱԼԻԿՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե սալիկների 4 բեկորներ են, ծածկված բուսական և հյուսածո զարդանախշերով։*

*123/1022։*

## 966. ԳԻՊՍԵ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի փոքրիկ բեկոր է, որը բավականին քայքայված է, վրան թույլ արտահայտված երկրաչափական զարդով։*

*123/1023։*

## 967. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսի բեկոր է, առանց զարդանախշի։*

*123/1024։*

## 968. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐ

*Նեղ և երկար գիպսե սալիկի բեկոր է։ Վրան պատկերված են երկու ձուլածո վեցաթև աստղեր (գույնը ոճավորված ծաղիկներ)։*

*123/1027 (07 № 30), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 4։
2. КАМД, стр. 40.

## 969. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե սալիկի զարդաբեկոր է, վրան բուսական զարդանախշի մեջ առնված վազող կենդանու պատկերով (պահպանվել է միայն երկու ոտքը)։ Զարդաքանդակի ֆոնը կապույտ է, ձուլված կաղապարի մեջ։ Տախտակ* XLVII, *4։*

*123/1030 (07 № 125), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 13։
2. Ани, XXX, 108։
3. КАМД, стр. 39.

## 970. ԳԻՊՍԵ ՎԱՐԴՅԱԿ

*Հնգաթև ծաղկի նման գիպսե ձուլածո վարդյակ է։*

*123/1028, Միջնաբերդի պալատի հյուսիսարևելյան բակիլիկ դահլիճի նկուղ։*

## 971. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի բավականին մաշված, առանց զարդագծերի փոքր բեկոր է։*

*123/1029։*

## 972. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐ

*Արջի պատկերով գիպսե զարդաքանդակի բեկոր է (պահպանվել է իրանի հետևի մասը)։ Ձուլված է կաղապարում։*

*123/1031 (07 № 129), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 14։
2. Ани, XXX, 108.
3. КАМД, стр. 39։

## 973. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐ

*Նեղ և երկար գիպսե սալիկի ձուլածո զարդաբեկոր է։ Վրան պատկերված է բուսական զարդահյուսերի մեջ սրընթաց վազող եղնիկ, որի առջևում կա մի այլ կենդանի (գույնը շուն ՞), որից պահպանվել են հետևի մի ոտքը և ետ ծալված պոչը։*

*123/1032 (07 № 46), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907г., стр. 5։
2. Ани, XXXIV, 128:
3. КАМД, стр. 23.

## 974. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Կաղապարի մեջ ձուլված գիպսե հարդարանքի բեկոր է (անկյունի մաս), վրան պատկերված է սիրամարգ։ Տախտակ* XLVII, *5։*

*123/1033 (07 № 117)։*

## 975. ԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Եռաթերթ ծաղկազարդով գիպսե զարդաբեկոր է։*

*123/1035 (08 с № 2), 1908 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 39։

## 976. ԱՂՅՈՒՍԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե բարակ աղյուս է, վրան ռելիեֆ զարդաքանդակ՝ առյուծի կամ հովազի պատկերով։ Պատկերը շատ թույլ է նշմարվում։ Ձուլված է կաղապարի մեջ։*

*123/1034 (08 №* 2b*), 1908 թ., Միջնաբերդի հյուսիսային լանջ։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 39։

## 977. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի ձուլածո զարդաբեկոր է, վրան զուգահեռ գծերի միջև ութաթև աստղեր են,*

ներճկված փորվածքով, կենտրոնում՝ կոճակաձև ուռուցիկ զարդեր։

*123/1036 (08 № 2a), 1909 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 40։

### 978. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի զարդաբեկոր է։ Զարդանախշը մաշված է, լավ պահպանվել է հայերեն Ե գիրը։ Տախտակ XLVII, 6։*

*123/1037 (A), Միջնաբերդ։*

### 979. ԱՐՄԱՎԵՆԱԶԱՐԴ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե երկու ձվաձև, արմավենազարդ զարդաբեկորներ են* (пальметка), *վրան նկատվում են կրակի հետքեր։*

*123/1038 (08 № 20c), 1908 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 38։

### 980. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բուսական զարդանախշով գիպսե հարդարանքի երկու զարդաբեկորներ են։*

*123/1039 (07 № 51), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 6.

### 981. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե աղյուսի բեկոր է (անկյունամաս)։*

*123/1040 (07 № 62), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 7.

### 982. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե հարդարանքի զարդաբեկոր է, գեղեցիկ բուսական զարդանախշով։*

*123/1041 (16 п 2), 1916 թ., պատահական։*

### 983. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Բուսական զարդանախշով գիպսե հարդարանքի ձուլածո բեկոր է։*

*123/1042։*

### 984. ՍԱԼԻԿԻ ԲԵԿՈՐ

*Գիպսե փոքրիկ, բարակ սալիկի բեկոր է, վրան անորոշ ջնջված զարդանախշ։*

*123/1043։*

### 985. ՍԱԼԻԿՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Գիպսե սալիկների 15 ձուլածո բեկորներ են, երկու ուռուցիկ նշաձև զարդերի միջև արմավենու ծաղիկ է տեղավորված։*

*123/1044 (12 Λ), 1912 թ., Միջնաբերդ։*

## Գլուխ ութերորդ

# ՍՆԴԿԱՄԱՆՆԵՐ ԿԱՄ ՋՎԱՋԵՎ ԱՄԱՆՆԵՐ

Անիի պեղումներից հայտնաբերված իրերի մեջ մեծ թիվ են կազմում ձվաձև անոթները, որոնք հայտնի են նաև «սնդկամաններ» անունով: Դրանք սֆերակոնիկ, ցածի մասում նեղացող, կարճ վզով, նեղ անցքով, մանրահատիկ կավից պատրաստված և լավ բրծված անոթներ են, որոնք օգտագործվել են տարբեր տիպի նյութեր, այդ թվում նաև սնդիկ պահելու և տեղափոխելու համար: Դրանց կիրառության վերաբերյալ տեսակետները շատ են և հակասական: «Սնդկամանները» հանդիպում են գերազանցապես Փոքր Ասիայում, Միջին Ասիայում և Անդրկովկասում:

Անիի ձվաձև անոթներն աչքի են ընկնում իրենց նոխ հարդարանքով, որոնց մի մասն արված է կաղապարի մեջ՝ ճնշելու եղանակով: Որոշ անոթների վրա կան փորագիր նշաններ, որոնք հավանաբար վարպետի կամ անոթի տաւրողության նշաններն են: Սնդկամանները թվագրվում են 11—13-րդ դդ.:

Գրականություն.

1. Н. Я. Марр. IX-я анийская археологическая кампания.
2. Н. Я. Марр, Ани.
3. И. А. Орбели, КАМД.
4. Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում։*
5. Հ. Ջանփոլադյան, *Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները. «Աշխատություններ», ՊՊԹ, 1950, № 3։*
6. Р. М. Джанполадян. Сфероконические сосуды из Двина и Ани. Советская Археология, 1958, № 1.

### 986. ՍՆԴԿԱՄԱՆ

*Մեծ սնդկաման է, բերանի մասը քիչ թերի, տակը՝ գնդաձև։ Սնդկամանի ողջ մակերեսը արտաքինից ծածկված է հարուստ զարդաքանդակներով։ Իրանի միջին մասում 8 ուղղահայաց ուռուցիկ գծերի արանքում ձվաձև և քառակուսի զարդանախշեր են, դրանցից ցած՝ վերադիր զարդեր, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին վերցված է մանր գնդիկներից կազմված շրջանակների մեջ։ Զարդն արված է կաղապարի ճնշման եղանակով։ Կան նաև 8 ընդելուզվածքներ երկնագույն հախճապակուց։*

*123/1045 (08 с 42а), 1908 թ., հյուսիսային դիմացի փոքր շենք։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 64։

### 987. ՍՆԴԿԱՄԱՆ

*Վիզը քիչ կոտրված, գնդաձև վերջավորությամբ մեծ սնդկաման է։ Ամբողջ մակերեսը ծածկված է ուռուցիկ նշաձև և ձվաձև զարդերով, որոնք շուրջանակի շղթա են կազմում։ Ձվաձև փոքրիկ զարդերի միջև արված են երկնագույն հախճապակուց ընդելուզվածքներ։ Տախտակ,* XLVIII, *1։*

*123/1046 (08 с 42а), 1908 թ., նույն տեղից։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 64։

### 988. ՍՆԴԿԱՄԱՆ

*Միջին մեծության, ամբողջական, գնդաձև վերջավորությամբ սնդկաման է՝ վրան 5 շարք խոշոր, ուռուցիկ ցորենաձև զարդեր են, որոնց միջև մե-*

հական ընդելուզվածը։ Մնացածը ծածկված է շատ խիտ դասավորված մանր շրջանակներով։

123/1047 (08 c 42), 1908 թ., նույն տեղից։

Հրատարակված է՝ КАМД, стр. 64։

## 989. ՍՆԴԿԱՄԱՆ

Նեղ և երկար իրանով սնդկաման է, մի կողքից քիչ թեքի։ Զարդերը ուռուցիկ և խորագիր են։ Վզի շուրջը ուռուցիկ ուլունքաշար է գնում։ Դրանից ցած, իրանի շուրջը՝ 5 տեղ զարդանախշերով ծածկված, ուղղահայաց, ուռուցիկ սյուներ են արված։ Ցածի մասում ℋ ձևի փորագիր նշան է արված, որը հավանաբար պատրաստող վարպետի նշանն է։ Տախտակ XLVIII, 2։

123/1048։

## 990. ՍՆԴԿԱՄԱՆ

Լավ պահպանված սնդկաման է։ Վզի տակ ուռուցիկ գոտի է, իրանի շուրջը՝ մեկընդմեջ 4 լայն և նեղ ուռուցիկ երկարավուն զարդեր, որոնք խիստ սխեմատիկ են և ջնջված։ Ստորին մասում՝ 2 փորագիր գոտիներ և, հավանաբար, պատրաստող վարպետի նշանը՝ 

123/1049 (11 Λ. № 1b), 1911 թ.։

## 991. ՍՆԴԿԱՄԱՆՆԵՐ

ա. Ձվաձև իրանով ամբողջական սնդկաման է. վրան կլոր և ձվաձև ուռուցիկ զարդերով։ Տախտակ XLVIII, 3։

բ. Երկրորդի վրա կան փորագիր գծազարդեր, որոնք հիշեցնում են վարպետի նշանը։

123/1050 ա, բ։

## 992. ՍՆԴԿԱՄԱՆՆԵՐ

Ձվաձև իրանով սնդկամաններ են, ունեն նշաձև և շրջանաձև զարդեր, որոնք արված են կաղապարի ճնշման եղանակով։ Երկուսի վրա էլ կա վարպետի նշան (ℋ)։ Զարդերը կազմում են 4—5 գոտի։

123/1050 գ, դ (11 A № 1 և № g), 1911 թ.։

Հրատարակված է՝ Առաքելյան I, տախտակ XLIV։

## 993. ՍՆԴԿԱՄԱՆ

Քիչ երկար վզով, նեղ և երկար իրանով սնդկաման է, իրանի շուրջը, վերից վար, մեկընդմեջ ներճկված, փոսիկներ են, որոնց արանքներում ուռուցիկ, երկարավուն ելուստներ են արված, ծածկված զարդանախշերով։ Ցածի մասում պատրաստող վարպետի նշանն է՝ ℋ։

123/1051։ Տախտակ XLVIII, 4։

## 994. ՍՆԴԿԱՄԱՆ

Առանց վզիկի, վերականգնված գնդաձև, փոքրիկ սնդկաման է։ Վրան փորագիր գծերով 3 համակենտրոն շրջագծերից կազմված զարդագոտի է անցնում։ Տախտակ XLVIII, 5։

123/1052։

## 995. ՍՆԴԿԱՄԱՆ

Բազմանիստ կողերով ամբողջական սնդկաման է, վզից ցած գնում է զարդագոտի, կազմված փոքրիկ օղակներից։ Վրան. գրերի նմանությամբ փորագիր զարդեր։

123/1053 (08 ք), 1908 թ.։

## 996. ՍՆԴԿԱՄԱՆ

Երկարավուն սնդկաման է, առանց զարդանախշի, տակի մասում՝ փորագիր գծազարդ։

123/1054 (07 № 77), 1907 թ., Միջնաբերդ։

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 9։

## 997. ՍՆԴԿԱՄԱՆ

Ուղղահայաց իջնող և ցածի մասում նեղացող, սուր ծայրով սնդկաման է, վրան փորագիր եղևնաձև ծառ է պատկերված և, հավանաբար, արաբատառ արձանագրություն։

123/1055 (11 M 10ք), 1911 թ.։

## 998. ՍՆԴԿԱՄԱՆ

Ուռուցիկ կողերով հասարակ սնդկաման է։ Վրան փորագիր գրեր են արված։

123/1056։

## 999. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Մեծ սնդկամանի իրար կպցրած 3 բեկորներ են։ Վերին և ստորին մասերում ցորենի հատիկների նմանությամբ ուռուցիկ զարդերով խիտ գոտիներ են գնում։ Կենտրոնական մասում ուռուցիկ զարդեր են, որոնց միջև մանր, կլոր հատիկներից շրջագծեր են, կենտրոնում կանաչավուն

*ընդելուզվածքով։ Զարդերը կատարված են կլոր դրոշմներով։ Տախտակ* XLIX, *2։*

*123/1057 (07 № 159), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝ 1.* Реестр, 1907 г., *էջ 16։*
*2. Առաքելյան, I,* XL*։*

## 1000. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի խոշոր բեկոր է, վզի մասում լայն զարդագոտի է գնում, որը կազմված է ցորենաձև ուռուցիկ զարդերից, իսկ դրանց արանքում կա մի այլ զարդագոտի՝ նշաձև զարդերից։ Մանր, ցորենաձև զարդերից կազմված մի քանի գոտի էլ կա անոթի ստորին մասում։ Մնացած տարածությունը ծածկված է խոշոր շրջանաձև դրոշմազարդերով։ Տախտակ* XLIX, *3։*

*123/1058։*

## 1001. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի 1/3-րդ մասն է, գնդաձև վերջավորությամբ։ Բերանն ու վիզը չեն պահպանվել։ Բեկորի ամբողջ մակերեսը ծածկված է կլոր դրոշմազարդերով՝ շրջագծերով, հատիկավոր և աստղաձև նախշերով, ինչպես նաև ընդելուզվածքով։*

*123/1059։*

## 1002. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի բեկոր է, վրան կլոր դրոշմազարդեր։*

*123/1060։*

## 1003. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի խոշոր բեկոր է, գնդաձև վերջավորությամբ, ամբողջությամբ ծածկված է նշաձև դրոշմազարդերով։*

*123/1061 (10 Y III 20), 1910 թ.։*

## 1004. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի բեկոր է, ծածկված ուռուցիկ զարդանախշերով։ Վերևի մասում գնում են 3 շարք մանր նշաձև զարդեր, դրանից ցած անցնող գոտին բաղկացած է մեկընդմեջ մանր գնդիկների մեջ առնված խոշոր նշաձև զարդերից, որոնց մեջտեղը մեկական փարդյակներ են արված։*

*Ներքևի գոտին բաղկացած է խոշոր նշիկներից, որոնք իրենց հերթին առնված են մանր շըրջանակների մեջ։ Զարդը արված է կաղապարի մեջ։*

*123/1067 (09ռ № 65), 1905 թ., պատահական։*

## 1005. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ, հաստ պատերով սնդկամանի բեկոր է։ Ստորին մասում ավարտվում է մեծ գնդով։ Ողջ մակերեսը ծածկված է ուռուցիկ և փորագիր զարդերով (նշաձև, աստղաձև, ցորենաձև)։ Զարդը պատրաստված է նախորդի նման։ Տախտակ* XLIX, *4։*

*123/1063։*

## 1006. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի փոքր բեկոր է, ծածկված մեկընդմեջ նշաձև ուռուցիկ նախշազարդերով և երկնագույն ընդելուզվածքներով։ Ազատ տարածության վրա կան փորագիր գրերի հետքեր՝ հավանաբար հայերեն։*

*123/1064։*

## 1007. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի խոշոր բեկոր է (մոտ կեսը), ծածկված կապտականաչավուն ջնարակով։ Ջնարակած սնդկամանները հազվադեպ են հանդիպում Անիում և, ընդհանրապես, քիչ են այլ հնավայրերում։*

*Սնդկամանի մակերեսը ծածկված է ուռուցիկ նշազարդերից կազմված գոտիներով, որոնք մեկընդմեջ ջնարակապատ են։ Տախտակ* XLIX, *5։*

*123/1065 (08ռ)։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 88։*

## 1008. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի բեկոր է, ծածկված դրոշմազարդով, վրան ունեցել է երկնագույն հախճապակյա ընդելուզվածք։*

*123/1066։*

## 1009. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Միջին մեծության սնդկամանի բեկոր է (կեսը), որն ավարտվում է նեղ և տափակ շրջանաձև ոտքով (կրունկի նմանությամբ)։ Բեկորի վերին մասով մի նեղ գոտի է գնում, որը կազմված է ուռուցիկ ցորենաձև զարդանախշերից, ապա մի լայն շերտ ծածկված է ուղղահայաց, խիտ*

մատներնիերով: Դրանից ցած՝ 3 շարք խոշոր նշաձև ուռուցիկ զարդեր են, յուրաքանչյուր նշիկը ծածկված է նուրբ, սրտաձև գծազարդերով: Տախտակ XLVIII, 6:

123/1067 (08 с № 14), 1908 թ.:

Հրատարակված է՝ 1. Ани, տախտակ XLIV, 200:

2. КАМД, стр. 64:

### 1010. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սնդկամանի փոքրիկ բեկոր է, ծածկված շատ խիտ դասավորված մի քանի շարք մանր նշաձև ուռուցիկ զարդերով. յուրաքանչյուր նշազարդը ծածկված է զարմյալ նուրբ գծազարդերով:

123/1068 (10 Ү III № 71), 1910 թ.:

### 1011. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սրածայր վերջավորությամբ սնդկամանի տակի մասից մի բեկոր է, վրան փորագրած հայերեն Գ-ի նմանվող գիր:

123/1069 (08 с), 1908 թ.:

Հրատարակված է՝ КАМД, стр. 64:

### 1012. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Մեծ սնդկամանի հատակի բեկոր է, որն ավարտվում է կլոր գնդով: Վրան 2 շարք համակենտրոն շրջագծերից կազմված դրոշմազարդ է, վերցված պտուտակաձև ճառագայթազարդերի մեջ:

123/1070 (10 Ү III № 118), 1910 թ.:

### 1013. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Մեծ սնդկամանի բեկոր է: Վրան պահպանվել է մի վերադիր զարդ՝ ուղղահայաց սյան ձևով, որի վերևը գնդաձև է. մնացած տարածությունը ծածկված է խիտ դասավորված դրոշմազարդ վարդյակներով:

123/1071 (08 № 51), 1908 թ.:

### 1014. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Բավականին տձև սնդկամանի բեկոր է: Վրան դրոշմազարդեր են (կլոր և կոճակաձև):

123/1072 (11 Λ 34), 1911 թ.:

### 1015. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սնդկամանի բեկոր է, ծածկված դրոշմազարդերով և ընդելուզվածքով: Մանր օղակներից կազմված գոտուց ցած գնում են 2 գոտիներ, որոնց վրա մեկընդմեջ նշաձև և վարդյակաձև զարդեր են. այդ վարդյակների կենտրոնում ընդելուզվածքի հետքեր կան, ապա 3 շարք նշաձև զարդագոտիներ են գնում:

123/1073:

### 1016. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սնդկամանի փոքրիկ բեկոր է, վզից ցած 4 շարք խոշոր և մանր դրոշմազարդերով:

123/1074 (11 Λ.Е), 1911 թ.:

### 1017. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սնդկամանի փոքր բեկոր է, վրան դրոշմազարդ նշաձև զարդագոտիներով:

123/1075 (10 Ү II № 13), 1910 թ.:

### 1018. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Մեծ սնդկամանի բեկոր է, կենտրոնական մասում հատիկավոր լայն զարդագոտի է, դրանից ցած ընդելուզվածքներ են՝ վերցված մանր գնդիկների մեջ:

123/1076:

### 1019. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սնդկամանի բեկոր է, վրան 2 ուղղահայաց և մի հորիզոնական փորագիր գիծ, ամբողջ մակերեսը ծածկված է ուռուցիկ, մանր նշաձև հատիկներից բաղկացած նախշազարդերով:

123/1077 (10 Ү III n74), 1910 թ., պատահական:

Հրատարակված է՝ Ани, աղյուս XLVI, 201:

### 1020. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Ուռուցիկ և փորագիր զարդերով սնդկամանի բեկոր է:

123/1078 (11 Λ. 35), 1911 թ.:

### 1021. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Սնդկամանի վզի և ուսի մասից մի բեկոր է՝ դրոշմազարդերով:

123/1079:

### 1022. ՍՆԴԿԱՄԱՆՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Սնդկամանների 3 փոքրիկ բեկորներ են: Կաղապարի ճնշման եղանակով բեկորների վրա ար-

*ված են նշաձև, ուռուցիկ և ատաղաձև զարդեր։*
*123/1080 (07 № 56), 1907 թ.։*

### 1023. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի խոշոր բեկոր է, դրոշմով արված նշաձև, ռոմբաձև զարդերով և փորագիր շրջագծերով։*
*123/1080 (07 № 56), 1907 թ.։*
*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 7։

### 1024. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի բեկոր է։ Վրան կլոր դրոշմով ներճկված զարդեր են։*
*123/1081։*

### 1025. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Առանց զարդանախշի սնդկամանի փոքր բեկոր է։*
*123/1081 (09.УМ), 1909 թ., «Մառի փողոցից»։*

### 1026. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կոնկաձև վերջավորությամբ սնդկամանի բեկոր է, վրան փորագիր հայերեն գրեր են՝ Ա, Ր, Ս։*
*123/1082 (09 А № 9), 1909 թ.։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. 89։

### 1027. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Կարճ, սուր ծայրով սնդկամանի ստորին մասն է, վրան մի շարք խորագիր շրջագծեր են, իսկ հիմքի մոտ պատրաստող վարպետի նշանն է՝ H։*
*123/1083 (10 Y IV № 32), 1910 թ.։*

### 1028. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի ցածի մասի բեկոր է, վրան փորագիր զարդագծերի հետքեր։*
*123/1084 (08 с № 9), 1908 թ.։*

### 1029. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի բեկոր է, հորիզոնական ուղիղ, ալիքաձև և թեք զարդագծերով։*
*123/1085։*

### 1030. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Մեծ սնդկամանի բեկոր է (նախորդի նման)։ Երկրորդ բեկորի վրա 4 թվանշանի նման փորագիր զարդ է։*
*123/1085 և 1102 (10 Y IV № 117), 1910 թ.։*

### 1031. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի մեծ բեկոր է, վրան հունարեն փորագիր տառերի նման զարդեր՝* △, ⏢։
*123/1086 (10 Y IV № 67), 1910 թ.։*

### 1032. ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԲԵԿՈՐ

*Շենքի ներքին հարդարանքի գիպսե հաստ բեկոր է, կիսագնդի քառորդ մաս, ձուլված կաղապարի մեջ։ Դրսից վրան պատկերված է մի գծազարդ՝ միմյանց հանդիպակած S-աձև զարդերի ձևով։*
*123/1087։*

### 1033. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի ուսի մասից մի բեկոր է, դրոշմազարդ և ուռուցիկ, նշաձև նախշերով ու ճառագայթաձև գծերով։*
*123/1088 (10 Y IV № 10*m*), 1910 թ.։*

### 1034. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Նուրբ դրոշմազարդերով ծածկված սնդկամանի բեկոր է, վրան նշաձև մեծ զարդեր և նուրբ բուսական նախշեր։*
*123/1089 (10* D *№ 2), 1910 թ.։*

### 1035. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի ուսի բեկոր է։ Բերանից ցած, վզի մասում, ներճկված գոտի է գնում, իսկ ուսի վրա 3 շարք մանր ու խիտ դասավորված նշաձև, ուռուցիկ, ճնշման եղանակով նախշեր են արված։*
*123/1090։*

### 1036. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի մի փոքրիկ բեկոր է, վերին մասում ∽ գրի նման փորագիր զարդ է, ապա զիգզագաձև զույգ զարդագծեր ( ≈ ), որոնց արանքներում նուրբ զարդանախշերով ծածկված մեկական ուռուցիկ նշիկներ են արված։*
*123/1090 (10 Y II № 14), 1910 թ.։*

## 1037. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Դրոշմազարդ սնդկամանի փոքրիկ բեկոր է։ Բեկորի վրա պահպանվել են 2 շարք մանր նշաձև զարդերից արված գոտիներ, որոնց արանքում կան աստղաձև զարդեր։ Վերին և ստորին մասերում՝ կապույտ ընդելուզվածքով գոտիներ են։*
*123/1091։*

## 1038. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի բեկոր է, հայերեն փորագիր Ժ և Ա գրերի նման զարդերով։*
*123/1092։*

## 1039. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի վերևի մասից մի բեկոր է, վզից ցած, ուսերի վրա ուղղահայաց իջնող ուռուցիկ գոտիներով, որոնք ծածկված են եղևնաձև գծազարդով։ Գոտիների արանքներում՝ մեկական ուղղահայաց խորագիր գծեր։*
*123/1093 (10 Y IV № 68), 1910 թ.։*

## 1040. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի փոքրիկ բեկոր է, փորագիր ծաղկազարդով։*
*123/1094 (11 A a3), 1911 թ.։*

## 1041. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի բեկոր է, առանց զարդի, փորագիր*



*նշանով։*
*123/1097 (10 У IV № 64), 1910 թ.։*

## 1042. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի տակի մասից մի բեկոր է, գծազարդերով։*
*123/1096։*

## 1043. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Շատ բարակ պատերով սնդկամանի բեկոր է, դրսից ծածկված է ուռուցիկ ցանցազարդով։*
*123/1098 (10 K № 8), 1910 թ.։*

## 1044. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի փոքրիկ բեկոր է, ուղղահայաց իջնող ուռուցիկ զարդագոտիով և խորաքանդակ սրտաձև նախշերով։*
*123/1099 (10 Y IV № 62), 1910 թ.։*

## 1045. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Բարակ պատերով լավ թրծված անոթի բեկոր է, ծածկված նուրբ զարդերով և ոճավորված արաբատառ գրերով։ Զարդը արված է կաղապարի մեջ։*
*123/1100։*

## 1046. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի փոքրիկ բեկոր է, ուռուցիկ ծաղկազարդով և փորագիր ուղղահայաց գծով։*
*123/1101։*

## 1047. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Դրոշմազարդով սնդկամանի փոքրիկ բեկոր է։*
*123/1103 (10 Y IV № 103a), 1910 թ.։*

## 1048. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Սնդկամանի մի փոքրիկ բեկոր է, կանաչ ջնարակով։ Վրան դրոշմված է մի մեդալիոն։*
*123/1104 (10 Y IV, № 103a), 1910 թ.։*

## 1049. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Մեծ սնդկամանի 3 բեկորներ են, մանր, նշաձև և աստղաձև զարդերով. գոտիներն արված են կաղապարի մեջ։ Երկրորդ գոտին կազմված է ձվաձև մեդալիոններից, որոնց կենտրոններում մեկընդմեջ երկնագույն ընդելուզվածքներ կան։ Այս գոտիները ծածկել են սնդկամանի ողջ մակերեսը։*
*123/1105 (10 Y IV № 103a), 1910 թ.։*

## 1050. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

*Մեծ սնդկամանի դրոշմազարդ բեկոր է։ Երեք շարք գոտիների առաջին շարքը երեքական ոճավորված ծառերից կազմված խմբեր են, երկրորդ շարքը մեկընդմեջ վարդյակներ են՝ մի վարդյակը պատկերում է մանր շրջանակներից բաղկացած շրջագիծ, որի մեջտեղի նախշը մաշվել է, երկրորդ վարդյակը ավելի մեծ գնդիկներից կազմված շըր-*

ջանակ է, որի կենտրոնում կա երկնագույն հախճապակուց ընդելուզվածք։
123/1105։

## 1051. ԿԱՎԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Նուրբ, մանրահատիկ կավից պատրաստված գորշ գույնի ամանի բեկոր է, զուգահեռ գոտիներից ցած արված է զամբյուղաձև հյուսվածք, զարդը արված է կաղապարի օգնությամբ։
123/1106 (10 Y IV № 103a), 1910 թ.։

## 1052. ԿԱՎԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Մանրահատիկ, նուրբ, դեղնավուն կավից պատրաստած ամանի բեկոր է, ծածկված շատ նուրբ դրոշմապարդ ատամներով, որոնք ուղղանկյուններով բաժանված են հատվածների։
123/1107 (14 № 17), 1914 թ.։

## 1053. ԿԱՎԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Մանրահատիկ կավից պատրաստած ուռուցիկ զարդերով բարակ, նուրբ պատերով S-աձև նախշերով անոթի բեկոր է։
123/1108 (06 . 193), 1906 թ.։
Հրատարակված է՝ КАМД, էջ 59։

## 1054. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Առանց զարդանախշի սնդկամանի փոքրիկ բեկոր է։
123/1109 (05 . 193), 1906 թ.։

## 1055. ՍՆԴԿԱՄԱՆԻ ԲԵԿՈՐ

Մեդալիոնների հետքերով և ընդելուզվածքներով սնդկամանի փոքրիկ բեկոր է։ Դրանց միջև ատաղաձարդով ձվաձև մեդալիոն։
123/1110 (06 . 193), 1906 թ.։

## 1056. ՄԱՐՄԱՐԻ ԲԵԿՈՐ

Սպիտակ մարմարից պատրաստված գնդաձև իրի բեկոր է։ Տակի մասը հարթ է։ Կոտրված է և ոտքի տեսք ունի։
123/1111 (02), 1902 թ.։

## 1057. ՄԱՐՄԱՐԻ ԲԵԿՈՐ

Սպիտակ մարմարե գունդ է, պահպանվել է մոտավորապես կեսը։ Կոտրվածքի մի ծայրում կարմրավուն բարակ երանգ է գնում։
123/1112 (13 . 17), 1913 թ.։

## 1058. ՄԱՐՄԱՐԵ ՍԱԼԻ ԲԵԿՈՐ

Շենքի ներքին հարդարանքի մարմարե սալի բեկոր է, ծածկված շատ գեղեցիկ և նուրբ հյուսվածքազարդով։ Տախտակ XLVII, 2։
123/1113 (13 c), 1913 թ.։

## 1059. ՄԱՐՄԱՐԻ ԲԵԿՈՐ

Սպիտակ մարմարե իրի տձև բեկոր է։
123/1075 (13c), 1913 թ.։

## 1060. ՍԱԼԻ ԲԵԿՈՐ

Ալեբաստրե փոքրիկ սալիկի բեկոր է, տափակ և քիչ երկարավուն, թափանցիկ, հղկված։
123/1115 (06 n4), 1906 թ., պատահական։

## 1061. ՔԱՐ

Մարմարե փոքրիկ քար է, սպիտակ, շագանակագույն բարակ երակով։
123/1116 (12 A), 1912 թ.։

## 1062. ՍԱԼԻ ԲԵԿՈՐ

Երկու կողմից լավ հղկված սպիտակ մարմարե սալի փոքրիկ բեկոր է։
123/1117։

## 1063. ՍԱԼԻ ԲԵԿՈՐ

Սպիտակ մարմարե սալի մեծ բեկոր է, լավ հղկված, դարչնագույն բարակ երակով։
123/1118 (12 32), 1912 թ.։

## 1064. ՄԱՐՄԱՐԻ ԲԵԿՈՐ

Սպիտակ մարմարից պատրաստած խորանարդ է, երկու կողմից ձեր քիչ խախտված է, մի ծայրը քիչ կոտրված։ Նիստերից մեկը լավ հղկված է։
123/1119։

## 1065. ՄԱՐՄԱՐԻ ԲԵԿՈՐ

Մեծ, անմշակ սպիտակ մարմարի բեկոր է։
123/1120։

## Գլուխ իններորդ

# ՁԵՌԱԳՈՐԾ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐ

Անիից հայտնաբերված նյութերի մեջ իրենց ուրույն տեղն են գրավում քիչ քանակությամբ գործվածքները, որոնք Հայաստանի միջնադարյան ասեղնագործության պատմության համար բացառիկ նշանակություն ունեն։ Այդ սակավաթիվ նյութերից առանձնանում են 1908 թ. Ծաղկոցաձորի քարայրներում գտնված գերեզմաններից մեկում հայտնաբերված երեխայի զգեստի և ձեռագործի նմուշները։ Ենթադրվում է, որ այդ գերեզմանում թաղված է եղել Տիգրան Հոնենցի ընտանիքի անդամներից մեկը։ Ձեռագործի նմուշները թվագրվում են 13-րդ դարով։

### 1066. ՇՂԱՐՇ

*Սև գույնի, մետաքսաթել ու ոսկեթել նուրբ շղարշ է։ Սև ֆոնի վրա ոսկեզօծ, նուրբ հյուսվածքով եզերված ոսկեթել ուրվագծերով պատկերված են իրար դիմաց արու և էգ երկու առյուծներ։*

*Ձախ կողմում, մեծ պլանով արուն է, թաթը պարզած, որի ետևում պատկերված է ոճավորված կենաց ծառ։ Գազանների մարմինները ամբողջությամբ ասեղնագործված են գորշ մետաքսե թելերով, իսկ բաշի վրայի մազերը՝ ոսկեթելով։ XIII դար։ Տախտակ* L., *1։*

*123/1121 (08.61б), 1908 թ., Ծաղկոցաձորի քարայրի երեխայի դամբարան։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, стр. 45—46։
*2. Ս. Դավթյան, Հայկական ասեղնագործություն, էջ 19—20։*
*3. Առաքելյան I, տախտակ* LXVII։
*4. Աբրահամյան, էջ 207։*

### 1067. ԳՈՐԳԻ ԿԱՄ ԿԱՐՊԵՏԻ ԿՏՈՐ

*Կարմիր, սև և դեղնավուն երանգներով, խավը թափած գորգի կամ կարպետի կտոր է։ Վրայի գծանկարը քայքայված լինելու պատճառով չի որոշվում։*

*123/1122 (07 . 227), 1907 թ., Ծաղկոցաձորի դամբարան։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 25։
2. КАМД, стр. 43։

### 1068. ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՆԱՑՈՐԴ

*Մետաքսի վրա ամրացված կտորի մնացորդ է։ Խիստ քայքայված լինելու պատճառով հնարավոր չի որոշել գույնը և զարդանկարը։*

*123/1123։*

### 1069. ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՆԱՑՈՐԴ

*Բրդյա գործվածքի վառված, ածխացած երկու բեկորներ են։*

*123/1124 (08 № 58а)։ Ծաղկոցաձորում հայտնաբերված երեխայի դամբարանից։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 44։*

### 1070. ՄԵՏԱՔՍԵ ԿՏՈՐԻ ՆՄՈՒՇ

*Քայքայված և գունաթափ մետաքսե կտոր է, որը ամրացված է ապակե շրջանակի մեջ։ Սկըզբում եղել է մորեգույն, վրան բարակ մետաքսե թելերով գործված են բազմաթիվ փոքրիկ թռչուններ։*

*123/1125 (08 с № 5), 1908 թ., հյուրանոց։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, *էջ 47։*
*2. Հայկական ասեղնագործություն, էջ 19—20։*

## 1071. ՄԵՏԱՔՍԵ ԳՈՐԾՎԱԾՔ

*Մետաքսե գործվածքի փոքրիկ կտոր է, որի վրա կլապիտոնով և ոսկեթելով ոճավորված կենաց ծառ է գործված: Տախտակ* L, *2:*

*123/1126 (08 № 59c), 1908 թ.· Ծաղկոցաձորում հայտնաբերված երեխայի դամբարանից:*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, *էջ 46:*
*2. Աբրահամյան, էջ 208:*
*3. Հայկական ասեղնագործություն, էջ 19—20:*

## 1072. ՄԵՏԱՔՍԵ ԳՈՐԾՎԱԾՔ

*Օձիքի մնացորդ մետաքսից: Վրան ոսկեթելով ասեղնագործված են 6 հատ վեցթերթանի փոքրիկ վարդյակներ, որոնք միմյանց հետ միանում են ուղիղ գծով:*

*123/1127 (08 . 59a), Ծաղկոցաձորում հայտնաբերված երեխայի դամբարանից: Տախտակ* L, *3:*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, *էջ 44:*
*2. Հայկական ասեղնագործություն, էջ 20:*
*3. Աբրահամյան, էջ 208:*

## 1073. ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՆԱՑՈՐԴ

*Մուգ դարչնագույն մետաքսից գործվածքի մնացորդ է, որի վրա միմյանց զուգահեռ շատ խիտ դասավորված 3 հորիզոնական բարակ գծեր կան, երկու կողմից ω-աձև զարդանախշերով:*

*123/1128 (08 . 61a), 1908 թ., Ծաղկոցաձորի երեխայի դամբարանից:*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 45:*

## 1074. ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՆԱՑՈՐԴ

*Մուգ կարմիր գույնի մետաքսե գործվածքի մնացորդ է: Վրան գործված են 4 շարք շատ խիտ փոքրիկ քառակուսիներ: Ակադեմիկոս Հ. Օրբելին այն համարում է գորգի մնացորդ:*

*123/1129 (08. 42d), 1909 թ., Միջնաբերդի նկուղներից:*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, *էջ 43:*
*2. Աբրահամյան, էջ 182:*

## 1075. ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՆԱՑՈՐԴ

*Դեղնավուն մետաքսե կտորի մի նմուշ է:*

*123/1130 (07 . 230), 1907 թ., Ծաղկոցաձորի դամբարանի պեղումներից:*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 25:
2. КАМД, стр. 38:

## 1076. ԻՐԻ ԲԵԿՈՐ

*Երկարավուն, լավ մշակված, նուրբ զարդագծերով ոսկրե իրի բեկոր է: Մի երեսին արված են ոճավորված բուսական և երկրաչափական զարդեր: Տախտակ XIX, 1:*

*123/1131 (11c . 17), 1911 թ.:*

## 1077. ԳՈՐԾՎԱԾՔ ԿԱՇՎԻՑ

*Կաշվե բարակ փոկերից հյուսված գործվածքի մնացորդներ են (3 հատ): Զարդերը վարդյակներ են և երկրաչափական տարբեր մոտիվներ:*

*123/1132 (11. c. 17), 1911 թ.:*

*Հրատարակված է՝ Բ. Առաքելյան I, տախտակ* LXXI:

## 1078. ՈՍԿԵ ԹԵՐԹԻԿՆԵՐ

*Ինչ-որ առարկայի վրայից նուրբ ոսկյա թերթիկների 3 փոքրիկ բեկորներ են:*

*123/1133 (09n 60), 1909 թ., պատահական:*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 78:

## 1079. ԹԵԼԻ ՄՆԱՑՈՐԴ

*Սպիտակ բամբակե թելի մնացորդ է: Հ. Օրբելին այն հիշատակում է որպես հյուսած շղթա, որը ինչ-որ ձևով մշակվել է պղնձով: Տախտակ* XLVIII, *4:*

*123/1134 (07 93), 1907 թ., Ծաղկոցաձորում հայտնաբերված երեխայի դամբարանից:*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 10:
2. КАМД, стр. 46:

## 1080. ՈՍԿՐԵ ԶԱՐԴԱՆԱԽՇ

*Ոսկրե զարդանախշ է, այծի ռելիեֆ պատկերով: Պահպանվել են գլուխը, իրանի առջևի մասի հետ և հետևի 2 ոտքերը՝ պոչի հետ միասին: Տախտակ XIX, 2:*

*123/1135 (11. c. 8), 1911 թ.:*

## 1081. ՈՍԿՐԵ ԻՐԻ ԲԵԿՈՐ

*Ոսկրից պատրաստված սկավառակաձև նուրբ իրի բեկոր է, որից պահպանվել է կեսը: Վրան*

նկատվում են ռելիեֆ զարդագծերով բուսական զարդանախշեր։ Տախտակ XIX, 3։

123/1136 (11 M 12), 1911 թ.։

## 1082. ԿԱՇՎԵ ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Կաշվե ծածկոցի կամ շապիկի մնացորդներ են։ Զարդանախշերը՝ վարդյակներ, կետագծերով արված շրջագծեր և այլն, որոնք արված են մամլման տեխնիկայով։

123/1137 (08 . 89b), 1908 թ., Միջնաբերդից։

Հրատարակված է՝ КАМД, стр. 43։

## 1083. ԿԱՇՎԻ ՄՆԱՑՈՐԴ

Կաշվից պատրաստված գեղեցիկ վարդյակաձև նախշ է։

123/1137-ի բեկորն է, 123/1138 (08 № 61c), 1908, Միջնաբերդ։

Հրատարակված է՝ КАМД, стр. 37—38։

## 1084. ՁԵՌԱԳՈՐԾԻ ՆՄՈՒՇ

Կլապիտոնով գործած ժանյակաձև գեղեցիկ ձեռագործի նմուշ է, որը գրված է եղել երեխայի կրծքին։ Ձեռագործի վերին մասում միմյանցից հեռու 2 ռոմբերի շուրջը ճոխ բուսական զարդեր են։ Ռոմբերի մեջ՝ մեկական փոքրիկ վեցաթերթ ծաղիկներ։ Ստորին մասում երկար, իրար կպած S-աձև զարդերից շղթա։

123/1139 (08 . 59b), 1908 թ., Ծաղկոցաձորում հայտնաբերված երեխայի գամբարանից։

Հրատարակված է՝ 1. КАМД, էջ 45։
2. Վ. Աբրահամյան, էջ 208։
3. Հայկական ասեղնագործություն, էջ 20։

## 1085. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

Սմալտայից պատրաստած 19 հատ երկնագույն և գեղնավուն ուլունքներ են, որոնք շարված են եղել մեկընդմեջ։ Յուրաքանչյուր 3 ուլունքից հետո մի ոսկրե զարդ է (8 հատ), որ շատ նման է ոճավորված մարդու պատկերի։

123/1140 (08 № 60b), Ծաղկոցաձորի երեխայի գամբարանից։

Հրատարակված է՝ КАМД, էջ 45։

## 1086. ԵՐԵԽԱՅԻ ՀԱԳՈՒՍՏ

Նուրբ մետաքսից կարված երեխայի վերնազգեստ է, դունաթափ (հավանորեն սկզբնական գույնը եղել է բաց գեղնավուն)։ Կրծքի վրա հորիզոնական կար է գնում, որից ցած հագուստը քիչ լայնանում է, առաջացնելով մանր ծալքեր։ Նեղ օձիքը ծածկված է եղել ոսկեթելով գործած վեցաթև մանր վարդյակներից կազմված գոտիով։ Թևերի բերանները ուղիղ են կարված, ավելի հատ, նեղ կտորներից, որոնք ամբողջությամբ ծածկված են ոսկեթելով ու կլապիտոնով գործած զարդանախշերով։ Կրծքի աջ մասում կապված է եղել մետաքսից գործած նուրբ կապ կամ գոտի։

123/1140 (08 № 58), 1908 թ., Ծաղկոցաձոր, երեխայի գամբարանի պեղումներից։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 44։
2. Բ. Առաքելյան I, տախտակ LXVII։
3. Վ. Աբրահամյան, էջ 181։

## Գլուխ տասներորդ

# ՓԱՅՏԵ ԻՐԵՐ

Անիում փայտե իրեր քիչ են գտնվել, որը բացատրվում է փայտի վատ պահպանությամբ։ Սակայն ժողովածուի մեջ մտնում են առանձին առարկաներ, որոնք փայտի գեղարվեստական փորագրության բացառիկ նմուշներ են։ Դրանք գրակալներն են, որոնք իրենց վրա կրում են բուսական և կենդանական ճոխ զարդեր, երբեմն թվագիր արձանագրություն։ Մյուս նյութերը հավանաբար կահույքի, սենյակների ներքին հարդարանքի և այլ նպատակներով օգտագործված փայտե իրերի զարդարուն բեկորներ են։ Փայտե իրերը թվագրվում են 12—13-րդ դդ.։

### 1087. ՓԱՅՏԻ ԿՏՈՐ

*Տուփի մեջ ամփոփված, գեղանկյունիներով ամրացված փայտի բեկոր է։*

*123/1142 (06 . 71), 1906 թ.։*

### 1088. ՓԱՅՏԵ ԻՐ

*Շատ բարակ, թերի, կտրված փայտե իր է. սկավառակաձև փայտի մի կողմից կարճ ու նեղ կոթ է արված։ Սկավառակի մեջ մի շրջագիծ է արված, որի ներսում նուրբ գծերով շրջանաձև, լայն ոլորազարդ, իսկ կենտրոնում փորագրված է չոր թերթիկներից վարդյակ։ Կոթի վրա նույնպես կան փորագրված զարդանախշեր։ Տախտակ XIX, 4։*

*123/1143 (12 A 7b), 1912 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Н. Марр, XI анийская археологическая кампания, СПБ, 1913, стр. 6.
2. Ани, *աղ.* LIV, *250։*

### 1089. ՓԱՅՏԵ ԻՐ

*Նեղ և երկար, բուսական զարդանախշերով փորագրված փայտի բեկոր է։ Տախտակ XIX, 5։ 22×6,5 սմ, 123/1144 (07 . 111), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907, էջ 12։*

### 1090. ԳՐԱԿԱԼ

*Ամբողջական փայտից պատրաստված գրակալ է, ծածկված գեղեցիկ փորագրություններով։ Գրակալը թողնում է սյան տպավորություն, հիմքը և վերին մասը՝ «խոյակը» սեղանաձև են։ Քանդակները նույնությամբ կրկնվում են 2 կողմում։ «Խոյակի» վրա պատկերված են իրար դիմաց կանգնած աղավնիներ, որոնք ջուր են խմում կենտրոնում դրված երկարավուն անոթից։ Մնացած տարածությունը ծածկված է մանր ծաղիկներով։*

*«Խոյակից» ցած գրակալը մինչև պատուակը՝ գամը աստիճանաբար նեղանում է։ Այդ տարածությունը շրջափակված է միմյանց հյուսված պարանաձև զարդանախշով, որի մեջ խաչ է քանդակված, դրա յուրաքանչյուր թևը ավարտվում է 2-ական ընդլիկով։ Խաչից ցած պատկերված են երեք փոքրիկ կամարներ։ Ապա գալիս է գրակալի 2 կողմերը միմյանց խաչաձևվող մասը, որի միջից անցնում է երկաթե գամը։ Այդ խաչաձևվող մասի «մատները» ևս ծածկված են փորագրություններով։*

*Գրակալի ներքևի մասը՝ մինչև «հիմքը» ամբողջությամբ ծածկված է մանր խաչերով։*

*«Հիմքը» կամ բազան հարթ է, առանց որևէ զարդամասերի։*

*Գրակալը պատրաստված է ամբողջական հաստ*

*տախտակից, որը երկայնական կտրվածքով բաժանված է 2 մասի, որոնք իրար են միանում խաչաձևման մասում արված բարակ «մատներով» («մատները» իրար հետ խաչաձևվում են և ամրացվում երկաթե գամով)։*

*Պատկանում է հավանաբար XII—XIII դդ.։ Տախտակ LVII, 2։*

*123/1145, անհատական 73։*

*Հրատարակված է՝ Առաքելյան I, էջ 207, տախտակ XXXIV։*

## 1091. ԳՐԱԿԱԼ

*Ամբողջական փայտից պատրաստած գրակալ է։ Վերևի (մինչև խաչաձևվող) մասը լայն է, ներքևինը ավելի նեղ և շրջափակված է նեղ հյուսվածքազարդով։ Ամբողջ տարածությունը ծածկված է մի քանի միմյանց հետ հատվող ուղղահայաց և հորիզոնական գծերով, իսկ դրանց վրա արված են իրար հյուսված ութանկյուն բազմանկյունիներ։*

*Վերևի մասի տակի եզրին գրված է պատրաստման թվականը՝ ՈԺԳ (1164)։*

*Խաչաձևվող մասի «մատները» ևս ծածկված են քանդակներով։*

*Ներքևի կեսը, որ դեպի ցած լայնանում է, ավարտվում է կամարաձև ոտքով, որը շրջափակված է մանր հյուսվածքազարդով։ Իսկ մեջտեղի տարածությունը ծածկված է շատ խիտ, միմյանց մեջ ագուցվող շրջագծերով։*

*Ազատ մնացած տարածության վրա մանր տառերով գրված է՝ «յիշատակ ի դուռն սբ. Առաքելոց»։ Իսկ վերևի մասում՝ խաչաձևվող մատների տակ, հյուսվածքների մեջ դժվարությամբ նկատելի են Ս, Ր, Տ գրերը։*

*Գրակալի մյուս երեսին կրկնվում են նույն քանդակները, ինչ որ առաջինի, միայն այնտեղ վերևի մասի ցածում գրված է «Ի թվին Հ», իսկ խաչաձևվող մատներից ցած մի փակագիր է՝*



*և ապա՝ ՅԻՇՅՔԻՔՍ։ Փակագիրը հավանաբար կարելի է կարդալ՝ «տէր Սարգսին»։*

*Գտնվել է Առաքելոց եկեղեցուց, տախտակ LVII, 1։*

*123/1145, անհատական 73։*

*Հրատարակված է՝ 1. Առաքելյան I, 207, տախտակ XXXIV։*
*2. Վ. Աբրահամյան, էջ 231։*
*3. Եվգ. Մուշեղյան, էջ 60։*

## 1092. ՓԱՅՏԵ ԻՐԻ ԲԵԿՈՐ

*Փորագրված փայտե իրի բեկոր է, ծածկված բուսական և երկրաչափական գեղեցիկ ու նուրբ զարդաքանդակներով։ Տախտակ XIX, 6։*

*123/1147 (08 . 43*d*), 1908 թ., Միջնաբերդից։*

*Հրատարակված է՝ 1.* Ани, *պ. XXXIII, 122։*
*2.* КАМД, *էջ 41—42, նկ. 7։*

## 1093. ՓԱՅՏԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Փորագրված փայտի 3 բեկորներ են՝ խորաքանդակ երկրաչափական զարդերով։*

*123/1148 (08 . 43*b*), 1908 թ.։*

## 1094. ՓԱՅՏԻ ԲԵԿՈՐ

*№ 123/1142-ի նման փայտե իրի բեկոր է, դեղանյութով ամրացված և դրված ապակե տուփի մեջ, հավանաբար կահույքի անկյունամասից։ 123/1149 (67)։*

## Գլուխ տասնմեկերորդ

# ՈՍԿՐԵ ԻՐԵՐ

Ոսկորից պատրաստված իրերն ու առարկաները լայն տարածում են ունեցել Միջնադարյան Հայաստանում: Մասնավորապես խոշոր քաղաքներում, ինչպիսիք Անին և Դվինն էին, եղել են ոսկրե իրեր պատրաստելու հատուկ արհեստանոցներ: Դրա ցայտուն ապացույցն են գտնված եղջյուրները և վարազի ժանիքները, որոնք ծառայել են իբրև հումք ոսկրե առարկաներ արտադրելու համար: Ներկա ժողովածուի մեջ բավականին սակավ խումբ են կազմում ուլունքները, կոճակները, դանակի կոթերը: Յուրատիպ են աշխատանքային գործիքները, որոնք կիրառվել են ջուլհակության մեջ, ինչպես նաև սրինգները: Անիից հայտնաբերված ոսկրե զարդերը, գործիքները և մյուս առարկաները թվագրվում են 10—13-րդ դդ.:

### 1095. ԿՈՃԱԿ

*Ոսկրից լավ մշակված կիսագնդաձև կոճակ է, կենտրոնում լայն անցքով և տեղ-տեղ կարմրավուն երանգով: Վրան արված են շրջագծեր:*

*123/1150:*

### 1096. ԿՈՃԱԿ

*Հղկված ոսկրից կիսագնդաձև, փոքրիկ կոճակ է, լայն անցքով: Վրան հորիզոնական ակոսներ և բազմաթիվ միմյանց զուգահեռ նուրբ գծիկներ:*

*123/1151 (08ռ 20), 1908 թ., պատահական:*

### 1097. ԿՈՃԱԿ

*Կարմիր ոսկրից, լավ մշակված կիսագնդաձև փոքրիկ կոճակ է, վրան ուղղահայաց, նուրբ զարդագծեր: Տախտակ XX, 1:*

*Տրամ.՝ 1,2 սմ:*

*123/1152 (08), 1908 թ.:*

### 1098. ԿՈՃԱԿՆԵՐ

*Լայն անցքով, լավ հղկված ոսկրից կիսագնդաձև 2 փոքրիկ կոճակներ են: Առաջինի վրա կան 2 զուգահեռ հորիզոնական ոչ խորը ակոսներ, որոնց արանքներում՝ խորագիր գծերով ուղղահայաց 8 ճառագայթներ:*

*Երկրորդի վրա՝ 3 հորիզոնական ակոսներ:*

*123/1153 (08), 1908 թ.:*

### 1099. ԿՈՃԱԿ

*Թեք ուսերով ու լայն անցքով, ոսկրից պատրաստած շրջանաձև կոճակ է:*

*Տրամ. 1,5 սմ:*

*123/1154 (08), 1908 թ.:*

### 1100. ԿՈՃԱԿ

*Ոսկրից պատրաստած կոճակ կամ համրիչի հատիկ է՝ ուռուցիկ և շրջանաձև, լայն անցքով, մի եզրը թեքի, անցքի շուրջը կա բարակ ակոս:*

*Տրամ.՝ 2,5 սմ:*

*123/1155 (08), 1908 թ.:*

### 1101. ԿՈՃԱԿՆԵՐ

*Լավ մշակված ոսկրից կոճակներ են (2 հատ), ունեն լայն անցքեր, կոր ուսեր. մեկի վրա ուղղահայաց կարճ գծեր:*

*Տրամ.՝ 1,4 սմ և 1,3 սմ, 123/1157 (05 № 20) 1905 թ.:*

### 1102. ԿՌՃԱԿ

*Ոսկրից պատրաստված կոճակ է, քիչ ուռուցիկ, տակը տափակ, լայն անցքով։*

*123/1156։*

### 1103. ԿՌՃԱԿ-ԶԱՐԴ

*Դեղնավուն ոսկրից պատրաստած փոքրիկ, շրջանաձև, լայն անցքով օղակ-կոճակ է։*

*123/1156 (07 . 10), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907 թ., էջ 2։*

### 1104. ԿՌՃԱԿ

*Լայն անցքով, ուղղահայաց պատերով, ոսկրից պատրաստած փոքրիկ կոճակ է։*

*123/1160 (07 . 153), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907 թ., էջ 16։*

### 1105. ԿՌՃԱԿ

*Լայն անցքով, ոսկրից պատրաստած կոճակ է, վրան նկատվում են ակոսի թույլ հետքեր։*

*123/1158 (08), 1908 թ.։*

### 1106. ԿՌՃԱԿ

*Փոքրիկ, տափակ և շրջանաձև, լայն անցքով ոսկրից պատրաստած կոճակ է՝ վրան 2 զուգահեռ նեղ ակոս։*

*123/1160։*

### 1107. ԿՌՃԱԿ

*Լավ մշակված ոսկրից պատրաստած կարմիր գույնի, շրջանաձև, ուռուցիկ կոճակ է, ստորին մասում շատ նեղ երիզով, վրան 10 մանր շրջագծեր, տե՛ս № 1095։ Տախտակ XX, 2։*

*123/1161 (08), 1908 թ.։*

### 1108. ՈՍԿՐԵ ԻՐ

*Ոսկրից պատրաստված շատ նուրբ իր է, հավանաբար փոքրիկ դանակի կոթի մի սանդղ։ Գլխի մասում կա մի անցք, մյուս ծայրը ավարտվում է կլոր գնդիկով։ Ողջ մակերեսը ծածկված է բազմաթիվ հորիզոնական նուրբ գծերով։*

*Երկարությունը՝ 6,5* սմ*։ Տախտակ XX, 3։*

*123/1162 (08), 1908 թ.։*

### 1109. ԳՈՐԾԻՔ

*Ոսկրից պատրաստված դանակի ձևի գործիք է, վերնամասում լայն և կոր, ապա աստիճանաբար նեղանում է և ավարտվում սուր ծայրով։ Մշակումը և զարդագծերը մի երեսին են, որտեղ խորագիր զարդագծերով ոճավորված մարդու դեմք է պատկերված։ Երկու կողքերին կան փոքրիկ անցքեր, հավանաբար թելից կախելու համար։ Կարծիք կա, որ նման գործիքները օգտագործվել են ջուլհակագործության մեջ կամ էլ դերձակների մոտ՝ կարերը հարթելու համար։*

*Երկ.՝ 8,3* սմ: *Տախտակ XX,4։*

*123/1163 (07 № 79), 1907 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* Реестр, 1907 г., стр. 9։
2. КАМД, стр. 85։
*3. Առաքելյան I, էջ 322։*
*4. Աբրահամյան, էջ 167։*

### 1110. ԳՈՐԾԻՔ

*Ոսկրից պատրաստած դանակի ձևի գործիք է (տե՛ս № 1109)։*

*Երկ.՝ 8,3* սմ: *Տախտակ XX,5։*

*123/1164 (06 . 82), 1906 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, стр. 85։
*2. Վ. Աբրահամյան, էջ 167։*

### 1111. ԴԱՆԱԿԻ ԿՈԹ

*Ոսկրից պատրաստած, շատ բարակ ու նուրբ, ծալվող դանակի կամ ածելու կոթ է, մի ծայրը քիչ թեքվում է դեպի ներս։ Երկու կողմից ծածկված է շատ նուրբ շրջագծերով։ Տախտակ XIX,8։*

*123/1165 (07 . 181s), 1910 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 19։
2. КАМД, стр. 83։

### 1112. ԴԱՆԱԿԻ ԿՈԹ

*Նեղ, երկար, մի կողմը կոր, լավ մշակված ոսկրից դանակի կոթ է։ Ամբողջությամբ ծածկված է նուրբ խորաքանդակ հորիզոնական բարակ գոտիներով և փոքրիկ շրջանակներով։*

*123/1166 (06 № 130), 1906 թ.։ Տախտակ XIX, 7։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 85։

### 1113. ՈՍԿՐԵ ԻՐ

*Հաստ պատերով և նեղ անցքով մատնոցի նման*

*ոսկրե թերի իր է։ Վրան նուրբ զարդագծերով շրջագծերից կազմված 2 վարդյակ է արված։*

*123/1167 (07 № 149), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* 1. Реестр, 1907 г., стр. 16։
2. КАМД, стр. 84։

## 1114. ՈՍԿՐԵ ԻՐ

*Երկայնական կտրվածքով ոսկրից պատրաստված քառակուսի կողերով իր է։ Կողերից մեկի վրա՝ կա զարդանախշ, երկու զույգ հորիզոնական զուգահեռ գծերի միջև 2 շրջանակներ։*

*123/1168 (08ը 20), 1908 թ., պատահական։*

## 1115. ՈՍԿՐԵ ԻՐ

*Երկու կտորից բաղկացած ոսկրե իր է։ Մեծ կտորը երկար է ու մի կողմը գոգավոր, վրան նեղ ու երկար կտրվածք։ Դրսից զարդանախշեր են՝ մեջտեղը կետով 5 շրջագծեր։ Երկրորդ կտորը իր մեծությամբ առաջին կտորի վրայի կտրվածքի չափ է, այն հաշվով, որ ագուցվի նրա մեջ։*

*Թանգարանի հնագիտական բաժնի մատյանում գրված է ոսկրե կշեռք՝ արծաթե դրամների հատակությունը որոշելու համար։ Պակասում է պղնձի ձողը և ոսկրե նեղ թիթեղը։ Տախտակ XX, 7։*

*123/1169 և 1174 (12 Λ 57), 1912 թ.։*

## 1116. ԽԱՉ

*Ոսկրից պատրաստված փոքրիկ խաչ է, քիչ կանաչավուն, լավ մշակված, երկու կողմից ծածկված զարդանախշերով։ Խաչի վերևի մասում երկայնական անցք կա՝ կախելու համար։ Տախտակ XX, 6։*

*123/1170 (14 DbY), 1914 թ., պալատ։*

## 1117. ԻՐԻ ԲԵԿՈՐ

*Ոսկրից պատրաստած առարկայի բեկոր է, որը շատ փոքր է ու խիստ քայքայված։ Երեսը լավ մշակված է, վրան նուրբ գծերով զարդանախշեր են արված։*

*123/1171 (10ը 73), 1910 թ., պատահական։*

## 1118. ՉԱՓՈՒԱՍՏԻ ԲԵԿՈՐ

*Ոսկրից պատրաստած չափուատի կեսն է, կանաչ գույնի, վրան մի քանի ուղղահայաց նուրբ զարդագծեր և 2 փոքրիկ անցք։*

*Հավանաբար այս չափուատը գրքի կազմի վրա է եղել։*

*123/1172 (12 Λ), 1912 թ.։*

## 1119. ԽՈՂՈՎԱԿ

*Ոսկրե խողովակ է (հավանաբար թռչունի ոտքից), մի կողմը ամբողջ երկարությամբ ծածկված է շատ նուրբ զարդագծերով (X-աձև և մասամբ ուղղահայաց), մյուս կողմը հարթ է և քիչ կոտրրված։*

*Երկարությունը՝ 7,5* սմ։ *Տախտակ XIX, 9։*

*123/1173 (12 Λ), 1912 թ.։*

## 1120. ԽՈՂՈՎԱԿ

*Ոսկրից պատրաստած փոքրիկ, սնամեջ, բարակ ու նուրբ խողովակի բեկոր է, լավ մշակված, մի ծայրի կողքից ունի փոքրիկ անցք։*

*Երկարությունը՝ 6* սմ։

*123/1175 (08ը 46), 1908 թ., պատահական։*

## 1121. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ

*Ոսկրից պատրաստած, շրջանաձև, մի կողմից ուռուցիկ իլիկի գլուխ է, որը լավ հղկված է, մեջտեղում ունի անցք, եզրի շուրջը 2 նեղ գոտիներ։*

*Տրամագիծը՝ 3* սմ։

*Գտնվել է 1910 թ.։*

*123/1176 (10. Y. IV 94)։*

## 1122. ՈՍԿՐԵ ԻՐ

*Տակը քառակուսի ոսկրե նուրբ, բարակ իր է։ Ավարտվում է կլոր գլխիկով, որի կենտրոնում մի փոքրիկ անցք է արված։ Վրան ունի շատ պարզ ու նուրբ զարդագծեր։*

*Երկարությունը՝ 6* սմ։

*123/1177 (14 Ш. 6), 1914 թ.։*

## 1123. ՆԱՐԴՈՒ ՔԱՐ

*Ոսկրե տափակ ու շրջանաձև նարդու քար է, վերևի մասի կենտրոնում կա փոքրիկ փոսիկ, որի շուրջը 3 համակենտրոն ուռուցիկ շրջագծեր են, տակի մասը հարթ է։*

*Տրամագիծը՝ 2,5* սմ, *123/1178 (07. 204), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 22։

### 1124. ՈՒԼՈՒՆՔ

*Ոսկրից պատրաստած ուլունք է, ոչ լրիվ գընդաձև, ծածկված շատ մանր ու նուրբ զարդագծերով։*
*Տրամագիծը՝* 1,4 սմ։
*123/1179 (04 . 96), 1904 թ.։*

### 1125. ՈՒԼՈՒՆՔ

*Ոսկրից պատրաստված ուլունք է, որի մի կողմն ուռուցիկ է, տակի մասը տափակ, լայն անցքով, առանց զարդանախշերի։*
*123/1180 (12 A), 1912 թ.։*

### 1126. ՈՍԿՐԵ ԻՐ

*Ոսկրից պատրաստված երկարավուն իր է, կողերը վեցանիստ են, ծայրը՝ սուր։*
*123/1182 (16 . 13,2), 1916 թ.։*

### 1127. ԿՈՃԱԿ

*Ոսկրից պատրաստած կոճակի մաս է, որի տակը տափակ է, երեսը ուռուցիկ, կենտրոնում անցք։*
*123/1183 (12 A), 1912 թ.։*

### 1128. ԿՈՃԱԿ

*Ոսկրից պատրաստված կոճակ է։ Տե՛ս № 1127։*
*Տրամագիծը՝* 1,9 սմ։
*123/1185։*

### 1129. ԿՈՃԱԿ

*Սպիտակ ոսկրից պատրաստած կիսագնդաձև կոճակ է, կենտրոնում լայն անցքով։*
*123/1184 (12 A), 1912 թ.։*

### 1130. ՈՒԼՈՒՆՔ

*Ոսկրե կոնաձև ուլունք է, շուրջը նուրբ, բարակ գծիկներով զարդանախշեր։*
*Տրամագիծը՝* 1,5 սմ։
*123/1186 (04 . 59), 1904 թ.։*

### 1131. ԿՈՃԱԿ

*Ոսկրե կլոր կոճակ է, ուռուցիկ, անցքով, առանց զարդագծերի։*
*Տրամագիծը՝* 2 սմ։
*123/1187 (12 A), 1912 թ.։*

### 1132. ՉՈՂԻԿ

*3 փոքրիկ անցքերով ոսկրից պատրաստված բարակ ձողիկ է։*
*Երկարությունը՝* 10 սմ։
*123/1188։*

### 1133. ՉՈՂԻԿ

*Ոսկրից պատրաստված նեղ ու երկար ձողիկ է, ունի 2 փոքրիկ անցք, որոնց մեջ հագցված են եղել ոսկրե փոքրիկ ձողիկներ (պահպանվել է մեկը)։ Հավանաբար կահույքի մաս է։*
*123/1189 (07 . 92), 1907 թ.։*
*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 10։

### 1134. ՈՍԿՐԵ ԻՐ

*Լայն, մի ծայրը կլոր, մյուս կողմից սնամեջ փորվածքով և մեկ անցքով ոսկրե իր է։*
*123/1190 (12 A)։*

### 1135. ՈՍԿՐԵ ԻՐ

*Ոսկրից պատրաստված գլանաձև իրի մնացորդ է, որը խիստ քայքայված է, կենտրոնում ունի անցք, շուրջը 2 զուգահեռ գծեր են։*
*123/1191։*

### 1136. ՈՍԿՐԵ ԻՐ

*Ոսկրից պատրաստված գլանաձև իրի մնացորդ է, տե՛ս № 1135-ը։*
*123/1192 (10 VII), 1910 թ.։*

### 1137. ՈՍԿՐԵ ԻՐ

*Կիսամաշ, տձև ոսկրե իրի փոքրիկ բեկոր է։*
*123/1193 (11 M), 1911 թ.։*

### 1138. ԴԱՆԱԿ

*Երկաթից ծալովի դանակ է, որը աղեղնաձև է, պատյանը սպիտակ է ու լավ մշակված եղջյուրից։ Կոթը դանակին է միանում պղնձե մանր գամերով։ Կոթի վրա երեք տեղ նուրբ ցանցաձև զարդագծեր են արված։ Տախտակ XX, 8։*
*123/1194 (09 A № 8), 1909 թ.։*
*Հրատարակված է՝* 1. КАМД, стр. 83։
2. *Բ. Առաքելյան, էջ 141։*
3. *Վ. Աբրահամյան, էջ 50։*

### 1139. ԴԱՆԱԿԻ ԿՈԹ

*Քիչ կոր, ծալովի դանակի եղջյուրե կոթ է, երկայնական, վրան պահպանվել է դանակի բերանի հետ ամրացնող մեխը։ Տախտակ XIX, 10։*
*123/1195։*

### 1140. ԲԻԶ

*Երկաթե երկար ծայրով բիզ է, կոթի մասը ոսկրից։ Կոթի երկու ծայրերին կան երկաթե գըլխիկներ, վրան երկայնական նուրբ զարդագծեր։ Տախտակ XX, 9։*
*123/1196 (12. Λ), 1912 թ.։*

### 1141. ԵՂՋՅՈՒՐ

*Կենդանու եղջյուր է, երկար, կոր, ծայրը սուր։ Հաստ ծայրը կիսամշակ է, քառակուսի, վրան մեծ անցք է արված։*
*123/1197 (09. Λ 39), 1909 թ.։*

### 1142. ՎԱՐԱԶԻ ԺԱՆԻՔՆԵՐ

*Վարազի զույգ ժանիքներ են, անմշակ։*
*123/1198—1199 (09. Λ 36), 1909 թ.։*

### 1143. ԵՂՋՅՈՒՐ

*Կիսամշակ եղջյուր է, որի հաստ ծայրը ուղիղ կտրված է, սուրը երկու կողմից քիչ տափակեցված։*
*123/1200 (14 . 22), 1914։*

### 1144. ԵՂՋՅՈՒՐ

*Կենդանու եղջյուր է, կիսամշակ, հաստ ծայրը ուղիղ կտրված, սուր ծայրը քիչ է կտրված, վրան նկատվում են դանակի հետքեր։*
*123/1200։*

### 1145. ԵՂՋՅՈՒՐ

*Կիսամշակ եղջյուր է, որի հաստ ծայրը ուղիղ կտրված է, իսկ կեռ, սուր ծայրը՝ քիչ հղկված։*
*123/1202 (11 Λ 2), 1911 թ.։*

### 1146. ՈՍԿՐԵ ԳՈՐԾԻՔ

*Դանակի նման ոսկրե գործիք։ Տե՛ս № 1109 և 1110։*

*Երկարությունը՝ 9,5 սմ, 123/1263 (11 M), 1911 թ.։*

*Հրատարակված է՝ Վ. Աբրահամյան, էջ 167։*

### 1147. ԵՂՋՅՈՒՐԻ ԲԵԿՈՐ

*Եղջյուրի փոքրիկ բեկոր է, որի սուր ծայրը լավ մշակված ու հղկված է, մյուս ծայրը՝ ուղիղ կտրված։*
*123/1204 (11 M), 1911 թ.։*

### 1148. ԵՂՋՅՈՒՐԻ ԲԵԿՈՐ

*Կիսամշակ եղջյուր է, որի սուր ծայրը կոտըրված է և լավ հղկված։ Հաստ ծայրին կան երկու անցքեր։*
*123/1205 (11 M), 1911 թ.։*

### 1149. ՎԱՐԱԶԻ ԺԱՆԻՔ

*Վարազի ժանիքի բեկոր է, կողքից և հաստ ծայրից կոտրված։*
*123/1206 (10 Y. I. 26), 1910 թ.։*

### 1150. ՈՍԿՐԻ ԲԵԿՈՐ

*Տձև, կիսամշակ ոսկրե իրի բեկոր է։*
*123/1207 (11 M), 1911 թ.։*

### 1151. ԵՂՋՅՈՒՐ

*Խոշոր եղջյուրի հիմքից մի մեծ կտոր է, որը կիսամշակ է ու տձև։*
*123/1208 (10 Y. III 67), 1910 թ.։*

### 1152. ՕՂ

*Ոսկրե փոքրիկ բարակ օղ է։*
*123/1209 (06 . 69), 1906 թ.։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. 78։

### 1153. ՄԱՏԱՆԻ

*Սև ապակուց մատանի է։ Ակի փոխարեն դեղին սմալտայից երեք փոքրիկ գնդիկներ են հագցված։*
*123/1210 (07.165), 1907 թ.։*
*Հրատարակված է՝ 1.* Реестр 1907 г. стр. 17։
2. КАМД, стр. 78։

### 1154. ՄԱՏԱՆԻ

*Ոսկրից մատանի է, որը շատ կոպիտ է մշակված, վերին տափակ մասում 3 փոքրիկ շրջագծեր են արված։*
*Տրամագիծը՝ 1 սմ։*
*123/1211 (10 II 62), 1910 թ.։*

### 1155. ՄԱՏԱՆԻ

*Բաց դեղին ապակուց մատանի, որը թերի է։ Վրան լայն ձվաձև ակ է առանց զարդանախշերի։*
*123/1213 (08 с 58), 1908 թ.։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. 78։

### 1156. ՈՒԼՈՒՆՔ

*Կարմրավուն սերդոլիկից պատրաստած կոնաձև ուլունք է, լավ հղկված, վերևի սուր ծայրը կտրված է, տակի լայն մասը բազմանիստ, վերևի մասում երկայնական փոքրիկ անցք կա կախելու համար։*
*123/1215 (04 . 25), 1904 թ.։*

### 1157. ԽԱՉ

*Կանաչավուն քարից պատրաստած, մի թևը թերի, վզին կրելու փոքրիկ խաչ է, ծածկված նուրբ, խիտ ակոսներով։ Վերևի թևի գլխիկը ավարտվում է փոքրիկ վերադիր օղակով՝ վրան երկայնական փոքրիկ անցք՝ թելի համար։ Մնացած թևերի ծայրերին մեկական փոքրիկ փոսիկներ կան։ Տախտակ XX, 10։*
*123/1216 (08 53), 1908 թ.։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. 72։

### 1158. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Երկնագույն ապակուց պատրաստած մատանու բեկոր է։*
*123/1217։*

### 1159. ՍՐՎԱԿԻ ԲԵԿՈՐ

*Քառակուսի իրանով, 4 փոքրիկ ոտքերի վրա նեղ ու երկար ապակյա փոքրիկ սրվակի տակի մաս է։*
*123/1219։*

### 1160. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Սպիտակ, անթափանցիկ ապակուց մատանու բեկոր է, առանց զարդանախշերի։*
*123/1220 (10 Y. I. 8), 1910 թ.։*

### 1161. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Նուրբ զարդագծերով պղնձե մատանու բեկոր է։*
*123/1221 (10п 105), 1910 թ., պատահական։*

### 1162. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Պղնձե մատանու բեկոր է, որի ակը ռոմբաձև է, թերի, վրան ցանցաձև նուրբ շարդագծեր։ Ակի կողքին կա փոքրիկ գնդիկ։*
*123/1223 (04 . 71), 1904 թ.։*

### 1163. ԳԼԱՆԱՁԵՎ ԻՐ

*Բրոնզե լայն, ուղիղ թիթեղից պատրաստած կարճ գլանակ է, ծածկված կետազարդերով։*
*123/1225 (09 M 37), 1909 թ.։*

### 1164. ՁՈՂԻԿ

*Բարակ նուրբ ապակե ձողիկ է (կոտրված 2 մասի)։*
*123/1226 (07 . 123), 1907 թ.։*
*Հրատարակված է՝* Реестр, 1907 г., стр. 13։

### 1165. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ

*Կավից պատրաստված կոնաձև իլիկի գլուխ է, վերևի սուր ծայրը կոտրված, ուղղահայաց երկայնական անցքով։*
*123/1230 (12 A), 1912 թ.։*

### 1166. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ

*Լավ հղկված քարից պատրաստված իլիկի գլուխ է։ Տրամագիծը՝ 3 սմ։*
*123/1228։*

### 1167. ՀԱՄՐԻՉԻ ՀԱՏԻԿ

*Քարից պատրաստած համրիչի հատիկ կամ իլիկի գլուխ է, շրջանաձև, երկու կողմից տափակ, ուղղահայաց անցքով, վերևի ուսերը քիչ կորացած են։ Տրամագիծը՝ 2 սմ։*
*123/1231 (04. 27), 1904 թ.։*

### 1168. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ

*Կավից պատրաստած իլիկի գլուխ է՝ կոնաձև (վերևի մասը կոտրված), ուղղահայաց անցքով։*
*Տրամագիծը՝ 2,5 սմ։*
*123/1232 (14 Ш 20), 1904 թ.։*

### 1169. ԽԽՈՒՆՋՆԵՐ

*Հինգ փոքրիկ,* cauri *կոչված խխունջներից ապարանջան է։ Խխունջների վրա փոքրիկ անց-*

*քեր են արված՝ թելից կախելու համար։*

*123/1235 (05*n *17*i*), 1905 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *96։*

**1170. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ**

*Երկնագույն սմալտայից պատրաստած երկու փոքրիկ ուլունքներ են, կողերից ուռուցիկ, վերևից և տակից սեղմված։*

*123/1236 (05*n *11*i*), 1905 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 96։

**1171. ՈՒԼՈՒՆՔ**

*Երկնագույն սմալտայից պատրաստած փոքրիկ ուլունք է։*

*123/1237 (05*n *11*i*), 1905 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 96։

**1172. ԻԼԻԿԻ ԳԼՈՒԽ**

*Կավե իլիկի կիսագնդաձև գլուխ է, կենտրոնում անցք։*

*Տրամագիծը՝ 3,5 սմ։*

*123/1234։*

**1173. ԽԽՈՒՆՋՆԵՐ**

*3 հատ* cauri *կոչված խխունջներ են։*

*123/1238։*

## Գլուխ տասներկուերորդ

# ՄԵՏԱՂԵ ԻՐԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Անիում բարձր զարգացում է ապրել մետաղագործական արհեստը: Այդ մասին են վկայում այն բազմաքանակ նյութերը, որոնք գտնվել են պեղումների ժամանակ և պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում ու մտել են ներկա ժողովածուի մեջ: Մետաղից պատրաստված առարկաների մեջ աչքի են ընկնում գեղարվեստական մեծ ճաշակով և հմտությամբ պատրաստված անոթները, տարբեր սպասքները, զարդերը: Կիրառական տեսակետից Անիի ժողովածուի ողջ մետաղը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ եկեղեցական սպասք և աշխարհիկ գործածության իրեր: Առանձին խմբերի կարելի է բաժանել նաև զարդերը, զենքը, աշխատանքային գործիքները:

Եկեղեցական սպասքի մեջ են մտնում մեծաթիվ պղնձե խաչերը, մասունքի տապանակները, որոնք առանձին խումբ են կազմում և, հավանաբար, սերում են բյուզանդական կենտրոններից և թվագրվում են 11-րդ դարով: Դրանք իրենց վրա կրում են առաքյալների պատկերները՝ մակագրությամբ: Արվեստի անզուգական նմուշներ են դրվագելու, ձուլելու և կռելու եղանակով պատրաստված մոմակալները, աշտանակները, ջահերը, բուրվառները, որոնց վրա պատկերված են տարբեր բնույթի հարուստ զարդեր, մասնավորապես ավետարանական:

Մեծ թիվ է կազմում աշխարհիկ գործածության սպասքը՝ սափորներ, թասեր (ամբողջական և բեկորներով), որոնց զարդերը կատարված են մեծ արվեստով: Անոթների մեծ մասը պատրաստված է ձուլման և դրվագման միջոցով: Անոթների այս առատությունը խոսում է այն մասին, որ 11—13-րդ դարերում Անիում շուկայական արտադրանքի մեջ պղնձագործությունը գրավում էր զգալի տեղ:

Ժողովածուի մեջ մտնում են նաև խիստ հետաքրքիր մատանիներ, ուլունքներ, ապարանջաններ, տարբեր քորոցներ, գնդասեղներ, ճարմանդներ: Առանձնապես հետաքրքիր են աշխատանքային գործիքները՝ ասեղներ, սանդերքի մասեր, շյուղեր, դանակներ, մանգաղ և այլն, որոնց մի մասը երկաթից է:

Բավականին մեծ խումբ են կազմում բրոնզից և երկաթից պատրաստված զենքերը: Ինքնատիպ են բազմաթիվ երկաթե պոչուկավոր նետասլաքները, որոնք խիստ բնորոշ են 11—13-րդ դդ. Միջնադարյան Հայաստանի զենքերին: Նետասլաքները հիմնականում տափակ, տերևաձև և քառակող կտրվածք ունեն:

### 1174. ՄԱՍՈՒՆՔԻ ՏԱՊԱՆԱԿ

*Պղնձե փոքրիկ, խաչաձև մասունքի տապանակ է, որը կազմված է բարակ խաչաձև զույգ թիթեղներից: Խաչի վերին թևի վրա եղել է փոքրիկ օղ՝ կախելու համար: Մի երեսին պատկերված է թևերը վեր բարձրացրած սրբերից մեկը, գլխին լուսապսակ, որի գլխավերևը՝ վերին թևի վրա, հունարեն գրված է՝* Γεοργιος:

*Տապանակի մյուս երեսի խաչաձև մասի վրա գծազարդերով պատկերված է խաչ, որի կենտրոնում փոսիկ է արված, մասունքը պահելու համար:*

*Տախտակ XXVII, 1: Բյուզանդական, XI դար:*

*123/1240 (06.183), 1906 թ., Ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու շրջակայքից:*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 73:

## 1175. ԽԱՉ

Վարդագույն մարմարից պատրաստված փոքրիկ խաչ է, 4 թևերից 3-ը ավարտվում են 3 փոքրիկ եռանկյուններով։ Թևերին արված են սեպաձև զարդանախշեր։ Վերին և ստորին թևերի ծայրերին և կենտրոնում մեկական փոքրիկ փոսիկներ են։ Զարդերը երկկողմանի են։ Կախելու անցքը վերին թևի կողքից է։ Տախտակ XX, 11։

123/1241 (06 n № 19), 1906 թ., պատահական։

Հրատարակված է՝ КАМД, стр. 73։

## 1176. ԽԱՉ

Բրոնզե փոքրիկ խաչ է, թևերի ծայրերին զույգ գնդիկներ։ Վերին թևը ավարտվում է նեղ ունկով, կախելու համար։

123/1241 (06 . 183), 1906 թ.։ Տախտակ XXIX, 1։

## 1177. ԽԱՉ

Բրոնզե մեծ խաչ է, թևերի ծայրերը ավարտվում են եռատերև գլխիկներով։ Ներսի տարածության վրա բարակ գծերով խաչ է պատկերված։ Խաչի դրսի մակերեսը ծածկված է մանր շրջագծերով, կենտրոնում և 2 թևերի վրա մեծ շրջագծեր կան, որոնք ակնափոսերի հետքեր են։ Վերևի թևի և ներքևի ոտքի վրա կան ուռուցիկ գընդիկներ։ Ներքևի ոտքի վրա քառակուսի բնի մեջ ագուցված է կապույտ քար։ Տախտակ XXII, 1։

8,5×14 սմ։

123/1241։

## 1178. ԽԱՉ

Երկու կլոր, բարակ ձողիկներից պատրաստած պղնձե փոքրիկ խաչ է։ Վերևի թևի ծայրին կա փոքրիկ անցք՝ կախելու համար։ Տախտակ XXIX, 2։

123/1242 (07n № 33), 1907 թ., պատահական։

Հրատարակված է 1. Реестр, 1907 г., стр. 50։
2. КАМД, стр. 72։

## 1179. ԽԱՉ

Վզին կրելու պղնձե փոքրիկ խաչ է, վերևի թևի վրա ունի կախելու փոքրիկ ունկ անցքով։ Ներքևի ոտքը թերի է։ Թևերից յուրաքանչյուրի վրա կա սեպաձև նախշ։ Տախտակ XXIX, 3։

123/1243 (06n 13), 1906 թ., պատահական։

## 1180. ԽԱՉ

Պղնձե փոքրիկ, տափակ խաչ է, որի թևերի յուրաքանչյուր ծայրին կան մեկական կլոր գընդիկներ։ Վերևի թևի վրա կան 3 գնդիկ և ունկի հետքեր։ Տախտակ XXIX, 4։

123/1244 (06 . 67), 1906 թ.։

Հրատարակված է՝ КАМД, стр. 72։

## 1181. ԽԱՉ

Պղնձե տափակ խաչ է։ Ստորին մասը թերի է։ Վրան նուրբ զարդագծերով պատկերված է խաչելության տեսարանը։ Տախտակ XXIX, 5։

123/1245 (07n 31), 1907 թ., պատահական։

Հրատարակված է 1. Реестр, 1907 г., стр. 50։
2. КАМД, стр. 72։

## 1182. ԽԱՉ

Բրոնզե փոքրիկ խաչ է վզին կրելու համար։ Պահպանվել է 3 թևը։ Թևերից յուրաքանչյուրն ավարտվում է 3 գնդիկներով։ Վերևի թևի վրա կա 2 գնդիկ և մի կարճ ունկ՝ փոքրիկ անցքով։ Ամբողջ մակերեսը ծածկված է բարակ գծերով արված մանր շրջանակներով։ Խաչի հակառակ երեսին պահպանվել է հայերեն արձանագրության հատված՝ «սբ. խաչ որուն կա...»։ Տախտակ XXVIII, 3։

123/1246։

## 1183. ԽԱՉ

Հավասարաթև, առանց զարդանախշի պղնձե փոքր, տափակ խաչ է։ Վերին և ստորին թևերին ամրացված են մեկական փոքրիկ սկավառակներ, որոնց կենտրոնում կա անցք։ Տախտակ XXIX, 7։

123/1247։

## 1184. ԽԱՉ

Պղնձե փոքրիկ խաչ է։ Թևերի ծայրերը ավարտվում են 2 զույգ փոքրիկ գնդիկներով, վերին թևի ծայրին 2 կարճ ուսիկներ են և կարճ, փոքրիկ ունկ՝ կախելու անցքով։ Յուրաքանչյուր թևի վրա և կենտրոնում նուրբ գծազարդով փոքրիկ շրջագծեր են արված։ Տախտակ XXIX, 8։

123/1248 (06n 19), 1906 թ., պատահական։

## 1185. ԽԱՉ

Պղնձե բարակ, կլոր ձողիկներից պատրաստած հասարակ փոքրիկ խաչ է։ Վերին և ստորին թևերի ծայրին ունի փոքրիկ ունկեր։ Խաչը հավանա-

բար երկու կողմից ամրացվել է հագուստին։ Տախտակ XXIX, 9։

123/1249 (05 № 160e) 1905 թ.։

Հրատարակված է՝ КАМД, стр. 73։

### 1186. ԽԱՉ

Պղնձե փոքրիկ խաչ է, նման № 1182։ Տախտակ XXIX, 10։

123/1250 (08 № 45), 1908 թ.։

Հրատարակված է՝ КАМД, стр. 73։

### 1187. ԽԱՉ

Բրոնզե փոքրիկ խաչ է։ Թևերից յուրաքանչյուրի վրա 2 խումբ հոաթերթ ծաղիկներ են արված, վերին թևի վրա կա փոքրիկ ունկ՝ կախելու անցքով։ Տախտակ XXIX, 11։

123/1251 (06 . 201), 1906 թ.։

### 1188. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե տափակ խաչ է, թերի։ Թևերի եզրերին արված են ուղղահայաց նուրբ գծալարգեր։

123/1252 (06 . 201), 1906 թ.։

### 1189. ԽԱՉԻ ԹԵՎ

Պղնձե մեծ խաչի մի թև է՝ նուրբ զարդագծերով։

123/1253 (07 . 65), 1907 թ.։

Հրատարակված է 1. Реестр, 1907 г., стр. 8։
2. КАМД, стр. 72։

### 1190. ԽԱՉ

Պղնձե բարակ թիթեղից տափակ խաչ է, աջ թևը թերի։ Վրան պատկերված է սրբերից մեկը՝ վեր բարձրացրած թևերով և լուսապսակով. գլխավերևում հունարեն գրված է՝ Γεοργιος։ Խաչի վերին և ձախ թևի եզրին նուրբ գծանախշ կա. հավանաբար խաչ-տապանակի մի երեսն է եղել։ Տե՛ս № 1174։

123/1254 (07п № 27), 1907 թ., պատահական։

Հրատարակված է 1. Реестр, 1907 г., стр. 50։
2. КАМД, стр. 72։

### 1191. ԽԱՉԻ ԹԵՎ

Պղնձե մեծ խաչի թև է, որն ավարտվում է 3 գնդիկներով։ Զարդարված է ոլորուն նուրբ գծիկներով։

123/1255 (07п 25), 1907, պատահական։

Հրատարակված է 1. Реестр, 1907 г., стр. 50։
2. КАМД, стр. 72։

### 1192. ԽԱՉ

Պղնձե տափակ փոքրիկ խաչ է, վերին թևը թերի է։ Թևերի ուղղությամբ արված են բարակ գծալարգեր։ Տախտակ XXIX, 12։

123/1256 (06 . 50), 1906 թ.։

### 1193. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե մեծ խաչի ստորին թևն է, երկու ծայրերին կան 3-ական մեծ գնդիկներ։ Ունի փոքրիկ նյուստ՝ խաչը փայտին ամրացնելու համար։ Զարդարված է նուրբ գծերից կազմված երիզով և մանր շրջագծերով։

123/1257 (06п, № 3), 1906 թ., պատահական։

Հրատարակված է՝ КАМД, стр. 71։

### 1194. ԽԱՉ

Պղնձե հասարակ, 2 լայն, մեծ, տափակ թիթեղներից պատրաստած խաչ է։ Վերին և ստորին թևերի ծայրին արված է մեկական մեծ անցք։

123/1258 (06 № 212), 1906 թ.։ Տախտակ XXIII, 1։

Հրատարակված է՝ КАМД, стр. 71։

### 1195. ԽԱՉ

Պղնձե խաչ է, թերի. թևերի եզրերը զարդարված են մանր շրջագծերով, կենտրոնում կետ։ Ամբողջությամբ պահպանված աջ թևի երկու ծայրերը ավարտվում են երեքական գնդիկներով, որոնց վրա նույնպես կա մեկական շրջագիծ, մեջտեղը կետ։ Աջ թևի վրա կա նաև մի կիսալուսնաձև գծանախշ։ Խաչի կենտրոնում կա մի փոքր շրջանաձև փորվածք, հավանաբար քար է ագուցված եղել։

123/1259 (08 № 9), 1908 թ.։

Հրատարակված է՝ КАМД, стр. 72։

### 1196. ԽԱՉԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Պղնձե փոքր, տափակ խաչերի բեկորներ են.
ա) խաչի ստորին թևը՝ շրջագիծ զարդերով։
բ) խաչի ստորին թևը առանց զարդանախշի։
123/1260 ա, բ (64)։

## 1197. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե հասարակ, տափակ խաչի ներքևի ոտքն է առանց զարդանախշի։*

*123/1261։*

## 1198. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե փոքրիկ, տափակ խաչի ստորին ոտքն է, շրջագիծ զարդերով։*

*123/1262։*

## 1199. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե տափակ, մեծ խաչի ստորին ոտքն է, որի 2 ծայրերը ավարտվում են գեղեցիկ հնգատերև ծաղկազարդով և կենտրոնում ունի զույգ անցք։ Մեկական փոքրիկ անցքեր կան նաև ներքևի երկու անկյուններում։ Ոտքի երկարությամբ՝ ներքևվից վերև շարված են մանր շրջագծեր։*

*123/1263*

## 1200. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե փոքրիկ խաչի վերին թևի եռաթերթ գլխիկ է, կարճ, ուղիղ։*

*123/1264 (05п 27), 1905 թ., պատահական։*

## 1201. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե տափակ, փոքրիկ խաչի թև է, որը ստորին մասում լայնանում է։ Թևի լայնքով արված են զույգ համակենտրոն շրջագծեր, որոնց հաջորդում է փոքրիկ կետով մանր շրջանակներով մի շրջան։ Նույն զարդանախշը եղել է նաև խաչի թևի հակառակ երեսին։*

*123/1265*

## 1202. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե տափակ փոքրիկ խաչի ստորին թևն է, որի ծայրին ավարտվում են երեք գնդիկներով (պահպանվել է մի ծայրը)։ Թևի ներքևի անկյուններից մեկի կենտրոնում փոքրիկ շրջագիծ է արված. կենտրոնում կետ։*

*123/1266 (05п 19), 1905 թ., պատահական։*

## 1203. ԽԱՉ

*Գղնձե տափակ, հավասարաթև փոքրիկ խաչ է։ Պահպանվել են ստորին ոտքը և ձախ թևը։*

*Խաչի եզրերին արված է բարակ ու նուրբ պարանաձև գծանախշ։ Պահպանված թևերի ծայրերին կան գնդաձև փոքրիկ վերջավորություններ։ Խաչի կենտրոնում բարակ շրջագիծ է արված, իսկ դեպի չորս կողմը՝ թևերի ուղղությամբ, ուղիղ գծեր են արված, որոնք ավարտվում են կենտրոնում կետով և զույգ զարդագծերով։ Տախտակ XXII, 2։*

*123/1267 (06п № 9), 1906 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 72

## 1204. ԽԱՉԻ ԹԵՎ

*Գղնձե փոքրիկ խաչի թև է, որն ավարտվում է 3 փոքրիկ բլթակներով։ Վրան ունի շրջագիծ զարդ։*

*123/1268*

## 1205. ԽԱՉ

*Գղնձե մեծ խաչ է, որից պահպանվել են միայն 3 թևերը։ Խաչի եզրերով գնում է 2 շարք բարակ ոլորուն գծանախշ։ Թևերից յուրաքանչյուրի 2 ծայրերը ավարտվում են 3 գնդիկներով։ Ձախ թևի ստորին ծայրից դեպի խաչի ներքևի թևը մի թեք ձողիկ է գնում, որը կեսից կոտրված է։ Պահպանված 3 թևերի վրա մեկական շրջագծեր կան։ Խաչի մյուս երեսին հայերեն արձանագրություն է՝*

*Խաչս Մխիթարչիս յիշատակարան է*
*ած ողորմ [եա]։*

*Տախտակ XXVI, 1*

*123/1269 (08* С *№ 33), 1908 թ.։*

*Հրատարակված է* КАМД, стр. 74

*2. Ե. Մուշեղյան, Հատկանշական ցուցակ, էջ 157։*

## 1206. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե տափակ խաչի ստորին թևն է, որի 2 ծայրերը բաժանված են մի քանի մանր բլթակների, իսկ թևի 2 կողմերում կիսաշրջան շրջագծերի մեջ եռաթերթ մանր ծաղկազարդեր են։*

*123/1270 (08п 41), 1908 թ., պատահական։*

*Հրապարակված է՝* КАМД, стр. 73

## 1207. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գղնձե խաչի ստորին թևն է, որի 2 ծայրերը ավարտվում են 3 գնդիկներով։*

*123/1271 (09), 1909 թ.։*

### 1208. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե խաչի ստորին թևն է, որի 2 ծայրերն ավարտվում են մեկական գնդիկներով։ Խաչն ունի նլուստ փայտի կոթին ամրացնելու համար։
123/1272 (08С № 45), 1908 թ.։

### 1209. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե խաչի թևն է, որի մի ծայրը թերի է, մյուսըն ավարտվում է մի կլոր գնդիկով։
123/1273 (08С № 26), 1908 թ.։

### 1210. ԽԱՉ

Պղնձե հավասարաթև թերի խաչ է։ Պահպանված 2 թևի եզրերը, բիչ ծռված են դեպի ներս և ծածկված նուրբ ու խիտ թեք գծազարդերով։ Յուրաքանչյուր թևի ծայրին կա մեկական նշաձև զարդ։
123/1274 (08С № 49), 1908 թ.։

### 1211. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե մեծ խաչի ստորին թևն է, ձևավոր ծայրերով։ Կենտրոնում կա նլուստ՝ փայտե կոթին ամրացնելու համար։
123/1275 (08С № 61), 1908 թ.։
Հրատարակված է՝ КАМД, стр. 73.

### 1212. ԽԱՉ

Պղնձե տափակ ձևավոր խաչ է, որը թերի է։ Թևերի ծայրերը ավարտվում են եռատերև գլխիկներով։
123/1276 (08С № 50), 1908 թ.։
Հրատարակված է՝ КАМД, стр. 73

### 1213. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե խաչի ստորին թևն է, բիչ երկարավուն և կիսակլոր գլխիկներով
123/1277 (09 М 30), 1909 թ.։

### 1214. ԽԱՉ

Պղնձե կլոր ձողիկներից պատրաստված խաչ է, թևերից մեկը կոտրված է և կարճ, ուր հավանաբար կախելու անցքն է եղել։
123/1278 (09ո 69), 1909 թ., պատահական։

### 1215. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե խաչի բեկոր է։ Պահպանվել է մի ծայրը, գեղեցիկ, ձևավոր բողբոջի ձևով։ Եզրերը զարդարված են փոքրիկ, մանր ատամներով։
123/1279

### 1216. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե խաչի ստորին թևն է, որի 2 ծայրերը ավարտվում են ուռուցիկ, եռատերև գլխիկներով։
123/1280 (12 Λ 34), 1912 թ.։

### 1217. ԽԱՉ-ՏԱՊԱՆԱԿ

Պղնձե խաչ-տապանակի մի փեղկն է։ Վերին և ստորին թևերի վրա պահպանվել են նլուստավոր օղակների փոքրիկ գլխիկները։ Թևերի ծայրերին արված են բուսական նախշազարդեր, կենտրոնում հավանաբար եղել է սրբապատկեր, որից միայն մի թևն է մնացել։ Տախտակ XXVIII, 5։
123/1281 (12 Λ 19), 1912 թ.։

### 1218. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

Պղնձե խաչի ստորին թևն է, ծայրերին կլոր գնդիկներ, խաչի թևի վրա արված է բուսական գեղեցիկ զարդանախշ։
123/1282 (10 У III 82), 1910 թ.։

### 1219. ԽԱՉ

Պղնձե տափակ խաչ է՝ մասունքի տապանակի մի երեսը, որի մի թևը թերի է։ Նման է № 1190-ին։
Տախտակ XXVII, 2։
123/1283 (09 A № 19), 1909 թ.։

### 1220. ԽԱՉ-ՏԱՊԱՆԱԿ

Պղնձե խաչ-տապանակ է։ Առաջին փեղկին պատկերված է սրբերից մեկը՝ լուսապսակով։ Հունարեն արձանագրությունը մաշված է և չի ընթերցվում։ Յուրաքանչյուր թևի վրա կա մեկական փոսիկ, իսկ ստորին թևի փոսիկի մեջ ինչ-որ նյութի մնացորդ։
Երկրորդ փեղկի վերին և ստորին թևերին պատկերված է երկու մարդկային կերպարանք, հունարեն գրերի հետքերով։ Տապանակի այս երկու մասերը միմյանց են միանում վերին թևի լուսավոր առանցքակալով, որի վերևում կլոր գլխով վերջավորվող մաս կա։
Տախտակ XXVII, 3։
123/1283

### 1221. ԽԱՉ-ՏԱՊԱՆԱԿ

*Գլխածև խաչ-տապանակի տակի փեղկն է, որը թերի է։ Պահպանվել են փոքրիկ եղուստները։ Վերին թևի վրա անցք է արված։*
*123/1284։*

### 1222. ԽԱՉ

*Գլխածև տափակ խաչ է։ Վրան պատկերված է Աստվածամայրը, գլխավերևում հունարեն* $\overline{\text{M}}\text{P}\overline{\Theta\text{V}}$ *արձանագրությամբ։ Տախտակ XXVIII, 4։*

*123/1286 (09 Λ № 9), հրատարակված է* КАМД, стр. *74։*

### 1223. ԽԱՉ

*Գլխածև մեծ խաչ է, որի յուրաքանչյուր թևի երկու ծայրերին կան կլոր գնդիկներ։ Ստորին թևին ունի եղուստ և անցք՝ փայտին ամրացնելու համար։*

*Չորս թևերին և կենտրոնում կան ոչ խորը փոսիկներ՝ ձուլվածքի հետքերով։ Խաչի կենտրոնում եղած փոսիկի շուրջը արված են չորս ուռուցիկ, նշաձև զարդեր։ Տախտակ XXIII, 3։*

*123/1286 (09 31), 1909 թ.։ Առաքելոց եկեղեցի։*

*Հրատարակված է՝* КАМД, стр.*74։*

### 1224. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև խաչի ստորին ոտքն է, որի ծայրերին կան մեկական գնդիկներ։ Ամրացված է եղել փայտե կոթին։ Խաչի ոտքի ստորին լայն մասում արված է մեծ շրջանագիծ, հավանաբար քարե ընդելուզվածքի համար։*

*123/1287 (11 M 14), 1911 թ.։*

### 1225. ԽԱՉ

*Գլխածև մեծ, գեղեցիկ խաչ է, որի ներքևի ոտքը թերի է։ Կենտրոնում սկավառակաձև թիթեղ է, օղակներով շրջանագիծ կազմող զարդերով։ Խաչի թևերի ծայրերը երկու կողմից պատած են երեք նեղ գոտիներով։*

*Խաչի թևերի, ինչպես նաև գնդիկների եզրին բազմաթիվ մանր շրջանակներից զարդանախշեր են արված։ Տախտակ XXIII, 4։*
*123/1288։*

### 1226. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև խաչի ներքևի ոտքն է։ Ծայրերն ավարտվում են ռելիեֆ ծաղկազարդերով։ Տախտակ XXVII, 4։*

*123/1289 (13 C1), 1913 թ.։*

### 1227. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև խաչի բեկոր է։ Պահպանվել է միայն մի թևը, որի ծայրերը ավարտվում են նախշերի ծաղկազարդերով։*

*123/1290 (10 Y II № 12), 1910 թ.։*

### 1228. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև խաչի ներքևի ոտք է, տերևաձև վերջավորությամբ, բուսական ու երկրաչափական զարդանախշերով։ Տախտակ XXVI, 2։*

*123/1291 (12Λ67), 1912 թ.։*

### 1229. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև մեծ խաչի թևն է, որի եզրերը զարդարված են, մեջտեղը մանր կետերով օղակաձև նախշեր են։ Տախտակ XXIX, 6։*

*123/1292 (12Λ 70), 1912 թ.։*

### 1230. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև մեծ խաչի թևն է։ Խաչի կենտրոնում ամրացված է փոքրիկ քառակուսի թիթեղ, երկու փոքրիկ գամով։ Խաչի թևի եզրերին և կենտրոնում բազմաթիվ մանր օղակաձև գծազարդեր են՝ մեջտեղը փոքրիկ կետով։ Կենտրոնում և ծայրին երկու մեծ և երկու փոքր շրջանակներ են, հավանաբար քարե ընդելուզվածքի համար։ Թևի մյուս երեսին պահպանվել է հայերեն արձանագրություն՝*

*ՍԱՐԳԻՍ*

*ՅԻՇԵՍՋԻՔԻՏ̅Ր̅*

*ԱԻՄԵՐՈՎՔ*

*Տախտակ XXVII, 5։*

*123/1293 (10 Y II № 19), 1910 թ.։*

### 1231. ԽԱՉԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև մեծ խաչի վերին թևի ծայրն է, ձևավոր կատարով։ Խաչի թևի երկու ծայրերը ավարտվում են փոքրիկ գնդիկով, որի մեջ արված է օղակաձև նախշ։*

*123/1294 (12 Λ15), 1912 թ.։*

### 1232. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐ

*Գլխածև բարակ պատերով ափսեի բեկոր է։ Ներ-*

*սից ունեցել է մանր շրջագծերով նուրբ զարդա-նախշ։ Քայքայված է։*
*123/1300*

## 1233. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

*Լավ պահպանված, բավականին հաստ պատե-րով պղնձե անոթի բեկոր է, քիչ դուրս ծալված շրթով։ Շրթի տակով գնում է նուրբ զարդանախշ։*
*123/1301։*

## 1234. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բարակ պատերով պղնձե ամանի 2 քայքայված բեկորներ են։ Բեկորներից մեկի վրա պատկերված է ձկան մարմին մարդու գլխով։*
*123/1302։*

## 1235. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Պղնձե թասի բեկոր է։*
*123/1304։*

## 1236. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Պղնձե շատ բարակ պատերով ափսեի 2 բեկոր-ներ են, որոնք ծածկված են նուրբ շրջագծերով։*
*123/1305։*

## 1237. ԹԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Պղնձե բարակ պատերով, սառը կռման տեխ-նիկայով պատրաստված, թասի երկու բեկորներ են։ Դուրս փռված շրթի տակ արված են երկրա-չափական զարդեր, որոնք լցված են սևերով և մանր քառակուսիներով։*
*123/1306։*

## 1238. ԱՓՍԵԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Պղնձե ափսեի 2 բեկորներ են, քայքայված, մանր զարդերով։*
*123/1307։*

## 1239. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Շատ բարակ պատերով պղնձե թասի բեկոր է, դրսից ունի փորագիր նախշեր, ներսից՝ եզրի տակ, 2 բարակ գծանախշ։*
*123/1308։*

## 1240. ԹԱՍԻ ԲԵԿՈՐ

*Պղնձե բարակ թիթեղից պատրաստված թասի բեկոր է, դրսի երեսին արաբերեն գրերի նման զարդագծեր են արված։*
*123/1309։*

## 1241. ԶԱՆԳԻ ԲԵԿՈՐ

*Պղնձե իրի բեկոր է, հավանաբար զանգի մաս, հաստ, ծանր և մասսիվ։*
*123/1310։*

## 1242. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բարակ, նուրբ պատերով, թեք շրթով, պղնձե անոթների 2 բեկորներ են։ Բեկորներից մեկի վրա դրսի երեսին եղել է արաբերեն արձանագրություն, որը ջնջված է։ Երկրորդ բեկորը ներսից ծածկված է նուրբ զարդագծերով։*

*123/1308 (06.119), 1906 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 63։

## 1243. ԳԱՎԱԹ

*Պղնձե թիթեղից դրվագված, բարձր պատերով գավաթ է, որն ունի հատած կոնի ձև։ Շուրթը ծալ-ված է ներս։ Հատակը զոդվել է գավաթին։ Բերանի բացվածքը՝ 7,8 սմ, հատակի տրամագիծը՝ 5սմ, բարձրությունը՝ 6,5 սմ։ Տախտակ LIII, 1։*

*123/1311 (06ռ131), 1906 թ., պատահական։*

## 1244. ԽԱՉՎԵՐԱՑԻ ՍՐՍԿՄԱՆ ՍԱՓՈՐ

*Բրոնզե դրվագված՝ խաչվերացի սրսկման սա-փոր է, որը ձագարաձև է, ունի երկար ոտք, բար-ձըր վիզ, որն ավարտվում է պռունակով, ուր ամ-րացված է եղել գլխարկը։ Սափորի իրանը ծածկ-ված է ուռուցիկ զարդերով՝ սրտաձև նախշերով, որոնց արանքները լցված են բուսական նուրբ մո-տիվներով։ Տախտակ XXIV, 2։*

*123/1313 (06ռ18), 1906 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 61

## 1245. ԿԱՆԹԵՂՆԵՐ

*Բրոնզե ձուլածո 2 կանթեղներ են, ունեն ուռու-ցիկ իրան, շրջանաձև բարձր ոտք և լայն վիզ։ Վզի դուրս փռված պսակի վրա կան երեք փոքրիկ անց-քեր, առաստաղից կախելու համար։ Կանթեղների մասերը զոդված են միմյանց հետ։ Իրանի կենտրոնում ունեն շուրջանակի գալարվող ցողու-*

նաղարդ (փորագիր)։ Կանթեղները սնամեջ են, վերին մասում հավանաբար դրվել է ճրագակալ թասիկ։

Բարձրությունը՝ 15 սմ։ Տախտակ XXIV, 3։

123/1314 (04n4), 123/1317 (04n5), 1904 թ., պատահական։

Հրատարակված է՝ 1. Առաքելյան, I, տախտակ XX, էջ 156։ 2. Վ. Աբրահամյան, էջ 62։

## 1246. ԿԱԹՍԱ

Պղնձե ուռուցիկ իրանով և նեղ վզով, հաստ պատերով փոքրիկ կաթսա է։ Վրան կան 2 նեղ հորիզոնական գոտիներ։ Հատակը գոգավոր է։ Բերանի բացվածքը՝ 10 սմ, հատակի տրամագիծը՝ 11 սմ։

Բարձրությունը՝ 7 սմ։ Տախտակ LIII, 2։

123/1315 (09A 14b), 1909 թ., ս. Առաքելոց եկեղեցի։

Հրատարակված է՝ КАМД, стр.61։

## 1247. ԲՈՒՐՎԱՌ

Բրոնզե ձուլածո բուրվառ է, որը շրջանաձև է, կարճ ոտքի վրա։ Շրթի մոտ ունի 3 կարճ ունկեր՝ շղթայի համար։ Իրանի վրա պատկերված են դըրվագներ Քրիստոսի վարքից՝ Սուրբ Հոգու ավետման, Ծննդի, Մկրտության, մոգերի երկրպագության, խաչելության, Հարության տեսարանները։ Տակի մասում պատկերված է Տիրամայրը։

123/1316 (05.127), 1905 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցի։

Հրատարակված է՝ КАМД, стр. 70։

## 1248. ԲՈՒՐՎԱՌ[1]

Ձուլման տեխնիկայով պատրաստված, բրոնզե հաստ պատերով, մեծ բուրվառ է, ունի բարձր ոտք, ուռուցիկ կողեր, նեղ վիզ։ Շրթին ամրացված են 3 ունկեր շղթայից կախելու համար։ Ունկերի արանքներում 3 սրածայր ելուստներ կան։ Բուրվառի ուռուցիկ կողերին, շատ կոպիտ, պատկերված են տեսարաններ Ավետարանից՝ Քրիստոսի Ծննդյան, Մկրտության, խաչելության և Հարության տեսարանները. իսկ բուրվառի նստուկի տակ դրսից սխեմատիկորեն պատկերված է հավանաբար Աստվածամայրը։

Բուրվառը երեք տեղ ծակված է։ Տրամագիծը՝ 12 սմ։

Ըստ ակադեմիկոս Հ. Օրբելու՝ կանթեղ է։

Գտնվել է 1905 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցուց։

Հրատարակված է՝ КАМД, стр. 85
123/1316 (05 № 127)։

## 1249. ԿԱԹՍԱ ԿԱՓԱՐԻՉՈՎ

Պղնձե փոքրիկ կաթսա է, ունի ուռուցիկ իրան ու նեղ բերան և պատրաստված է սառը կռման տեխնիկայով։ Վրան կա մի փոքրիկ ունկ, որը կաթսային է ամրացված պղնձե գամի միջոցով։

Կափարիչը սկավառակաձև է, քիչ ուռուցիկ, կենտրոնում՝ շրջանաձև բռնակով։ Կափարիչի վրա 3 փոքրիկ շրջագծերից ու դրանց շուրջը թեք, մանր ջծիկներից արված զարդեր են։

Բարձրությունը՝ 13,5 սմ, բերանի տրամագիծը՝ 14 սմ, կափարիչի բերանի տրամագիծը՝ 15,3 սմ։
123/1318 (09A 14a)։

Հրատարակված է՝ 1. КАМД, стр. 61
2. Առաքելյան, I, տախտակ
3. Վ. Աբրահամյան, էջ 60։
XIII։

## 1250. ՍԱՓՈՐ

Կանթով, կարճ ծորակով բրոնզե սափոր է, որը հենված է 3 կարճ ոտքերի վրա, բերանին ունի նեղ ու տափակ ձևավոր շուրթ։ Կանթը ձևավոր է և ունի ոճավորված ցողունի տեսք, որն ավարտվում է բացված տերևազարդով։ Ծորակը կարճ է և դեպի ետ ծալված։ Բարձրությունը՝ 27սմ։

123/1319 (06.222)։

Տախտակ XXV, 1։

Հրատարակված է՝ 1. Н. Я. Марр, «Раскопки с работы в Ани летом 1906 г.», табл. XIV, стр. 157։
2. КАМД, стр. 61
3. Առաքելյան, I, տախտակ XIV։
4. Վ. Աբրահամյան, էջ 61։

## 1251. ԿՇԵՌՔ

Պղնձե բարակ թիթեղից պատրաստված կշեռքի երկու փոքր նժարներ են, յուրաքանչյուրի վրա կան 3 փոքրիկ անցքեր։ Պահպանվել է նաև պղնձե ձողը, որից կախված են եղել նժարները։

Տրամագիծը՝ 7,2 սմ։

123/1320։

## 1252. ԲՈՒՐՎԱՌ

Բրոնզե ձուլածո բուրվառ է 3 ոտիկով, որոնցից անցնում են երեք շղթաներ, և միանում գեղեցիկ, ձևավոր կափարիչին։ Կափարիչը գմբեթաձև է, հիմքում ունի վեցթևանի աստղի տեսք. շղթաներից մեկի վրա պահպանվել է մի փոքրիկ բոժոժիկ։

Բուրվառը հենված է բարձր ոտքի վրա, շրթից ցած անցնում է գեղեցիկ բուսական զարդերով ծածկված գոտի։ Բուրվառի վրա պատկերված են Քրիստոսի Ծնունդը, Մկրտությունը, Խաչելությունը, Հարությունը և այլն։ Հատակին Աստվածամոր պատկերն է։

*123/1321 (05 № 108), 1905 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու մոտից։*

Հրատարակված է՝

КАМД, стр. 70։

Հ. Առաքելյան, I տախտակ XVIII, էջ 159։

## 1253. ՍԱՓՈՐ

Շրջանաձև ոտքի վրա բրոնզե ձուլածո սափոր է, ունի բարձր ծորակ և կանթ։ Պատրաստված է իրար զոդված 4 մասից, որոնց միացման տեղում անցնում են ակոսներ։

Սափորի իրանի ստորին գոտին կազմված է հյուսածո ժապավենաձև զարդերից։ Երկրորդ գոտին, որ սափորի իրանի կենտրոնում է, բաղկացած է մի քանի հատվածներից։ Կենտրոնում մի վահանաձև շրջանակ է, որի վրա պատկերված են զույգ հովազներ և բուսական մոտիվներ։ Շրջանակից դեպի աջ և ձախ գնում են նեղ գոտիներ՝ ծածկված գալարվող ցողունազարդերով։ Գոտիները ավարտվում են զանգակաձև պատկերով, որի մեջ բուսական զարդերի ֆոնի վրա պատկերված են դեմ-դիմաց կանգնած երկու եղնիկ։ Երրորդ գոտին, բուսական զարդերի մեջ, պատկերում է գազանների վազք (հովազ, առյուծ, ընձառյուծ և այլն)։ Սափորի վզի շուրջը արաբերեն արձանագրություն է.

والعز والاقبال والدوله والسعاده والنعما

«Ե՛վ հզորություն, և՛ հաջողություն, և՛ փառք, և՛ երջանկություն, և՛ բարիքներ»։ Դրանից վեր, վզի շուրջը, երկրաչափական նուրբ զարդագծեր են, իսկ շրթի տակ կարճ արաբերեն արձանագրություն։ Սափորի բարձրությունը՝ 27,5 սմ։ Տախտակ XXI, 1։

*123/1322 (06 № 223), 1906 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու մոտից։*

Հրատարակված է՝

1. Н. Я. Марр, «Раскопки и работы в Ани летом 1906 г.», стр. 51.
2. КАМД, стр. 61—62.
3. Առաքելյան, I տախտակ XIII, էջ 155։
4. Աբրահամյան, էջ 61։

## 1254. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

Քիչ հաստ եզրով պղնձե անոթի բեկոր է։ Դրսից ունի երեք ուռուցիկ, հորիզոնական գոտիներ։

*123/1323,*

## 1255. ՄՈՄԱԿԱԼ

Բրոնզե դրվագված, գնդաձև մոմակալի մաս է։ Վերին կիսագնդի վրա կոման տեխնիկայով պատկերված են գեղեցիկ և նուրբ երկրաչափական ու բուսական զարդանախշեր։

*123/1324 (06 № 16), 1906 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու մոտից։*

Հրատարակված է՝ КАМД, стр, 71.

## 1256. ՄՈՄԱԿԱԼ

Դրոշմազարդ գոտիով բրոնզե դրվագված մոմակալ է։ Ունի երկար խողովակաձև ոտք, որին զոդված է ձվաձև իրանը (երկու մասից), իսկ դրա վերին մասում զոդված է տափակ պսակով երկար վզիկը, կենտրոնում բացվածքով՝ պատրույգի համար։ Իրանի կենտրոնով անցնում է շրջանաձև գոտի վրան ալիքաձև, ուռուցիկ զարդանախշերով և կետերով։ Իրանի վերին մասում դրվագված են մեդալիոններ՝ վարդյակներով և երկրաչափական զարդերով, որոնց միջև պատկերված են խաչեր։ Տախտակ XXX, 1։

Բարձրությունը՝ 29 սմ։

*123/1325 (05 № 141), 1905 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցի։*

Հրատարակված է՝

1. КАМД, стр. 70—71.
2. Առաքելյան I, տախտակ XIII։
3. Վ. Աբրահամյան, էջ 64։

## 1257. ՋԱՀ

Դրվագումով պատրաստված պղնձե մեծ ջահ

է, որը գտնվել է շատ քայքայված վիճակում։ Այն կախված է եղել ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու ներսում։ Ջահի հիմքը կազմում է պղնձե լայն թիթեղից պատրաստած շրջանաձև պսակը (տրամագիծը՝ 68,9 սմ)։ Պսակի վրա 12 կլոր, ուռուցիկ կետազարդ շրջագծերի մեջ պատկերված են ցանցկեն թռչնազարդեր։ Պսակի վերին և ստորին մասերին ամրացված են տափակ ճրագակալներ՝ ապակե ճրագ-թասերի համար (38 հատ)։ Ստորին ճրագակալների արանքներում ամրացված են եղել թևերը բացած ութ աղավնիներ, որոնց յուրաքանչյուր թևի և պոչի վրա արված է մեկական փոքրիկ անցք։ Թռչունների կտուցներից բարակ լարերով կախված են փոքրիկ օղակներ։

Ջահի այդ հիմնական պսակից դեպի վեր թիթեղե 3 նեղ ժապավեններ են գնում, որոնք հավաքվում են մի կետում, ունեն օղակ՝ ջահը շղթայից կախելու համար։ Հատման կետից դեպի ցած իջնում է մի երկար ձող, որի շուրջը ամրացված են 7 ճրագակալներ։ Ջահն իր վրա կրել է 192 մեծ և փոքր ճրագակալներ։

123/1325 (06. № 8), 1906 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցուց։ Տախտակ LVIII, 1։

Հրատարակված է՝

1. Н. Я. Марр, «Раскопки и работы в Ани летом 1906 г.», стр. 47.
2. Ани, стр. 64—65,
3. КАМД, стр. 47—48,
4. Առաքելյան I, տախտակ XIX, էջ 164,
5. Վ. Աբրահամյան, էջ 65։

## 1258. ԱՇՏԱՆԱԿԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ

Բրոնզե ձուլածո մեծ աշտանակի շրջանաձև պատվանդան է՝ 3 կարճ ոտքերի վրա (պահպանվել են միայն 2-ը), որոնք զոդված են աշտանակի պատվանդանի տափակ եզրին։ Պատվանդանը ուռուցիկ է, կենտրոնում պահպանվել է կարճ, սնամեջ խողովակ՝ աշտանակի վերին մասին հագցնելու համար։ Պատվանդանի եզրերը ատամնավոր են, մակերեսը պատված է բուսական և երկրաչափական հարուստ զարդանախշով։ Տախտակ LI, 1։

123/1326։

## 1259. ԱՇՏԱՆԱԿԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ

Բրոնզե ձուլածո մեծ աշտանակի շրջանաձև պատվանդան է, երեք ոտքերի վրա (պահպանվել է մեկը)։ Պատվանդանը ծածկված է բուսական նուրբ զարդանախշերով։ Տախտակ LI, 2։

123/1327 (04ո2), 1904 թ., պատահական։

Հրատարակված է՝ Առաքելյան I, տախտակ XX, էջ 158։
2. Վ. Աբրահամյան, էջ 63։

## 1260. ԱՇՏԱՆԱԿԻ ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ՈՏՔ

Պղնձե փոքրիկ աշտանակի պատվանդանի ոտք է։ Վերին մասում ոտքին ամրացված է մի գեղեցիկ ձևավոր և տափակ (հորիզոնական) զոդված թիթեղ։ Տախտակ XXIV, 4։

123/1330 (07ո № 3), 1907 թ., պատահական։

## 1261. ՄԱՏՈՒՑԱՐԱՆԻ ԲԵԿՈՐ

Քիչ բարձր շրթով, քառակուսի, բրոնզե լայն մատուցարանի բեկոր է, իրանին կան սեպաձև ցանցկեն զարդեր։

123/1331 (08С № 32), 1908 թ.։

## 1262. ԱՔԻՇ

Պղնձե հաստ թիթեղից պատրաստված աքիշ է, տերևաձև գլխիկով և երկար, տափակ բռնակով։

Երկարությունը՝ 22,5 սմ։

123/1333 (11С38), 1911 թ.

## 1263. ԻՐԻ ՄԱՍ

Բրոնզե բարակ թիթեղից պատրաստած սնամեջ, շրջանաձև, դեպի վեր լայնացող իրի մաս է։ Ներքևի մասում տրամագիծը 5 սմ, վերևում՝ 9 սմ։

123/1334 (04ո7), 1904 թ. պատահական։

## 1264. ԹԱՍ

Պղնձե բարակ պատերով, փոքրիկ կլայեկած թաս է, քիչ ուռուցիկ, կարճ կողերով, ետ ծալվող շրթով։

Տրամագիծը՝ 9 սմ։

123/1335 (06 № 91), 1906 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու մոտ։

Հրատարակված է՝ КАМД, стр. 72։

## 1265. ԹԱՍԻԿ

Պղնձե բարակ պատերով փոքրիկ թաս է։ Ներսից ունի 2 բարակ շրջագծեր։ Մի փոքր վնասված է և ծակված։

123/1336։

## 1266. ԹԱՍ

*Պղնձե, կլայեկած հաստ պատերով, դուրս ծալված նեղ շրթով թաս է։ Կենտրոնում, հատակին 3 շրջագծերի մեջ գեղեցիկ երկրաչափական զծազարդեր են արված։*

*Տրամագիծը՝ 12* սմ:

*123/1338 (09* А14С*), 1909 թ., Առաքելոց եկեղեցու բակից։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *61։*

## 1267. ԹԱՍ-ԿՐԱԿԱՐԱՆ

*Բրոնզե ձուլածո շրջանաձև թաս-կրակարան է, երեք կարճ ոտքերի վրա. ունի ոչ խորը, ուղղահայաց կողեր։ Շուրթը տափակ ու լայն է, կիսաշրջանաձև ելուստների ձևով, որոնց միջև արված են մեկական մանր ատամներ։ Ելուստներից յուրաքանչյուրի մեջ փոքրիկ վարդյակներ են՝ բուսական, երկրաչափական և կենդանական տարբեր զարդանախշերով։ Թասի կենտրոնում՝ ներսից կլոր շերջագծի մեջ, սխեմատիկ պատկերված է Քրիստոսի սիմվոլը՝ Սրբազան գառը և գեղարդը։ Քանդակի շուրջը նկատվում են արձանագրության հետքեր։*

*Տրամագիծը՝ 17* սմ:

*123/1339 (08* П *16), 1908 թ., Որմնամույթերով շենք։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, *էջ 63։*
*2. Առաքելյան I, տախտակ XV, էջ 158։*
*3. Վ. Աբրահամյան, էջ 61։*

## 1268. ԱՆՈԹԻ ԿԱՆԹԵՐ

*Բրոնզե անոթի 2 միանման, նույն չափի կանթեր են, հավանաբար միևնույն անոթին են պատկանել։*

*Կանթերը կամարաձև են, ծայրերին ունեն ոտքեր, իսկ կամարի կենտրոնում կա հովազի գլխի նման ելուստ։ Տախտակ XXX, 3։*

*123/1340 (09* УМ*16), 1908 թ., «Մառի փողոց»։*
*123/1340 (06* n *№ 10), 1906 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 60։*

## 1260. ԱՆՈԹԻ ԲՌՆԱԿ

*Կարճ ոտքով, կլոր գլխով բրոնզե անոթի (զույգե կափարիչի) բռնակ է։*

*123/1341։*

## 1270. ԱՆՈԹԻ ԲՌՆԱԿ

*Տափակ հիմքով, բրոնզե անոթի ձևավոր բռնակ է։ Տախտակ XXV, 2։*

*123/1342 (08*п *№ 38), 1908 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *62։*

## 1271. ԱՇՏԱՆԱԿԻ ՈՏՔ

*Պղնձե փոքր աշտանակի ձևավոր ոտք է։ Ցածի մասում թաթն է (մարդու ոտքի նման), վերևի լայն մասում այն ավարտվում է հորիզոնական տափակ թիթեղով, որի վրա կան գեղեցիկ բուսական զծանախշեր, տե՛ս № 1260։ Տախտակ XXV, 3։*

*123/1343 (11* А *№ 12), 1911 թ.։*

## 1272. ԱՆՈԹԻ ՈՏՔ

*Պղնձե անոթի ոտք է (մարդու ոտքի նման)։ Ծնկի տեղում ամրացված է տափակ թիթեղ, որը ծածկված է շատ գեղեցիկ և նուրբ բուսական զարդանախշով։ Տակի մասում ունի ժապավենաձև կամրջակ։ Տախտակ XXX,2։*

*123/1346։*

## 1273. ԱՆՈԹԻ ՈՏՔ

*Պղնձե անոթի ձևավոր ոտք է, որը նման է նստած հովազի։*

*123/1347 (04 № 54), 1904 թ., Աշոտի պարիսպների մոտից։ Տախտակ XXX, 2։*

*Հրատարակված է՝ 1.* Н. Я. Марр, «Раскопки в Ани, в 1904 г.», стр. 6.
*2.* КАМД, стр.62.

## 1274. ՍԱՓՈՐԻ ՎԻԶ

*Պղնձե սափորի ութանիստ վիզ է, դեպի դուրս լայնացող շրթով։*

*123/1349 (08 № 46), 1908 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 63.

## 1275. ՋԱՀԻ ԲԵԿՈՐ

*123/1328 համարը կրող մեծ ջահի մի բեկոր է, որն իրենից ներկայացնում է բարակ պղնձե թիթեղից շրջանակ, մեջտեղը անցք։ Թիթեղի վրա դրվագման միջոցով բշտիկներ են արված։*

*123/1348*

## 1276. ԽԱՉԻ ՀԵՆԱԿ

*Բրոնզե խաչի խողովակաձև հենակ-ոտք է, եռ ծալված բարակ շրթով։ Հենակն ավարտվում է խնձորակով, որին ամրացված է խաչի ներքևի թևը։*

*123/1350 (10 У III, 120), 1910 թ.։*

## 1277. ԹԱՍ

*Պղնձե բարակ պատերով թաս է, որը պատրաստված է դրվագման եղանակով։ Եզրից ցած ունի լայն, հարթ գոտի, ստորին մասը ծածկված է բազմաթիվ մատնեքներով։*

*Տրամագիծը՝ 10 սմ։*

*123/1351 (10 Кn 64), 1910 թ., պատահական։*

## 1278. ՃՐԱԳ

*Պղնձե բարակ պատերով, երկար քթով, փոքրիկ ճրագ է։*

*123/1354 (08С № 8), 1908 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 67.

## 1279. ԹԱՍ

*Պղնձե բարակ պատերով, բաց եզրերով, փոքրիկ թաս է։*

*123/1352 (09 A 30), 1909 թ., ս. Առաքելոց եկեղեցի։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *61։*

## 1280. ՋԱՀԻ ՄԱՍ

*Բրոնզե ջահի կիսաշրջանաձև մաս է (մնացածը չկա), վրան միմյանցից հավասար հեռավորության վրա կան 6 շրջանաձև բացվածքներ՝ ձիթայուղով սրվակների համար. (4 բացվածքը լրիվ է, 2-ը կեսից՝ կոտրված լինելու հետևանքով, իսկ ամբողջ ջահի վրա եղել է 9 բացվածք)։ Բացի այդ, ջահի վրա կան 2 փոքրիկ ունկեր (մի ունկը եղել է պակասող մասի վրա՝ շղթայից կախելու համար։ Տախտակ* LI, *3։*

*123/1355 (08С № 31), 1908 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, стр. 78,

*2. Առաքելյան, էջ 163։*

## 1281. ՃՐԱԳ

*Քառակուսի, երկարավուն անկյուններով թերի ճրագ է՝ երկաթից։*

*123/1356 (11С 22), 1911 թ.։*

## 1282. ՃՐԱԳ

*Երկարավուն չորս անկյուններով երկաթե մեծ ճրագ է։*

*Այս տիպի ճրագները ամրացվում էին մեծ աշտանակաձև ճրագակալների վրա։ Տախտակ* LIII, *3, 8,5×8,5* սմ.:

*123/1357 (08n18), 1908 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 66.

## 1283. ՃՐԱԳ

*Ութանկյուն սուր ծայրերով երկաթե մեծ ճրագ է։ Անկյուններից մեկը թերի է։ Տախտակ* LIII, *4։ 9,5×9,5* սմ.:

*123/1358 (08 № 34), 1908 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 66

## 1284. ՁՈՂ

*Բրոնզե բարակ ձող է, հավանաբար գնդասեղ, որը կոտրված է 3 մասի։*

*123/1359 (09 M 26), 1909 թ.։*

## 1285. ՔՈՐՈՑ

*Սուր ծայրով, տափակ գլխով բրոնզե քորոց է։*

*123/1360 (09 M 29), 1909 թ.։*

## 1286. ՃԱՐՄԱՆԴ

*Պղնձե փոքրիկ ճարմանդի մաս է, ունի կլոր օղ, հավանաբար ձեռագիր մատյանի կազմը կոճկելու համար։ Տախտակ* LIII,*5։*

*123/1362 (08.87), 1908 թ.։*

## 1287. ՃԱՐՄԱՆԴ

*Գրքի կազմի բրոնզե ձևավոր ճարմանդ է, իրենից ներկայացնում է բարակ ձողերից ուղղահայաց իջնող քառանկյունի, որին միանում է մի այլ հորիզոնական քառանկյունի, որի ծայրին ամրացված է հովազի կիսանդրի, առջևի զույգ ոտքերով։ Տախտակ XXV, 4։*

*123/1363 (11 A 29), 1911 թ.։*

## 1288. ՃԱՐՄԱՆԴ

*Բրոնզից պատրաստված նուրբ ճարմանդ է, կազմված միմյանց կպած երեք շրջանակներից և եղուստներից։ Տախտակ XXXII, 2։*

*123/1364 (11 M 36), 1911 թ.։*

## 1289. ՃԱՐՄԱՆԴ

*Պղնձե շատ բարակ թիթեղից պատրաստված ձեավոր իր է, հավանաբար ճարմանդ՝ 2 փոքրիկ անցքով։*
*123/1365։*

## 1290. ՄԱՏԱՆԻ

*Բրոնզե բարակ մատանի է։*
*Տրամագիծը՝* 2 սմ.։
*123/1366 (09* M *39), 1909 թ.։*

## 1291. ՕՂ

*Բրոնզե բարակ լարից պատրաստված, հատվող ծայրերով օղ է։*
*123/1367 (09* M *49), 1909 թ.։*

## 1292. ԲՐՈՆԶԵ ԻՐ

*Բրոնզե բարակ թիթեղից կոման տեխնիկայով պատրաստված իր է, հավանաբար գավազանի գլուխ է։ Ուռուցիկ մասը պատած է պարուրաձև զարդանախշերով, ստորին գոտու վրա կա 2 փոքրիկ անցք։ Տախտակ* LI, *1։*
*Տրամագիծը՝ 3,5* սմ։
*123/1368*

## 1293. ԳԴԱԼ

*Երկար պոչով պղնձե փոքրիկ գդալ է։ Հավանաբար դեղգիր է։*
*123/1369 (08* C *47), 1908 թ.։ Տախտակ* LII, *2։*
*Հրատարակված է՝* КАМД, стр. *79։*

## 1294. ԶԱՆԳԱԿ

*Բրոնզից ձուլված փոքրիկ կոնաձև զանգակ է։ Գագաթին ունի անցք՝ կախելու համար, կողերին՝ չորս երկարավուն ելուստներ, իսկ ներքևը՝ բարակ շուրջանակի գոտի, լեզվակը չկա։ Տախտակ XXIV, 5։*
*123/1370 (06 № 14), 1906 թ.։*

## 1295. ՃԱՐՄԱՆԴԻ ՄԱՍ

*Գոտու կազմի բրոնզե ճարմանդի մաս է, հորիզոնական ծայրով, որի վրա արված են հինգ փոքրիկ անցքեր կոճկելու համար։ Մնացած տարածությունը ծածկված է բուսական նուրբ զարդերով։*
*123/1371 (11* A *20), 1911 թ.։*

## 1296. ՄԵԴԱԼԻՈՆ

*Պղնձե շրջանաձև թիթեղից պատրաստված մեդալիոն՝ կախիչով։*
*Մի երեսին նուրբ գծերով պատկերված է խաչ, որի թևերը կենտրոնում ընդհատվում են շրջագծով։ Խաչի թևերի միջև արված են ծաղկի երեքական նուրբ թերթիկներ, ստորին մասում ունի երկու անցք։ Տախտակ* LIII, *6։*
*Տրամագիծը՝ 3,5* սմ։
*123/1373 (09* УМ *№ 1։), 1909 թ., «Մառի փողոցից»։*

## 1297. ԽԱՉԻ ՄԱՍ

*Բրոնզե մեծ խաչի թևի եռաթերև ծայրի մասն է։*
*123/1374 (06* п *№ 3), 1906 թ., պատահական։*
*Հրատարակված է* КАМД, стр. *71։*

## 1298. ԲՐՈՆԶԵ ԻՐ

*Բրոնզե թիթեղից պատրաստված երկարավուն փոքրիկ իր է, աստիճանաբար նեղացող ծայրերով, որոնք ավարտվում են եռատամ գլխիկով։*
*Առարկայի կենտրոնում շրջանաձև զարդանախշ է։ Տախտակ XXV, 6։*
*123/1375 (09* A *46), 1909 թ.։*

## 1299. ԻՐԻ ՄԱՍ

*Բրոնզե անորոշ իրի մաս է։ Տափակ, կարճ ոտքի վրա ուռուցիկ կիսագնդի ձևով։*
*Բարձրությունը՝ 4* սմ։
*123/1376 (06 № 10), 1906 թ.։*

## 1300. ԿԱԽԻԿ-ԶԱՐԴ

*Սուր ծայրով, կլոր գլխով բրոնզից պատրաստված կենդանակերպ կախիկ է։ Ծայրին և երկու կողքերին ունի փոքրիկ ունկեր, նման է ոչխարի գլխի։ Տախտակ* LII, *3։*
*123/1377 (12* A *12), 1912 թ.։*

## 1301. ԿԱԽԻԿ-ԶԱՐԴ

*Շնգաթև հիմքով և սուր, բարձր գլխիկով պղնձից պատրաստված կախիկ է։ Հիմքից իջնում են բրոնզե զույգ շղթաներ։ Տախտակ* LI, *4։*
*123/1378։*

## 1302. ՕՂ ԵՎ ՄԱՏԱՆԻ

*ա) Բրոնզե օղ է, անջատ ծայրերով, տրամագիծը՝ 2,5 սմ։*

*բ) Բրոնզե տափակ մատանի է, միմյանց վրա եկող ծայրերով։ Վրան թույլ կետերով արված են ∽-աձև նախշեր։*

*123/1379 ա, բ (08* n *43), 1908 թ., պատահական։*

## 1303. ԿԱԽԻԿ

*Փոքրիկ ունկով, բրոնզե տափակ թիթեղից կամարաձև կախիկ է։ Տախտակ* LIII, *7։ Բացվածքը՝* 2 սմ։

*123/1380 (08* C *№60), 1908 թ.։*

## 1304. ԿԱՓԱՐԻՉ

*Բրոնզից ձուլված վեցանիստ հիմքով, ձևավոր կափարիչ է։ Նիստերը բարձրանալով կազմում են փոքրիկ գմբեթ, որն ավարտվում է կլոր օղակբռնակով։ Տախտակ XXIV, 6 և տախտակ* LII, *4։*

*123/1381։*

## 1305. ԽԱՉ

*Բրոնզե բարակ թիթեղից պատրաստված փոքրիկ խաչ է, որի ներքևի ոտքը թերի է։ Յուրաքանչյուր թևը բաժանվում է երկարավուն (միմյանցից հակառակ ուղղությամբ դասավորված) ծայրերով։ Յուրաքանչյուր ծայրի վրա, ինչպես և կողքերի թևերին, միջտեղը նուրբ կետագծերով շրջագծեր են արված։ Վերևի և ներքևի թևերի վրա այդպիսի շրջագծեր եղել են 2-ական հատ։*

*Խաչի վերին թևից դեպի կողքերի թևերը բարակ թիթեղ է գնում, որն իր հերթին հատվում է մի այլ՝ կարճ թիթեղի բեկորին, այդպիսով այստեղ ստեղծվում են փոքրիկ խաչեր, որոնց կողքերի թևերը ավարտվում են 3 մանր ատամներից կազմված զարդերով։ Նույնատիպ մանր շրջագծեր կան նաև այս խաչի թևերը միմյանց կապող թիթեղի վրա։*

*Խաչի կենտրոնում ագուցված է եղել գունավոր քար։ Տախտակ XXV,5։*

*123/1382, 1915 թ.։*

## 1306. ԼԱՐ

*Պղնձե հաստ ոլորուն լար է։*

*123/1383 (07 № 9), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *2։*

## 1307. ՍԿԱՎԱՌԱԿ

*Պղնձե հաստ թիթեղից պատրաստված տափակ սկավառակ է, կենտրոնում ունի մի շրջանաձև փոքր անցք, որի շուրջը հավասար հեռավորության վրա արված են 9 ձվաձև բացվածքներ։ Տախտակ* LIII, *8։*

*Տրամագիծը՝ 4,5 սմ։*

*123/1384 (08 № 23), 1908 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *63։*

## 1308. ՔԱՄԻՉ

*Կոտրված կանթով, պղնձե բարակ թիթեղից պատրաստված գդալաձև քամիչ է։*

*123/1385 (07 № 140), 1907 թ.։ Տախտակ* LII, *5։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *15.*
2. КАМД, стр. 60.

## 1309. ԿԱՓԱՐԻՉ

*Բրոնզե փոքրիկ կափարիչ է, կենտրոնում կլոր գմբեթով ծածկված է դրվագման միջոցով արված նուրբ, պտուտակաձև գծազարդերով։ Եզրին խիստ մաշված արաբերեն ոճավորված գրեր կան։*

*Տրամագիծը՝* 3 սմ։

*123/1386 (09* A *47), 1909 թ.։*

## 1310. ԿԱՓԱՐԻՉ

*Բրոնզից ձուլված, սրածայր գլխով, փոքրիկ կափարիչ է։ Շրջանաձև մասում արված են մանր շրջագծեր։ Տախտակ* LIII, *9։ Տրամագիծը՝* 3,5 սմ։

*123/1387 (11* A *№ 5), 1911 թ.։*

## 1311. ԿԱՓԱՐԻՉ

*Բրոնզե բարակ թիթեղից պատրաստված կափարիչ է։ Կենտրոնում փոքր գմբեթաձև գլխիկը ծածկված է նուրբ ուղղահայաց զարդագծերով։ Տախտակ XXIV7, Տրամագիծը՝* 8 սմ։

*123/1386 (09* A *47), 1909 թ.։*

## 1312. ԻՐԻ ԲԵԿՈՐ

*Բրոնզե թիթեղի քայքայված բեկոր է։ Վրան նկատվում են զարդանախշի հետքեր (մանր օղակներից և կամարներից)։*

*123/1389 (10* K *75), 1910 թ.։*

### 1313. ԲԵԿՈՐ

Բրոնզե թիթեղից պատրաստված իրի փոքրիկ բեկոր է, ծածկված բուսական նուրբ գծանախշերով։
123/1390 (10 У IV. 34), 1910 թ.։

### 1314. ԲՐՈՆԶԵ ԻՐ

Կարթաձև բրոնզե իր է։ Կենտրոնից դեպի 3 կողմերը գնում են սրածայր կեռեր, որոնցից յուրաքանչյուրի տակ կան փոքրիկ օղակներ։ Կենտրոնական մասում փոքրիկ գունդ է, դրանից վերև եղել է օղակաձև ունկ։
123/1391։

### 1315. ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ԲԵԿՈՐ

Բրոնզե տափակ ապարանջանի բեկոր է։
123/1392 (11 A 23), 1911 թ.։

### 1316. ՕՂ

Բրոնզե բարակ լարից պատրաստված օղ է, միմյանց վրա եկած ծայրերով։
123/1394 (11 A 24), 1911 թ.։

### 1317. ԹԱՍ

Բերանի անկանոն բացվածքով, պղնձե հաստ պատերով խորը թաս է։ Տրամագիծը՝ 20 սմ։
123/1393 (09п 67), 1909 թ., պատահական։

### 1318. ԿՇԵՌՔ

Փոքր կշեռք է, բաղկացած բրոնզե 2 փոքր, գոգավոր նժարներից և վերին ձողից։ Նժարներից յուրաքանչյուրը ունի 3 փոքրիկ անցք շղթայով վերևի ձողից կախելու համար։ Վերևի հորիզոնական ձողը խիստ քայքայված է, պահպանվել է ձողի կենտրոնական բռնակը։ Ձողը վերականգնված է։ Տախտակ XXXI, 1։
123/1395, 1396, 1397։

### 1319. ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐ

Բրոնզե նժար է՝ շրջանաձև, քիչ գոգավոր, տափակ, նեղ եզրերով, վրան երեք փոքր անցքեր։
Տրամագիծը՝ 8,7 սմ։
123 1396 (11 A № 28), 1911 թ.։

### 1320. ԿՇԵՌՔԻ ՆԺԱՐՆԵՐ

Գախումի տարբեր կշեռքների բրոնզե նժարներ են։
Մի նժարը քիչ խորն է, տափակ եզրով վրան 4 անցք (3-ը եզրի վրա, մեկը կենտրոնում)։ Տրամագիծը՝ 6 սմ։ Մյուս նժարն առաջինից քիչ մեծ է, տափակ և քայքայված։ Եզրին ունի 3 անցք։ Տրամագիծը՝ 6,5 սմ։ Տախտակ XXXII, 1։
12398 (11 M 22), 1911 թ.։

### 1321. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

Բրոնզե անոթի (գուցե թասի) մեծ բեկոր է, քիչ դուրս թեքված շրթով։ Դրսից ծածկված է մանր, սեպաձև նախշերով։
123/1393 (10 K 49), 1910 թ.։

### 1322. ԹԻԹԵՂԻ ԲԵԿՈՐ

Բրոնզե անորոշ իրի բեկոր է, նուրբ և գեղեցիկ զարդագծերով։
123/1400 (15 A № 3), 1915 թ.։

### 1323. ԹԻԹԵՂԻ ԲԵԿՈՐ

Բրոնզե թիթեղի փոքր բեկոր է, վրան նուրբ բուսական զարդանախշ։
123/1401 (12 A 54), 1912 թ.։

### 1324. ԶԱՆԳԻ ԲԵԿՈՐ

Բրոնզե զանգի մեծ բեկոր է, վրան հայերեն արձանագրություն (թերի է։ Առաջին տողում կարդացվում է Ս. Ի... երկրորդում՝ ...Ս)։
123/1402 (12 A 37), 1912 թ.։

### 1325. ՀԱՎԱՆԳԻ ՍԱՆԴԻՏՈՌ

Պղնձե հավանգի փոքր սանդիտոռ է, վերին գլխիկը կիսագնդաձև։ Տախտակ XXXII, 4։
Երկարությունը՝ 8 սմ։
123/1403 (07 № 187), 1907 թ.։
Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 20.
2. КАМД, стр. 83.

### 1326. ԱՆՈԹԻ ՈՏՔ

Պղնձե մեծ անոթի հաստ ոտք է. ներքևի մասը գնդաձև է, վերևինը՝ հենվող մասում եռանկյունաձև։ Հետևի կողմից այդ գնդի տակ կա փոքրիկ



9—711

*նլուստ՝ անոթին ամրացնելու համար։ Տախտակ XXXII, 3։*

*123/1404 (10 Ŷ II 30), 1910 թ.։*

### 1327. ԶԱՐԴԱՔՈՐՈՑ

*Բարակ, կարճ ոտքով բրոնզե զարդաքորոց է։ Գլխին ամրացված է տափակ թիթեղից աքաղաղ, շրջագիծ զարդերով։*

*123/1405 (15ռ3), 1915 թ., պատահական։*

### 1328. ՄԱՏԱՆԻՆԵՐ

*ա) Բարակ, նեղ, տափակ լարից պատրաստված բրոնզե մատանի է, ինտալիան ձվաձև է, ·ՅԼ· զարդով։*

*բ) Պղնձե բարակ մատանի, վերին՝ ձվաձև մասում ալիքավոր նախշազարդով։ Տախտակ XXXII, 21։*

*123/1406 (06 № 65), 1906 թ.։*

### 1329. ՄԱՏԱՆԻ

*Երկաթե տափակ ու լայն մատանի է։ Վերին մասում ամրացված է պղնձե քառակուսի թիթեղ՝ առյուծի դրվագված պատկերով։*

*123/1407 (05 № 159), 1905 թ.։ Տախտակ XXXII, 5։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 79.

### 1330. ՄԱՏԱՆԻ

*Բրոնզե բարակ մատանի է, վերին մասում ձըվաձև փոքրիկ թիթեղով։ Տախտակ XXXII, 6։*

*Տրամագիծը՝ 2 սմ:*

*123/1409*

### 1331. ՄԱՏԱՆԻ

*Բրոնզե բարակ թիթեղից պատրաստված մատանի է։ Ակի մասում թիթեղը քիչ լայնանում է և դառնում ձվաձև, որի վրա նուրբ գծանախշեր են արված։*

*123/1408 (05.80), 1905 թ.։*

### 1332. ՄԱՏԱՆԻ

*Կարճ ուսերով բրոնզե հաստ մատանի է։ Վերին մասում ամրացված է վեցանիստ թիթեղ, որի վրա արված են 7 մանր շրջագծեր։ Տախտակ XXXII, 7։*

*Տրամագիծը՝ 2,5 սմ:*

*123/1410 (07ռ15), 1907 թ., պատահական։*

### 1333. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Բրոնզե բարակ մատանու բեկոր է (քառակուսի փոքր թիթեղ), որի վրա փորագրված է մի փոքրիկ թռչնակ վեր ցցած պոչով։ Տախտակ XXXII, 8։*

*123/1412 (07 № 137), 1907 թ.։*

*Հրատարակված է՝ 1.* Реестр, *1907* г., стр. *14.*
2. КАМД, стр. 79.

### 1334. ՄԱՏԱՆԻ

*Պղնձե մատանի է, կենտրոնում մեկական ուսիկներով։ Քիչ բարձր ոտքի վրա ամրացված է քառակուսի թիթեղ։ Տախտակ XXXII, 9։*

*123/1411 (06.185), 1906 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. 79.

### 1335. ՄԱՏԱՆԻ

*Բրոնզե տափակ մատանի է, օղի վրա ամրացված է քառակուսի թիթեղ, որի վրա նուրբ գծազարդերով (շեղանկյունների մեջ) պատկերված է մանր շրջագծերի մի շարք, մեջտեղը կետ։ Տախտակ XXXII, 10։*

*Տրամագիծը՝ 2 սմ:*

*123/1413 (07ռ), 1907 թ., պատահական։*

### 1336. ՄԱՏԱՆԻ

*Բրոնզե բարակ մատանի է։ Ակի տեղում ամրացված է ձվաձև փոքրիկ, տափակ թիթեղ՝ նուրբ գծազարդերով։ Տախտակ XXXII, 11։*

*Տրամագիծը՝ 2 սմ:*

*123/1414 (06 № 221), 1906 թ.։*

### 1337. ՕՂ

*Բրոնզե օղ է, արտաքին եզրը հատվածներով։*

*123/1415*

### 1338. ՄԱՏԱՆԻ ԵՎ ՕՂ

*ա) Տափակ, բարակ բրոնզե մատանի է, որի վրա ամրացված է քառակուսի փոքրիկ թիթեղ, եռանկյունաձև զարդով։ Տրամագիծը՝ 1,6 սմ:*

*բ) Բրոնզե բարակ օղ, անջատ ծայրերով։ Տախտակ XXXII, 12։ Տրամագիծը՝ 2 սմ:*

*123/1416 (08 № 4), 1908 թ.։*

### 1339. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Բրոնզե մատանու ինտալիայի մաս է, քիչ լայն, ալիքաձև եզրերով:*
*123/1417 (08 № 81), 1908 թ.:*

### 1340. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Բրոնզե բարակ մատանու բեկոր է:*
*123/1418:*

### 1241. ՕՂ-ՄԱՏԱՆԻ

*Մի քանի տակ փաթաթված բարակ լարից պատրաստված բրոնզե օղ-մատանի է:*
*Տրամագիծը՝ 2 սմ:*
*123/1419 (07), 1907 թ.:*

### 1342. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Ձվաձև ինտալիայով բրոնզե մատանու բեկոր է, որի վրա պատկերված է թույլ գծերով արված ∞ - աձև նախշ:*
*123/1420 (06 № 20), 1906 թ.:*

### 1343. ՄԱՏԱՆՈՒ ԲԵԿՈՐ

*Բրոնզե լայն մատանու բեկոր է, վրան դրվագված են սեպաձև զարդեր և կետերից ու գծերից կազմված նախշազարդեր: Տախտակ XXXII, 22:*
*123/1421 (ՈՕ 1), պատահական:*

### 1344. ՕՂ

*Բրոնզե բարակ օղ է:*
*123/1422 (05Ո № 24), 1905 թ., պատահական:*

### 1345. ՄԱՏԱՆԻ

*Պղնձե փոքրիկ մատանի է: Վերին մասում ունի փոքրիկ ուսիկներ, որոնց վրա ամրացված է քառակուսի փոքրիկ թիթեղ, կենտրոնում՝ փոսիկ: Տախտակ XXXII, 14:*
*Տրամագիծը՝ 1,5 սմ:*
*123/1423 (06), 1906 թ.:*

### 1346. ԳՆԴԱՍԵՂ

*Բրոնզե երկար զարդ, գնդասեղ է: Վերին հաստ մասում արված է չորս շարք ուղղահայաց ցցենաձև զարդանախշ: Ներքևի սուր ծայրը քիչ ծռված է:*
*Երկարությունը՝ 12,2 սմ:*
*123/1424 (07 № 168), 1907 թ.:*
*Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 17.*

### 1347. ԱՍԵՂ

*Բրոնզե հաստ ասեղ է, վերին ծայրը ուղիղ կտրված և անցքով: Կենտրոնում չորս շարք շուրջանակի ոլորուն գծեր են: Ներքևի ծայրը քիչ թեք է և սուր: Տախտակ XXXII, 15:*
*Երկարությունը՝ 9,5 սմ:*
*123/1425 (06.194), 1906 թ.:*

### 1348. ԳՈՐԾԻՔ

*Պղնձե երկար լար է (մաքոքի նմանությամբ), որը երկու ծայրերում երկճյուղ գլխիկներ ունի: Տախտակ XXXI, 3: Երկարությունը՝ 16,5 սմ:*
*123/1426 (07 № 11), 1907 թ.:*
*Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 2:*

### 1349. ՄԱԽԱԹ

*Բրոնզե հաստ լարից պատրաստված մախաթասեղ է, գլխիկը թերի: Տախտակ LII, 6:*
*123/1427 (06 № 1), 1906 թ.:*

### 1350. ՁՈՂԻԿ

*Բրոնզից պատրաստված բարակ, երկար, քիչ կոր ձողիկ է:*
*123/1428 (06 № 7), 1906 թ.:*

### 1351. ԱՍԵՂ

*Երկար, հաստ բրոնզե ասեղ է, գլուխը թերի: Տախտակ LII, 7:*
*123/1429*

### 1352. ՁՈՂ

*Երկար, հաստ, կլոր կողերով, ծայրերը սուր պղնձե ձող է Տախտակ XXXII, 13:*
*Երկարությունը՝ 12,5սմ:*
*123/1430 (06 № 92), 1906 թ.:*
*Հրատարակված է՝ КАМД, էջ 85:*

### 1353. ԱՍԵՂ

*Բրոնզե հաստ ասեղ է, ամբողջական, սուր ծայրը քիչ կոր: Երկարությունը՝ 7,5 սմ:*
*Տախտակ XXXII, 21:*
*123/1431 (05 № 120), 1905 թ.:*

### 1354. ՁՈՂԻԿ

*Երկար, քառակող բրոնզե ձողիկ է, մի ծայրը բարակ և քիչ կոր։*
*123/1432 (62)։*

### 1355. ԳՈՐԾԻՔ

*Կլոր հաստ ձողից պատրաստած բրոնզե գործիք է։ Վերին ծայրը սուր է։ Կենտրոնում ունի ձևավոր կտրվածքներ։ Տախտակ XXXI, 4։*
*Երկարությունը՝ 15 սմ:*
*123/1432 (08ռ5), 1908 թ., պատահական։*

### 1356. ՇՅՈՒՂ

*Երկար, բարակ, գուլպա գործելու բրոնզե շյուղ է։*
*123/1434 (07 № 59), 1907 թ.։*
*Հրատարակված է՝* Реестр 1907 г., *էջ 7։*

### 1357. ԲՐՈՆԶԵ ԻՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բրոնզե բարակ լարից պատրաստած իր է։ Մի բեկորը կոր գլխով։*
*123/1435։*

### 1358. ԱՍԵՂԻ ԲԵԿՈՐ

*Բրոնզե ասեղի բեկոր է, անցքով։*
*123/1436 (08 № 33), 1908 թ.։*

### 1359. ԼԱՐ

*Բրոնզե բարակ լար է։*
*123/1437 (06.172), 1906 թ.։*

### 1360. ՁՈՂ

*Մի ծայրը ջարդված, բրոնզե հաստ, քառակող ձող է։*
*123/1438 (06 № 5), 1906 թ.։*

### 1361. ՁՈՂԻ ԲԵԿՈՐ

*Մի ծայրը տափակ, բրոնզե կլոր ձողի բեկոր է։*
*123/1438 (83)։*

### 1362. ՁՈՂ

*Բրոնզե հաստ, կարճ, կլոր կողերով ձող է։*
*123/1440 (08 № 41), 1908 թ.։*

### 1363. ԼԱՐ

*Բրոնզե բարակ, կարճ լարի կտոր է։*
*123/1441։*

### 1364. ՇՔԱՍԵՂ

*Ջևավոր գլխով, ոճավորված թռչունի պատկերով բրոնզե երկար շքասեղ է։ Տախտակ XXXII, 15։*
*123/1442 (05ռ № 3), 1905 թ., պատահական։*
*Հրատարակված է՝* КАМД, *էջ 80։*

### 1365. ՇՔԱՍԵՂԻ ԳԼՈՒԽ

*Բրոնզե շքասեղի թռչնանման գլուխ է։ Տախտակ XXXII, 16։*
*123/1443 (08 68), 1908 թ.։*
*Հրատարակված է՝* КАМД, *էջ 80։*

### 1366. ՇՔԱՍԵՂ

*Ոճավորված թռչունի գլխով բրոնզե երկար շըքասեղ է։ Ձողի վերևի մասում արված են ատամնաձև նախշեր։ Տախտակ XXXII, 17։*
*123/1444 (06 148), 1906 թ.։*
*Հրատարակված է՝* КАМД, *էջ 80։*

### 1367. ՄԱԶՔԱՇԻ ԲԵԿՈՐ

*Լայն ծայրով բրոնզե տափակ թիթեղից պատրաստված մազքաշի կեսն է։ Տախտակ* LIII, *10։*
*Երկարությունը՝ 6 սմ:*
*123/1445 (07 № 122), 1907 թ.։*
*Հրատարակված է՝* Реестр *1907* г., *էջ 13։*

### 1368. ԿԱԽԻԿ-ԶԱՐԴ

*Բրոնզե փոքրիկ թռչնանման կախիկ է, մեջքին փոքր օղակ՝ շղթայից կախելու համար։ Մարմինը զարդարված է նուրբ գծերով։ Երկու ոտքերից կախված են փոքրիկ օղեր, որոնց ամրացված են ձվաձև տափակ թիթեղիկներ։ Տախտակ* LII, *8։*
*123/1446 (08ռ № 43), պատահական։*

### 1369. ԳՈՐԾԻՔ

*Երկար, սուր ծայրով, բրոնզե տափակ թիթեղյա իր է։ Վերին գլխիկը թերի է։*
*123/1447 (06 № 205), 1906 թ.։*

### 1370. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Բրոնզե բարակ լարի վրա հագցված են 3 փոք-*

*րիկ, նուրբ, սնամեջ գնդիկներ։ Հավանաբար ականջօղ է։ Տախտակ* LII, *9։*

*123/1448 (08 № 5), 1908 թ., Միջնաբերդի պալատ։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 80։*

### 1371. ՇՔԱՍԵՂ

*Բրոնզե շքասեղ է, ծայրը կոտրված, ավարտվում է փոքրիկ թռչնաձև գլխիկով։ Տախտակ XXXII, 20։*

*123/1449 (05 107), 1905 թ.։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 80։*

### 1372. ԱԿԱՆՋՕՂ

*Սնամեջ գնդիկով լարին ամրացված բրոնզե ականջօղ է։*

*123/1450 (08 16), 1908 թ.։*

### 1373. ԱԿԱՆՋՕՂ

*Բրոնզե բարակ լարից գնդիկով ականջօղ է։*

*123/1451 (08 52), 1908 թ.։*

### 1374. ԲՈԺՈԺԻԿ

*Բրոնզե փոքրիկ բոժոժիկ է՝ բաղկացած 2 սնամեջ կիսագնդերից։ Վերին կիսագնդի վրա մի փոքրիկ ունկ է ամրացված։*

*123/1453։*

### 1375. ԲՈԺՈԺԻԿ

*Միաձույլ փոքրիկ ունկով բրոնզե ձվաձև կախիկ-բոժոժիկ է։ Տախտակ XXXIII, 1։*

*123/1455 (06), 1906 թ.։*

### 1376. ԲՈԺՈԺԻԿ

*Երկարավուն իրանով պղնձե փոքրիկ բոժոժիկ է, վերին մասում ունի կարճ ունկ՝ կախելու համար։ Ստորին մասում ունի երկայնական ճեղք, մեջը մի փոքրիկ քար։*

*123/1454 (06 № 3), 1906 թ.։*

### 1377. ԲՈԺՈԺԻԿ

*Օղակաձև ունկով բրոնզից ձուլված փոքրիկ բոժոժիկ է, գունդը ցանցկեն է, սեպաձև և երկարավուն կտրվածքներով։*

*Տախտակ XXXIII, 2։*

*123/1457 (07 № 109), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., *էջ 11։*

### 1378. ԲՈԺՈԺԻԿ

*Փոքրիկ ունկով բրոնզե ձվաձև բոժոժիկ է։ Կենտրոնում շուրջանակի մի բարակ գոտի է անցնում։ Ստորին մասում ունի նեղ աղեղնաձև կտրվածք, որի մի ծայրը եռանկյունաձև է, մյուսը բաժանվում է երկու փոքրիկ ճյուղերի։ Տախտակ XXXIII, 3։*

*123/1458։*

### 1379. ԶԱՆԳԱԿ

*Բրոնզից ձուլված փոքրիկ, ձվաձև զանգակ է, վերին մասում ունի փոքրիկ սուր ունկ։ Իրանի կենտրոնում շուրջանակի անցնում են չորս բարակ հորիզոնական գծիկներ։ Դրանից ցած դեպի զանգակի հիմքը ուղղահայաց ճառագայթաձև գծեր են։*

*123/1460։*

### 1380. ԲՈԺՈԺԻ ԲԵԿՈՐ

*Պղնձե գնդաձև փոքրիկ բոժոժի վերին մասն է՝ փոքրիկ ունկով։*

*123/1461։*

### 1381. ԲՈԺՈԺԻ ԿԵՍ

*Կիսագնդաձև երկայնական ճեղքով պղնձե բոժոժիկի ներքևի մասն է։*

*123/1462 (07), 1907 թ.։*

### 1382. ԲՈԺՈԺԻ ՄԱՍ

*Սնամեջ կիսագնդաձև բրոնզե բոժոժի կեսն է։*

*123/1463 (07), 1907 թ.։*

### 1383. ԲՈԺՈԺԻ ՄԱՍ

*Սնամեջ, կիսագնդաձև, երկու կողքերին փոքրիկ փասիկներով բրոնզե բոժոժիկի կեսն է։*

*123/1464 (07 № 148), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр 1907 г., *էջ 16։*

### 1384. ԲՈԺՈԺԻԿԻ ՄԱՍ

*Բրոնզե բոժոժիկի կեսն է, որը սնամեջ է և մեջտեղում ունի բարակ ճեղք։*

*123/1465 (07), 1907 թ.։*

### 1385. ԲՈԺՈԺԻԿԻ ՄԱՍ

*Սնամեջ, կիսագնդաձև բրոնզե բոժոժիկի մաս է։*
*123/1465 (07), 1907 թ.։*

### 1386. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Բրոնզե բարակ ապարանջան։*
*123/1467 (06 № 30), 1906 թ.։*

### 1387. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Տափակ, հաստ, բրոնզե ապարանջան է, որի ծայրերը իրար վրա են գալիս։*
*122/1468 (07 № 71ա)։*

### 1388. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Բրոնզե հաստ ապարանջան է, որի տափակ ծայրերը գալիս են իրար վրա։*
*123/1469 (06 № 134), 1906 թ.։*

### 1389. ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ԲԵԿՈՐ

*Առանց զարդագծերի բրոնզե ապարանջանի բեկոր է։*
*123/1470 (08 № 90), 1906 թ.։*

### 1390. ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բրոնզե բարակ ապարանջանի բեկոր է, որն ունի տափակ, օձաձև գլուխ, վրան 4 փոքրիկ շրջագծեր են արված։*
*123/1472 (05 № 105)։*
*Հրատարակված է՝* КАМД, *էջ 79։*

### 1391. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Պղնձե բարակ ապարանջան է, ծայրերն անջատ, առանց գծազարդերի։*
*123/1473 (08 71*b*), 1908 թ.։*

### 1392. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Բրոնզե տափակ ապարանջան է, ծայրերն անջատ։*
*123/1474 (06 № 62*a*), 1906 թ.։*

### 1393. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Մի ծայրը բարակ, պղնձե փոքրիկ ապարանջան է։*
*Հրատարակված է* Реестр 1907 г., *էջ 50։*
*123/1475 (07*п *№ 32), 1907 թ., պատահական։*

### 1394. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Օձագլուխ ծայրերով, պղնձե հաստ ապարանջան է։*
*123/1476։*

### 1395. ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ԲԵԿՈՐ

*Բրոնզե ոլորուն ապարանջանի բեկոր է։*
*123/1477 (08* п *2), 1908 թ.։ Որմնամույթերով շենքից։*

### 1396. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Միմյանցից անջատ, տափակ ծայրերով բրոնզե հաստ ապարանջան է։*
*123/1478 (05 № 90), 1905 թ.։*

### 1397. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Օձագլուխ ծայրերով, բրոնզե տափակ ապարանջան է։*
*123/1479 (06 № 61), 1906 թ.։*

### 1398. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Անջատ, օձագլուխ, տափակ ծայրերով բրոնզե ապարանջան է։*
*123/1480 (06 № 60), 1906 թ.։*

### 1399. ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բրոնզե տարբեր ապարանջանների երկու բեկորներ են, մեկը՝ օձագլուխ, մյուսը՝ առանց զարդանախշերի։*
*123/1481 ա, (07), 1907 թ., 123/1481 բ (06 № 136), 1906 թ.։*

### 1400. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Բրոնզե ապարանջան է, օձագլուխ, տափակ ծայրերով։*
*123/1482 (06 № 62*b*), 1906 թ.։*

### 1401. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Երկաթե հաստ ապարանջան է, ռելիեֆ զարդանախշերով։*
*123/1484 (07 № 158), 1907 թ.։*
*Հրատարակված է՝ 1.* Реестр 1907 г,. *էջ 10։*
*2.* КАМД, *էջ 79։*

### 1402. ԱՆՈԹԻ ԲԵԿՈՐ

Պղնձե մեծ անոթի բեկոր է, ձևավոր եզրերով: Վրան ունի նեղ գոտի՝ ծածկված բուսական զարդանախշերով: Պատրաստված է դրվագման տեխնիկայով:

123/1485 (06 № 109), 1906 թ.:

### 1403. ՃԱՐՄԱՆԴԻ ՄԱՍ

Բրոնզից պատրաստված ճարմանդի մաս է, կարճ նլուատով, վրան հովազի պատկեր: Տախտակ XXXIII, 4:

123/1487 (05 n 22), 1905 թ., պատահական, վաղ դամբարանից:

Հրատարակված է՝ КАМД, էջ 80:

### 1404. ԻՐԻ ԲԵԿՈՐ

Նուրբ բուսական զարդանախշով բրոնզե անոթի իրի քառակուսի բեկոր է: Պատրաստված է ձուլման տեխնիկայով: Տախտակ XXXIII, 5:

123/1488 (06.141С), 1906 թ.:

### 1405. ԶԱՐԴԱԿՈՃԱԿ

Պղնձե վարդյակաձև զարդակոճակ է, որը կազմված է 8 աղեղից, վրան շրջանաձև դասավորված նշիկաձև անցքեր, 9-րդ աղեղը կենտրոնում է և ծածկված է ալիքաձև զարդանախշերով: Տախտակ XXXV, 1:

123/1489 (05 n № 6), 1905 թ., պատահական:

Հրատարակված է՝ КАМД, էջ 80:

### 1406. ԳՈՏՈՒ ԲԵԿՈՐ

Բրոնզե նեղ գոտու բեկոր է, փոքրիկ ունկով: Ծածկված է բուսական նուրբ զարդանախշով: Տախտակ XXXIII, 6:

123/1490 (06 n № 6), 1906 թ., պատահական:

Հրատարակված է՝ КАМД, էջ 80:

### 1407. ԳՈՏՈՒ ԲԵԿՈՐ

Պղնձե նեղ գոտու բեկոր է, դրսից ուռուցիկ զարդագծերով:

123/1491 (06 № 149), 1906 թ.:

### 1408. ԳՈՏՈՒ ԲԵԿՈՐ

Բրոնզե տափակ գոտու բեկոր է, որի մի ծայրը թեքված է: Վրան ձուլման տեխնիկայով 3 շարք մանր գնդիկներից ուլունքաշարք կա:

Տախտակ XXXIII, 7:

123/1492 (07 № 8), 1907 թ.:

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., էջ 1:

## ԵՐԿԱԹԵ ԻՐԵՐ

Միջնադարում երկաթից մեծ մասամբ պատրաստել են զենքեր և գյուղատնտեսական գործիքներ: Մեր հավաքածուի մեջ երկաթե իրերը ներկայացված են որպես նետասլաքներ, նիզակներ, սրեր, դանակներ, մանգաղներ, դաշույններ և այլն:

### 1409. ԳԱՄ

Լավ պահպանված, եռանկյունաձև գլխիկով երկաթե փոքրիկ գամ է:

123/1493 (07К № 57), 1907 թ.:

### 1410. ՆԵՏԱՍԼԱՔ

Տափակ, տերևանման երկաթե նետասլաք է, ծայրը թերի, քայքայված: Հիմքում ունի նեղ գոտի:

123/1494 (07К № 57), 1907 թ.: Կարսի դարպաս:

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 28.

### 1411. ՆԵՏԱՍԼԱՔ

Երկաթե քառակող, կարճ պոչով նետասլաք է: Տախտակ LIV, 1:

123/1495 (07К № 66), 1907 թ., Կարսի դարպաս:

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 29.

### 1412. ՆԵՏԱՍԼԱՔ

Քառակող երկար պոչով երկաթե նետասլաք է, որը քայքայված է և մի կողմը թերի:

123/1396 (07 К № 78), 1907 թ., Կարսի դարպաս:

Հրատարակված է՝ Реестр, 1907 г., стр. 29.

### 1413. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե քառակող քալքայված նետասլաք է։ 123/1497 (07 К № 38), 1907 թ.։ Կարսի դարպաս։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *28.*

### 1414. ՆԵՏԱՍԼԱՔԻ ՊՈՉՈՒԿԻ ԱԳԱՆԵԼԻՔ

*Մոտ 3 սմ երկարությամբ երկաթե նետասլաքի պոչուկի մեջ մտնող փայտի մնացորդ է։*

*123/1498 (07* К *№ 75), 1907 թ.։*

### 1415. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչուկով երկաթե քառակող նետասլաք է։ Տախտակ* LIV, *2։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *29։*

### 1416. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե քալքայված քառակող նետասլաք է։*

*123/1509 (07* К *№ 102), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *30։*

### 1417. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով երկաթե քառակող նետասլաք է։ Տախտակ* LIV, *3։*

*123/1501 (07* К *№ 89), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *29։*

### 1418. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե բարակ պոչով նետասլաք է, որի ծայրը քիչ ծռված է։ Տախտակ* LIV,*4։*

*123/1502 (07* К *88), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *29։*

### 1419. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, երկճյուղ ծայրերով ճանկավոր բրոնզե նետասլաք է։ 7—6-րդ դդ. մ. թ. ա.։ Տախտակ* LIV, *5։*

*123/1503 (07* К *61), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *28։*

### 1420. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, քառակող, երկաթե քալքայված նետասլաք է։ Տախտակ* LIV, *6։*

*123/1504 (07* К *№ 51), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *28։*

### 1421. ՆԵՏԱՍԼԱՔԻ ԲԵԿՈՐ

*Կարճ, հաստ պոչով, երկաթե քառակող նետասլաք է։ Ծայրը կոտրված է։*

*123/1505 (08* К *№ 12), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр 1907 г., стр. 26

### 1422. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե կարճ պոչով, քալքայված նետասլաք է։*

*123/1506 (07* К *№ 65), 1907 թ., Կարսի դարպաս։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *29։*

### 1423. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե տձև մեծ նետասլաք է։ Տախտակ* LVI, *7։*

*123/1507 (07* К *№ 60), 1907 թ., Կարսի դարպաս։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *28։*

### 1424. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, երկաթե տերևաձև նետասլաք է, (թերի)։*

*123/1508 (07* К *№ 42), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907* г., стр. *28։*

### 1425. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, երկաթե, ուռուցիկ կողերով և սուր ծայրով, տափակ նետասլաք է։*

*123/1509 (07* К *5), 1907 թ., Կարսի դարպաս։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *26։*

### 1426. ԴԱՆԱԿ

*Երկաթե փոքրիկ դանակ է, կարճ, տափակ պոչով, քալքայված։*

*123/1510 (07* К *№ 5), 1907 թ.։*

### 1427. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, տերևաձև, բրոնզե տափակ նետասլաք է։ Պոչուկի միացման մասում՝ խնձորակ։ Տախտակ XXXIV, 1։*

*123/1510 (07* К *76), 1907 թ., Կարսի դարպաս։*

*Հրատարակված է՝* Реестр, *1907*г., стр. *29։*

### 1428. ՀԵՐՈՒՆ

*Ոսկրե հերուն է։ Մի կողմը հաստ է, իսկ սուր ծայրը կոտրված։*

*123/1511 (07 № 58), 1907 թ.:*

### 1429. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տերևաձև, տափակ, երկաթե կարճ վզով նետասլաքի բեկոր է:*

*123/1512 (07 К № 43), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1430. ՀԵՐՈՒՆ

*Ոսկրե հերուն է, որի մի կողմը հաստ է, սուր ծայրը կոտրված:*

*123/1513 (07 К № 59), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1431. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, ծայրը թերի, երկաթե քառակող նետասլաք է:*

*123/1514 (07 К № 82), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1432. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, լայն կողերով, թերի, երկաթե տափակ նետասլաք է:*

*123/1515 (07 К № 41), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1433. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, երկաթե տերևաձև նետասլաք է:*

*123/1516 (07 К № 80), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр 1907 г., стр. 29

### 1434. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, տափակ, տերևաձև, երկաթե նետասլաք է:*

*123/1517 (07 К № 53), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *25:*

### 1435. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, քայքայված, երկաթե նետասլաք է:*

*123/1518 (07 К № 64), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *29:*

### 1436. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տափակ, տերևաձև, երկաթե նետասլաք է, պոչը կոտրված, հիմքում՝ նեղ գոտի:*

*123/1519 (07 К № 44), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1437. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տերևաձև, տափակ երկաթե նետասլաք է, հիմքում քիչ կլոր է, ծայրը ծռված:*

*123/1520 (07 К № 45), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1438. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար և սուր ծայրով, կարճ պոչով, երկաթե տափակ նետասլաք է:*

*123/1521 (07 К № 67), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *29:*

### 1439. ՆԵՏԱՍԼԱՔԻ ՊՈՉ

*Երկաթե նետասլաքի քառակող պոչ է:*

*123/1522 (07 К № 79), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *29:*

### 1440. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե նետասլաք է, քայքայված, ծայրը թերի:*

*123/1523 (07 К № 49), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1441. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե քառակող նետասլաք է, պոչիկը թերի:*

*123/1524 (07 К № 34), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907*г., стр. *27:*

### 1442. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե քառակող, երկար նետասլաք է, ծայրը թերի:*

*123/1525 (07К № 47), 1907 թ.:*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *28:*

### 1443. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե քառակող նետասլաք է, երկար պոչով: Տախտակ XXXIV, 2:*

*123/1526 (05 № 87), 1905 թ.:*

### 1444. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկաթե քառակող, երկար պոչով նետասլաք է: Տախտակ XXXIV, 10:*

*123/1527 (06), 1906 թ.:*

### 1445. ՆԵՏԱՍԼԱՔ

*Բրոնզե տափակ նետասլաք է, ճանկավոր։ Տախտակ XXXVI, 2։*

*123/1528 (08 № 50), 1908 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* КАМД, *էջ 75։*

### 1446. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տափակ, տերևաձև, բրոնզե նետասլաք է, կարճ պոչով։ Տախտակ XXXIV, 3։*

*123/1529 (08 № 36), 1908 թ.։*

### 1447. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տերևաձև, երկար պոչով, բրոնզե նետասլաք է։ Տախտակ XXXIV, 4։*

*123/1530 (07.221), 1907 թ., Միջնաբերդ։*

*Հրատարակված է՝* Реестр 1907 г., стр. 24

### 1448. ՆԵՏԱՍԼԱՔ

*Բրոնզե տափակ նետասլաք է, կարճ պոչով, կոր գոտիով։*

*123/1531։*

### 1449. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով և դեպի ցած կախված թևերով բրոնզե նետասլաք է։*

*123/1532։*

### 1450. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, երկաթե, տձև նետասլաք է։*

*123/1533 (06), 1906 թ.։*

### 1451. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, բրոնզե փոքրիկ նետասլաք է։ Տախտակ XXXIV, 6։*

*123/1534 (08 № 83), 1908 թ.։*

### 1452. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տափակ, տերևաձև, կարճ պոչով բրոնզե նետասլաք է։*

*123/1535։*

### 1453. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տերևաձև, տափակ, կարճ պոչով բրոնզե նետասլաք է։*

*123/1536 (06* п *№ 7), 1906 թ., պատահական։*

### 1454. ԳԱՄ

*Կլոր գլխով, բրոնզե փոքրիկ գամ է, որը թեթի է։ Տախտակ XXXIV, 7։*

*123/1537 (05* п *№ 18), 1905 թ., պատահական։*

### 1455. ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ

*ա) Երկաթե քառակող նետասլաք է, պոչուկը թերի։*

*բ) Երկար պոչով բրոնզե տափակ, տերևաձև նետասլաք է։*

*123/1538 (07* п *№ 23), 1907 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *49։*

### 1456. ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ

*ա) Կարճ պոչով, երկաթե տերևաձև նետասլաք է։*

*բ) Երկաթե փոքրիկ նետասլաք է։ Տախտակ XXXIV, 8։*

*123/1539 (05* п *№ 13), 1905 թ., պատահական։*

### 1457. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, տափակ, տերևաձև բրոնզե նետասլաք է։*

*123/1540 (07* п *№ 24), 1907 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *49։*

### 1458. ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ

*ա) Տափակ, նեղ, բրոնզե նետասլաք է։*

*բ) Տափակ, տերևաձև բրոնզե նետասլաք է։*

*123/1541 (05* п *№ 17), 1905 թ., պատահական։*

### 1459. ՆԵՏԱՍԼԱՔ

*Կարճ պոչով, երկաթե քառակող նետասլաք է։*

*123/1542 (06* п *№ 7), 1906 թ., պատահական։*

### 1460. ՆԵՏԱՍԼԱՔ

*Տափակ, տերևաձև, երկար պոչով, ճանկավոր բրոնզե նետասլաք է։*

*123/1543 (06 № 211), 1906 թ., ս. Գրիգոր Գագկաշեն եկեղեցու շրջակայքից։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *75։*

### 1461. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար, ուռուցիկ կոթով, տափակ կողերով բրոնզե նետասլաք է։*

*123/1544 (07* п *№ 28), 1907 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *50։*

## 1462. ՆԵՏԱՍԼԱՔ

*Երկար պոչով, թերի, բրոնզե ճանկավոր նետասլաք է։*

*123/1545 (07 28), 1907 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *50*։

## 1463. ՆԻԶԱԿ-ԵՌԱԺԱՆԻ

*Երկաթե մեծ նիզակ-եռաժանի է։ Կենտրոնական ծայրը երկար է և սուր, կողքի երկու ծայրերը կարճ են ու թեք։ Կարծիք կա, որ այս տիպի նիզակներով պարսպի վրայից քաշել են հակառակորդին կամ վայր գցել հեծյալներին։ Տախտակ XXIV, 9։*

*123/1546 (08 № 94), 1908 թ., բաղիլեկ պալատից։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, стр. 75
*2. Առաքելյան, 1, էջ 146, նկ. 19։*

## 1464. ԱՐՁԱՆԻԿ-ԿՈՂՊԵՔ

*Մարդու կերպարանքով պղնձից փոքրիկ արձանիկ-կողպեք է, որը պատրաստված է դրվագման տեխնիկայով։ Շատ ցայտուն է պատկերված հագուստը և գլխաշարը, ձեռքին բռնել է ինչ-որ անոթ։ Հետևի կողմում ունի 2 փոքրիկ օղակ՝ ամրացնելու համար։ Տախտակ XXXV, 2։*

*123/1547*

*Հրատարակված է՝ Վ. Աբրահամյան, էջ 56։*

## 1465. ԿՈՂՊԵՔՆԵՐ

*Բրոնզե կենդանակերպ 2 փոքրիկ և սնամեջ կողպեքներ են, պահպանված է յուրաքանչյուրի կեսը։ Երկուսն էլ ձիեր են, մեկը դեպի աջ ուղղված, առջևի ոտքը չկա, երկրորդը ծածկված է մանր օղակաձև զարդերով։*

*123/1548 (08* П *№ 39), 1908 թ., Ծաղկոցաձորից, պատահական։ Տախտակ XXXV 3, 4։*

*Հրատարակված է՝ 1.* КАМД, стр. 76,
*2. Բ. Առաքելյան I, էջ 140, նկ. 11,*
*3. Վ. Աբրահամյան, էջ 56։*

## 1466. ԻՐԻ ՄԱՍ

*Պղնձե առարկայի սնամեջ, կենդանակերպ բեկոր է, հավանաբար կողպեքի մաս։*

*123/1550 (15* п*1), 1915 թ., պատահական։ Տախտակ XXXIII,8։*

## 1467. ՍՐՎԱԿ

*Բարակ պսակով, նեղ վզով, կարճ ուսիկներով և սրածայր հատակով բրոնզե փոքրիկ սրվակ է։ Իրանի վրայով ուղղահայաց գնում են միմյանց զուգահեռ գծազարդեր։ Տախտակ XXXV, 5։*

*123/1551 (14* Д[вц] *5), 1914 թ., պալատական եկեղեցի։*

## 1468. ՄԱՆՅԱԿԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Բրոնզե տարբեր մանյակների 4 ոլորուն, նուրբ գծազարդերով, ծայրերը դուրս ծալված բեկորներ են։*

*123/1552*

## 1469. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

*Սերդոլիկե մանր, կլոր ուլունքների շար է (15 հատ)։*

*123/1561 (14* Е *12), 1914 թ., դամբարանից։*

## 1470. ԼԱՐ

*Պղնձե կիսակլոր, բարակ, երկար, ոլորուն լար է։*

*123/1563 (14* Е *11), 1914 թ.։*

## 1471. ԳՈՐԾԻՔ

*Բրոնզե երկար սնամեջ ձող է։ Ավարտվում է սուր ծայրով։ Հաստ մասում 2 կողմից ունի սեպաձև կտրվածքներ։ Կենտրոնում մի կողմից փոքր եռանկյունաձև ելուստ կա, իսկ հակառակ կողմում՝ 3 փոքրիկ օղակներ. համարում են ջուլհակի գործիք։ Տախտակ XXXV, 6։*

*123/1554 (14* Е*˙3—1), 1914 թ.։*

*Հրատարակված է՝ Վ. Աբրահամյան, էջ 116։*

## 1472. ՄԱՆԳԱՂ

*Մի ծայրին փոքրիկ հավելվածով բրոնզե կիսալուսնաձև մանգաղ է, վրան 2 անցք՝ փայտե կոթին ամրացնելու համար։*

*Տախտակ XXXVII, 1։*

*123/1565 (14* Е *10), 1914 թ.։*

*Հրատարակված է՝ 1. Բ. Առաքելյան 1, էջ 139։*
*2. Վ. Աբրահամյան, էջ 50։*

## 1473. ԴԱՇՈՒՅՆ

*Երկաթե երկար դաշույն է, դաստակի մասում՝ պղնձե նեղ գոտիով։ Ավարտվում է փոքրիկ ելուս-*

տով ու փոքրիկ անցքով՝ դաստակին միացնելու համար։

*123/1568 (14ռ 2—1), 1914 թ., պատահական։*

### 1474. ԴԱՇՈՒՅՆ

Երկաթե քայքայված, լայն դաշույն է, ծայրի մասը չկա։ Վերին՝ մասում ունի 3 փոքրիկ մեխ և պղնձե նեղ գոտի։ Պահպանվել է նաև դաստակի գլուխը, որը ձվաձև օղակ է 6 փոքրիկ անցքերով ու կոնաձև կարճ գլխիկով։ Տախտակ XXXVI, 4։

*123/1567 (14.2—2), 1914 թ.։*

### 1475. ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ԲԵԿՈՐ

Պղնձե ապարանջանի տձև բեկոր է։

*123/1568 (14 E 4—3), 1914 թ.։*

### 1476. ԱՊԱՐԱՆՋԱՆԻ ԲԵԿՈՐ

Պղնձե ապարանջանի կիսակոր բեկոր է։

*123/1569։*

### 1477. ԱՊԱՐԱՆՋԱՆ

Պղնձե ծռված ապարանջան է։

*123/1570*

### 1478. ԳՈՐԾԻՔ

Բրոնզե սրածայր գործիք է (տե՛ս № 1471)։

*123/1571 (14 E 32), 1914 թ.։*

### 1479. ՁՈՂ

Պղնձե քառակող ձող է։ Երկարությունը 0,8 սմ։

*123/1572 (ռ № 85), պատահական։*

### 1480. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

Կապույտ ալմաստից և կարմիր սերդոլիկից ուլունքներ են (4 հատ)։

*123/1573 (14 E 7), 1914 թ.։*

### 1481. ՈՒԼՈՒՆՔՆԵՐ

Պղնձե գլանաձև փոքր ուլունքներ են։

*123/1574 (14 E № 6), 1914 թ.։*

### 1482. ԿՈՒՌՔ

Բրոնզե մարդակերպ կուռք է, աջ թևը և ձախ ոտքը թերի են։ Ձախ թևով կռթնած է կողքին, գլխին ունի սրածայր փռյուգիական գլխարկ։ Կրծքին 3 կետերով արտահայտված են ստինքները, պորտը։ Ականջները վերադիր են։ Տախտակ XXXV, 7։

*123/1575 (07 ռ 34), 1907 թ., պատահական։*

Հրատարակված է՝ 1. Реестр 1907 г., էջ 50—51։
2. КАМД, էջ 95—96։

### 1483. ԽՈՂՈՎԱԿ

Պղնձե բարակ, քայքայված խողովակի փոքրիկ բեկոր է։

*123/1576 (05ռ № 119), 1905 թ., պատահական։*

### 1484. ԳՈՐԾԻՔՆԵՐ

Պղնձե փոքրիկ ձողեր են, հավանաբար աշխատանքային գործիքներ, կենտրոնում կան անցքեր, ծածկված մանր, հորիզոնական, խիտ դասավորված գծիկներով։

Նույն համարի տակ կա նաև պղնձե շղթայի մի բեկոր, տափակ օղակներով։

*123/1577 (05ռ 11e), 1905 թ., պատահական։*

### 1485. ԿԱԽԻԿ-ԶԱՐԴ

Շրջանաձև, տափակ, աստիճանաբար ոլորվող խեցի է, եզրին ունի փոքրիկ անցք թելից կախելու համար։

*123/1578 (05ռ 11f), 1905 թ., պատահական։*

Հրատարակված է՝ КАМД, էջ 96։

### 1486. ՇՂԹԱՅԻ ԲԵԿՈՐ

Պղնձե բարակ լարից պատրաստված նուրբ շղթա է։ Երկարությունը՝ 4,5 սմ։

*123/1579։*

### 1487. ՇՂԹԱ

Պղնձե մանր օղակներից շղթա է։

*123/1580 (05ռ 11), 1905 թ., պատահական։*

### 1488. ՄԱԽԱԹ-ԱՍԵՂ

Պղնձե հաստ մախաթ-ասեղ է, որի սուր ծայրը թերի է։ 8—6-րդ դդ. մ.թ.ա.։ Տախտակ LIII, 11։ Երկարությունը՝ 5,5 սմ։

*123/1581 (07 B № 3), 1907 թ.։*

Հրատարակված է՝ 1. Реестр 1907 г., стр. 30,
2. КАМД, стр. 97։

## 1489. ՁՈՂԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Պղնձե կլոր ձող է՝ կոտրված։*
*123/1582։*

## 1490. ԳՆԴԱՍԵՂ

*Պղնձե մեծ գնդասեղ է, վերևի մասը հաստ, ներքևինը՝ սուր։ 8—6-րդ դդ. մ.թ.ա.։*

*123/1583 (07 С № 6b), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է՝* Реестр 1907 г., стр. *31։*

## 1491. ԽՈՂՈՎԱԿ

*Պղնձե բարակ թիթեղից պատրաստված խողովակի քայքայված 2 բեկորներ են։*

*123/1584 (07 С № 6a), 1907 թ.։*

*Հրատարակված է՝* Реестр 1907 г., стр. *31։*

## 1492. ՇՂԹԱ, ԴԱՇՈՒՅՆԻԿ ԵՎ ԶԱՐԴԵՐ

*ա) Պղնձե մանր օղակներից շղթա է։ Տե՛ս № 1487։*

*բ) Շատ փոքր պղնձե դաշույնիկ է՝ կլոր դաստակով, կարճ ուսերով, սուր ծայրով։ Օգտագործվել է որպես կախիկ-զարդ։*

*Երկարությունը՝ 5 սմ։ Տախտակ XXXIII, 10։*

*գ) Պղնձե տափակ թիթեղից 2 փոքրիկ առարկաներ են՝ կիսաշրջանաձև գլխով։ Մեկն ունի սրբածայր ոտք, մյուսը՝ պարուրաձև։*
*123/1575։*

## 1493. ԳՈՐԾԻՔ

*Կլոր կողերով պղնձե երկար ձող է։ Կենտրոնում ունի անցք, որից մի կարճ շղթա է կապված։ Տախտակ XXXV, 8։*
*123/1585։*

## 1494. ՍԱՓՈՐԻԿ-ԿԱԽԻԿՆԵՐ

*Փոքրիկ ունկերով, բրոնզե 2 սնամեջ սափորիկներ են միմյանց միացած նուրբ, բարակ շղթայով։ Օգտագործվել է որպես կախազարդ։ Տախտակ XXXIII, 9։*

*123/1585 (05п 11m), 1905 թ., պատահական։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *96։*

## 1495. ՍՈՒՐ

*Երկաթե երկար սուր է, բեկորներով, քայքայված։ Երկարությունը՝ 48 սմ, 8—6 -րդ դդ. մ.թ.ա.։*

*123/1589 (07 9), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է 1.* Реестр *1907* г., стр. *33,*
2. КАМД, стр. *96։*

## 1496. ԳՈՐԾԻՔՆԵՐ

*Մշակված կողերով օրսիդաքարե փոքր գործիքներ են (2 հատ)։*

*123/1590 (07 С № 9), 1907 թ.։*

*Հրատարակված է 1.* Реестр *1907* г., стр. *31,*
2. КАДМ, стР. *97։*

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

# ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐԵՐ

Իրերի այս խումբը թվագրվում է մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբով և ներկայացված է օքսիդաքարե գործիքներով, բրոնզե ձողից պատրաստված ոտքի հաստ ապարանջաններով, օղերով, կավամաններով։

### 1497. ԳՈՐԾԻՔ

*Մշակված կողերով օբսիդաքարե փոքր գործիք է։*

*123/1591 (07 2), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է՝ 1.* Реестр *1907* г., стр. *30,*
*2.* КАМД, стр. *97։*

### 1498. ԳՈՐԾԻՔ

*Օբսիդիանի փոքրիկ բեկոր է, մշակված, մի կողմը սուր։ Հավանաբար կտրիչ է եղել։*

*123/1592*

### 1499. ԴԱՇՈՒՅՆ

*Բրոնզե երկսայր դաշույն է, ունի սուր ծայր կենտրոնում երկայնական թմբիկով։ Տախտակ XXXVI, 5 և* LVI, *8։*

*123/1593 (07*D *№ 10), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է 1.* Реестр *1907* г., стр. *33,*
*2.* КАМД, стр. *96։*

### 1500. ԶԱՐԴԱԳԱՄ

*Բրոնզե զարդագամ է՝ կլոր ուսերով և սուր ծայրով։ Տախտակ* LIV, *9։*

*123/1594*

### 1501. ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ

*Բրոնզե հաստ, կլոր, անջատ ծայրերով 6 ապարանջաններ են, դրանցից երկուսը լավ են պահպանվել, երեքը արտաքինից օքսիդացված են, մեկը՝ բայքայված մակերեսով, առանց զարդանախշի։ Տախտակ XXXVI, 6 և* LVI,*5։*

*123/1595 (05*п *№ 11*a*), 1905 թ., պատահական, վաղ շրջանի դամբարանից։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *96։*

### 1502. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Բրոնզե բարակ, տափակ ապարանջան է, անջատ ծայրերով, առանց զարդանախշի։*

*123/1596 (07.* C. *21), 1907 թ., վաղ շրջանի դամբարանից։*

*Հրատարակված է 1.* Реестр *1907* г., стр. *32,*
*2.* КАМД, стр. *97։*

### 1503. ԱՊԱՐԱՆՋԱՆ

*Բրոնզե փոքր ապարանջան է։*

*123/1597 (07.* C *21* a*), 1907 թ., վաղ շրջանի դամբարանից։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *32։*

### 1504. ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ

*Հաստ ձողից պատրաստված բրոնզե 6 ապարանջաններ են, անջատ ծայրերով, 2-ը լավ են պահպանված, 2-ը՝ արտաքինից օքսիդացված, իսկ մյուս 2-ը քայքայված են ճեղքված մակերեսով։ Տախտակ* LV, *2, 3, 4, և* LVI, *2, 3։*

*Ծառայել են որպես փոխանակության միավոր։*

*123/1598 (05 № 11*a*), գտնվել են 1905 թ., պատահաբար, հնագույն դամբարանից։*

*Հրատարակված է՝* КАМД, стр. *133։*

### 1505. ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ

*Անջատ ծայրերով բրոնզե հաստ 4 ապարանջաններ են։* LV, *5 և* LVI, *4, 5, 6։*

*123/1599։*

## 1506. ԱՊԱՐԱՆՋԱՆ

Հատ, տափակ, բրոնզե ապարանջան է, անջատ ծայրերով։
123/1602։

## 1507. ՆՈՒՅՆԸ

Տախտակ LVI, 7։
123/1603։

## 1508. ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ

Հատ, բրոնզե 3 ապարանջաններ են, բարակ, անջատ ծայրերով։ 2-ը ծածկված են ցորենաձև նուրբ խորաքանդակ զարդագծերով և լավ են պահպանված։ Տախտակ LV, 6, 7, և LVI, 8։

## 1509. ԳԱՎԱԹ

Կլոր կանթով, խոշորահատիկ կավից պատրաստած փոքրիկ գավաթ է։
123/1605 (07D № 5), 1907 թ., Տախտակ XXXVII, 2։
Հրատարակված է՝ Реестр 1907 г., стр. 32։

## 1510. ԿԺՈՒԺ

Ուռուցիկ իրանով, փոքրիկ նստուկով և կարճ վզով կավե մեկ կանթանի կճուճ է։ Իրանի վերին մասով շուրջանակի անցնում են 3 շարք հորիզոնական ակոսներ։ Տախտակ XXXVIII, 1։
123/1606 (07 7), 1907 թ., դամբարանից։
Հրատարակված է՝ Реестр 1907 г., стр. 33։

## 1511. ԿԺՈՒԺ

Սև, փայլուն, մեկ կանթանի կավե կճուճ է, փոքր նստուկով։ Ուռուցիկ իրանի վրա հորիզոնական շուրջանակի ակոսներ և ստորակետաձև զարդեր են արված։ Տախտակ XXXVII, 3։
123/1607 (07 12), 1907 թ., դամբարանից։
Հրատարակված է՝ Реестр 1907г., стр. 33։

## 1512. ԳԱՎԱԹ

Ուռուցիկ իրանով, մեկ կանթանի, սև փայլեցրած կավե մեծ գավաթ է։ Վզից ցած թեք գծազարդերով 3 հորիզոնական շուրջանակի գոտիներ են։ Տախտակ XXXVIII, 2։
123/1608 (07 с № 12), 1907 թ., դամբարանից։
Հրատարակված է՝ Реестр 1907г., стр. 31։

## 1513. ԿԱՎԱՆՈԹ

Ուղիղ պատերով, կավե սև փայլուն անոթ է շուրթին երկու կողմից ունի կարճ ունկեր փոքրիկ անցքերով։ Անոթի ողջ մակերեսը ծածկված է խոշոր եռանկյունիներով, որոնք լցված են մանր կետազարդերով։ Եռանկյունիների վերին և ստորին գոտիները կենտրոնում բաժանված են հորիզոնական լայն շուրջանակի գնացող գոտիով, որը կատարված է զիգզագաձև գծերով։ Տախտակ XXXVII, 4։
123/1609 (13E), 1913 թ., դամբարանից։
Հրատարակված է՝ Марр, Ани, стр. 28, табл. IX։

## 1514. ԿԺՈՒԺ

Գորշ գույնի կավե երկկանթանի փարբ կճուճ է, նեղ վզով, ուռուցիկ իրանով։ Կանթերի վրա կան փոքրիկ ելուստներ։ Վզից ցած, մինչև իրանի կեսը արված են ուղղահայաց մատնեքներ։ Տախտակ XXXVIII, 3։
123/1610 (07 A № 5), 1907 թ., դամբարանից։
Հրատարակված է՝ Реестр 1907 г., стр. 30։

## 1515. ՍԱՓՈՐ

Լայն վզով, ուռուցիկ իրանով բաց գույնի, փայլեցրած, կավե մեկ կանթանի փոքրիկ սափոր է։ Իրանի վրայով անցնում է մեծ եռանկյունիներից կազմված գոտի, որը երկու կողմից վերցված է շուրջանակի հորիզոնական ակոսների մեջ։ Տախտակ XXXVII, 5։
123/1512։

## 1516. ԿԺՈՒԺ

Նեղ վզով, ուռուցիկ իրանով, և փոքր նստուկով կավե սև փայլեցրած մեծ կճուճ է։ Ունի փոքրիկ ելուստավոր ունկ՝ անցքով։ Վզից ցած գնում են թեք և զիգզագ փորագիր գծերով արված գոտիներ։ Իրանի ուռուցիկ մասով անցնում է մեծ և փոքր եռանկյունիներից բաղկացած շուրջանակի զարդագոտի, որոնք ծածկված են ալիքաձև գծազարդերով։ Տախտակ XXXVII, 6։
123/1613 (07E № 2), 1907 թ., դամբարանից։
Հրատարակված է՝ Реестр 1907 г., стр. 33

## 1517. ԿԺՈՒԺ

Նեղ վզով, քիչ ուռուցիկ իրանով կավե գորշ գույնի կճուճ է։ Իրանի վրա հորիզոնական

*շուրջանակի փորագիր ակոսներ են։ Տախտակ XXXVIII, 4։*

*123/1614 (07* C № 5а*), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է՝* Реестр *1907*г., стр. *31*։

### 1518. ԿՃՈՒՃ

*Լայն բերանով, կարճ վզով, ուռուցիկ իրանով կավե գորշ գույնի փոքրիկ կճուճ է։ Իրանի շուրջը գնում են ակոսներ։*

*123/1615 (*Е*29)։ Տախտակ XXXVIII, 5։*

### 1519. ԳԱՎԱԹ

*Թուխ գույնի, փայլեցրած, փոքրիկ, մեկ կանթանի կավե գավաթ է, լայն բերանով, ուռուցիկ։ Իրանի շուրջը գնում են 2 շարք թեք գծիկներից կազմված հորիզոնական գոտիներ։ Տախտակ XXXVIII, 6։*

*123/1616 (07* D № *13), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *33*։

### 1520. ՍԱՓՈՐԻԿ

*Գորշ գույնի, փայլեցրած, փոքրիկ, մեկ կանթանի կավե սափոր է։ Ունի կարճ վիզ, ուռուցիկ իրան, լայն հատակ։ Իրանը ծածկված է հորիզոնական և ուղղահայաց ակոսներով։ Տախտակ XXXVIII, 7։*

*123/1617 (05*п № *11*р*), 1905 թ., պատահական։*

### 1521. ՔՐԵՂԱՆ

*Սև փայլեցրած, լայն բերանով, փոքր հատակով կավե քրեղան է։*

*123/1618 (14*Е *28), 1914 թ.։*

### 1522. ԱՃՅՈՒՆԱՍԱՓՈՐ

*Գորշ գույնի, լայն բերանով, կարճ վզով, ուռուցիկ իրանով կավե մեծ կճուճ է։ Վզից ներքև և իրանի կենտրոնում անցնում են շուրջանակի հորիզոնական գոտիներ, արված փորագիր թեք գծերով։ Իրանի վերին մասը ծածկված է ուղղահայաց, լայն ակոսներով։*

*123/1620 (07* C № *2), 1907 թ., դամբարանից։*

*Հրատարակված է՝* Реестр *1907* г., стр. *31*։

### 1523. ՔՐԵՂԱՆ

*Սև փայլեցրած, խորը, լայն բերանով կավե քրեղան է։ Պսակից ցած գնում են հորիզոնական ակոսավոր գոտիներ։*

*123/1621։*

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

## 377

### 1. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմրափայլ դրոշմազարդ կարասի գոտու 2 բեկորներ են, այծի և կենաց ծառի պատկերներով։*
*377/1 և 17։*

### 2. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի 3 բեկորներ են։ Գոտու վրա պատկերված են մի առասպելական թռչուն, միմյանց ետևից վազող այծ և շուն, դրանց գլխավերևը դեմ հանդիման կանգնած 2 թռչուններ, պարող մարդիկ (ծիսական պար)։ Պատկերների խմբերը բաժանված են զիգզագաձև միջնորմներով։*

*377/2, 15, 16*

*Հրատարակված է՝* Чубинов, стр. *3։*

### 3. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմիր դրոշմազարդ կարասի 2 բեկոր են։ Գոտու վրա պատկերված են թռչունն իր ձագերով, այծըն իր ուլիկով (պտղաբերության խորհրդանիշ), մի չորքոտանի կենդանի, առջևը փոքրիկ թռչուն։ Պատկերները բաժանված են զիգզագաձև միջնորմով։*

*377/3 և 10։*

### 4. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Դրոշմազարդ, կարմիր փայլեցրած, կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված են այծ, 3 պարող մարդիկ՝ միջանեղինը 2 ձեռքը վեր է բարձրացրել, իսկ նրա 2 կողմում կանգնածները մի ձեռքը վեր են բարձրացրել, մյուսով կռթնել, ապա մի կենաց ծառ է, և դարձյալ մի այծ։*

*Տե՛ս № 10, 337/4։*

### 5. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Դրոշմազարդ կարասի բեկոր է, սխեմատիկ և խիստ ոճավորված անորոշ պատկերով։*
*377/5։*

### 6. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Լայն գոտու վրա արված են ալիքաձև ուռուցիկ զարդեր։*

*377/6*

### 7. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած կարասի բեկոր է։ Երկու զուգահեռ գծերի մեջ արված են զույգ եռանկյունիներ, որոնք սուր գլուխներով միանում են միմյանց։ Միացման կետերում դրված են կոճակաձև զարդեր։ Եռանկյունիների միջի տարածությունը թեք, մանր, խիտ դասավորված գծիկներով է ծածկված։*

*377/7*

### 8. ԿԱՐԱՍԻ ՇՐԹԻ ԲԵԿՈՐ

*Կարմրավուն, անփայլ կարասի շրթի մեծ բեկոր է։ Պսակի տակ գնում է սեպաձև զարդանախշ, որից ներքև ալիքաձև զարդահյուսի մեջ բոլորակ կնիքով դրոշմված են վարդյակներ։ Ստորին մասում շուրջանակի անցնում են ակոսներ, ալիքաձև և ոսպնյակաձև զարդեր։*

*377/8*

### 9. ԿԱՐԱՍՆԵՐԻ ԲԵԿՈՐՆԵՐ

*Կարմրափայլ կարասի 2 բեկորներ են՝ դրոշմազարդ մեդալիոններով։ Մեդալիոնները իրենցից ներկայացնում են բոլորակ կնիքով դրոշմված զարդյակներ և բարդ երկրաչափական զարդեր։*

*377/9։*

### 10. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

*Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է, կանթի հիմքի հետ միասին։*

*Հորիզոնական զարդագոտու վրա պատկերված են 3 պարող մարդիկ, կենաց ծառ և մեկ այծ։ Տե՛ս № 4։ Նույն դրոշմը եղել է կանթի վրա։*

*377/11։*

## 11. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐՆԵՐ

Կարմրափայլ դրոշմազարդ կարասի 2 բեկորներ են։ Գոտու վերևի մասում մի նեղ շարքով նուրբ հյուսվածքաշար է գնում, որ ընդհատվում է երբեմն մանր շրջագծերով։ Այդ շարքի տակ գալիս է մի լայն շերտ, որ ծածկված է դրոշմազարդ թռչուններով և գազաններով. միմյանց հակառակ ուղղությամբ դասավորված շներ են՝ մարմնի առջևի մասը բարձր։ 2-ի վեր բարձրացրած պոչերը խաչաձևվում են իրար հետ։ Շներից յուրաքանչյուրի գլխավերևում մի եռատերև բույս կա։

Այնուհետև գալիս են միմյանց դեմ հանդիման կանգնած 2 թռչուններ, սրանց մեջտեղը մի փոքրիկ ծաղկաման է, որից մի կենաց ծառ է բարձրանում ճյուղավորվելով 2 մասի, անցնելով թռչունների գլխի հետևը. այդ մասում ճյուղերը թողնում են թռչունների փետրազարդի տպավորություն։ Այնուհետև նորից կրկնվում են զույգ շները և այդպես շարունակվում։

Այս 2 բեկորը, ինչպես նաև 123/43-ը և մի քանի այլ բեկորներ պատրաստված են միևնույն վարպետի կողմից և իրենց ոճով ու բովանդակությամբ ամենևին չեն նմանվում Անիում հայտնաբերված մյուս կարասներին։ Տախտակ 1, 7։

377/13 և 14։

## 12. ԿԱՐԱՍԻ ԲԵԿՈՐ

Կարմիր փայլեցրած դրոշմազարդ կարասի բեկոր է։ Գոտու վրա պատկերված է կենդանիների երթի տեսարան։ Աջ կողմում փոքրիկ թռչուն՝ հակառակ դիրքով։

377/18։

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

## 378

### 1. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

*Ջնարակած քրեղանի 2 բեկորներ են, բաց դեղնավուն ֆոնի վրա դեղին, դարչնագույն, կանաչ ճառագայթներով և բուսական զարդանկարով։*

*378/1 և 2*

### 2. ՔՐԵՂԱՆԻ ԲԵԿՈՐ

